

ISSN 1829-0531

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ
ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ
№ 1 (60)

ՀՈԲԵԼՅԱՆԱԿԱՆ ԹՈՂԱՐԿՈՒՄ

ԵՐԵՎԱՆ 2023

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆՐԵՍ
АРМЕНОБЕДЧЕСКИЙ ЖУРНАЛ
JOURNAL FOR ARMENIAN STUDIES

Հիմնադիր՝ «Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան» հիմնադրամ

Խմբագրական խորհուրդ՝

Ս. Ռ. Գևորգյան (նախագահ),

Մ. Գ. Գիլավյան (**գլխավոր խմբագիր**),
Ա. Վ. Գալստյան, Ս. Դ. Դանիելյան, Ա. Գ. Դուրխանյան,
Լ. Մ. Խաչատրյան, Ա. Հ. Հակոբյան, Վ. Գ. Համբարձումյան,
Ա. Ա. Մակարյան, Է. Ս. Մկրտչյան, Ս. Պ. Մուրադյան,
Ա. Տազեայան (Բեյրութ), Զ. Պողոսյան (Բտալիա),
Հ. Մարտիրոսյան (Նիդերլանդներ), Ա. Հ. Մանուկեան (Շվեյցարիա)

Ա. Հ. Հարությունյան (**գլխավոր խմբագրի տեղակալ**)

Գրանցման վկայական՝ 211.200.00182

Գրանցման տարեթիվը՝ 26.03.2003 թ.

Պարբերականությունը՝ եռամսյա

Բոլոր նյութերն ուղարկվում են գրախոսության:

Հոդվածները տպագրվում են անվճար: Ցանկացողները հանդեսը կարող են ձեռք բերել համալսարանի հաշվեհամարին (151 000 230 84 80 100) փոխանցելով համարի արժեքը:

Արտատպության դեպքում հղումը «Հայագիտական հանդես»-ին պարտադիր է:

Մեր հասցեն՝ Երևան, Ալեք Մանուկյան փ. 13, հեռախոս՝ 55-60-30 (1-20)

Էլեկտրոնային փոստ՝ hayagitakanhandes@gmail.com

Կայքէջ՝ <https://armenianstudies.aspu.am/>

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ՕՐՀՆԵՐԳԸ

Խոսք՝ *Մարտին Գիլավյանի*
Երաժշտ.՝ *Արկաղի Շեկունցի*

Ճամփան ես մեր լուսավորում
Դու Մաշտոցի արդար լույսով,
Ու լցնում ես սրտերը մեր
Հավատով ու պայծառ հույսով:

Կրկներգ

*Դու մայր տաճար մեր դպրության,
Դու մեր երթի փարոս մի նոր,
Ճամփան ես մեր լուսավոր
Աբովյանից մինչ այսօր:*

Ճանապարհը քո փառավոր
Շարունակվի թող հավիտյան,
Կանաչ լինի ու լուսավոր
Մեր հարազատ Համալսարան:

Կրկներգ

*Դու մայր տաճար մեր դպրության,
Դու մեր երթի փարոս մի նոր,
Ճամփան ես մեր լուսավոր,
Աբովյանից մինչ այսօր:*

ԱՇՈՏ ԳԱԼՍՑԱՆ

Խաչատուր Աբովյանի անվան ՀՊՄՀ
Բանասիրական ֆակուլտետի դեկան
Բան. գիտ. դոկտոր, պրոֆեսոր

«ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆՐԵՍԻ» ԵՐԹԸ

Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գիտական պարբերականների շարքում զգալի կշիռ ունի «Հայագիտական հանդես»-ը: Իր տեսակի մեջ լինելով եզակի տեղեկագիր՝ այն լուրջ հարթակ է գիտնականների և ասպիրանտների համար: Հայագիտությանը և մեթոդիկային վերաբերող հետաքրքրական նյութերը, որոնք արդիական հնչեղություն ունեն, նորովի հայացք են գիտամեթոդական աշխատանքների համապատկերում: Տարբեր բաժանումներով գիտական հանդեսը ներառում է գրաբարի, միջին հայերենի և ժամանակակից գրական հայերենի հիմնահարցերին նվիրված հետազոտություններ: Զգալի նյութեր կան գրականության տարբեր շրջափուլերի վերաբերյալ: Հեղինակային նեղ թեմատիկայից, գրական դիմանկարի կերտումից մինչև գրականագիտական պրոբլեմատիկայի եական սկզբունքներ և բանաձևումներ:

Քիչ չեն հայ պատմագրության անցյալի և նորոյա խնդիրների վերաբերյալ հրապարակումները, որոնք լույս են սփռում այսօրվա բազում հարցերի ճշգրտման վրա:

Հանդեսն ունի նաև մեթոդական ուղղվածություն. մայրենիի և պատմության դասավանդման մեթոդիկաների գիտափորձերը, հիմնախնդրի որակական և քանակական ցուցիչների վերլուծության հավաստի վերջնարդյունքները գիտական մեթոդաբանության հիմնարար դրույթներ են պարունակում:

Բոլոր հրապարակումները խմբագրական խորհրդի անդամների ճշգրիտ դիտողականության շնորհիվ զտվում են կողմնակի մտքերից ու պարունակներից, իսկ հմուտ խմբագիր պրոֆեսոր Մարտին Գիլավյանի գիտական սրբագրումից հետո միայն դրանք դառնում են շահագրգիռ լայն հանրության քննարկման դրույթներ:

Այսօր մեր սեղանին է «Հայագիտական հանդես»-ի 60-րդ համարը: Նյութերի հավաքագրման, դասդասման, խմբագրման աշխատանքներն այլևս անցյալում են: Ի դեպ, կոկիկ և գիտական հիմքերով այս պրակը հոբելյանական է:

20 տարի առաջ է լույս տեսել անդրանիկ համարը: Համարից համար այն դարձել է առավել ակադեմիական, առավել պահանջված ու արագ սպառվող:

...Իմ սեղանին են հանդեսի վերջին տարիների համարներից: Հոդվածագիրները գիտությունների ազգային ակադեմիայի գիտնականներ են, Երևանի պետական համալսարանի և Մանկավարժական համալսարանի պատկառելի դասախոսներ, մասնագետներ ու ասպիրանտներ այլ բուհերից: Գիտության բավիղներով բարձրացող գիտնականն ու գիտության մշակն իր հրապարակումը շրջանառելու համար հաճախ է ընտրում «Հայագիտական հանդես»-ը: Այն և՛ հասուն տեղեկագիր է, և՛ բովանդակային լուրջ հրապարակումներով ժողովածու, և՛ ԲՈԿ-ի ցանկում զետեղված ընդունելի գիտական միավոր: Հանդեսի նյութերը ոչ միայն հայատառ են, այլև այլալեզու. անգլերեն, ռուսերեն, ֆրանսերեն հրապարակումները շահագրգռում են հայ և օտար ընթերցողին, քննարկման լուրջ հնարավորություն ստեղծում: Թույլ և ակադեմիական ազնվության խախտումներով նյութերը մերժվում են, ուղարկվում լրամշակման:

«Հայագիտական հանդես»-ի գիտական երթը շարունակվում է նաև այսօր: Մեր օրերի խելահեղ մրցավազքը նորանոր խնդիրներ է առաջադրում գիտնական մանկավարժներին: Այսօր արդեն շրջանառության մեջ են գիտական բազում հանդեսներ, որոնք գիտության աշխատողին գրավում են և անհրաժեշտ օգնություն են ցուցաբերում: Այսպիսին է եռալեզու ընդարձակ ամփոփումներով «Հայագիտական հանդես»-ը, որը գիտության աշխարհում հավակնում է ունենալ լայն լսարան, բարձր նշանող և տեղ գտնել միջազգային շտեմարաններում:

ՍՈՒՐԵՆ ԴԱՆԻԷԼԵԱՆ

Խաչատուր Աբովեանի անուան ՀՊՄՀ
Վ. Պարտիզոնու անուան Հայ նոր եւ նորագոյն
գրականութեան եւ նրա դասաւանդման
մեթոդիկայի ամբիոնի վարիչ
Բան. գիտ. դոկտոր, պրոֆեսոր
«Սփիւռք» Գիտաուսումնական Կենտրոնի տնօրէն

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԲԱՐՁՈՒՆՔՆԵՐԻՆ ՀԵՏԱՄՈՒՏ

Հայագիտական համալսարանական հանդէսը քսանամեայ երկարամեայ ճանապարհ է անցել՝ ըստ էութեան ձեւաւորելով գիտական հետաքրքրութիւնների նոր հուն հանրապետական գիտական միւս առաջատար հանդէսների շարքին: Այն կարելոք դերակատարութիւն ունի ուսուցիչների մէջ գիտական մտածողութիւն արմատաւորելու, պահպանելու, ժամանակի բերած արժէքների վերարժեւորման, ինչպէս նաեւ ուսանողութեան աշխարհում գիտահետազոտական հմտութիւններ ձեւաւորելու յանձնառութեան գործում:

Այս երկար ու ձիգ տասնամեակներին, երբ ազգային ճանաչողութեան որակական ընկալման սահմանները նկատելիօրէն ընդլայնուել են, երբ մենք ազգային միասնական դաշտում տեսնում ենք գեղարուեստական բարձր չափանիշների պահանջ, երբ հայրենի եւ սփիւռքահայ մանկավարժական, լեզուի ու գրական հայեացքներում ընդհանրական պատկերացումները խորացրել են վաղուայ սերնդի զուգընթաց զարգացումների հեռանկարն ու պատասխանատուութեան աստիճանը, «Հայագիտական հանդէս»ը դարձել է համահունչ այսօրուայ հայագիտական մտածողութեան ըմբռնումներին ու սկզբունքներին:

Պատահակա՞ն համարել, որ հանդէսը վերլուծական գնահատումների ճանապարհին, համեմատաբար կարճ ժամանակում ձեռք է բերել անվիճելի համբաւ, այնտեղ տպագրուելը ապահովել է գիտական ճանաչում եւ պատիւ: Աւելորդ չէ նշել, որ հանդէսի հրապարակած հարիւրաւոր նիւթերը գիտական որակական ընդունելի մակարդակ են պահպանել մինչեւ օրս հայոց լեզուից, գրականութիւնից, մանկավարժութիւնից, մեթոդաբանական ոլորտներից այնքան անհրաժեշտ թեկնածուական եւ դոկտորական ստենախօսութիւնների վաղուայ պաշտպանութիւնների համար:

Հարկ է ընդգծել հանրապետութեան բոլոր մարզերից, Լեռային Ղարաբաղի շրջաններից յօդուածագիրների, ուսուցչական համակազմի լայն լսարանը եւ գիտական ուղղութիւնների նոյնքան լայն ընդգրկումը: Այստեղ մենք նկատի ունենք լեզուաբանական եւ գրականագիտական հանրա-

կրթական նշանակության յօդուածների նորարար ուսումնասիրութիւններին հետամուտ ընթացքները: Խօսքը, նախ, վերաբերում է արեւելահայ եւ արեւմտահայ լեզուների խօսքիմասային յարաբերութիւնների, աղերսների, համեմատական լեզուաբանութեան նոր քննական կերպերի, շարահիւսական, գործնական եւ տեսաբանական անցումների արդիւնաւէտ որոնումներին: «Հայագիտական հանդէս»ը անհրաժեշտ եւ բաւարար ծաւալով ուշադրութիւն է դարձրել եւ այսօր էլ դարձնում է հանրակրթական եւ բարձրագոյն ուսումնական ծրագրերի, մեթոդաբանական այժմեական հարցադրումներին, ուսուցիչների եւ մեթոդիստների մասնագիտական կատարելագործման, փորձի փոխանակման հրատապ շարունակական քննարկումներին եւ բանավէճերին:

Լինելով հայ գրականագիտական ժամանակակից առաջատար դէմքերի մէկը՝ «Հայագիտական հանդէս»ի հիմնադիր-խմբագիր, Պրօֆեսոր Մարտին Գիլաւեանը էական ու խորքային դեր է յատկացրել հայ գրականութեան ազգային նշանակութեան հարցերին՝ հենց այստեղ տեսնելով ազգային ինքնութեան առանցքային ճանաչումի նոր հանգրուանները, ճշմարիտ հայրենասիրութեան այն դասերը, որոնք գալիս են ամբողջացնելու հայրենի եզերքի, անցեալի պատմութեան, ինքներս մեզ նորովի ճանաչելու եւ նրա լուսաւոր ապագային հաւատով նուիրուելու պատգամներին, իւրացնելու այն, ինչ անմնացորդ աւանդել են մեզ գրական մեծերը՝ Խորենացին, Աբովեանը, Թումանեանը, Զօհրապը, Վարուժանն ու Օշականը:

Այսօր հարիւրամեայ մանկավարժականի քսանամենի «Հայագիտական հանդէս»ը դէպի նոր բարձունք գնում է՝ վաստակի ու բեռի հաճելի ծանրութեան տակ, նոր գիտական սահմանագծեր ձեռք բերելու, առաջին շարքերում միշտ մնալու նախապայմանով:

ԱՆԼԻՏԱ ԴՈԼՈՒԽԱՆՑԱՆ

Խաչատուր Աբովյանի անվան ՀՊՄՀ
Հայ հին և միջնադարյան գրականության և նրա
դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ,
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, բանասիրական
գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

«ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆՐԵՍԻ» ՆՈՐ ՆՎԱՃՈՒՄՆԵՐԸ

Արդեն գրեթե անհնար է Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ բանասիրական ֆակուլտետը պատկերացնել առանց «Հայագիտական հանդեսի»: Այն պատմական ընթացք է գրանցել:

«Հայագիտական հանդեսը» տարբեր տարիների ունեցել է խիստ ուշագրավ հավելվածներ: Դրանցից մեկը կոչվում էր «Հայ ակադեմիկոսներ»: Այդ խորագրի տակ հրատարակվեցին առանձին թեմատիկ համարներ՝ նվիրված մեծ լեզվաբաններ Աշոտ Աբրահամյանին, Գևորգ Ջահուկյանին, Մերգեյ Աբրահամյանին: Աշոտ Արսենի Աբրահամյանին ներկայացնող համարը նվիրվեց նաև քրիստոնեությունը Հայաստանում պետական կրոն հռչակման 1700-ամյակին: Այնքան պատշաճում էր այդ նվիրումը, որովհետև Աշոտ Աբրահամյանի «Գրաբարի դասագրքով» կրթվել էին լեզվաբանների և միջնադարյան հայ գրականության մասնագետների առաջնակարգ ներկայացուցիչները: Նաև այդ լեզվաբանի շնորհիվ ամեն հայ կարող է կարդալ Եզնիկ Կողբացու «Եղծ աղանդոցն» ու Ստեփանոս Օրբելյանի «Մյունիքի պատմությունը»՝ մեր մատենագրության գանձերը:

2007-ին հատուկ համար նվիրվեց մեր համալսարանի հիմնադրման 85-ամյակին: Համարն ամբողջովին ներկայացնում էր Խաչատուր Աբովյանի ստեղծագործությունը:

«Հայագիտական հանդեսը» հնարավորություն է ստեղծում մեր համալսարանի դասախոսներին հանդես գալ նաև օտարալեզու հոդվածներով, որոնց շնորհիվ ամսագրի գիտական շրջանառության ոլորտը մեծանում է:

«Հայագիտական հանդեսի» էջերում իրենց գիտական հոդվածներն են տպագրել ոչ միայն մեր բուհի ասպիրանտներն ու հայցորդները, այլև ողջ Հայաստանի, նաև Արցախի և սփյուռքի անվանի գիտնականները:

«Հայագիտական հանդեսում» տպագրվել են մեր բուհի շնորհալի այն մագիստրոսները, որոնք իրենց ապագան տեսնում են գիտության տարբեր բնագավառներում:

Սրտանց շնորհավորում եմ «Հայագիտական հանդեսի» հոբելյանը և մաղթում նրան գիտական երկարակեցություն ու արդիական ուղղվածություն:

ԼԱԼԻԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Խաչատուր Աբովյանի անվան ՀՊՄՀ
Լեզվաբանական հետազոտությունների
գիտական լաբորատորիայի վարիչ
Բան. գիտ. դոկտոր, պրոֆեսոր

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆՐԵՍ – 20

Հայագիտությունը դարերի պատմություն ունի՝ սկսած հինգերորդ դարում ձևավորված Հունաբան դպրոցից մինչև միջնադարյան համալսարանները, Մխիթարյան Միաբանությունից մինչև խորհրդային շրջանի գիտակրթական կենտրոնները, հետխորհրդային գիտության կաճառներից մինչև մերօրյա գիտահետազոտական հաստատությունները:

Անկախ գիտական հաստատությունների ուղղվածությունից՝ բոլոր կենտրոններն ունեցել են իրենց գիտական պարբերականները, որտեղ արձարծել են իրենց հետազոտական ուղղությունների հիմնախնդիրները, դրանք լուծելու մեթոդական համակարգը, նախանշել են այդ ոլորտում իրենց գիտական մտքի տեսլականը և այլն:

Հայաստանի Հանրապետությունում գիտական պարբերականները յուրօրինակ գիտական հաստատություններ են, որոնք ամբողջացնում են իրենց գերատեսչությունների՝ գիտագործնական և գիտակրթական ծրագրերի բովանդակությունը՝ ժամանակակից մարտահրավերների համատեքստում:

Ժամանակակից հայագիտական պարբերականների շարքում իր ուրույն տեղն ունի Խ.Աբովյանի անվ. ՀՊՄՀ-ում հրատարակվող «Հայագիտական հանդեսը», որի գործունեության քսանամյա հորելյանը լրացավ վերջերս:

«Հայագիտական հանդեսը» ծնունդ է առել բանասիրական ֆակուլտետում, որի հիմնադիր խմբագիրն է եղել երջանկահիշատակ Սուրեն Սահակյանը, որ շատ կարճ ժամանակահատված աշխատեց որպես հանդեսի գլխավոր խմբագիր: Այնուհետև հանդեսի խմբագրական աշխատանքներն ստանձնեց պրոֆ. Մ.Գ.Գիլավյանը, որ վեկտորական նոր ուղղություն հաղորդեց հանդեսի բովանդակությանը՝ նրա դոմենը բացելով ոչ միայն մանկավարժական համալսարանի և հանրապետության հումանիտար բուհերի մասնագետների առջև, այլև այնտեղ մուտքի արտոնագիր ստացան հանրակրթության համակարգի մանկավարժները, համալսարանի հայցորդներն ու սապիրանտները, մագիստրոսները:

Պրոֆ. Մ.Գիլավյանի օրոք «Հայագիտական հանդեսը» վերաճեց յուրօրինակ ուսումնական կենտրոնի. հանդեսի բաժինները, որոնք

տրամաբանական արտացոլումն են պատմաբանասիրական կրթության գիտական սանդղակների, արժարժում են ուսումնասիրություններ, որոնք վերաբերում են հայոց լեզվին, լեզվի պատմությանը, լեզվի դասավանդման մեթոդիկային, գրականության հիմնարար խնդիրներին, գրականագիտությանը, գրականության դասավանդման մեթոդիկային, հայոց պատմության առանցքային հարցերին, նրա դասավանդման խնդիրներին: Հանդեսի գիտականությունն ապահովում է «Գրախոսություն» բաժինը, որտեղ լույս են տեսնում տարաբնույթ հոդվածներ՝ նվիրված հայոց լեզվի, լեզվաբանության, բառարանագրության, գրականության, պատմության, հայ և օտար լեզուների վերաբերյալ մենագրությունների ու գիտական աշխատանքների:

Հանդեսն ուշադրություն է դարձնում ավանդական արժեքների վերհանմանը, որոնք ուսանողության համար ունեն կրթադաստիարակչական և հայրենասիրական ուղղվածություն. դա, մասնավորապես, վերաբերում է բուհի երախտավորների մնայուն արժեքների գնահատմանը և նրանց հիշատակի խնկարկմանը:

Հանդեսի խմբագիրը մեծ նշանակություն է տալիս բարձր կուրսերի ուսանողների և մագիստրոսների գիտահետազոտական աշխատանքներին, մանավանդ երբ նրանք հանդես են գալիս ավարտական աշխատանքների և թեզերի գիտական ղեկավարների հետ համատեղ:

Հանդեսը արձագանքում է մանկավարժական համալսարանի կենսագրությանը դառնալով նրա գիտակրթական տարեգրության վկան, որ ապագա ուսանողներին և մանկավարժներին փոխանցելու է մեր ժամանակների բուհի նվաճումներն ու ձեռքբերումները:

«Հայագիտական հանդեսը» ազատ հարթակ է, որտեղ հանդես են գալիս Հայաստանի Հանրապետության, Արցախի Հանրապետության և Մփյուռքի հայազետներն ու մանկավարժները, որոնց հոդվածներն ու գրախոսականներն ունեն ոչ միայն գիտական արժեք ու նշանակություն, այլև կրթադաստիարակչական մեծ ներուժ ու կարևորություն. երիտասարդ սերունդը ավագների փորձի և իմաստության կարիքն ունի, և հանդեսն այդ կտրվածքով իսկապես ծառայում է իր առաքելությանը:

Մանկավարժական համալսարանի հայազետների համար «Հայագիտական հանդեսը» սնուցող մայր է, այդպիսին է եղել նա տողերիս հեղինակի համար, ում գիտամեթոդական բնույթի մի շարք հոդվածներ հրատարակվել են բուհի պարբերականում:

Մենք՝ բոլորս, մահկանացուներ ենք, «Հայագիտական հանդեսն» անմահ է. թղթակցելով հանդեսին՝ ակամայից դառնում ենք գիտության հավերժական երթի ուղեկից: «Հայագիտական հանդեսը» մեզ տանելու է

Ժամանակների անվերջանալի ծիրի հետ, և նրա երթը հարատև է, չէ՞ որ նա ընդամենը քսանամա երիտասարդ է:

Շնորհավո՛ր քսանամյա հոբելյանդ, հարագա՛տ Հայագիտական . . .

«Հայագիտական հանդեսի» թղթակիցների և բազմահազար ընթերցողների անունից՝ պրոֆ. Լալիկ Խաչատրյան

ՅՈԹԵՐՈՐ ԴԱՍ

Յոթերորդ դաս խորագրեմ իմ այս նյութը, որովհետև հենց յոթերորդ դասի տրամաբանության մեջ է այն, ինչին իր գոյությամբ կոչված է «Հայագիտական հանդեսը»:

1960-ականներին իմ հարազատ մանկավարժական ինստիտուտում միայն «Մանկավարժ» բազմատիրած թերթով էինք ծանոթանում ինստիտուտի ներքին կյանքին, գրական ու մշակութային անցուղարձին: Ուսանողներին գրած ռեֆերանտները ֆակուլտետային գիտխորհրդի նեղ շրջանակում ընթերցվելիք նյութեր էին՝ ոչ հասու մյուս ֆակուլտետների ուսանողությանը:

Հիմա իմ նախկին ինստիտուտը, որ համալսարան է արդեն, «Մանկավարժ»-ից բացի իր հանդեսներն ունի, ուր պրոֆեսորա-դասախոսական կազմի ուսումնասիրություններն են տպագրվում, որոնք մի յուրատեսակ դասախոսություն են ուսանողների համար, եւ նաեւ փորձի տարածման հրաշալի հարթակ:

Շնորհավորում եմ «Հայագիտական» հանդեսի ստեղծման 20 – ամյակը, որն հրատարակվում է եռամսյակը մեկ եւ որն իր հոբելյանական 60-րդ համարով ներկայանում է այս օրերին:

Կրկնեմ միտքս, թե այս հանդեսը մի յուրօրինակ յոթերորդ դաս է վարում, եւ նրա «լսարանում» ուսանողները ծանոթանում են համալսարանի դասախոսների գիտական ուսումնասիրություններին, իսկ դասախոսներն էլ՝ իրենց կոլեգաների նոր գործերին:

Ես, որպես այս ԲՈՒՀ-ի նախկին սան, թերթում եմ հանդեսի տարբեր համարներ, եւ նախկին իմ սիրելի դասախոսների հետ «հանդիպելու» հաճելի առթոյներն ունեմ, ուրախանում եմ նրանց նոր գործերով, ուրախանում եմ, որ այս վիրտուալ հանդիպման հնարավորությունը ստանում եմ «Հայագիտական հանդես»-ի միջոցով: Ի՛նչ երեւելի անուններ կան՝ Աշոտ Աբրահամյան, Պետրոս Բեդիրյան, Արշալույս Բաբայան, Տեղեմակ Վարդումյան, Ռուբեն Զարյան, Մեղա Միրզոյան, Սոֆիա Լալախանյան... Ստացվում է, որ «Հայագիտական հանդես»-ի շնորհիվ ես շարունակում եմ ուսանել իմ հարազատ նախկին մանկավարժականում եւ իմ սիրելի դասախոսների՝ հանդեսում տպագրվող նյութերով շարունակում եմ նոր գիելիքներ ձեռք բերել եւ իմաստանալ:

Գուցե այնքան էլ պատշաճ չի, որ ես գովեստներ շռայլեմ հանդեսի գլխավոր խմբագիր Մարտին Գիլավյանի հասցեին, բայց, տեսնելով, թե ինչ

բժախնդրությամբ են ընտրվում նյութերը, ինչ ճաշակով են մատուցվում դրանք, եւ թե ինչպես է հանդեսն իր մասնակցությունը բերում համալսարանի տարեգրության ստեղծման գործում,- այդուհանդերձ, պետք է արժանոյնս արժեւորվի գլխավոր խմբագրի նվիրումն այս գործում: 1960-ական թվականներից տասնամյակներ անց Մարտին Գիլավյանի անվանը հավելվել է դոկտոր, պրոֆեսոր տիտղոս, եւ լրագրության ու հրապարակախոսության դաշտում էլ եթե ինչ-որ չափով իմ ոտքերն ամուր հենել եմ գետնին, մեր հոգիներում մեր նախնիին մանկավարժականի ցանած սերմերի բարեբեր ծլարձակումի արդյունքն է: Ուրեմն, շնորհավոր ծերունագարդ, բայց եւ շատ ջախել համալսարանի հարյուրամյա, եւ «Հայագիտական հանդես»-ի 20-ամյա հոբելյանները:

ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ՄԱՆՈՒԿ ՖԵԼԵՔՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Հրաչյա Աճառյանի անվ. լեզվի ինստիտուտ
Բան. գիտ. թեկնածու
Էլհասցե՝ manukfelegyan@gmail.com

ՍՈՒՄԱՆԱՍ ՏԻՈՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Հրաչյա Աճառյանի անվ. լեզվի ինստիտուտ
Բան. գիտ. թեկնածու
Էլհասցե՝ susannatoyan@yahoo.com

**ԱՐԵՎՄՏԱՀԱՅԵՐԵՆԻ ՆՈՐԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՌԱՐԱՆԱԳՐՄԱՆ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Ամփոփում

Հոդվածում համառոտ արծարծվում են նորաբանությունների սահմանման և ընտրության սկզբունքները: Արևմտահայերենի նորաբանությունների համար ընտրված բառանյութը պետք է արձանագրված չլինի հայերենի նախորդ բառարաններում, այդ թվում նաև արևելահայերենի բառարաններում: Բացառություն պետք է արվի միայն արևելահայերենի նորաբանությունների նորագույն բառարանների համար, քանի որ այժմ երբեմն դժվար է ստույգ որոշել՝ նորաբանությունն առաջինն ստեղծվել է արևելահայերենում թե՞ արևմտահայերենում:

Բառարանում իբրև գլխաբառ պետք է ներկայացվեն ոչ միայն նորակերտ բառերը և նորագույն փոխառությունները, այլև իմաստային նորաբանությունները:

Գլխաբառերը պետք է տրվեն բնագրերի ուղղագրությամբ, որը մեծ մասամբ ավանդական կամ հին ուղղագրությունն է: Լուսաբանող օրինակներում պահպանվում է բնագրի կետադրությունը:

Արևմտահայերենի նորաբանություններին կից տրվում են քերականական և ռճաբանական միայն նվազագույն տեղեկություններ: Բացատրվում են նորաբանությունների՝ միայն բերված բնագրային օրինակում ունեցած նշանակությունները: Բնագրային վկայությամբ չհաստատված հնարավոր նշանակությունները բացատրություններում չեն ընդգրկվում:

Այսպիսի բառարաններում պետք է բացառվեն հեղինակների կազմած օրինակները. լուսաբանող նյութը պետք է ունենա խիստ փաստական սկզբնաղբյուր՝ ստույգ հղումով իրական բնագրին:

Բանալի բառեր և արտահայտություններ. արևմտահայերենի նորաբանություններ և նորակազմություններ, նորաբանությունների բառարաններ, նորմատիվ բառապաշար, իմաստային նորաբանություններ, բառահոդվածի կառուցվածք, բառիմաստի բացատրություն, լուսաբանող օրինակներ:

Ներածություն

Հոդվածում արծարծվում են նորաբանությունների սահմանման և ընտրության սկզբունքները, քննվում են արևմտահայերենում դրանց առաջացման ճանապարհները:

Արևմտահայերենի նորաբանությունների գրքերի շարունակական տպագրումը հիմնավորվում է նորաբանությունների հավաքագրման, դասակարգման և բնութագրման անհրաժեշտությամբ. մեր լեզվի այդ տարբերակի համար նման ուսումնասիրություն երբևիցե չի կատարվել:

Գրական արևելահայերենի համար վերջին տասնամյակներում կազմվել են նորաբանությունների մի քանի բառարաններ¹: Այսօր էլ շարունակվում է ՀՀ ԳԱԱ Լեզվի ինստիտուտի «Նոր բառեր» բառարանի պրակների հրապարակումը²:

Արևմտահայերենի համար նորաբանությունների որևէ ընդգրկուն բառարան դեռ չի կազմվել: ԳԱԱ Հ. Աճառյանի անվ. լեզվի ինստիտուտի արևմտահայերենի բաժինն այդ ուղղությամբ աշխատանքներ է նախաձեռնել. 2021 թ. կազմել ու հրապարակել է «Նոր բառեր արևմտահայերենի մեջ» (Ա գիրք) բառարանի էլեկտրոնային տարբերակը (շուրջ 1000 բառ ծավալով): Այժմ ընթացքի մեջ է դրա Բ գրքի խմբագրումն ու սրբագրումը: Այս երկու գրքերը արևմտահայերենի նորաբանությունների մեկտեղման և բառարանագրական մշակման առաջին փորձերն են մեր իրականության մեջ:

Նորաբանությունների ստեղծման հիմնական ոլորտներն են ժամանակակից գեղարվեստական գրականությունը (թե՛ ինքնուրույն և թե՛ թարգմանական), հեռուստատեսությունը, տպագիր և էլեկտրոնային մամուլը, քաղաքական շրջանակները, նաև խոսակցական լեզուն: Հիմնականում այս ոլորտներից էլ ընտրված է բառարանի նյութը:

¹ Էլոյան Ս., Արդի հայերենի նորաբանությունների բառարան, Երևան, «Նաիրի» հրատ., 2002, Մելիքիսանյան Փ., Նոր բառերի բացատրական բառարան, Երևան, «Փյունիկ» հրատ., 1996:

² Նոր բառեր, Ա-Զ պրակներ, Երևան, «Գիտություն» հրատ., 2015-2021:

Մեթոդաբանություն

Վերլուծության ընթացքում կիրառել ենք բառերի համընդհանուր ընտրության, լեզվաբանական դիտարկման և նկարագրության մեթոդները, բառերի բառարանային բացատրության և վիճակագրական վերլուծության տարրեր:

«Նոր բառեր արևմտահայերենի մեջ» Բ գրքի համար նյութեր են քաղվել Սփյուռքի հայալեզու կամ հայերեն էջ ունեցող մամուլի վերջին երկու տարիների համարներից («Զարթոնք», «Ազդակ», «Մարմարա», «Հորիզոն», «Ապագայ» և այլն), Սփյուռքում և հայրենիքում հրատարակված գեղարվեստական գրականությունից (մասնավորապես՝ «Գրական Սփյուռք» տարեգրքի 6-9-րդ հատորներից, Երևան, 2015-2020), Սփյուռքում գործածական դասագրքերից և գրականագիտական, պատմագիտական, ազգագրական հրապարակումներից: Մասամբ բառարանագրվել են նաև հիմնականում պարբերական մամուլում տեղ գտած թարգմանական գրականության նորաբանությունները: Առանձին ստեղծագործություններից մասնավորապես քարտագրվել են Օ. Ուայլդի «Դորիան Գրեյի դիմանկարը» (Օսգար Ուայլդ, «Տորիլը Կրեյի պատկերը») վեպի նորաբանություններն ու նորակազմությունները (ավելի քան 120 բառ. վեպը անգլերեն բնագրից թարգմանել է Վահե-Վահյանը):

Բառարանագրման նպատակով հավաքված բառափունջը զուգադրվել է ոչ միայն արևմտահայերենի բառարանների, այլև արևելահայերենում առկա բացատրական և այլ բառարանների նյութի հետ:

Բառարանի հեղինակները և խմբագիրները նորաբանություններն առանձնացնելիս առաջնորդվել են հետևյալ սկզբունքներով: Բառաշարքում ընգրկվել են բոլոր այն բառերը, որոնք բացակայում են արևմտահայերենի վերջին ամենաձավալուն երկհատոր «Հայոց լեզուի նոր բառարան»³-ից: Բառաշարքը պարտադիր համեմատվել է նաև էդ. Աղայանի «Արդի հայերեն բացատրական բառարանի»⁴ և Ակադեմիական քառահատոր բառարանի⁵ բառացանկերի հետ, որոնցում նույնպես մեր բառընտրանքը

³ Հայոց լեզուի նոր բառարան, հտ. I, աշխատասիրութեամբ Գնել արքեպ.

Ճերէճեանի եւ Փարամազ Կ. Տօնիկեանի, Պէյրութ, 1992, հտ. II, աշխատասիրութեամբ Արտաշէս Տէր Խաչատուրեանի, Պէյրութ, 1992:

⁴ Էդ. Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան, Հայաստան, Ե., 1976:

⁵ Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, հ. 1-4, ՀՍՄՀ ԳԱ հրատ., Ե., 1969-80:

վկայված չէ: Ըստ անհրաժեշտության համեմատված են նաև այլ բառարաններ (ցուցակը բերվում է Ա և Բ գրքերում):

Այլ է մոտեցումը Լեզվի ինստիտուտի «Նոր բառեր» պրակների նյութի նկատմամբ: Սրանցում արձանագրված են բացառապես հայրենիքում և արևելահայերենով հրատարակված մամուլից, գիտական և գեղարվեստական գրականությունից (ինքնուրույն և թարգմանական), համացանցից, հեռուստատեսյանից, գովազդային հոլովակներից, բանկերի, նախարարությունների բուկլետներից, ձևաթղթերից հավաքված նորաբանությունները⁶: Դրանցում արձանագրված ոչ քիչ թվով բառեր ակնհայտորեն ստեղծվել կամ պատճենվել են արևմտահայերենում: Դրանք հիմնականում գրավոր, երբեմն էլ բանավոր ճանապարհով փոխանցվել են արևմտահայերենից (սակայն հեղինակները, ուղղակի իրենց սկզբունքներից ելնելով, բերել են արևելահայ մամուլում արձանագրված օրինակները): Այդպիսի բառերը տեղ են գտել նաև սույն բառգրքերում՝ արևմտահայերեն սկզբնաղբյուրներից քաղված բնագրային օրինակներով:

Բացի դրանից՝ նշենք, որ անկախությունից ի վեր, երբ վերացել են մեր ժողովրդի և մեր լեզվի երկու հատվածների միջև եղած գաղափարական արհեստական խոչընդոտները, շատ ավելի հեշտացել և անհամեմատ ընդլայնվել են արևելահայերենի և արևմտահայերենի բառապաշարային մերձեցումները և փոխադարձ ներթափանցումները: Այժմ երբեմն դժվար է ստույգ որոշել նորաբանությունն առաջինն ստեղծվել է արևելահայերենում թե՞ արևմտահայերենում: Նաև այս պատճառով է, որ Լեզվի ինստիտուտի հրապարակած պրակների երկու շարքերում նորաբանությունները կարող են զուգատիպել: Ավելացնենք նաև, որ արևելահայերենի կամ արևմտահայերենի որևէ նորաբանություն չի կարող այդպիսին չընկալվել նաև մեր լեզվի մյուս տարբերակում:

Ինչպես հայտնի է, բացատրական ընդհանուր բառարանները, մանավանդ ակադեմիական բառարանները, ունեն նորմատիվ բնույթ. նրանցում ընդգրկված բառերը մտնում են ազգային լեզվի գրական բառապաշարի մեջ: Ակնհայտ է նաև, որ ոչ բոլոր նորակազմություններն են անմիջապես մերվում գրական բառաշերտին, իսկ դրանց մի մասը ընդհանրապես չի ընդգրկվում այդ շերտում և ժամանակի ընթացքում դուրս

⁶ Նոր բառեր, Ա պրակ, ՀՀ ԳԱԱ «Գիտելիք» հրատարակչություն, Երևան, 2015, էջ 5: Հայոց լեզուի նոր բառարան, հտ. I, աշխատասիրութեամբ Գնէլ արքեպ. Ճերէճեանի եւ Փարամազ Կ. Տօնիկեանի, Պէյրութ, 1992, հտ. II, աշխատասիրութեամբ Արտաշէս Տէր Խաչատուրեանի, Պէյրութ, 1992:

Է մնում բառապաշարից կամ փոխարինվում է այլ համանշանակով: Սակայն քանի որ չի կարելի վստահաբար որոշել, թե ո՞ր բառերը կմնան լեզվում, նորաբանությունների բառարանների հեղինակները իրենց բառարան են ընգրկում հանդիպող բոլոր նոր բառերը, այդ թվում նաև դիպվածականները և հեղինակային նորակազմությունները, նեղ մասնագիտական-տերմինային բառամթերքը, երբեմն նույնիսկ սխալակազմությունները (բնականաբար հատուկ նշումով):

Բառացանկում տեղ են գտել նաև այնպիսի բառեր, որոնք ըստ էության նորաբանություններ չեն, սակայն ինչ-ինչ պատճառներով չկան հայերենի հիմնական բառարաններում:

Հայերենի բացատրական բառարաններում (թե՛ հայրենիքում և թե՛ Մփյուռքում հրատարակված) չկա միասնական մոտեցում ժողովուրդների անունների (էթնոնիմների) ընդգրկման հարցում: Մասնակի որոշ միօրինակացում է նկատելի միայն Էդ. Աղայանի և Ակադեմիական քառահատոր բառարաններում: Սրանցում բերված են նախկին ԽՍՀՄ հանրապետությունների և եվրոպական փաստորեն բոլոր երկրների հիմնական ազգաբնակչությունների անվանումները, հայերի և Հայաստանի անմիջական հարևանների անվանումները: Մնացած դեպքերում կատարված է պատահական և որևէ օրինաչափություն չունեցող ընտրություն: Ասենք՝ Ամերիկա աշխարհամասի շուրջ վեց տասնյակ պետությունների և տարածքների բնակիչների անվանումներից Էդ. Աղայանի բառարանում տեղ են գտել միայն երկուսը՝ *ամերիկացիներ* (որպես ԱՄՆ-ի բնակիչներ) և *մեքսիկացիներ*: Առաջին հայացքից այսպիսի բառերի բառարանագրման հարցը կարող է շատ հասարակ կամ նույնիսկ պարզունակ թվալ, մանավանդ եթե հաշվի առնենք, որ հայերենը որևէ ազգության պատկանող անձ կամ որևէ տեղի բնակիչ նշանակող միայն մեկ ածանց ունի՝ իր երեք տարբերակներով՝ *-ցի/-ացի/-եցի*: Սակայն իրականում այս դեպքում էլ կան շատ խնդիրներ, որոնք նորմավորման պահանջ ունեն: Ասենք, ո՞ր դեպքում է հիմքի *-իա* վերջածանցը պահպանվում բառակազմության ժամանակ, իսկ ո՞ր դեպքում՝ ոչ (*Գերմանիա - գերմանացի, Իտալիա -իտալացի, Ճապոնիա - ճապոնացի, Բայց Դանիա - դանիացի, Լատվիա - լատվիացի, Քենիա - քենիացի*): Հայերենի դեպքում խնդիրը ավելի է բարդանում, երբ մեր լեզվի երկու տարբերակները միևնույն անվանման համար ինչ-ինչ պատճառներով (հիմնականում՝ արտալեզվական) կերտել են ոչ միանման կամ նույնահունչ բառեր, ինչպես՝ *արգենտինացի-արժանթինցի, շվեյցարացի - գուլիցերացի, ֆրանսիացի - ֆրանսացի, ուկրաինացի - ուքրանացի*: Կամ ինչպե՞ս վարվել այլ ձայնավորներով վերջացող տեղանուններով հիմքերի դեպքում. *Չիլի - չիլիացի* թե՞ *չիլիեցի, Պերու - պերուացի, պերուցեի* թե՞ *պերուցի*: Եվ կամ

Էլ՝ ի՞նչ մոտեցում ունենալ երկբառ կամ բազմաբառ անվանում ունեցող երկրների բնակիչներին նշելիս. *Կոտ դ'Իվուար - կոտդիվուարցի // դիվուարցի // իվուարցի // իվուարեցի* (հնարավոր են և այլ տարբերակներ): Նույնիսկ պարզ կամ այդպիսին ընկալվող բառերի դեպքում ամեն ինչ միանշանակ չէ. *բուշմեն*-ը աֆրիկյան ժողովրդի ներկայացուցիչ է, թե՞ մասնագիտություն (ունենք *բիզնեսմեն, սպորտսմեն*), *լատիշ*-ը ազգությամբ և է, թե՞ լեզու (կա *իդիշ*), վերջապես *գուլուս*-ը կրկին աֆրիկյան ժողովուրդ է, թե՞, ասենք, հին հռոմեական կամ հունական աստվածություն (*Վենուս, Բաքուս // Բաքոս*):

Մենք, այնուամենայնիվ, նպատակահարմար ենք գտնում բառարանում զետեղել որևէ ազգության ներկայացուցիչ կամ մի տեղի բնակիչ անվանող բառերը: Սրանք նեղ առումով իհարկե միայն պայմանականորեն կարելի է նորաբանություններ համարել, սակայն հաշվի ենք առել այն, որ այդպիսի և նման կազմությամբ (ասենք, *-հայ* վերջնաբաղադրիչով բարդությունները) հայերենի բառարաններից հիմնականում դուրս են մնացել: Ավելացնենք, որ բառարանագրել ենք միայն այն անվանումները, որոնք հանդիպել են մեր քարտագրած բնագրերում (մամուլ և այլ գրավոր աղբյուրներ): Սրանց մեջ քիչ չեն արևելահայերենի համեմատությամբ ուղղագրական տարբերակներ ներկայացնող անվանումները, ինչպես՝ *քանաստահայ, փորթուզալացի, սուրիացի, սուրիահայ, նորվեկացի, նիտերլանտցի, յորդանանցի* և այլն:

Մեկ այլ օրինակ՝ Էդ. Աղայանի կամ Ակադեմիական բառարաններում պատահական ընտրությամբ են ներկայացված ազնվականական օտար տիտղոսները և փոխառյալ հարգական դիմելաձևերը (կա *բարոն, չկան բարոնետ* և *դերբարոն*, կա *լորդ, չկա պեր*, կա *հերցոգ, չկա էրցհերցոգ*, կամ կան *սինյոր, միստր*, չկան *մեմ, սրր* և այլն): Սրանք, իհարկե, էկզոտիզմներ են, սակայն շատ տարածված են թարգմանական գրականության մեջ:

Բառահոդվածի կառուցվածքը, հետևելով մեր ազգային բառարանագրության ավանդույթներին, նույնական է բացատրական ընդհանուր բառարանների հետ: Գլխաբառերը տրվում են մեծատառերով ու մուգ և դասավորված են այբբենական կարգով: Սրան հետևում են քերականական նշումները և ռճաբանական, մասնագիտական բնութագրումները, ապա մեկնությունը: Վերջում տրվում է բնագրային լուսաբանումը՝ պարտադիր նշելով կոնկրետ աղբյուրը: Ստուգաբանական տեղեկություններ տրված են հազվադեպ, ըստ անհրաժեշտության:

«Նոր բառեր արեւմտահայերենի մէջ» բառարանի մեր կարծիքով մի շահեկան առանձնահատկությունն էլ այն է, որ սրանում առաջին անգամ ընդգրկված են նաև ***խմաստային նորաբանությունները***: Սա բառիմաստի

ընդլայնման մի տեսակ է, երբ փոխառվում է օտար բառի ոչ թե արտաքին՝ հնչյունական կողմը, այլ միայն բովանդակությունը՝ բառիմաստը: Մեր բառգրքերում բացատրված են այդպիսի բառիմաստների՝ տրված բնագրային օրինակներում ունեցած նշանակությունները: Իմաստային նորաբանությունները բառարանում գլխաբառից առաջ ունեն աստղանիշ (*): «Նոր բառեր արեւմտահայերէնի մէջ» գրքերում տեղ գտած իմաստային նորաբանությունների ճնշող մեծամասնությունը իմաստային պատճենումների արդյունք է: Սա փոխառության յուրօրինակ տեսակ է, երբ փոխառվում է օտար բառի ոչ թե արտաքին՝ հնչյունական կողմը, այլ միայն բովանդակությունը՝ բառիմաստը: Այս դեպքում բառը, փաստորեն, իր հնչյունական կազմով, բառաքերականական կառուցվածքով բնիկ, սեփական է, իսկ նրա մեկ կամ մեկից ավելի (երբեմն ժամանակակից բոլոր) իմաստները փոխառություն են որևէ օտար լեզվից⁷: Այս դեպքում կարևոր նախապայման է այդ բառերի առարկայական (նյութական) իմաստների նույնությունը փոխատու և փոխառող լեզուներում:

Նորաբանությունների բառարաններում ընդգրկված բառանյութի քննությունը ցույց է տալիս, որ այդ բառերը գրեթե բացառապես նյութական խոսքի մասեր են: Իսկ դրանց մեջ բահայտորեն գերակշռում են գոյական անունները: Եվ սա բնական է, քանի որ նոր բառերը մեծ մասամբ նոր իրակույթների (ռեալիանների)՝ առարկանորի, գործիքների, նյութերի, հասկացությունների անվանումներ են: Սրանց հետևում են ածականները, որոնք կազմված են նորաբանություն-գոյականներից, և բայերը:

Գլխաբառին հաջորդում են *քերականական համառոտ նշումները*: Գոյականների համար պարտադիր տրվում է հոլովումը, իսկ միավանկ վերջնաբաղադրիչներով գոյականների համար՝ նաև հոգնակին (*գործելառճ, զեկուցաբեր, զօրակազմ, ընտրակարգ*): Հոլովման և հոգնակիակազմության ժամանակ հնարավոր հնչյունափոխությունները նշվում են: Բայերի համար տրվում են միայն անկանոն վերջնաբաղադրիչ ունեցող նորաբանությունների անցյալ կատարյալի հիմքի ձևերը և հրամայականը: Սրանց հաջորդում են ռճաբանական նշումները:

Բառերի բացատրության համար կիրառվում է հիմնականում երկու միջոց՝ նկարագրական-տրամաբանական եղանակը և հղումային բացատրության մի ենթատեսակը՝ այսպես կոչված բառակազմական բացատրությունը: Հոմանշային բացատրությունը ծառայում է որպես օժանդակ միջոց: Քանի որ նշված եղանակներից առաջինը առավել կիրառելի է արմատական բառերի համար, այն կիրառվում է հիմնականում

⁷ Սուքիասյան Ա., Ժամանակակից հայոց լեզու, Երևան, ԵՊՀ, 1989, էջ 210:

փոխառյալ բառերի բացատրություն համար: Լեզվի ներքին միջոցներով կերտված նորակազմությունների բացատրության ժամանակ հղում է կատարվում բառակազմական հիմքի իմաստին և նշվում է այն նոր նշանակությունը, որ նրան հաղորդել է ածանցը կամ սերող հիմքը: Օրինակ՝ **Անդրտարածաշրջանային**, ած., Տարածաշրջանից դուրս՝ այն կողմ գտնվող: **Դրամատոնային**, ած., Դրամատանը հատուկ՝ վերաբերող, դրամատան, բանկային: **Զօրակազմ**, եր, գ., Զորք(եր)ի կազմ: **Ընտրակարգ**, եր, գ., Ընտրության՝ ընտրությունների կազմակերպման կարգ:

Ընդ որում, բացատրվում են նորաբանությունների՝ միայն բերված բնագրային օրինակում ունեցած նշանակությունները: Բնագրային վկայությամբ չհաստատված հնարավոր նշանակությունները բացատրություններում չպետք է ընդգրկվեն: Այսպես, **ատամնափայլ** բառը խոսքաշարից դուրս կարող է ընկալվել թե՛ գոյականական («ատամ(ներ)ի փայլ») և թե՛ ածականական («փայլող՝ փայլուն ատամներով») նշանակությամբ: Բառարանում բերված լուսաբանող օրինակում այն ունի ածականական իմաստ, որոշիչ է և բացատրվում է իբրև ածական («...Ատամնափայլ խափշիկներ հրեշայնօրեն կը դափդափեին պղինձէ թմբուկներ...»):

Նորաբանությունների բառարաններում չեն կարող լինել և չկան հեղինակների կազմած *լուսաբանող օրինակներ* (դա ընդհանուր բացատրական բառարանների սկզբունքներից է): Մեր բառարանի բոլոր օրինակներն ունեն խիստ փաստական սկզբնաղբյուրներ: Յուրաքանչյուր բառի համար կա կոնկրետ հղում իրական բնագրին:

Նորաբանությունները լեզվի բառապաշարի յուրահատուկ շերտ են կազմում: Դրանց առաջացման պատճառը հիմնականում արտալեզվական է (նոր առարկաների, նյութերի, գործողությունների և այլն առաջացում), սակայն դրանք կերտվում են իհարկե ներլեզվական օրենքների և օրինաչափությունների ազդեցությամբ, ինչը ապացույց է լեզվի կենսունակության ու զարգացման:

Հայերենի և մասնավորապես նաև արևմտահայերենի նորաբանությունները ճնշող մեծամասնությամբ մեր լեզվի ներքին միջոցներով կերտված բաղադրյալ բառեր են: Մեր մոտավոր հաշվարկներով փոխառությունները «Նոր բառեր արևմտահայերենի մեջ» բառարանի առաջին երկու գրքերում չեն անցնում 10%-ից: Եվ քանի որ դրանք հայերենի միջոցներով են կազմվել, բավականին մեծ հնարավորություն ունեն արագ ձուլվելու գրական բառապաշարին: Բացի դրանից՝ այդ բառերը, կերտված լինելով հայ ընթերցողին արդեն հայտնի լեզվական միջոցներով (արմատներ, ածանցներ), այնքան դյուրընկալելի են հայ ընթերցողի համար,

որ երբեմն չի գիտակցվում դրանց նորաբանություն լինելը. միայն նորաբանությունների բառարանն է հուշում, որ դրանք հայերենում չեն եղել:

Եզրակացություն

Այսպիսով, նշենք.

- Արևմտահայերենի նորաբանությունների համար ընտրված բառանյութը պետք է արձանագրված չլինի հայերենի նախորդ բառարաններում, այդ թվում նաև արևելահայերենի բառարաններում: Բացառություն պետք է արվի միայն արևելահայերենի նորաբանությունների նորագույն բառարանների, համար, քանի որ այժմ երբեմն դժվար է ստույգ որոշել նորաբանությունն առաջինն ստեղծվել է արևելահայերենում թե՞ արևմտահայերենում:
- Բառարանում ընդգրկվում են նաև, այսպես կոչված, պայմանական նորաբանությունները՝ լեզվում վաղուց գոյություն ունեցող այն բառերը, որոնք երբևէ չեն բառարանագրվել:
- Բառարանում իբրև գլխաբառ պետք է ներկայացվեն ոչ միայն նորակերտ բառերը և նորագույն փոխառությունները, այլև իմաստային նորաբանությունները:
- Գլխաբառերը պետք է տրվեն բնագրերի ուղղագրությամբ, այսինքն՝ ավանդական կամ հին ուղղագրությամբ:
- Քերականական և ոճական նշումները տրվում են նվագագույն անհրաժեշտության չափով:
- Փոխառյալ բառերի բացատրությունը նկարագրական-տրամաբանական է, իսկ բաղադրյալ բառերինը՝ հղումային-բառակազմական: Հոմանիշները ծառայում են իբրև բացատրության օժանդակ միջոց:
- Բացատրվում են նորաբանությունների՝ միայն բերված բնագրային օրինակում ունեցած նշանակությունները: Բնագրային վկայությամբ չհաստատված հնարավոր նշանակությունները բացատրություններում չեն ընդգրկվում:
- Նորաբանությունների բառարաններում չեն կարող լինել հեղինակների կազմած *լուսաբանող օրինակներ* (դա ընդհանուր բացատրական բառարանների սկզբունքներից է): Բոլոր օրինակները պետք է ունենան խիստ փաստական սկզբնաղբյուրներ՝ կոնկրետ հղումով իրական բնագրին:

Օգտագործված գրականություն

1. Սուրիապյան Ա., Ժամանակակից հայոց լեզու, Երևան, ԵՊՀ, 1989, 400 էջ:
2. Էլոյան Ս., Արդի հայերենի նորաբանությունների բառարան, Երևան, «Նաիրի» հրատ., 2002, 499 էջ:
3. Մելքիսյան Փ., Նոր բառերի բացատրական բառարան, Երևան, «Փյունիկ» հրատ., 1996, 208 էջ:

Հայոց լեզուի նոր բառարան, հատ. I, աշխատասիրութեամբ Գնէլ արքեպ. Ճերէճեանի եւ Փարամազ Կ. Տօնիկեանի, Պէյրութ, 1992, հատ. II, աշխատասիրութեամբ Արտաշէս Տէր Խաչատուրեանի, Պէյրութ, 1992, 1207 էջ:

Манук Фелекян, Сусанна Тиоян

Особенности лексикографирования неологизмов западноармянского языка

Заключение

Ключевые слова и выражения: неологизмы западноармянского литературного языка, словари неологизмов, нормативная лексика, семантические неологизмы, структура словарной статьи, дефиниция слов, иллюстративный материал.

В статье кратко изложены принципы выделения и отбора неологизмов западноармянского литературного языка. Отобранная лексика не должна присутствовать в предыдущих словарях армянского языка, в том числе и словарях восточноармянского языка. Исключение должно быть сделано только для новейших словарей неологизмов восточноармянского языка, поскольку сейчас порой трудно точно определит, неологизм был ли вновь образован в восточноармянском или западноармянском языке.

В словаре должны быть представлены также семантические неологизмы.

Заглавные слова должны быть в орфографии оригинал, что по большей части является традиционным или дореформным. В иллюстрирующих примерах сохраняется пунктуация оригинала.

Для неологизмов даются минимально необходимые грамматические и стилистические сведения. Значения всех неологизмов определяются на основе иллюстративного материала. Потенциальные значения, не подтвержденные оригинальными цитатами, не должны определяться в словаре.

В таком словаре должны быть исключены примеры, составленные авторами. Иллюстративный материал должен иметь строго фактический первоисточник с конкретной ссылкой на реальный оригинал.

Manuk Felekyan, Susanna Tioyan

Features of lexicography of Western Armenian neologisms

Conclusion

Key words and expressions: neologisms of the Western Armenian literary language, dictionaries of neologisms, normative lexicon, semantic neologisms, structure of a dictionary entry, definition of words, illustrative material.

This article briefly discusses the principles of definition and selection of neologisms. The words selected for Western Armenian neologisms should not be recorded in previous Armenian dictionaries, including Eastern Armenian dictionaries. An exception should be made only for the newest dictionaries of Eastern Armenian neologisms, because now it is sometimes difficult to determine exactly whether the neologism was first created in Eastern Armenian or in Western Armenian.

Semantic neologisms should also be presented as head words in the dictionary.

Head words should be given in the original spelling which is mostly the traditional or old spelling. In the illustrative examples, the original punctuation is preserved.

Minimal information is given about grammar and stylistics of the Western Armenian neologisms. The meanings of neologisms mentioned in the original copy are explained only. Possible meanings not supported by the original evidence are not included in the dictionary.

Examples given by the authors should be excluded in such dictionaries. The covered material must have a strictly factual source with specific reference to the original text.

Խմբագրություն է ուղարկվել 25.12. 2022թ.

Հանձնարարվել է գրախոսության 10.01.2023թ.

Տպագրության է հանձնարարվել 13.03.2023թ.

ՎԱԼՏԵՐ ԲԵՐԲԵՐՅԱՆ

Երևանի պետական համալսարան

Հայոց լեզվի ամբիոնի ասպիրանտ

E-mail: walter.berberyan@mail.ru

**ԱԿՆԱՐԿՆԵՐ ԲԱՌԱՅԻՆ ՈՃԱԳԻՏԱԿԱՆ ՄՏՔԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ
(1950 - 2020-ԱԿԱՆ ԹԹ.)**

Ամփոփում

Բառային ոճագիտությունը ոճագիտության հիմնական բաժիններից մեկն է: Այն ուսումնասիրում է բառերի ոճական արտահայտչականության հնարավորությունները: Առանձնացվում են նաև բառագիտական և իմաստաբանական ոճագիտություններ: Յուրաքանչյուր լեզվի բառապաշարն ուսումնասիրելիս անհրաժեշտ է պարզել տարբեր բառերի արտահայտչական դերն ու ոճական գունավորումը: Անհրաժեշտ է տարբերակել ոճականորեն չեզոք և երանգավորված բառեր խմբերը: Հայերենի բառային ոճագիտությամբ հետաքրքրված են տարբեր լեզվաբաններ:

Հիմք ընդունելով Ս. Մելքոնյանի, Ս. Էլոյանի ոճագիտական դասակարգումները՝ աշխատանքում առանձին քննել ենք բառապաշարի իմաստաձևային խմբերը և շերտերը, մեկնաբանել ենք ոճագիտական վերլուծությունները: Ուսումնասիրել ենք հայոց լեզվի բառային ոճագիտության մասին գրված աշխատանքները, վերլուծել տարբեր հետազոտություններում առկա դրույթները:

Բանալի բառեր և արտահայտություններ. բառային ոճագիտություն, իմաստաձևային խումբ, բառապաշարի շերտեր, դասակարգում, արտահայտչականություն, հնաբանություն, նորաբանություն:

Ներածություն

Հարուստ է բառային ոճագիտական մտքի պատմությունը: Մեզ է ավանդվել տարբեր աշխատություններ, քննական նյութեր, գիտական հոդվածներ: Մի շարք հեղինակներ կատարել են խոր ուսումնասիրություններ, ինչպես՝ Ս. Էլոյան «Ժամանակակից հայերենի բառային ոճաբանություն», Ա. Պապոյան «Բառապաշարի ոճական արժեքի մի քանի հարցեր» և այլն: Մեծ բանաստեղծ Պ. Սևակի չափածոյի ընձեռած նյութի հիման վրա Ա. Պապոյանը քննարկել է նրա բառապաշարի ոճական արժեքի մի քանի հարցեր, մասնավորաբար, բառերի իմաստային յուրահատկությունները, շերտերը, իսկ Շալունցը քննել է համանունների

առաջացման աղբյուրները՝ հրատարակելով մի շարք հոդվածներ: Վերոգրյալ աշխատություններն ունեն կարևոր նշանակություն բառային ոճագիտական մտքի պատմության տեսանկյունից:

Ամսագրային հոդվածի սահմանափակ տարածքում, բնականաբար, հնարավոր չէ ներկայացնել բառային ոճագիտական մտքի ողջ պատմությունը: Ուստի մեր առջև նպատակ ենք դրել անդրադառնալ բառային ոճագիտական մտքի պատմության (1950 - 2020-ական թթ.) մի քանի կարևոր հարցերի, մասնավորաբար, բառապաշարի ոճաբանական դասակարգմանը, իմաստաձևային խմբերին, շերտերին՝ ամփոփ ներկայացնելով հայ լեզվաբանների որոշ դրույթներ:

Մեթոդաբանություն

Մեթոդաբանական հիմք է դարձել եղած տեսական դրույթների համադրումը: Կիրառվել են վերլուծական, համեմատական մեթոդներ: Փորձել ենք շարադրանքը ներկայացնել ըստ ժամանակագրության:

Բառապաշարի ոճաբանական դասակարգումները

Տարբեր լեզվաբաններ են փորձել կատարել բառապաշարի ոճաբանական դասակարգումներ: Ս. Մելքոնյանը բառապաշարի ոճաբանական դասակարգման մեջ առանձնացնում է դասակարգման երեք սկզբունք՝ առաջին դեպքում նկատի առնելով բառապաշարի օգտագործման ոլորտը (գործառական սկզբունք), երկրորդ դեպքում՝ բառապաշարի իմաստային-ոճաբանական հատկությունը, երրորդ դեպքում՝ ոճական (հուզաարտահայտչական) երանգավորումը¹: Լեզվաբանը առաջարկում է բառապաշարի տեսակների հետևյալ խմբերը. ըստ ձևի (համահունչ բառեր), ըստ իմաստի (հոմանիշ բառեր, հականիշ բառեր, բազմիմաստ բառեր, փոխաբերություններ), ըստ առաջացման աղբյուրի (համագործածական բառեր, բարբառային բառեր, հնաբանություններ, նորաբանություններ, օտարաբանություններ): Տարբերակելով խոսքային միջավայրերը, այն են՝ համասեռ (գրական) և տարասեռ կամ անհամասեռ, արևելահայ գեղարվեստական լեզվի բառապաշարը ենթարկում է հետևյալ դասակարգման՝ ա. բառեր, որոնց ոճական արժեքը դրսևորվում է համասեռ գրական միջավայրում՝ համագործածական բառեր, նորաբանություններ, տերմիններ, բ. բառեր, որոնց արժեքը դրսևորվում է տարասեռ միջավայրում՝ բարբառային բառեր,

¹ Տե՛ս Ս. Մելքոնյան, Ակնարկներ հայոց լեզվի ոճաբանության, Եր., 1984, էջ 41:

հնաբանություններ, օտար բառեր, ժարգոնային բառեր²:

Ս. Էլոյանը, կարևորելով բառերի հուզաարտահայտչական և գործառական տիպերի ոճական երանգավորման հատկանիշները, ժամանակակից հայերենի բառապաշարը դասակարգում է ըստ հուզաարտահայտչական և ըստ գործառական ոճական երանգավորման խմբերի: Հուզաարտահայտչական երանգավորման բառերը բաժանում է երեք խմբի՝ ա. բառեր, որոնք ունեն ընդգծված գնահատողական երանգ, բ. բազմիմաստ բառեր, որոնք ունեն հուզաարտահայտչական ցայտուն երանգով օժտված փոխաբերական կայուն իմաստներ, գ. հուզաարտահայտչական-գնահատողական երանգ ունեցող բառեր, որոնք ունեն սուբյեկտիվ գնահատության ածանցներ (նվազափաղաքչական)³: Ըստ գործառական-ոճական երանգավորման՝ տարբերակում է համագործածական կամ չեզոք բառապաշար, խոսակցական (առօրյա-խոսակցական, կենցաղային-խոսակցական) բառապաշար, գրքային (գրավոր խոսքի) բառապաշար խմբերը: Լեզվաբանները անդրադարձել են նաև բառերի տիպերին, բառապաշարի ոճաբանական շերտերին, ձևաիմաստային տարբեր խմբերին պատկանող բառերի ոճական կիրառություններին ու հնարավորություններին: Մենք կարծում ենք, որ Ս. Մելքոնյանի դասակարգումներն առավել համոզիչ են, քանի որ համակողմանիորեն են բնութագրում երևույթը:

Բառապաշարի իմաստաձևային խմբերը

Բառային ոճագիտական մտքի պատմության մեջ (1950 - 2020-ական թթ.) իր ուրույն տեղն ունի իմաստաձևային կամ ձևաիմաստային խմբերի քննությունը: **Գ. Վահանյանը** անդրադարձել է հոմանիշներին ու հականիշներին՝ ներակայացնելով դրանց ոճական դերը: Նա տվել է ոճագիտական տերմինների սահմանումներ՝ ամփոփ ներկայացնելով օգտագործման ոճական հնարավորությունները: Հեղինակը դիտարկումներ է կատարել նաև համատեքստի վերաբերյալ՝ նշելով, որ համատեքստից դուրս բառը կարող է կորցնել իր արտահայտչականությունը, և միայն հատուկ անուններն են, որ համատեքստից դուրս պահպանում են իրենց իմաստը: «Կոնտեքստը հնարավորություն է տալիս բառն օգտագործել իր պատկերավորության, արտահայտչականության հնարավորություններով»⁴: Ըստ լեզվաբանի՝ հոմանիշները հնարավորություն են տալիս հեղինակին խուսափելու կրկնությունից, և դրանով լեզուն դարձնում են

² Նույն տեղում էջ 50:

³ Ս. Էլոյան, Ժամանակակից հայերենի բառային ոճաբանություն, Եր., 1989, էջ 20:

⁴ Գ. Վահանյան, Հայոց լեզվի ոճաբանության ձեռնարկ, Եր., 1956, էջ 51:

հետաքրքիր, բազմազան: Կարծում ենք, որ լեզվի ճշգրտության և հստակության տեսանկյուններից կարևորվում է հոմանիշների ընտրությունը, իսկ դրանցից մեկի կամ մյուսի գործածելը ոճական խնդիր է: Գ. Վահանյանի առաջ քաշած մի շարք դրույթներ՝ ժամանակի ընթացքում կրեցին փոփոխություններ:

Գ. Զահուկյանը և Ֆ. Խլղաթյանը բառային ոճագիտության մասին խոսելիս կարևորում են համանիշների ոճական և իմաստային նուրբ տարբերությունները, որոնք բնութագրում են այսպես՝

ա. պատկանում են գործառական տարբեր ոճերի,

բ. արտահայտում են երևույթի կամ հատկության դրսևորման տարբեր չափեր,

գ. կարող են արտահայտել անձնական (սուբյեկտիվ) վերաբերմունքի տարբերություններ և ունենալ հուզաարտահայտչական տարբեր երանգներ⁵:

Զահուկյանի, Խլղաթյանի ներկայացրած սահմանումները առավել հաջող են, քան Վահանյանինը, քանզի աչքի են ընկնում նկարագրական հարուստ բովանդակությամբ:

Ս. Մելքոնյանը նշում է, որ ուսումնասիրողները հիմնականում բառագիտական մոտեցումով են բնութագրել իմաստաձևային խմբերից համանունները, և նույնիսկ ոճագիտական բնույթի աշխատություններում համանուն բառերի ըմբռնման հարցում ելակետը միայն բառագիտական է եղել: «Համանունների ճանաչման հարցում բառային մակարդակից դեպի խոսքային մակարդակն անցնելու դեպքում ակնհայտ է դառնում, որ նույնահնչունությունը կարող է դրսևորվել ոչ միայն բառերի ու բառաձևերի, այլև բառերի կապակցությունների միջև, հատկապես երբ դրանք հանդես են գալիս ռիթմական ամբողջության մեջ»⁶: Համանունների ոճական արժեքը համատեղ գործածություններում է դրսևորվում՝ ոչ թե առանձին, իրարից անկախ նախադասություններում: Ինչպես Ս. Մելքոնյանը, այնպես էլ **Ս. Էլոյանը** համանունների ամենահատկանշական կիրառություններից են համարում բառախաղը, որի գործածությունը այդքան էլ տարածված, կենսունակ չէ: Համանուն բառերը ժամանակակից հայերենում խոսքային համակարգում ոճական արժեք ունեն նախ չափածո խոսքում ունեցած հանգակերտական դերով, որով խոսքին հաղորդում են բարեհնչություն, երաժշտականություն և յուրահատուկ ռիթմ, հետո՝ արձակ խոսքում

⁵ Տե՛ս **Գ. Զահուկյան, Ֆ. Խլղաթյան**, Հայոց լեզու: Ընդհանուր գիտելիքներ: Ոճաբանություն, Եր., 1976, էջ 81:

⁶ **Ս. Մելքոնյան**, Ակնրակներ հայոց լեզվի ոճաբանության, Եր., 1984, էջ 52:

ունեցած բառախաղային նշանակությամբ⁷: Հավելենք, որ Ս. Էլոյանը դասակարգել է նաև համանունների և հարանունների տեսակները: Նա առանձնացրել է ըստ բառաձևերի ընդգրկման ծավալի (լրիվ, մասնակի, խառը համանուններ) և ըստ ծագման (համարմատ և տարարման կամ տարակազմ համանուններ) խմբերի համանուններ, իսկ հարանունները՝ տարարմատ և ընդհանուր բաղադրիչներ ունեցող խմբերի: Ըստ Ս. Էլոյանի՝ հարանուն բառերը խոսքի մեջ հանդես են բերում հետևյալ ոճական առանձնահատկությունները.

ա. չափածու խոսքում հարանուն բառերը հանդես են գալիս բառավերջում իբրև հանգաբառեր,

բ. մասնակցում են բանաստեղծական տողի ներքին ռիթմի ստեղծմանը,

գ. հաճախ են հանդես գալիս կրկնվող մեկ կամ երկու բառերի զուգադրությամբ, որի շնորհիվ առավել են շեշտվում ու արտահայտչական երանգ ստանում,

դ. հանդես գալով գեղարվեստական արձակում, գիտական, հրապարակախոսական ոճերում՝ խոսքին հաղորդում են արտահայտչականություն, դիպուկություն,

ե. թե՛ արձակ, թե՛ չափածո գեղարվեստական խոսքում հանդես են գալիս բառախաղային նշանակությամբ⁸: Լեզվաբանի ներկայացրած վերոգրյալ դրույթները, կարծում ենք, որ գիտականորեն համոզիչ են:

Բառի իմաստով պայմանավորված ոճական հնարավորությունները ևս եղել են լեզվաբանների ուշադրության կենտրոնում: Անդրադառնալով հականիշ բառերի գործածությանը՝ Ս. Էլոյանը քննում է ա. հականիշների գործածությունը հակադրություններում անտիթեզերում, բ. հականիշների գործածությունը ոչ անտիթեզային հակադրություններում, գ. հականիշների գործածությունը օքսիմորոնում: Խոսքի բազմազանությանը և արտահայտչական հագեցվածությանը մեծապես նպաստում են լեզվական և խոսքային հոմանիշները, որոնց ամբողջական բնութագիրը ևս տվել են լեզվաբանները: Ինչպես նկատում ենք, բառային ոճագիտական մտքի ձևավորման, տեսական մտքի զարգացման, իմաստաձևային խմբերի ոճական գնահատության մեջ մեծ է Ս. Էլոյանի և Ս. Մելքոնյանի դերը:

Ըստ ոճագետ **Պ. Պողոսյանի**՝ համաժամանակյա հայեցակետից բառապաշարի դասակարգման համար հիմք են դառնում բառերի իմաստներն ու իմաստային առնչությունները: Ըստ իմաստային

⁷ Ս. Էլոյան, Ժամանակակից հայերենի բառային ոճաբանություն, Եր., 1989, էջ 97:

⁸ Տե՛ս նույն տեղում, էջ 105-113:

առնչությունների՝ բառերը լինում են նույնանիշ, համանիշ, հականիշ, նույնանուն, հարանուն, տարանուն, տեսակասեռային մերձանիշներ, հարաբերակից բառեր⁹: Հեղինակը բառապաշարի իմաստաձևային խմբում ընդգրկում է մի շարք նոր բառեր, տերմիններ, որոնց վերաբերյալ հիմնականում լեզվական գիտելիքներ է մատուցում:

Գնահատելի է նաև **Ա. Մարությանի** բառերի իմաստաձևային խմբերի ոճական արժեքի քննությունը: Նա հիմնականում ներկայացրել է հոմանիշ, հականիշ, համանուն, համահունչ բառերի ոճական դերը: Լեզվաբանի ներկայացրած դրույթները, մեծամասամբ, նախորդների պատճենումներն են*:

Լ. Եզեկյանը ուսումնասիրել է հոմանիշները, հականիշները, համանունները, հարանունները և նրանց ոճական արժեքը: Ի տարբերություն նախորդ լեզվաբանների, որոնք առանձին տեսակ էին առանձնացնում նույնանիշները և հոմանիշները, Լ. Եզեկյանը դրանք միավորում է իբրև հոմանիշների տարատեսակներ¹⁰: Լեզվաբանը, մեծամասամբ, լեզվական հարուստ տեղեկություններ է ներկայացրել:

Բառային բանադարձումներին (ոճական հոմանիշներ, ոճական հականիշներ, նրբաբանություն, բառախաղ, աստիճանավորում) հիմնավոր անդրադարձ է կատարել **Թ. Շահվերդյանը**: Նա կատարել է հիմնավոր վերլուծություններ բառային մակարդակում գործառնվող դարձույթների ու բանադարձումների: Սա, ըստ էության, նոր որակ էր բառային ոճագիտության տեսանկյունից*:

Մերօրյա լեզվաբանները կարևորում են հոմանիշների, հականիշների շփոթությունը: «Իրար փոխարինող հոմանիշներից մեկը կամ մյուսը գործածելը ոճական խնդիր է, քանի որ դրանցից յուրաքանչյուրը յուրովի է երանգավորում խոսքը, դառնում որոշակի վերաբերմունքի արտահայտման միջոց: Իրար չփոխարինող հոմանիշների շփոթությունը պարզապես բառագործածության սխալ է, որ ստեղծում է անձիշտ խոսք: (...) Հոմանիշ բառերը միշտ չէ, որ կարող են իրար փոխարինել խոսքային նույն կառույցում, քանի որ դրանք խոսքային միջավայրում երբեմն դրսևորում են կապակցական անհամատեղելիություն»¹¹: Բառակազմական, մասամբ իմաստային

⁹ **Պ. Պողոսյան**, Խոսքի մշակույթի և ոճագիտության հիմունքներ, գիրք առաջին, Եր., 1990, էջ 183:

¹⁰ Տե՛ս **Լ. Եզեկյան**, Ոճագիտություն, Եր., 2006, էջ 199:

¹¹ **Յու. Ավետիսյան**, Հայոց լեզու և խոսքի մշակույթ, գիրք Ա, Եր., 2014, էջ 73:

* Առավել մանրամասն տե՛ս **Թ. Շահվերդյան**, Ոճագիտություն, Եր., 2010:

ընդհանրություններ ունեցող մի շարք բառերի համընկնող իմաստների, նրբիմաստների քննությունը համարում ենք կարևոր բառային ոճագիտության տեսանկյունից:

Բառապաշարի շերտերը

Բառապաշարի շերտերի քննության անդրադարձել են մի շարք լեզվաբաններ: **Գ. Վահանյանը** անդրադարձել է հնաբանություններին, նորաբանություններին՝ ներկայացնելով դրանց օգտագործման ոճական հնարավորությունները: Ըստ նրա՝ հնաբանությունները խոսքին հաղորդում են վեհություն, հանդիսավորություն և դրա ամենատարածված տեսակը գրաբարյան բառերն են (գրաբարիզմները): Հեղինակը մեկնաբանում է նաև օտարաբանությունները, բարբառային բառերը, պրոզաիզմները՝ տալով լեզվական տեղեկություններ: **Գ. Զահուկյանը և Ֆ. Խղաթյանը** իբրև նորություն ամփոփ բնութագրում են գոեհկաբանությունները, մեղմաբանությունները, ժարգոնային բառերը, վարչաբանությունները: Գոեհկաբանությունների որպես բառապաշարի շերտի և նրա ոճական արժեքի գնահատումը մեր օրերում ևս արդիական է:

Բառապաշարի ոճական շերտերին հիմնավոր, քննական անդրադարձ են կատարել **Ս. Էլոյանը, Ս. Մելքոնյանը**: Վերջինս ընդհանուր դիտողություններ է ներկայացնում համագործածական բառերի վերաբերյալ՝ կարևորելով փոխաբերական արտահայտչականությունը, ինչպես նաև փոխաբերական բառերի տեսակները և իմաստի դրսևորումները: Անդրադառնալով բարբառային բառերի ոճական կիրառություններին՝ Ս. Մելքոնյանը գրում է. «Բարբառային բառերի ու ձևերի ոճական արժեքն արտահայտվում է հետևյալ հիմնական հանգամանքներով՝ նպաստել կերպարի խոսքի անհատականացմանն ու տիպականացմանը, ժամանակաշրջանի ու միջավայրի կոլորիտի ստեղծմանը, խոսքի ոճավորմանը, տաղաչափական բնույթի խնդիրների լուծմանը, լեզվի ժողովրդայնությանը»¹²: Ի տարբերություն Ս. Մելքոնյանի՝ Ս. Էլոյանը չի անդրադարձել վերոնշյալ հարցերին: Նա ներկայացրել է բառապաշարի պասիվ շերտի բառերի ոճական կիրառությունները, մասնավորաբար, նորաբանությունների և հնաբանությունների: Հնաբանության տեսակների ոճական հնարավորությունների վերբերյալ տեղին դիտարկումներ ունի Ս. Մելքոնյանը: Ըստ լեզվաբանի՝ թեև դրանք նույն նպատակաուղղվածությունն ունեն, բայց գեղարվեստական լեզվում իրենց ունեցած դերով հավասարագոր չեն. արտահայտչականությամբ,

* Առավել մանրամասն տե՛ս **Ա. Մարություն**, Հայոց լեզվի ոճաբանություն, Եր., 2000:

¹² **Ս. Մելքոնյան**, Ակնարկներ հայոց լեզվի ոճաբանության, Եր., 1984, էջ 131:

խոսքի ոճական բովանդակության ձևավորմանը նպաստելու իրենց կարողությամբ բառային հնարանությունները գերազանց են քերականականներից¹³։ Մենք համակարծիք ենք այս ընդհանուր օրինաչափությանը։ Հեղինակը ներկայացնում է նաև հնարանությունների երկու տեսակների՝ հնարաբանության, պատմաբանության, իմաստային և կիրառական հիմնական տարբերությունները։ Ըստ Ս. Էլոյանի՝ պատմաբանության ոճական արժեքը հավասարազոր չէ մյուս տիպի հնացած բառերին։ Երկու լեզվաբաններն էլ փաստում են, որ, այլ անվանումներ չունենալու պատճառով, պատմաբանները ուղղակի անխուսափելիորեն կամ անհրաժեշտաբար են գործածվում, գործադրվում։ Պատմաբանները կիրառվում են և՛ անվանողական, և՛ պատմական ոճական երանգավորման նպատակադրումով¹⁴։ Նորաբանությունների գործածությանը ևս անդրադարձել են լեզվաբանները։ Ս. Էլոյանը ըստ գործառնության տարբերակում է դիպվածական և հեղինակային բառերը. դիպվածական բառերը գործառնում են առավելապես բանավոր-խոսակցական և գեղարվեստական ոճերում, իսկ հեղինակային բառերը՝ հիմնականում գեղարվեստական և մասամբ նաև գիտական ու հրապարակախոսական ոճերում¹⁵։ Ըստ Ս. Մելքոնյանի՝ տարածական իմաստով ավելի ակտիվ երևույթ են հանրական նորակազմությունները, քան անհատականները։ Մենք կիսում ենք լեզվաբանի տեսակետը։ Ավելացնենք, որ հեղինակային նորաբանությունները Ս. Էլոյանը բաժանում է ա. համատեքստի բառային միջավայրով պայմանավորված և բ. համատեքստային ներքին իրադրությամբ պայմանավորված հեղինակային բառերի։ Բառապաշարի շերտերին վերաբերող հատվածների շարադրանքը ընդգրկում է։

Տարածմանակյա հայեցակետից կատարելով բառապաշարի ոճաբանական շերտատում՝ **Պ. Պողոսյանն** անդրադառնում է գործածական և անգործածական բառերին, քննում այդ բառերի խոսքի մեջ ունեցած դերի հարցերը։ Նա ուշադրություն է դարձրել հնարանությունների, բառային նորաբանությունների, հեղինակային նորաբանների, դիպվածային բառերի և օտարամոծությունների ոճական արժեքներին։ Պ. Պողոսյանի մատուցած նյութը ծանրակշիռ է։

Հաշվի առնելով հուզաարտահայտչական բառապաշարի մեջ մտնող բառերի ոճական ու արտահայտչական բազմաթիվ երանգները՝ **Ա.**

¹³ Նույն տեղում էջ 143։

¹⁴ **Ս. Էլոյան**, Ժամանակակից հայերենի բառային ոճաբանություն, Երևան, 1989, էջ 249։

¹⁵ Նույն տեղում, էջ 232։

Մարությանը առանձնացնում է հետևյալ բառախմբերը՝

- ա. ժողովրդախոսակցական բառապաշար,
- բ. գնահատողական երանգ ունեցող բառեր (դրական կամ բացասական),
- գ. մտերմիկ-փաղաքշական երանգավորում ունեցող բառեր,
- դ. հեզնական-արհամարհական երանգավորում ունեցող բառեր,
- ե. ըստ գործածության ոճականորեն երանգավորված բառեր (իրադրական ոճական երանգավորում)¹⁶:

Ն. Վիրաբյանը, Լ. Մարգարյանը հակիրճ անդրադարձ են կատարել հնաբանություններին և նորաբանություններին: Ի տարբերություն նրանց **Լ. Եզեկյանը** ամբողջովին ներկայացրել է բառապաշարի շերտերը և նրանց ոճաբանական բնութագիրը: Հեղինակը փորձել է ամփոփել նախորդ լեզվաբանների կողմից կատարված բառապաշարի ոճաբանական դասակարգումները, ինչպես նաև առանձնացրել է բառապաշարի շերտերը՝ նշելով դրանց ոճական արժեքը ու հուզաարտահայտչական երանգավորումը:

Առնշանային (ոճական) լրացուցիչ իմաստի առկայությունից կախված՝ **Թ. Շահվերդյանը** հայերենի բառապաշարը ստորաբաժանում է երեք խմբի՝

- ա. ոճական տեսանկյունից չեզոք բառեր,
- բ. բարձր ոճական տոնին պատկանող բառեր,
- գ. ցածր ոճին պատկանող բառեր¹⁷:

Լեզվաբանը բառապաշարի բարձր ոճին պատկանող լեզվական տարրերից է նշում հնաբանությունները, օտարաբանությունները, նորաբանությունները, իսկ ցածր ոճի բառապաշարում են գործառնում բարբառները, գոեհկաբանությունները, ժարգոնային, ժողովրդախոսակցական բառերն ու արտահայտությունները: Լեզվաբանը համակողմանիորեն վերլուծում և երևան է հանում դրանց ոճական հնարավորությունները: **Յու. Ավետիսյանը** գործառական քիչ հաճախականություն ունեցող բառերից նշում է հնաբանությունները, նորաբանությունները, բարբառային-խոսակցական բառերը: Ըստ լեզվաբանի՝ խոսքի մեջ արտահայտչական ընդգծված երանգ ունեն նեղբարբառային բառերը՝ որպես քիչ գործածվող բառապաշար¹⁸: Համեմատելով գրական, խոսակցական, բարբառային բառախմբերում ընդգրկված տարբեր բառերի

¹⁶ **Ա. Մարության**, Հայոց լեզվի ոճաբանություն, Եր., 2000, էջ 209:

¹⁷ Տե՛ս **Թ. Շահվերդյան**, Ոճագիտություն, Եր., 2010, էջ 126:

¹⁸ **Յու. Ավետիսյան**, Հայոց լեզու և խոսքի մշակույթ, գիրք Ա, Եր., 2014, էջ 57:

գործածության հաճախականությունը՝ լեզվաբանը ներկայացնում է բառաշերտի արտահայտչական դերը, գործածության յուրահատկությունները:

Եզրակացություն

Այսպիսով, հայ ոճագիտական մտքի պատմության տեսանկյունից հետաքրքրական ընթացք է ունեցել բառային ոճագիտությունը: Հայոց լեզվի բառային կազմի ոճական հնարավորությունների ուսումնասիրությամբ զբաղվել են շատերը: Ուսումնասիրություններում առանցքային տեղ ունեն իմաստաձևային խմբերի և բառապաշարի շերտերի քննությունը: Ուսումնասիրելով տարբեր լեզվաբանների աշխատություններ՝ նկատեցինք, որ բառային ոճագիտությանն առնչվող շատ հարցեր շարունակվում են նորովի մեկնաբանվել այսօր: Բառապաշարի՝ որպես լեզվի ամենից արագ փոփոխվող բաժնի ոճագիտական ուսումնասիրությունները երևան կարող են բերել լեզվական նոր իրողություններ:

Օգտագործված գրականություն

1. Ավետիսյան Յու., Հայոց լեզու և խոսքի մշակույթ, գիրք Ա, Եր., 2014:
2. Եզեկյան Լ., Ոճագիտություն, Եր., 2006:
3. Էլոյան Ս., Ժամանակակից հայերենի բառային ոճաբանություն, Եր., 1989:
4. Մարության Ա., Հայոց լեզվի ոճաբանություն, Եր., 2000:
5. Մելքոնյան Ս., Ակնարկներ հայոց լեզվի ոճաբանության, Եր., 1984:
6. Շահվերդյան Թ., Ոճագիտություն, Եր., 2010:
7. Պողոսյան Պ., Խոսքի մշակույթի և ոճագիտության հիմունքներ, գիրք առաջին, Եր., 1990:
8. Զահուկյան Գ., Խլղաթյան Ֆ., Հայոց լեզու: Ընդհանուր գիտելիքներ: Ոճաբանություն, Եր., 1976:
9. Վահանյան Գ., Հայոց լեզվի ոճաբանության ձեռնարկ, Եր., 1956:
10. Վիրաբյան Ն., Մարգարյան Լ., Հայոց լեզու: Ոճաբանություն, Եր., 2007:

**Упоминания из истории лексической стилистики мысли
(1950-е годы до наших дней)**

Заключение

Ключевые слова и выражения: лексическая стилистика, лексико-семантическая группа, расслоение лексики, классификация, экспрессивность, архаизм, неологизм.

Лексическая стилистика является одним из основных разделов стилистики, изучающий стилистическую выразительность слов. Различают также лексикологическую и семантическую стилистику. При изучении лексики каждого языка необходимо выяснить экспрессивную роль и стилистическую окраску разных слов. К лексической стилистике армянского языка интересовались разные лингвисты. Многие из них написали как монографии, так и статьи. Исследования все еще продолжаются. В наше время актуальным считается стилистическое исследование лексики произведения известного или неизвестного писателя. Также изучают язык и стиль политических, общественных деятелей, экспрессивность словарного запаса. Студенты с большим энтузиазмом выполняют такие исследования.

Стилистические исследования лексики как наиболее быстро меняющейся части языка могут выявить новые языковые реалии, результаты, выводы. Новости могут касаться прямого и переносного значения слов, выразительных возможностей слов, принадлежащих к отслаиванию лексики, стилистической ценности разговорных, идиоматических, диалектных слов, вульгаризм, варваризм, а также словоупотребления и различных смежных вопросов. Слово также считается предметом изучения стилистики. Проблемы развития лексической стилистики армянского языка не обрисованы.

В статье представлены проблемы развития лексической стилистики (1950-е годы до наших дней). Основанный на С. Мелконян, С. Элояна стилистические классификации в статье мы изучили лексико-семантическая групп и расслоение лексики, интерпретировали стилистический анализ. Были изучены работы, написанные о лексической стилистике армянского языка, проанализированы положения в различных исследованиях. Методологической основой является сочетание существующих теоретических положений.

Valter Berberyan

**Mentions from a history of lexical stylistics thought
(From the 1950s to the present day)**

Conclusion

Key words and expressions: lexical stylistics, semantic group, exfoliation of lexicon, classification, expressiveness, archaism, neologism.

Lexical stylistics is one of the main sections of stylistics, which studies the stylistic expressiveness of words. They also differ in lexicological and semantic stylistics. When studying the vocabulary of each language, it is necessary to determine the expressive role and stylistic coloring of different words. Different linguists were interested in the lexical stylistics of the Armenian language. Many of them have written both monographs and articles. Studies are still ongoing.

Stylistic studies of vocabulary, as the most rapidly changing part of language, can bring new linguistic realities to light. They can refer to the direct and figurative meanings of words, the expressive possibilities of words belonging to exfoliation of lexicon, the stylistic value of colloquial, idiomatic, dialectal words, vulgarism, barbarism, as well as word usage, and various related issues.

The article presents the basic problems of development of lexical stylistics (from the 1950s to the present day). We examined the semantic groups and exfoliation of lexicon based on S. Melkonyan and S. Eloyan's stylistic classifications and explained the stylistic analysis. We have studied the works written about lexical stylistics of the Armenian language, analyzed the provisions in various researches. The methodological basis is the combination of existing theoretical provisions.

Խմբագրություն է ուղարկվել 08.02. 2023թ.

Հանձնարարվել է գրախոսության 25.02.2023թ.

Տպագրության է հանձնարարվել 13.03.2023թ.

ԱՋԼԻՏԱ ԴՈԼՄԽԱՆՅԱՆ

ԱԳՍՍ ԻՄԵՆԻ ԽԱՇԱՏՈՐԱ ԱՅՈՎՅԱՆԱ

ՇԼԵՆ-ԿՈՐՐԵՍՊՈՆԴԵՆՏ ԱՆԱՆ ԲԱ

ԴՈԿՏՈՐ ՓԻԼՈԼՈԳԻՇԵՍԿԻ ՄԱԿՆ, ՍՐՖԵՍՍՐ

aelita.dolukhanyan@gmail.com

ԱՄԵՐԻԿԱՆՏԿԱՅԱ ԼԻՐԱ ԴԵՎՈՆԴԱ ԱԼԻՏԱՆԱ

ՔրԵԴԻՏԼՈՎԻԵ

ՔրԵՎՈԴՆԱ ԴԵՎՈՆԴԱ ԱԼԻՏԱՆԱ ՅԱՆԻԱԿՈՒՄ ՕՏՈՅՈՒ ՄԵՍՏՈ Վ ԵԴՈ
ՄՆՈԴՈՒՏՐԱՏԼԵՎՈՅ ՄԱՍԿԱՐԱՆՈՅ, ԼԻՏԵՐԱՏՈՐՈՅ, ՓԻԼՈԼՈԳԻՇԵՍԿԻ Ի ՔԵԴԱԴՈԳԻՇԵՍԿԻ
ԴԵՅԱՏԵԼՆՈՒՏԻ.

Վ 1874 ԴՈՍՎ Վ ՎԵՆԵՑԻԱ ՅԻԼ ՕՓՈՒԼԻԿՈՎԱՆ ՏԵՐՆԻԿ «ԱՄԵՐԻԿԱՆՏԿԱՅԱ ԼԻՐԱ»
– ՔՈԴԵՐԽԱ ԻՅԵՐԱՆՆԻՔ ՏԻՒՒՔ, Վ ԿՈՏՈՐՈՅ ՏՈԴԵՐՋԱՏՅԱ ԻՆՏԵՐԵՍՆԵ
ՓՐՈԻՅՎԵԴԵՆԻԱ ԱՄԵՐԻԿԱՆՏԿԱՅԱ ԴՈՒՍՈՎՆՈՅ ԼԻՏԵՐԱՏՈՐԱ. ԱՆԳԼԻՅՏԿՈՒ ՆԱՅՎԱՆԵ
ՏԵՐՆԻԿԱ ԲԼԻՋԵ Կ ՏՈԴԵՐՋԱՆԻՍՈՒ ՏԻՒՒՔ. ԷՏՈ – *American Sacred Songs Translated
into the Armenian Language.*

ԱԼԻՏԱՆ ՔրԵՎԵԼ ԷՏԻ ԴՈՒՍՈՎՆԵ ՔԵՏՆԻ ՆԱ ԴՐԵՎՆԵԱՐՄՅԱՆՏԿԱՅԱ ՅԱՅԿ ԴՐԱԲԱՐ,
Ի ԷՏԻ ՏՎԱՇԽԵՆՆԵ ՔԵՏՆԻ, ԴՈՏԵԴԻՏԻ ՈՒ ՆԱՏ Վ ՏԵՐՆԻԿԵ, Վ ՅԱՇԽԵԼՆՈՅ
ՏԵՔԵՆԻ ՏՐԱՅՎՈՅՆ Վ ԿԼԱՏԻՇԵՍԿԻ ՓՐՈԻՅՎԵԴԵՆԻԱ ՏՐԵՎՆԵՎԵԿՈՎՈՅ
ԱՐՄՅԱՆՏԿԱՅԱ ԼԻՏԵՐԱՏՈՐԱ, ՕՏՈՅԵՆՈՒ ՕՓԻՇԻԱԼՆՈՅ ԼԻՏԵՐԱՏՈՐԱ, ՆԱՓԻՏԱՆՈՅ ՆԱ
ԴՐԱԲԱՐԵ. ՕՆԻ ԻՏԼԵԴՈՒՅՈՒ ՔՐՈԲԼԵՄԱ ՅԻՅՆԻ Ի ՏԵՐՏԻ, ՕՏՈՒՆԻՔՆԻ ՄԵՇՈՒ ԱՍՈՒՅԱ
Ի ՏԵԼՈՒ, ՕՏՈՒՆՈՅ ՓՐՈՅԱՎԼԵՆԻՒՄ ԿՈՏՈՐՅԱ ՅԱՅՎԱՅԵՆ ԴԵՆԻԱԼՆՈՅ ՏՐՈՒԴ
ՆԱՐԵԿԱՑԻ «ԿՆԻԴԱ ՏԿՈՐԲՆԻՔ ՔԵՏՆՈՓԵՆԻՅ»։ ՏԼԱՎԱ ՔՈՏԵՐՆԵՅ ՅԱՅԵ ՎԻՏԼԱ ՅԱ
ՔՐԵԴԵԼԱ ՆԱՇԻՈՆԱԼՆՈՅ ԼԻՏԵՐԱՏՈՐԱ Ի ՔՈԼՈՒՇԻԱ ՄԵՇՈՒՆԱՐՈՒԴՆՈՒ ՔՐԻՅՆԱՆԻ.

ԿԼՈՒԵՎԵՅԱ ՏԼՈՎԱ Ի ՎՐԱՅՐՋԵՆԻԱ: ԴԵՎՈՆԴ ԱԼԻՏԱՆ, ԱՐՄՅԱՆՏԿՈՒ
ՏՐԵՎՆԵՎԵԿՈՎԵ, ՔՐԵՎՈԴ, ԱՆԳԼԻՅՏԿԱՅԱ, ԴՐԱԲԱՐ, ԱՄԵՐԻԿԱՆՏԿԱՅԱ, ԲԻԲԼԻԱ, ԴԵՆՐԻ
ԼՈՆԴՖԵԼԼՈ, ՏՈՐԼՈՒՏԱ ԷԼԻՈՒ.

ԴՈՒՍՈՎՆԱ ԼԻՐԻԿԱ ԱՄԵՐԻԿԱՆՏԿԱՅԱ ՔՈՒՏՈՎ ՄԱՅԱ

ՏԱՄՅԱ ԻՅՎԵՏՆԻՒՄ ԻՅ ԱՄԵՐԻԿԱՆՏԿԱՅԱ ՔՈՒՏՈՎ, ՇԽԻ ՔԵՏՆԻ ԲԻԼԻ
ՔՐԵՎԵԴԵՆԻԱ ԱԼԻՏԱՆՈՒ, ՅԱՅՎԱՅԵՆ ԴԵՆՐԻ ԼՈՆԴՖԵԼԼՈ (1807-1882)¹. ՕՆ ԲԻԼ

¹ Վ 2015 ԴՈՍՎ Վ ԿԵՄԲՐԻԴՅԵ (ՏՄԱ) ՅԱ ՎԻԴԵԼԱ ԴՈՒՄ-ՄՅՈՒՅ ԼՈՆԴՖԵԼԼՈ, ԿՈՏՈՐՈՅ ՕՐՄՅՈՒՅ
ԴՈՎՈԼՆՈ ԲՈԼՏԻՒ ՏԱԴՈՒ Ի ՇՎԵՏՆԻԿՈՒ.

одним из любимых поэтов Ованнеса Туманяна, со стихов которого Туманян сделал целый ряд переводов, в том числе большой фрагмент из поэмы «Песня Айавата»² и замечательное стихотворение «Детям»³. Последнее, хотя и посвящено детям, имеет философскую глубину. Невинный и беззаботный возраст ребенка считается самым красивым в жизни человека.

Ничто не значит разум человека,
И он пуст и незначителен –
Перед первыми улыбками
Ваших невинных детских губ⁴.

Алишан перевел два стихотворения из Лонгфелло. Одно относится к песочным часам и очень глубокомысленно: *Sand of the Desert in an Hour-glass* («Песок пустыни в песочных часах»).

Все стихотворение о песке пустыни, заполняющем маленький стеклянный сосуд, и о потоке времени. Чего только не видел красный песок в песочных часах, сколько верблюдов топтало его, над ним прошел пророк Моисей, когда шел к фараону, над ним прошла Мария Назаретянка, с любовью обнявшая младенца Иисуса! Этот песок слышал как древние армяне пели свои старые псалмы:

И медленно распевая свои старые армянские псалмы
В получётком слоге⁵.

О любви древних армян, особенно жителей Сасуна, к псалмам Давида, свидетельствует Товма Арцруни, историк X-го века: «Они знают наизусть старые псалмы, переведенные армянскими архимандритами. Они у них всегда на устах»⁶.

Красный песок напоминает поэту различные видения, которые, благодаря песку, связывают разные эпохи человеческой жизни. И пока он был углублен в эти видения, за полчаса песок стекал в другую часть стеклянного сосуда и видения исчезали.

Видение исчезает! Эти стены снова
Отключают злое солнце,

² О. Туманян, Сочинения, т. II, Ереван, 1958, с. 274-28.

³ Там же с. 189.

⁴ Там же.

⁵ «Американская лира», избранные стихи, Венеция, 1874, с. 68.

⁶ Товма Мецопеци и Аноним, История дома Арцруни, Ереван, 1978, с. 138.

Отключают жаркую, неизмеримую равнину;
Получасовой песок пробежал⁷.

В стихотворении «Жнец и цветы» Лонгфелло представляет безжалостность смерти. Смерть с косой в руках пожинает цветы – людей, и человеку трудно расстаться с реальной жизнью, потому что его знания, связанные с вечностью непостежимы. Особенно, матери глубоко скорбят о потери своих детей, хотя они надеются встретить их снова в Небесном Царстве.

И мать отдала, со слезами и болью,
Цветы, которые она больше всего любила;
Она знала, что должна найти их всех снова
В долинах света наверху⁸.

Алишан не пишет имена и фамилии некоторых поэтов: есть только их инициалы. «Умирающая девушка» (*The Dying Girl*) by N.A. показывает боль, вызванную преждевременной смертью девушки, и надежду встретиться с ней снова.

Я оставляю тебя, сестра, ты, последняя,
Одинокая, спустившаяся среди мертвецов,
Над кем бледный лист уныния брошен
Из под крыла Скорби⁹.

Эти чувства американского поэта напоминают стихи, посвященные смерти Мкртичом Нагашом, известным армянским поэтом и духовным деятелем XV века. Они проникнуты глубокой скорбью, потому что умирает ребенок и уходит из жизни очень рано.

Невинные дети ранены ангелом
И падают ниц перед скорбящими родителями,
Они угасают перед плачущей матерью,
Увядая как цветок весной¹⁰.

⁷ «Американская лира», с. 70.

⁸ Там же, с.37.

⁹ Там же, с.39.

¹⁰ Мкртич Нагаш, Издано Э. Хондкаряном, Ереван, 1965, с.151.

Стихотворение английской поэтессы Шарлотты Элиотт (1789–1871) *On leaving home for a milder climate* «Об уходе из дома в более мягкий климат» также во многом связано с песней о духовном изгнании Мкртича Нагаша.

Согласно христианской религии, настоящая жизнь – это жизнь вечно живой души в потустороннем мире, а земная жизнь очень коротка.

В V веке в «Многovesщательных речах» Месропа Маштоца придается также большое значение жизни потустороннего мира, к которой человек должен готовиться в реальной жизни, чтобы быть рядом с Богом.

Вот и Шарлотта Элиотт надеется, что её вечная жизнь будет у Бога, и поэтому она не отчаивается из-за земного изгнания.

В Тебе мой тайник божественный,
Будь спокойствием при всех жизненных скитаниях,
Тогда слаще и святейшим будет мой покой,
С Тобой на небесах¹¹.

А Мкртич Нагаш, ставший скитальцем в реальной жизни, переехал из города Амид в Крым, увидел трудности эмиграции и скитаний, напоминает всем скитальцам, что человеческое существо – скиталец, а настоящая жизнь начинается только после смерти.

Мы все скитальцы, братья, у человека нет родины,
Мы умрем одинаково, потому что та жизнь – наша родина¹².

Эта же мысль была высказана Аристакасом Ластиверци еще в XI веке в самом начале его «Истории»¹³.

Многие сочинения из сборника «Американская лира» взяты из Ветхого и Нового Заветов Библии. Одним из них является сочинение *Absalom* «Авессалом».

Авессалом, один из сыновей царя Давида, является главным героем ряда отрывков из книги Царств II Ветхого Завета¹⁴.

Однако Авессалом не только не был верным отцу, но и хотел захватить его трон. Несмотря на этот факт, когда умирает Авессалом, Давид глубоко оплакивает смерть своего сына. Этому сложному психологическому

¹¹ «Американская лира», с. 35.

¹² Мкртич Нагаш, с. 167.

¹³ См. Аристакас Ластиверци, История. Перевод В.А. Геворкяна, Ереван, 1971, с. 1.

¹⁴ См. «Царства», II, 13,23-37, II-14, Б-15, II-16, II-17, II-18, II-19.

феномену посвящено обширное стихотворение «Авессалом» Н.П. Уиллиса (N.P. Willis).

Это своего рода плач, в котором отец оплакивает безвременную смерть своего любимого сына. Он призывает скорбящих, поющих плаксивые песни гусанов, чтобы с достоинством пели свои песни. Вот отрывок из плача Давида, созвучный его псалмам.

Увы! мой благородный мальчик, ты должен умереть!
Ты, кто был создан таким прекрасным!
Смерть должна поселиться в твоих славных очах,
И оставить свою неподвижность в этой копне волос.
Как могла она обречь тебя на безмолвную гробницу,
Мой гордый мальчик Авессалом¹⁵.

Тому же Willis-у принадлежит сочинение «Агарь в пустыне» (*Hagar in the Wilderness*).

Агарь, чье имя означает скиталица, была египетской служанкой Сары, жены Аврама, патриарха евреев.

Поскольку Сара не родила Авраму ребенка, она подсказала своему мужу заиметь сына от Агари¹⁶.

«Но Сара, жена Аврамова, не рождала ему. У ней была служанка египтянка, именем Агарь. Сара в земле Ханаанской сказала Авраму: вот Господь заключил чрево мое, чтобы мне не рожать, войди же к служанке моей: может быть, я буду иметь детей от нее»¹⁷.

От связи Аврама и Агарь, родился Измаил, но после рождения сына Сары, Исаака, Сара стала враждебно относиться к Агари и ее сыну. Вот этим событиям посвящено сочинение «Агарь в пустыне» Willis-a.

Для христианской религии очень важны душа и зрение души. От Гермеса Трисмегиста исходит мудрость, что «лучше быть слепым глазами, чем душой». Историк V-го века Егише повторяет эту мысль несколько раз в своей «Истории»: «Ибо тот, кто действительно связан с любовью Христа, видит глазами души невидимый чёткий свет лучей Познаваемого солнца, который каждый час, каждый день, ярче восходя, виден всем»¹⁸.

¹⁵ «Американская лира», с. 29.

¹⁶ См. «Бытие», 16, 17, 21.

¹⁷ «Бытие», 16, 1, 2.

¹⁸ Егише, О Вардане и войне армянской. Перевод и аннотации Е. Тер-Минасяна, Ереван, 1989, с. 223.

Это мышление присутствует во всей армянской средневековой литературе; оно также присутствует в работах поэтов-мехитаристов и во всеобщей христианской литературе.

Существованию духовному зрению посвящено сочинение *The blind man's lament* («Жалоба слепого») James Wallis Eastburn-а. Слепой жалуется, что лишен возможности видеть красоту реальной жизни, что его не завораживают цвета природы. Его единственное утешение в том, что однажды, после смерти, ночь исчезнет для него, и он будет в вечном свете в вечной жизни.

Ибо это говорит об утре, когда эта ночь пройдет
И мой дух будет жить там, где не умирают дни¹⁹.

В сборнике, составленном Алишаном, много строк посвящено Царству Небесному. Эта тема также имеет глубоко общехристианское содержание. Истинные верующие надеются, что в потусторонней жизни они увидят существо, сидящее на золотом сияющем троне. Об этом написано и в выбранном Алишаном сочинении Peabody *The Land of the Blest* («Страна Благославенных»), и в одной из песен поэта XIV-го века Костандина Ерзынкаци.

Քիօծի

Там проливает Бог милостивый
Свое чистейшее влияние на их головы,
И золотит души вокруг трона
Славой сияющей как Его собственная²⁰.

Կոստանդին Երզնկացի

В монастыре, в пятнадцать лет,
еще годами млад
Я был однажды в ночь,
во сне, виденьем чудным взят:
Пресветлый юноша сидел,
как царь, среди палат;
Как солнце был прекрасен он,
и свет – его наряд²¹.

¹⁹ «Американская лира», с. 31.

²⁰ «Американская лира», с. 17.

²¹ Костандин Ерзынкаци, «Утренний свет», Ереван, 1981, с 62.

Есть-ли бессмертие? Это вопрос, который занимал человечество с древних времен и будет продолжать занимать всегда, пока человечество существует на земле.

Именно этой вневременной теме посвящено стихотворение поэтессы Дены «Бессмертие» (*Immortality*).

Различные мнимые сцены изображены в разных религиях мира, которые представляют вечную жизнь души в божественном свете. Обращаясь к Богу, Дена говорит:

Души, которые Ты знаешь таинственным чувством,
Угасли при Твоем страшном, невидимом Присутствии²².

Из Евангелия от Матфея, поэт Н.А. заимствовал описание «Избиения младенцев Вифлеема», которое также на протяжении многих веков трогало многоязычных христианских авторов. Стихотворение Н.А. называется *Mourning at Rama* («Траур в Раме»). Когда Ирод понял, что волхвы обманули его, он очень рассердился и приказал зарезать в Вифлееме всех мальчиков, двух лет и младше. «Тогда сбылось реченное чрез пророка Иеремию, который говорит: «Глас в Раме слышен, плач и рыдание, и вопль великий; Рахиль плачет о детях своих и не хочет утешиться, ибо их нет»²³.

Избиение невинных младенцев поэт представляет душераздирающими картинками:

Ибо темна и печальна судьба Вифлеема;
Её долины полны человеческой крови;
Отчаяние сеет траур у её ворот,
И убийство преследует в бешеном порыве²⁴.

Сборник включает также работы других поэтов с аналогичным содержанием.

Заключение

Возникает вопрос, почему в 1874 году, когда он был уже в зрелом возрасте, Алишан перевел американские песни не на современный армянский язык, а на древнеармянский. Ведь в более молодом возрасте он написал «Песни патриарха» на современном армянском языке. Ответ на это один. Эти священные стихотворения, хоть и являются произведениями

²² «Американская лира», с. 51.

²³ Матфей, 2, 17-18.

²⁴ «Американская лира», с. 59

авторов XIX века, тесно связаны с богословским философским мышлением всего средневековья, созданным в армянской среде на древнеармянском языке, официальном языке Армянской Церкви. Кроме того, просветительские учреждения, созданные Мхитаристами и основанные Лазаревыми в Венеции, Париже и Москве, прекрасно преподавали древнеармянский язык, а высшая армянская интеллигенция владела этим языком.

Не следует забывать, что проповедники и сторонники современного армянского языка – Хачатур Абовян, Микаэл Налбандян, Степанос Назарян сами были великими знатоками древнеармянского языка.

Кроме того, стихотворения, собранные в «Американской лире», предполагали читателей, обладающих высоким вкусом, имеющим также знания по теологии.

Աելիտա Դոլուխանյան

Ղևոնդ Ալիշանի ամերիկյան քնարը Ամփոփում

Բանալի բառեր և արտահայտություններ. Ղևոնդ Ալիշան, հոգևոր երգ, հայ միջնադար, թարգմանություն, անգլերեն, գրաբար, ամերիկյան, Աստվածաշունչ, Հենրի Լոնգֆելլո, Շառլոտ Էլիոթ:

Բազմաբնագավառ գիտական, գրական, բանասիրական ու մանկավարժական գործունեության մեջ առանձին մասն ունեն Ղևոնդ Ալիշանի կատարած թարգմանությունները:

Ալիշանն այս հոգևոր երգերը թարգմանել է գրաբարով ու հատընտիրի մեջ մտած սրբազան երգերը շատ համահունչ են հայ միջնադարյան՝ հատկապես գրաբարագիր պաշտոնական գրականության դասական դրսևորումներին:

Ամերիկյան բանաստեղծներից, որոնց երգերը թարգմանել է Ալիշանը, ամենանշանավորը Հենրի Լոնգֆելլոն է (1807-1882): Նա եղել է Հովհաննես Թումանյանի սիրելի բանաստեղծներից, որից վերջինս կատարել է մի շարք թարգմանություններ:

«Ամերիկյան քնար» ժողովածուում շատ քերթվածներ քաղված են Աստվածաշնչի Հին ու Նոր Կտակարաններից:

Քրիստոնեական կրոնի համար խիստ կարևոր է հոգին ու հոգու տեսողությունը: Հերմես Եռամեծից է գալիս այն իմաստությունը, թե ավելի լավ է աչքով կույր լինել, քան թե՝ հոգով: Այս միտքը V դարի պատմիչ Եղիշեն կրկնում է իր պատմության մեջ մի քանի անգամ:

Aelita Dolukhanyan

The american lyre of Ghevond Alishan

Conclusion

Key words and expressions: Ghevond Alishan, hymn, Armenian Middle Ages, translation, English, Greek, American, Bible, Henry Longfellow, Charlotte Eliot.

The translations made by Ghevond Alishan have a special place in his multi-disciplinary scientific, literary, philological and pedagogical activities. Alishan translated these spiritual songs into grabar (Old Armenian) and the sacred songs included in the selection are very consistent with the classical manifestations of the Armenian medieval, especially official literature written in grabar.

Among the American poets whose songs Alishan translated, the most notable is Henry Longfellow (1807-1882). He was one of Hovhannes Tumanian's favorite poets, of whom the latter made a number of translations.

The *American Lyre* collection contains many excerpts from the Old and New Testaments of the Bible. The soul and soul sight are very important to the Christian religion. The wisdom that it is better to be blind in the eye than in the soul comes from Hermes the Great. The 5th century historian Yeghishe repeats this idea several times in his history.

Խմբագրություն է ուղարկվել 18. 10. 2022թ.

Հանձնարարվել է գրախոսության 05.11.2022թ.

Տպագրության է հանձնարարվել 13.03.2023թ.

ՄԱՐՏԻՆ ԳԻՆԱՎՅԱՆ

Խաչատուր Աբովյանի անվան ՀՊՄՀ
Բան. գիտ. դոկտոր, պրոֆեսոր
Էլհասցե՝ martingilavyan@mail.ru

ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԱՐԳԱՄԱՎՈՐ ՈՒՂԻ

Ներածություն

Սուրեն Այվազյանը նորագույն շրջանի հա գրականության ճանաչված, սակայն զարմանալիորեն ըստ արժանվույն չգնահատված գրողներից մեկն է, ով թողել է գրական հարուստ ժառանգություն՝ պատմվածքներ, արձակ բանաստեղծություններ, վիպակներ, վեպեր: Նա գրականություն բերեց հայրենի բնաշխարհի՝ Զանգեզուրի անկրկնելի գույները իր ծննդավայրի՝ պատմական Խնձորեսկի՝ արմատներով հայրենի եզերքին կապված, արժանապատվության բարձր զգացումով օժտված մարդկանց՝ ժամանակատարածական տարբեր հարթություններում ներկայացնելով նրանց ուրախության ու տխրության պահերով, մտահոգություններով ու տագնապներով, նաև՝ սպասումներով:

Ս. Այվազյանը լայն ճանաչման հասավ իր պատմվածքներով և «Ճակատագիրն հայոց» ու «Խնձորեսկ» վեպերով: Նրա պատմվածքներից շատերը պարզապես գլուխգործոցներ են՝ իրենց հոգեբանական նուրբ ներթափանցումներով, քնարականի ու պատմողականի մեծ վարպետությամբ կատարված համադրություններով, լեզվավորձական առանձնահատկություններով: Եվ պատահական չէ, որ նա բնութագրվում է որպես փոքր արձակի մեծ վարպետ:

Բանալի բառեր և արտահայտություններ. պատմվածք, վիպակ, վեպ, Խնձորեսկ, ուրույն աշխարհ, անկրկնելի գույներ, ինքնատիպ պատում:

Մեթոդաբանությունը

Կիրառել ենք գեղարվեստական գրականության արժևորման մի շարք մեթոդներ՝ վերլուծական, քննական, կենսագրական, համեմատական, համադրական:

Ցավալի մի իրողություն աստիճանաբար փոխվում է օրինաչափության. մոռացության են մատնվում անցյալի մշակութային արժեքները, նորահայտ «գրագետներից» ումանք, ինչպես Պ. Սևակը կասեր, իրենց դնում են «թաց սպունգը ձեռքն առած» աշակերտի, իսկ

պատմությունը, նախորդների ժառանգությունը՝ «սև գրատախտակի» տեղ ու մի վայրկյանում ջնջում «եղած-չեղածը»: Ոչ հեռու անցյալում մենք երախտագիտությամբ էինք հիշում մեր մեծերին, հիշողության մեջ պահում նրանց ժառանգությունը, սերունդներին ավանդում նրանց պատգամները: Համատարած առուծախի ու առուփախի մեր օրերում ամեն ինչ փոխվել է, ամեն ինչ պատվել է անտարբերության ու մոռացության ծանր շղարշով, ու մեր ժողովրդի արժանավոր զավակներին այժմ միայն (և այն էլ՝ մասնագիտական նեղ շրջանակներում, և այն էլ՝ ոչ բոլորին) հիշում ենք հոբելյանից հոբելյան,, առիթից առիթ...

1915թ. հունվարին լրացավ անվանի արձակագիր Սուրեն Այվազյանի ծննդյան 100-ամյակը, ու ոչ մի արձագանք չեղավ, ոչ մի լուրջ միջոցառում, եթե հաշվի չառնենք անվանի արձակագրին նվիրված «Սյունյաց երկիր» թերթի հոբելյանական թողարկումը:

Իսկ Սուրեն Այվազյանը միայն դրան չէր արժանի...¹

Սուրեն Այվազյանը ծնվել է ու մանկության տարիներին անցկացրել է Սյունյաց աշխարհի գեղատեսիլ անկյուններից մեկում՝ պատմական Խնձորեսկ գյուղում, որը հայտնի է իր անվանի զավակներով՝ գրողներ, կոմպոզիտորներ, արվեստի ու մշակույթի հանրաճանաչ գործիչներ, պատերազմի ու աշխատանքի հերոսներ: Կյանքի ու գրական գործունեության դժվարին ճանապարհ է անցել անվանի արձակագիրը՝ գրականություն բերելով մի ուրույն աշխարհ՝ իր անկրկնելի գույներով ու երանգներով, հայրենի եզերքին արմատներով կապված իր զավակներով, որոնք էլ դարձան գրողի պատմվածքների, «Տուր ձեռքդ, կյանք», «Բարի առավոտ», «Խնձորեսկ», «Կա ու հետմահու կյանք», «Ասուր, հե յ, Ասուր» և ուրիշ վիպակների ու վեպերի հերոսներ:

Ս. Այվազյանի բոլոր ստեղծագործությունների ավագանը հայրենի գյուղն է, որի բարձունքներից էլ նա տեսել և ճանաչել՝ աշխարհը. «Ես ամբողջ աշխարհն եմ սիրում: Նվիրական ու հարազատ է ինձ համարը Տագորի Բենգալիան: Երագում շրջում եմ Շիրազի վարդաստաններում, ուր Հաֆիզն իր գագելներն է հյուսել՝ տալով սոխակների երգի թովիչն ու վարդերի բույրը: Գյոթեի երկրից սրով են եկել իմ դեմ, ես իմ արյունով եմ պաշտպանել նրա երգը: Ինձ հարազատ է ամբողջ աշխարհը: Բայց թե

¹ Տպագրվում է հոդվածի վերամշակված ու լրացված տարբերակը: Համառոտ տարբերակը՝ «Փոքր արձակի մեծ վարպետը» վերնագրով, տպագրվել է «Գրական թերթի» 2015թ. հունիսի 5-ի (թ. 24) համարում:

մեռնեմ էլ Բոհեմիայի անտառներում, ինձ կթաղեք Զանգեզուրում»²: Ծննդավայրի մարդիկ, նրա անկրկնելի գույներն ու բույրերը ոգևորության ու ներշնչանքի մշտաբուխ աղբյուր են եղել Ս. Այվազյանի համար: Խնձորեսկի բնության մեջ է փնտրել գրողն իր պատմվածքների, վիպակների ու վեպերի բնական մարդկանց, որոնք եղել ու միշտ մաքուր են մնացել, չեն աղճատվել ու հաշմվել ոչ մի պարագայում:

Այլ է Խնձորեսկն ու այլ են նրա մարդիկ. «Այլ էին նրա գիշերներն ու ցերեկները: Խնձորեսկի երկնակամարով անցնող արևն այն արևը չէր, որ անցնում էր այս կիսագնդով ու ընկնում մյուս կիսագնդը: Ոչ էլ լուսնյակն էր նույնը: Դրանք միայն Խնձորեսկի արևն ու լուսինն էին, որ դուրս գալով ձախակողմյան ձորերի խորխորատներից, գնում, ջալկողմում մտնում էին Մթնաձորի այրերը: Այլ էին նաև մայր Խնձորեսկի մարդիկ, այնքան այլ, որ եթե հին Խնձորեսկից մեկին շատ հեռու մի տեղ ինչ-որ առիթով ինչ-որ մեկը հարցներ, թե ո՞վ ես, ի՞նչ մարդ ես, նա կպատասխաներ. «Խնձորեսկցի եմ»: Եվ այդ հեռավոր տեղի մարդը պիտի հասկանար, թե դա ինչ է նշանակում»³:

Ավագ սերնդի ընթերցողները լավ են հիշում Ս. Այվազյանի «Խիղճը» ժողովածուն, որը թարմ շունչ էր 1950-ականների վերջերի մեր գրական կյանքում:

«Անավարտ գորգը» (1947) և «Խորաձորցիք» (1951) պատմվածքների ժողովածուներից հետո, որոնք ակնհայտորեն իրենց վրա կրում էին ժամանակի ընդգծված ազդեցությունը, «Խիղճը» ժողովածուն բոլորովին նոր որակ էր ոչ միայն գրողի, այլև նոր շրջափուլի գրականության մեջ: Ժողովածուի պատմվածքներից յուրաքանչյուրը մի հրաշալի և ինքնատիպ պատում է գրողի հայրենակիցների մասին, որոնց Ս. Այվազյանը հրաշալի գիտեր, ճանաչում էր մանկության տարիներից: Ահա Շափաղաթ պապը, ով զոհված որդիների հիշատակը հավերժացնում է աղբյուր-հուշարձաններով, Փրթոսի ընկուզենու ստվերում ամեն իրիկնամուտի գրուցող ծերունիները, որոնց պատմությունները սկիզբ են առնում անհիշելի ժամանակներից ու հասնում մինչև խորհրդայնացման ու քաղաքացիական կռիվների, Մեծ հայրենականի օրերը, ներկան կապում անցյալի հետ: Ահա Սուկունց Լևոնը, Փանդունց Լավազարը, բրուտ Բախշին, Շիլ Շմավոնը և ուրիշներ՝ տարիների կենսափորձով իմաստնացած, հազար ու մի հոգսի ու ցավի տեր մարդիկ, ընդգծված անհատականություններ, ովքեր ընդհանրացնում են ժամանակի համապատկերը:

² Այվազյան ս., Կա և հետմահու կյանք, Եր., «Հայաստան» հրատ., 1972, էջ 88:

³ Այվազյան Ս., Խնձորեսկ, Եր., «Հայաստան» հրատ., 1982, էջ 12:

Ս. Այվազյանի բոլոր ստեղծագործությունների հերոսներն ունեն իրենց նախատիպերը, և հենց այդտեղ պետք է փնտրել այդ գործերի յուրահատկությունները: Մտացածին ոչ մի պատմություն չկա Ս. Այվազյանի պատմվածքներում ու մեծ կտավի ստեղծագործություններում, որոնք նվիրված են հայրենի բնաշխարհին և նրա մարդկանց, ինչը, սակայն, հիմք չի կարող հանդիսանալ նրան «գյուղագիր» անվանելու համար: Բացարձակապես նշանակություն չունի այն, որ գրողը պատմում է գյուղի ու նրա մարդկանց մասին, խոսում նրանց հոգսերից ու ցավերից: Գլխավորն այն է, որ հեղինակը փնտրում ու գտնում է բնական մարդուն: Նրա ստեղծագործություններում արագորեն իրար են հաջորդում օրերն ու տարիները, օրերի ու տարիների հետ փոխվում են դեպքերն ու մարդիկ, և գրողը կարողանում է ժամանակի հարահոսի մեջ որսալ ամենակարևորը, մարդու համար ամենատիպականն ու բնորոշը:

Հրաշալի վերնագիր է ընտրել գրողն իր պատմվածքների ժողովածուի համար՝ «Խիղճը», որովհետև այնտեղ գետեղված յուրաքանչյուր գործ յուրովի մի պատմություն է մարդկային բարձր արժանիքների մասին: Յուրաքանչյուր պատմվածք, լինելով ընդգծված որևէ անհատականության կենսապատումի մի էջ, տարբեր տեսանկյուններից է ներկայացնում մարդկանց, որոնք խիղճ ունեն Աստծո ամեն մի շնչավոր արարածի հանդեպ: Խիղճ և ոչ թե խղճահարություն, կարեկցանք և ոչ թե խեղճություն, որը յուրահատուկ չէ խնձորեսկցիներին: Ուժի ու մտքի պաշտամունք կա Ս. Այվազյանի հերոսների մեջ, որը գենետիկորեն անցնում է սերնդեսերունդ, դառնում հավատամք: Զինագործը պետք է հմուտ լինի իր գործում, և նրա պատրաստած զենքը պետք է միայն թշնամուն հարվածելու համար լինի, բրուտը պետք է արվեստի այնպիսի գործեր ստեղծի, որ տասնամյակներ, անգամ հարյուրամյակներ հետո էլ մարդիկ իմանան, որ դրանք ստեղծելու տարին բարենպաստ ու բերքառատ է եղել, պայտառը պետք է կարողանա այնպես ոլորել եզան վիզը, որ նա հլու ու հնազանդ ենթարկվի իրեն: Այդպիսին են Ս. Այվազյանի հերոսները:

Քիչ գրողներ կան, որոնց ստեղծագործությունները կարելի է ճանաչել առանց հեղինակի ստորագրության: Մա վերաբերում է նաև Ս. Այվազյանի պատմվածքներին, ինչը վաղուց է նկատվել գրականագետների կողմից: Ահա թե ինչ է գրում Ս. Մարինյանը Ս. Այվազյանի «Տուր ձեռքդ, կյանք» վիպակի՝ տպագրության երաշխավորելու համար գրված գրախոսականում. «Առանց ընդհանուր խորագրի, առանց հեղինակի անվան հիշատակության մի թղթապանակ՝ բոլորովին էլ ոչ խնամքով մեքենագրված արձակ էջերի պարունակությամբ: Բայց եթե նույնիսկ այստեղ չլինեք մամուլում տպագրված «Վերջին օրը» պատմվածքը, գրական ինքնատիպությունը կռահող աչքը չէր կարող չգուշակել, որ այդ էջերի

հեղինակը պատկերավորման իր յուրահատկություններով, ոճի առանձնահատկությամբ և կյանքի իր ընկալմամբ ոչ այլ ոք է, քան պատմվածքների տաղանդավոր հեղինակ Սուրեն Այվազյանը: Այդ արդեն գրողի համար լուրջ արժանիք է, յուրաքանչյուր գրողի համար ցանկալի նպատակ, որին, ի դեպ, Ս. Այվազյանը հասել է ոչ այնքան գրական մաքառման ճանապարհով, որքան գրողի իր բնածին շնորհքով: Սոսկ գրական ազդեցությամբ կարելի է արդյոք հասնել այնպիսի բնականության, այնպիսի թրթռուն անկեղծության, ինչպիսին առկա է «Տուր ձեռքդ, կյանք» վիպակում»⁴:

1955 թվականին լույս տեսավ «Լեռնցիներ» վեպը, այնուհետև հաջորդեցին «Տուր ձեռքդ, կյանք» (1962), «Բարի առավոտ» (1964), «Ճակատագիրն հայոց» (1966), «Կա ու հետմահու կյանք» (1971), «Առավոտը լուսո» (1976), «Խնձորեսկ» (1982), «Ասուր, հեյ, Ասուր» (1985) վիպակներն ու վեպերը և «Գարունս ձյունների տակ» (1972) մանրապատումները:

Ս. Սարինյանը Ս. Այվազյանի ամենաբնորոշ հատկությունը համարում է անկեղծությունը, որը յուրահատուկ է ոչ միայն նրա կողմից գրախոսված «Տուր ձեռքդ, կյանք» վիպակին, այլև խորհրդայնացման, քաղաքացիական կռիվների և 1960-ական թթ իրադարձություններին նվիրված ստեղծագործություններին. «Նկարագրվող ժամանակաշրջանի իրադարձությունների և կյանքում կատարվող տեղաշարժերի մասին շատ է գրվել մեր գրականության մեջ, բայց քչերն են կարողանում պահպանել չափի զգացումը ու ճշմարտացին: Ումանց երկերում ուղղակի այն պատկերն է ստացվում, թե սովետական կարգերի հաստատման հենց առաջին օրը կյանքը արմատապես փոխվում է և ստեղծվում է սոցիալական բարեկեցության և իրավունքի մի կատարյալ ներդաշնակություն: Այդ ճիշտ չէ, այդպիսի ուռա-ագիտացիա մեզ պետք չէ: Ա. Այվազյանն այս բնագավառում ամենաճշմարտացին է, և այստեղ առկա է գրողի անկեղծության զգացումը»⁵:

Իրոք, Այվազյանը մեծ ուշադրություն է հատկացնում այդ տարիներին նախադեպը չունեցող զարգացումների ոլորապատույտում հայտնված իր հերոսների ծանր ու ողբերգական ապրումներին, նրանց ներաշխարհում կատարվող փոփոխություններին: Եվ հատկանշական է, որ 1960-ական թվականներից հետո գրված ստեղծագործություններում չկան ընդգծված բացասական ու դրական կերպարներ, ինչը խիստ բնորոշ է այդ տարիների գրականությանը: Գրողը միշտ ձգտում է մարդու մեջ հայտնաբերել

⁴ Սարինյան Ս., Հայոց գրականության երկու դարը, «Զանգակ» հրատ., 2004, էջ 258:

⁵ Նույն տեղում, էջ 259:

մարդկայինը և նրան բնութագրել հենց այդ դիրքորոշմամբ. Գավառական Օաղկոտն քաղաքում բոլորը շատ լավ են ճանաչում Շափադյանին («Բարի առավոտ»), որը հայտնի է իր անհաշտ բնավորությամբ, անթիվ մատնագրերով: Նրա կերպարում անգամ Ս. Այվազյանը ինչ-ինչ դրական հատկանիշներ է տեսնում, մարդկային ինչ-որ դրական գծեր, որոնք ավելի ընդգծված կլինեին, եթե ժամանակներն այլ լինեին:

Գրողի կարապի երգը եղավ «Խնձորեսկ» վեպը, որը լույս տեսավ նրա մահվանից հետո: Վեպը պատմական քրոնիկոնի լավագույն օրինակներից մեկն է նորագույն շրջանի մեր գրականության մեջ: Ինքնակենսագրական հավաստի փաստերի հենքի վրա, գրողը ներկայացնում է իր ծննդավայրի և նրա մարդկանց կյանքը նախախորհրդային, խորհրդային, խորհրդայնացման ու քաղաքացիական կռիվների տարիներին: Վեպի երկրորդ հատորը պետք է նվիրված լիներ Մեծ հայրենականի ու ետպատերազմյան տարիների իրադարձություններին, պետք է լավագույնս ներկայացներ գրողին ու հանդիսանար նրա ստեղծագործական ճանապարհի հանրագումարը:

Քննադատությունը «Խնձորեսկը» բնութագրեց որպես «ստեղծագործական նվաճում», «գեղարվեստական ճշմարիտ հայտնություն», համեմատեց Ա. Բակունցի «Կյորեսի», Ս. Խանգալյանի «Մատյան եղելությանց» վիպակների հետ, որակեց որպես «հայրենի բնաշխարհի ու նրա մարդկանց ինքնատիպ համայնապատկեր՝ իբրև որդիական անչափելի սիրո առհավատչյա ու բարի օրհնություն»:

Վեպում հեղինակը ընթերցողին տանում՝ դեպի դարերի խորքը, փորձում ցույց տալ, թե որն է Խնձորեսկի ու Խնձորեսկցու յուրահատկությունը. «Եկեք այս մացառների մեջ կորչող ճանապարհով ձեզ տանեմ այն Խնձորեսկը, որ հիմա չկա, բայց դեռ ապրում է իմ հիշողության մեջ: Գնանք, կենդանացնեմ ձեզ համար, որ տեսնեք դուք էլ և ուրիշներին պատմեք, որ նա գոնե հիշողությունների մեջ միշտ կենդանի մնա: Ոչ նրա համար, որ դրա կարիքն զգում է մեռած Խնձորեսկը, այլ որ մենք՝ ապրողներս ենք զգում, և դա պետք է մեզանից հետո ապրողներին»⁶:

Ս. Այվազյանի ստեղծագործության մեջ ծանրակշիռ տեղ են գրավում պատմական անցյալի թեմայով գրված «Ճակատագիրն հայոց» և «Առավոտ լուսո» վեպերը, որոնք նվիրված էին 18-րդ և 19-րդ դարերի առաջին տասնամյակներում Հայաստանում տեղի ունեցած իրադարձություններին:

Երկու վեպերի առանցքում հայ ժողովրդի քաղաքական կողմնորոշման խնդիրն է, որը խիստ արդիական է նաև մեր օրերում:

⁶ Այվազյան Ս. Խնձորեսկ, Եր., «Սով. գրող» հրատ., 1982, էջ 9:

«Ճակատագիրն հայոց»-ը նվիրված է Իսրայել Օրու գործունեությանը, եվրոպական մի շարք երկրներում նրա դեգերումներին, այս համապատկերում՝ 18-րդ դարասկզբին Հայաստանում տեղի ունեցած ողբերգական իրադարձություններին, ազգային-ազատագրական շարժումներին: «Առավոտ լուստ» վեպը թեմատիկ ու ժամանակագրական առումներով «Ճակատագիրն հայոցի» շարունակությունն է՝ նվիրված Խ. Աբովյանի գործունեությանը: Երկու վեպերում էլ հեղինակը հաստատակամորեն առաջնային է համարում ռուսական կողմնորոշումը՝ Իսրայել Օրու և Խ. Աբովյանի գործունեությամբ բացահայտելով եվրոպական դիվանագիտության կեղծ ժողովրդավարությունը, երկդիմի քաղաքականությունը:

Երկու վեպերում էլ «Ս. Այվազյանի գեղարվեստական պատմահայեցության մեջ բացարձակ արժեքի կշիռ է ստանում հայ ժողովրդի ազգային արժանապատվության գերխնդիրը»⁷, որը լավագույն ներկայացուցիչներից մեկն է, ով գրականություն բերեց մի ուրույն աշխարհ՝ իր անկրկնելի գույներով ու երանգներով: Հատկապես ուշագրավ են նրա փոքր կտավի ստեղծագործությունները՝ պատմվածքներն ու մանրապատումները, որոնք ողողված են պայծառ գույներով ու ջերմ թրթիռներով: Բնական մարդու անհագ կարոտ կա այդ ստեղծագործություններում: Մարդու մեջ մարդկայինը, գեղեցիկն ու վեհը տեսնելու կարոտ:

Եզրակացություն

1. Սուրեն Այվազյանի գեղարվեստական արձակը նորագույն շրջանի հայ գրականության ուշագրավ էջերից է և աչքի է ընկնում հոգեբանական նուրբ ներթափանցումներով, պատումի անպաճույճ ոճով, լեզվամտածողության յուրովի դրսևորումներով: Նրա պատմվածքների, վիպակների, վեպերի հերոսները ներկայացված են տարածաժամանակային տարբեր հարթություններում՝ 18-րդ դարի խառնակ, «ճանապարհն հայոցի» տենդագին որոնումների, նախախորհրդային Հայաստանում, տնտեսական վերականգնման, հայրենական մեծ պատերազմի ժամանակներ: Այդ ստեղծագործություններում թեպետ գործողությունները ծավալվում են տարածական տարբեր հարթություններում, սակայն դրանց ավագանը Զանգեզուրն է, որը մեծ հաշվով ամբողջացնում է Հայաստանի մանրակերտը:

⁷ Արզումանյան Ս. Սովետահայ վեպը, Գ. 3, Եր., «Սովետական գրող», հրատ., 1986, էջ 348:

2. Ծննդավայրի մարդիկ, նրա անկրկնելի գույներն ու բույրերը ոգևորության ու սրտաբուխ ներշնչանքի մշտաբուխ աղբյուր են եղել Ս. Այվազյանի համար: Խնձորեսկի բնության մեջ է փնտրել գրողն իր պատմվածքների, վիպակների ու վեպերի հերոսներին՝ բնական մարդկանց, որոնք եղել ու միշտ մաքուր են մնացել հասարակության և հատկապես՝ իրենց խղճի առջև:
3. Ս. Այվազյանի պատմվածքների, վիպակների հերոսներն ունեն իրենց նախատիպերը, որոնց հեղինակը հրաշալի գիտեր, ճանաչում էր մանկության տարիները: Նրանք տարիների կենսափորձով իմաստնացած, հազար ու մի հոգսի ու ցավի տեր մարդիկ են, ընդգծված անհատականություններ, որոնք ընդհանրացնում են ժամանակի համապատկերը: Մտացածին ոչ մի պատմություն չկա Ս. Այվազյանի պատմվածքներում, վիպակներում, և գրողի համար ամենաբնորոշն այն է, որ կարողանում է գտնել այդ մարդկանց համար ամենաբնորոշն ու տիպականը և գեղարվեստականացնել մեծ վարպետությամբ:
4. Վերջապես անտարակույս է. ճիշտ ժամանակն է, որ Ս. Այվազյանի գրական հարուստ ժառանգությունն արժանանա գրականագիտական հիմնովոր, համակարգված քննության:

Օգտագործված գրականություն

1. Այվազյան Ս., Կա և հետմահու կյանք, Եր., «Հայաստան» հրատ., 1972:
2. Այվազյան Ս., Խնձորեսկ, Եր., «Հայաստան» հրատ., 1982:
3. Արզումանյան Ս. Սովետահայ վեպը, Գ. 3, Եր., «Սովետական գրող», հրատ., 1986:
4. Սարինյան Ս., Հայոց գրականության երկու դարը, «Զանգակ» հրատ., 2004

Мартин Гилавян

Творческий плодотворный путь

Заключение

Ключевые слова и выражения: Рассказ, новелла, роман, Хндзореск, уникальный мир, неповторимые цвета, оригинальное повествование.

1. Художественная проза Сурена Айвазяна является одной из выдающихся страниц армянской литературы новейшего периода и отличается тонкой психологической проникновенностью, незамысловатым стилем

повествования, уникальными проявлениями языкового мышления. Герои его рассказов, новелл и романов представлены в разных измерениях пространства и времени: хаос 18 века, лихорадочные поиски «Дороги в Армению», досоветская Армения, экономический подъем, времена Великой Отечественной Войны. В этих произведениях, хотя действия происходят в разных пространственных измерениях, их основой является Зангезур, что в целом дополняет миниатюру Армении.

2. Люди его родного края, его неповторимые краски и ароматы всегда были источником энтузиазма и сердечного вдохновения для С. Айвазяна. Именно в Хндзореской природе писатель искал героев своих рассказов, новелл и романов- естественных людей, которые были и всегда оставались чистыми перед обществом и особенно перед своей совестью.

3. У героев рассказов и романов Айвазяна есть свои прототипы, которых автор очень хорошо знал, знал с детских лет. Это мудрые люди с многолетним жизненным опытом, люди с тысячей и одной заботой и болью, сильные личности, обобщающие панораму времени. В рассказах и романах Айвазяна нет выдуманного сюжета, а самое характерное для писателя то, что он умеет найти то, что характерно и типично для этих людей, и с большим искусством сделать это художественным.

4. Наконец, бесспорно – настало время для всестороннего и систематического изучения богатого литературного наследия Айвазяна в литературоведении.

Martin Gilavyan

Creative productive way

Conclusion

Key words and expressions: Story, novelette, novel, Khndzoresk, unique world, unrepeatable colors, original narrative.

1. Suren Ayvazyan's fiction is one of the remarkable pages of Armenian Modern literature of the latest period and stands out for its subtle psychological penetrations, uncomplicated style of narration, unique manifestations of language thinking.

The heroes of his stories, novelettes and novels are presented in different dimensions of space and time: the chaos of the 18th century, the times of the feverish search for "The Armenian Road", pre-Soviet Armenia, economic recovery, and the Great Patriotic War. In those works, although the actions take place in different spatial dimensions, their basin is Zangezur, which apparently completes the miniature of Armenia.

2. For S. Ayvazyan, the people of his birthplace, its unique colors and aromas were a constant source of enthusiasm and heartfelt inspiration. In the nature of Khndzoresk, the writer searched for the heroes of his stories, novelettes and novels - natural people who were and always remained pure before society and especially before their conscience.
3. The heroes of Ayvazyan's stories and novels have their own prototypes, which the author knew very well and knew in his childhood. They are wise people with years of life experience, people with a thousand and one worries and pains, prominent personalities that generalize the image of time. There is no imaginary story in Ayvazyan's short stories and novels, and the most characteristic thing for a writer is that he is able to find what is distinctive and typical for these people and to make it fictional with great skills.
4. Finally, there is no doubt that it is the right time for S. Ayvazyan's rich literary legacy should be thoroughly and systematically examined in literary studies.

Խմբագրություն է ուղարկվել 10. 01. 2023թ.

Հանձնարարվել է գրախոսության 25.10.2023թ.

Տպագրության է հանձնարարվել 13.03.2023թ.

ՄԵԼԻՆԵ ԳԻԼԱՎՅԱՆ

Խաչատուր Աբովյանի անվան ՀՊՄՀ

Բան. գիտ. թեկնածու, դոցենտ

Էլիասցե՝ meline.gilavyan@mail.ru

**ՆՈՐԱԳՈՒՑՆ ՇՐՋԱՆԻ (1960-1980-ԱԿԱՆ ԹԹ.) ՄԱՆԿԱՊԻԱՏԱՆԵԿԱՆ
ԱՐՁԱԿԻ ԱՌԱՋԸՆԹԱՑԻ ՄԻՏՈՒՄՆԵՐՆ ՈՒ ՕՐԻՆԱԶԱՓՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Ամփոփում

Գրական-գեղարվեստական զարգացումները մեծապես պայմանավորված են հասարակական-քաղաքական կյանքում տեղի ունեցող փոփոխություններով: Եվ անտարակույս է, որ գրականությունն այն հայելին է, որտեղ անսխալ արտացոլվում են այդ փոփոխությունների հետևանքով դրսևորվող իրողությունները:

Նախկին ԽՍՀՄ հասարակական-քաղաքական կյանքում արմատական բարեփոխումներ տեղի ունեցան անհատի տխրահռչակ պաշտամունքի հաղթահարումից հետո՝ 1959-ի վերջին և 1960-ի սկզբներին, որոնք առաջընթացի բնականոն հուն մղեցին նաև գրական-գեղարվեստական զարգացումները: Աստիճանաբար սկսեցին հաղթահարվել զաղափարախոսական արգելքները, ընդլայնվեցին թեմատիկ ընդգրկումների շրջանակները, մշակվեցին պատմական անցյալի արժևորման նոր հայեցակարգեր: Գրականությունը վերադարձավ նախորդ տասնամյակներում այնտեղից հալածված անհատը:

Այս ամենը չէր կարող իր բարերար ազդեցությունը չունենալ նաև մանկապատանեկան գրականության վրա, որը, անտարակույս, ընդհանուր գրականության անբաժանելի մասերից մեկն է:

Եթե նախորդ տասնամյակներում գրական զարգացումներին ուշադրություն էր հատկացվում դրանց քաղաքականացման ընդգծված միտումներով, ապա անհատի պաշտամունքի հաղթահարումից հետո վերաբերմունքն աստիճանաբար սկսեց բարեփոխվել: Մանկապատանեկան գրականության խնդիրները նույնպես սկսեցին լայնորեն քննարկվել: Այսպես՝ ԽՍՀՄ գրողների 3-րդ (1959), 4-րդ (1967) համագումարներում, ՀԳՄ նույն թվականների պլենումներում մշակվեցին մանկապատանեկան գրականության առաջընթացի նոր ծրագրեր, իրականության ու պատմական անցյալի գեղարվեստականացման նոր մոտեցումներ, որոնք ստեղծագործական նոր հնարավորություններ բացեցին գրողների առջև, մղեցին համարձակ որոնումների:

1960-1980-ականների մանկապատանեկան արձակն աչքի է ընկնում ժանրային ու թեմատիկ բազմազանությամբ, առատ հունձքով. այդ

տասնամյակներում լույս տեսան տարիքային տարբեր խմբերի ընթերցողներին հասցեագրված պատմվածքների տասնյակ ժողովածուներ, վիպակներ, որոնց գեղարվեստական համակարգն ամբողջացնելու համար նպատակահարմար ենք համարում դրանք համախմբել թեմատիկ-գաղափարական առանցքների շուրջ, ինչը հնարավորություն կընձեռնի հետևել առաջընթացի ընդհանուր համապատկերին, նաև՝ առանձին հեղինակների ստեղծագործական դինամիկային, բացահայտել նրանց աշխարհընկալման սկզբունքները, մատաղ սերնդի կրթության ու դաստիարակության վերաբերյալ նրանց մոտեցումները:

Առաջարկում ենք թեմատիկ-գեղարվեստական հետևյալ առանցքները՝

1. Իրականություն արտացոլող ստեղծագործություններ:
2. Պատմական անցյալին ու Մեծ հայրենականին նվիրված ստեղծագործություններ:
3. Արկածային, գիտաֆանտաստիկ ստեղծագործություններ:

Բանալի բառեր և բառակապակցություններ. պատմվածք, վիպակ, ժանր, հեռավոր ու մոտ անցյալ, անհանգիստ պատանեկություն, երազանքների աշխարհ, ապակե քաղաք, ոսկե կոճակ, իրականն ու առասպելականը, ավանդականն ու նորարարականը:

Ներածություն

1960-1980-ական թվականների մանկապատանեկան արձակը, որն անհատի պաշտամունքի հաղթահարումից հետո մտել էր առաջընթացի նոր հուն, այքի է ընկնում մի շարք յուրահատկություններով:

Ամենակարևոր յուրահատկությունը դեպի ընթերցողն ունեցած կողմնորոշումն է, նրա տարիքային և հոգեբանական զարգացման առանձնահատկություններին, աշխարհընկալման միջոցներին համապատասխան գրելաոճի ընտրությունը, նրանց հետ ոչ թե խորհրդատուի, այլ անկեղծ զրուցակցի դերում հանդես գալը, տարիքային տարբեր խմբերի համար առավել հետաքրքիր թեմաների ընտրությունը՝ ընկերասիրություն, անհոգ մանկություն, անհանգիստ պատանեկություն, երազանքներ, աշխարհը ճանաչելու ձգտումներ, տիեզերական գաղտնիքներին հաղորդակցվելու, ինքնության ու արժանապատվության պահպանում, նաև՝ առաջին սիրո տվայտանքներ և այլն:

Այդ տասնամյակներում գրողները գրականություն բերեցին նոր կերպարներ, որոնք էապես տարբերվում էին նախորդ տասնամյակներ հասակակիցներից իրենց հետաքրքրություններով, իմացությամբ, տեղեկացվածությամբ և այլ հատկանիշներով:

Եթե նախորդ տասնամյակներում հատկապես պատանիների համար գրված ստեղծագործությունները հիմնականում «ուռուռ~» հայրենասիրական ոգով գրված ձոներգեր էին, երջանիկ ներկայի և ավելի երջանիկ ապագայի գովերգություններ, ապա նոր շրջանի գրականության պատանի հերոսը ցանկանում է աշխարհի անցուղարձին ծանոթանալ պատմական հիշողության խորացման, ազգային արմատներին մերձ մնալու ճանապարհով:

Սույն հոդվածի նպատակն ու խնդիրներն են՝

1. Բացահայտել 1960-1980-ականների մանկապատանեկան արձակի առաջընթացի միտումներն ու օրինաչափությունները, բովանդակային, ձևակառուցվածքային յուրահատկությունները:
2. Ցույց տալ տասնամյակների մանկապատանեկան արձակի ճանաչողական ու դաստիարակչական նշանակությունը:

Մեթոդաբանություն

Թեմայի ուսումնասիրության ընթացքում առաջնորդվել ենք գրական երկի արժևորման մի շարք մեթոդներով՝ քննական, վերլուծական, համեմատական, կենսագրական: Մեծապես օգտվել ենք հայ և արտասահմանյան ճանաչված տեսաբանների ուսումնասիրություններից:

1960-1980-ական թվականների մանկապատանեկան արձակի ընդհանուր համապատկերը

1960-1980-ական թվականների մանկապատանեկան արձակի համապատկերն ամբողջացնում են տարբեր սերունդների մի շարք ճանաչված և 1960-ականներին գրականություն եկած երիտասարդ գրողներ, որոնց մի մասը գրել է հիմնականում մանուկ ու պատանի ընթերցողների համար (Խ. Հրաչյան, Ա. Շայբոն, Էդ. Ավագյան, Ռ. Մարուխյան, Կարեն Ա. Սիմոնյան, Ա. Պարսամյան), մյուս մասը նաև՝ մանուկ ու պատանի ընթերցողների համար (Ս. Խանգաղյան, Վ. Անանյան, Մ. Մարգարյան, Վ. Խեչումյան, Խ. Գյուլնազարյան, Վ. Պետրոսյան, Ռ. Հովսեփյան, Հր. Մաթևոսյան, Հովհ. Մելքոնյան, Մ. Մնացականյան և ուրիշներ):

Բացի մանուկ և պատանի ընթերցողներից հասցեագրված ստեղծագործություններից, վերջիններիս ստեղծագործություններից շատերը նույնպես մտել են մանկապատանեկան ընթերցանության շրջանակները՝ հաշվի առնելով նրանց ճանաչողական ու դաստիարակչական նշանակությունը, մատչելիությունը, անպաճույճ գրելաձևը, պատմական անցյալի ուշագրավ գեղարվեստականացումը: Այս տեսանկյունից հատկանշական են, օրինակ, Ս. Խանգաղյանի «Վարք Հարանց» շարքի

պատմվածքները, «Արաքսը պղտորվում է», «Վեց գիշեր» վիպակները, «Մխիթար Սպարապետ» վեպը, «Քարանձավի բնակիչները», որը, ինչպես Վ. Անանյանի «Հովազաձորի գերիները» վիպակը, պատանի ընթերցողների ամենասիրված ստեղծագործություններից է, Վ. Խեչումյանի. Խ. Գյուլնազարյանի, Հր. Մաթևոսյանի, Հովհ. Ղուկասյանի վեպերն ու վիպակները:

1960-1980-ական թթ. մանկապատանեկան արձակի թեմատիկ ու ժանրային բազմազանությունը

1960-1980-ական թվականների մանկապատանեկան արձակն աչքի է ընկնում թեմատիկ ու ժանրային բազմազանությամբ: Գրողները որոնում են իրականության և պատմական անցյալի գեղարվեստականացման նոր եղանակներ, որովհետև ժամանակի ընթացքում մշակվում են աշխարհընկալման նոր հայեցակարգեր, ինչը ենթադրում է նաև, որ նրանք «անխուսափելիորեն» նորոգում են գրական ժանրերը՝ փոխելով նրանց ոչ միայն «ճակատը» այլև «հատակագիծը»¹:

Հասարակական-քաղաքական մթնոլորտի բարեփոխումները գրականությունն առաջադրեցին բովանդակային նոր լուծումներ, որոնց համար անհրաժեշտ էին նոր ձևեր, կառուցվածքի նոր մոդելներ, որովհետև «գրականությունը (ընդհանրապես արվեստը) ժամանակի ընթացքում փոխում է իր հագուստները. չի կարելի հին հագուստների հսկիչներ լինել, որքան էլ այդ հագուստները թանկ են մեզ համար ու սիրելի, միևնույնն է, մենք դասում ենք մեր մարմինները ծածկել նոր հագուստներով»²:

Մանկագիր գրողները, նաև նրանք, ովքեր գրում էին մանուկ ու պատանի ընթերցողների համար, անպայման հաշվի էին առնում ընթերցողների տարիքային յուրահատկությունները, աշխարհընկալման առանձնահատկությունները, հետևում էին մանուկ ու պատանի ընթերցողի կամքի ու անհատականության ձևավորման ընթացքին, թարմացնում էին նրանց պատմական հիշողությունը, անդրադառնում պատմական անցյալի՝ ներկայում թողած հետագծին, համադրում իրականն ու երևակայականը, ֆանտաստիկականն ու արկածայինը:

Ա) Իրականությունն արտացոլող ստեղծագործություններ

1960-1980-ական թվականներին մանկապատանեկան գրականությունը նույնպես հարստացավ իրականությունն արտացոլող տարբեր ժանրերի ստեղծագործություններով: Հրատարակվեցին պատմվածքների տասնյակ ժողովածուներ, վիպակներ և այլ ժանրերի ստեղծագործություններ, որոնք

¹ Սևակ Պ. Երկերի ժողովածու 3 հատորով, Եր., 1983, հ. 3, էջ 45:

² Էդոյան Հ. Ժանամակը և գրողը, «Գարուն», 1999, N 11, էջ 45:

արտացոլում էին տարիքային տարբեր խմբերի երեխաների առօրյան դպրոցում, ամառային հանգստի օրերին, պիոներական ճամբարում:

Մանկագիր գրողները երեխաներին ներկայացնում են տարբեր հարաբերությունների շրջանակներում, նրանց բնութագրում գործողությունների միջոցով: «Դվինի կարճ օրը» պատմվածքում Էդ. Ավագյանը պատմում է դպրոցահասակ մի տղայի մասին, որն ամառային հանգստի օրերին մեկնում է գյուղ: Գյուղի հասակակիցներից ոչ մեկին նա չի ճանաչում և իր հագուկապով, սովորություններով գյուղի հասակակիցների վրա թողնում է «մամայի բալայի» տպավորություն: Բայց հետզհետե ամեն ինչ հարթվում է, տղան դրսևորում է կամային հատկանիշներ, ընկերանում է իր հասակակից տղաների հետ և քաղաք է վերադառնում անմոռանալի տպավորություններով: Եթե սկզբնական շրջանում ամեն ինչ զարմանալի էր թվում նրան, ապա կարճ ժամանակ անց գյուղը նրան ներկայանում է իր շոայլ գույներով, հասակակից տղաների ընկերասիրությամբ, անմիջականությամբ: Քաղաքում նա երկար ժամանակ չի մոռանում արդեն գյուղի լուսաբացներն ու մայրամուտների, այգիների շոայլ գույներն ու մրգերի բուրմունքը: Պատմվածքներից շատերում երեխաներն իրենք են բնութագրում իրենց: Էդ. Ավագյանի «Վերադարձ» պատմվածքի պատանի հերոսը բնութագրում է իրեն, հորը, մորը. հոր մոտ ամեն ինչ կանոնակարգված է՝ աշխատանք, տուն՝ միշտ ճիշտ ու ճիշտ նույն ժամանակին, մայրը հոր հակապատկերն է՝ բարեսիրտ, հաճախ՝ բոնկուն, ինքը մտածում է, որ երջանիկ լինելու համար շատ բան պետք չէ մարդուն:

Մի շարք պատմվածքներում պատանի հերոսները փորձում են հասկանալ գոյի իմաստը: «Անցողիկ հասակ. մի աղջկա օրագրից» պատմվածքում Էդ. Ավագյանի հերոսը հաճախ է մտածում գոյության իմաստի մասին՝ «Ինչի՞ համար ենք ապրում, երբ վերջում բոլորն էլ մեռնում են»: Բայց վերջիվերջո գտնում է պատասխանը. «Ամեն վատ բան սկսվում է պարապությունից, ուրեմն՝ այդ պարապը պիտի լցնել սիրով»:

Միջին դասարանների աշակերտներին է հասցեագրված Հովհ. Ղուկասյանի «Անհանգիստ պատանեկություն», Շ. Թաթիկյանի «Կապույտ երկնքի ու կորած բարեկամության մասին», Խ. Գյուլնազարյանի «Օրերի ճանապարհը», Էդ. Ավագյանի «Մենք ապրում ենք Կոնդում» պատմվածքների ժողովածուները, վիպակները, կրտսեր դպրոցականներին հասցեագրված Լ. Բառնակյանի «Արցունքի կաթիլը»:

Բոլոր այս ստեղծագործություններում XX դարակեսի պատանիներն են, որոնցից յուրաքանչյուրը յուրովի է ճանաչում աշխարհը, յուրովի պատկերացումներ ունի անցնելիք ճանապարհի մասին: Այդ պատկերացումների համապատկերում է ձևավորվում պատանի հերոսների անհատականությունը:

Բ) Անհատականության ձևավորման և կամային հատկանիշների մշակման ընթացքը

Գեղարվեստական գրականությունը մեծապես նպաստում է մանուկ և պատանի ընթերցողների անհատականության ձևավորման ու կամային որակների ամրապնդման ընթացքին, նրանց առջև բացում է որոնումների լայն հորիզոններ, մշակում աշխարհընկալման եղանակներ:

Ընթերցողների համար լայն հորիզոններ է բացում Էդ. Ավագյանը «Կորած գաղտնիք» պատմվածքների ժողովածուն (1985): Ժողովածուի «Հեռացող ոտնաձայներ» շարքի պատմվածքների նյութը հեղինակը վերցրել է դպրոցական կյանքից, երեխաների առօրյայից: Շարքի պատմվածքները ներկայացնում են երեխաների ուրախության ու տխրության պահերը, մանկական հոգսերը, որ մեծերի համար կարող են սովորական թվալ, բայց բնութագրական են նոր-նոր աշխարհը ճանաչել սկսող երեխաների համար, սիրո առաջին թոթովանքներն ու թրթիռները: Մեծ ճանապարհի սկզբում ամենակարևորը երազանք ունենալն է, ու այն իրականացնելու համար կամային հատկանիշներ դրսևորելը:

Նարեկի հայրը երկրաբան է և հետագա ողջ կյանքի համար անհրաժեշտ դասեր է տալիս որդուն. «Գիտե՛ս, ինչ բան է երազանքը, Նարեկ: Ամեն մարդ իր կյանքում երազանք պիտի ունենա» («Արագածի գագաթը»): Նա Նարեկին պատմում է, թե ինչպես է առաջին անգամ բարձրացել Արագածի գագաթը, ինչ ապրումներ է ունեցել՝ որդուն փոխանցելով վերելքի հրճվանքը:

«Հայրիկի նվերը» պատմվածքում հայրը որդուն՝ Վարուժանին, պատմում է իր մանկության մասին, որն անցել է պատերազմի դաժան տարիներին, երբ իրենք փոխարինում էին ռազմաճակատ մեկնած իրենց հայրերին ու ավագ եղբայրներին:

Մանուկ ընթերցողի համար աշխարհը սկսվում է իր տան բակից, տան մոտի բլրակից, որի գագաթից երևում է ամբողջ աշխարհը: Ութ տարեկան Սարոն դեռ չի բարձրացել բլրակի գագաթը. «Մեծ սարից երևում են Հնդկաստանը, Ճապոնիան,- հարցնում է նա մեծ եղբորը՝ Սուրենին. «Հնդկաստան, Ճապոնիա՛, չէ մի պոզեր, դրանք ինչ են որ, մեծ սարից ամբողջ աշխարհն է երևում: Մեծ սարից ամեն ինչ երևում է մեր առուն, ցանկապատը, բակը, ծառերը, երևում են մայրիկը, հայրիկը, մեր աքլորը: Մեծ սարից ամբողջ աշխարհն է երևում» («Ամբողջ աշխարհը»): Պատերազմի տարիների մանուկներին է ներկայացնում նաև Հր. Մաթևոսյանը «Մեր վագրը» ժողովածուում:

Գ) Պատմական անցյալի ու ներկայի սահմանագծին

1960-1980-ականներին հրատարակվեցին պատմական անցյալին ու Մեծ հայրենականին նվիրված բազմաթիվ պատմվածքներ, տասնյակ վիպակներ ու վեպեր, որոնց մեծ մասը հասցեագրված էին պատանի ընթերցողներին և

կարևոր նշանակություն ունեցան նրանց հայրենասիրական դաստիարակության գործում:

Ժամանակի տարբեր չափումներում գրողներն անդրադառնում էին մեր պատմության ողբերգական ու հերոսական էջերին, պատմական անցյալը ներկայացնում ներկայում թողած նրա հետագծի համապատկերում, ինչը շատ կարևոր է, որովհետև «Ժամանակի զգացողությունը տեսական վերլուծություն չէ, այլ կեցության անհրաժեշտություն: Ի՞նչ ենք ժառանգել անցյալից և ի՞նչ ենք ստուգվում է՝ գոյության իմաստն է սա ու ստուգվում է նաև անհատի քաղաքացիական հետագիծը հասարակություն, պետություն, հայրենիք հասկացություններում»³:

«Ի՞նչ ենք ժառանգել անցյալից և ի՞նչ ենք ստեղծում» ներկայում. ընդհանուր եզրակացությունն այս էր. անցյալը հանգրվանում է ներկայում, անցյալից դասեր քաղելը խիստ կարևոր է մատաղ սերնդի դաստիարակության համար:

Մանկապատանեկան ընթերցանության շրջանակները մտան հատկապես այն ստեղծագործությունները, որոնց հերոսները ընթերցողների հասակակիցներն են: Ճիշտ է, Ս. Խանգադյանի «Մխիթար Սպարապետ», «Խոսեք, Հայաստանի լեռներ», Խ. Դաշտենցի «Խողեղան» վեպերը հասցեագրված չեն պատանի ընթերցողներին, սակայն նրանց հերոսները անմոռանալի տպավորություն են թողնում պատանիների վրա: Հերոսականության, կամքի և անհատականության ձևավորման հրաշալի օրինակներ են ցուցաբերում Ս. Խանգադյանի պատանի հերոսները:

Երգնկայի Կաթակն գյուղի բնակիչներն ամրանում են Ակնովիտի լեռներում ու հերոսական դիմադրություն են ցույց տալիս թուրքական զորագնդերին և նրանց միացած ամբոխին: Լեռներում կին թե տղամարդ, մանուկ թե ծեր զինվոր են: Նրանց համար կարգախոս են դարձել Ներսեհ Չաուշի խոսքերը. « Լացացրեք նրանց, ուվքեր մեր աչքերից արյուն հանեցին»:

Վեպում վրեժխնդրության, ցասումի իսկական մարմնացումներ են պատանի հերոսներ Բենիամինը, Ջյունիկը, Ուլիկը, որոնք կարողանում են թափանցել թուրքերի բնակավայրերը և լուծել իրենց զոհված հայրենակիցների վրեժը: Վեպի պատանի հերոսներից է նաև Կուրբան-Ալի Մանուկը, ով «ծառայում է» թուրքական ոստիկանությունում և արժեքավոր տեղեկություններ հաղորդում լեռներում ամրացած ֆիդայիներին: Կուրբան-Ալի Մանուկը հետագայում անցնում է Արաքսը, ծառայության մտնում

³ Սարինյան Ս. Գեղարվեստական գրականության պատմականությունը, Եր; «Սովետական գրող», 1979, էջ 252:

Կարմիր բանակի շարքերում: Բուխարայի անապատներում բասմաչների գործակալները ճանաչում էին Էնվեր փաշային և լուծում իր հայրենակիցների վրեժը: Ավագների մեջ թավալվող Էնվերը դիմում է խորամանկության:

-Մի սպանիր ինձ: Ես քեզ կտամ Բեռլինի բանկերում ունեցածս ողջ դրամը: Նա մեկուկես միլիոն դոլար է:

-Բարի, սակայն ասացեք, Էնվեր փաշա, ես ի՞նչ պատասխան տամ մեկուկես միլիոն հայրենակիցներին անթաղ ոսկորներին, որ դա ևս քո ատամներով կրծոտելով կոտորեցիր: Ի՞նչ պատասխան տամ քո ձեռքերով ևս խոշտանգված Հայաստան հայրենիքին՝ պղծված Եփրատին: Եթե քո մեջ մարդ ասած մասունքից թեկուզ մի փշուր կա, ապա նման առաջարկ չպիտի անես ինձ: Հող գցիր բերանդ, Էնվեր փաշա, դու պիտի սատկես:

Հերոսականության փայլուն օրինակներ են ցուցաբերում նաև Ս. Խանգաղյանի «Երեք տարի և 291 օր», Մ. Սարգսյանի «Կյանքը կրակի տակ», «Ճակատագրով դատապարտվածները», «Մերժանտ Կարոն», Խ. Դաշտենցի «Խողեղան», Մ. Գալշոյանի «Չորի Միրոն» ստեղծագործությունների հերոսները:

Արկածայինը, ֆանտաստիկականը, երևակայականը

1960-1980-ական թվականների մանկապատանեկան արձակը հարուստ է նաև արկածային ու գիտաֆանտաստիկական ստեղծագործություններով: Այդ տասնամյակներում լույս տեսան Ս. Խանգաղյանի «Քարանձավի բնակիչները» (1961), Ա. Շալոբանի «Տիեզերական օվկիանոսի կապիտանները» (1986), «Սպիտակ ստվերների աշխարհում» (1963), Կ. Ա. Սիմոնյանի «Թափառող մոլորակ» (1961), «Կրկես լուսնի վրա» (1961) և տասնյակ այլ արկածային ու գիտաֆանտաստիկ ստեղծագործություններ:

Պետք է արձանագրել, որ արկածային ստեղծագործություններն անչափ կարևոր են պատանի ընթերցողների ճանաչողության ընդլայնման ու դաստիարակության համար: Դրանք ոչ թե սոսկ արկածներ են ներկայացնում, այլ բնության գաղտնիքների բացահայտումներ են: Ս. Խանգաղյանի «Քարանձավի բնակիչները» վիպակի պատանի հերոսները բարոյականային բարձր որակներ են ցուցաբերում անչափ դաժան պայմաններում, դրսևորում են համառության, հաստատակամության, աշխատասիրության, մարդու անսպառ կարողությունների դրսևորման իսկական օրինակներ:

Դժվարություններին նրանք կարողանում են դիմակայել միմյանց օգնելով ու սատարելով և, որ ամենակարևորն է՝ հավատ ներշնչելով:

Պատանի ընթերցողները ընկերասիրության, հաստատակամության, կամային բարձր որակների դրսևորումների կարող են հանդիպել Խ. Գյուլնազարյանի «Մեռած աշխարհի ակամա բնակիչները» (1968),

«Մինանտրոպ-պիտեկանտրոպ» (1978), «Հետքեր գետնի վրա և գետնի տակ» (1984) ստեղծագործություններում:

Գիտաֆանտաստիկական ստեղծագործությունները կարևոր են պատանի ընթերցողների երևակայության զարգացման, տիեզերական գաղտնիքներին հաղորդակցվելու, իրականի ու երևակայականի համադրման, բնագիտական առարկաների մեջ խորանալու և մի շարք այլ առումներով:

Ընթերցողը մտովի ճանապարհորդում է գիտաֆանտաստիկական ստեղծագործությունների հերոսների հետ տարբեր մոլորակներում, առնչվում գիտության ու տեխնիկայի նվաճումներին, միով բանիվ՝ ընդլայնում է իր մտահորիզոնը, իրեն պատկերացնում այդ ստեղծագործությունների հերոսների կողքին:

Ընդհանրացնենք՝ ամսագրային հոդվածի սահմաններում, բնականաբար, հնարավոր չէ ներկայացնել նորագույն շրջանի (1960-1980-ական թթ.) մանկապատանեկան արձակի ողջ համապատկերը, քննության առնել որպես կայացած համակարգ: Այդ իսկ պատճառով սույն հոդվածում փորձել ենք համառոտ ներկայացնել առաջընթացի ընդհանուր միտումներն ու օրինաչափությունները:

Թեմային ավելի ծավալուն, հանգամանալից կանդրադառնանք առանձին գրքով:

Եզրակացություն

«Նորագույն շրջանի (1960-1980) հայ մանկապատանեկան արձակի առաջընթացի միտումներն ու օրինաչափությունները» թեմայի ուսումնասիրության ընթացքում արել ենք մի շարք եզրահանգումներ:

1. Անհատի պաշտամունքի հաղթահարումից հետո առաջընթացի նոր հուն մտան նաև գրական-գեղարվեստական զարգացումները: Գրականությունն աստիճանաբար սկսեց հաղթահարել նախորդ տասնամյակների գաղափարախոսական ու թեմատիկ արգելքները: Մթնոլորտային բարեփոխումներն իրեն ազդեցությունն ունեցան նաև մանկապատանեկան գրականության, որը, անտարակույս, ընդհանուր գրականության անբաժանելի մասերից մեկն է, ինչը նշանակում է, որ նրա խնդիրները, առաջընթացի միտումներն ու օրինաչափությունները պետք է լուսաբանել գրական-գեղարվեստական զարգացումների ընդհանուր համապատկերում:
2. 1960-1980-ական թվականների մանկապատանեկան արձակն աչքի է ընկնում թեմատիկ ու ժանրային բազմազանությամբ, գրողների հետաքրքիր որոնումներով:

Հաղթահարելով թեմատիկ սահմանափակումները՝ գրողները որոնում էին պատմական անցյալի ու ներկայի գեղարվեստականացման նոր եղանակներ ու մոտեցումներ: Պատմական անցյալից գեղարվեստականացվում էին այն դեպքերն ու իրադարձությունները, որոնք նույն կամ նման ձևով շարունակվում էին ներկայում, աչքի ընկնում ճանաչողական ու դաստիարակչական նշանակությամբ:

3. 1960-1980-ական թվականներին լրջորեն փոխվեցին նաև մատաղ սերնդի կրթության ու դաստիարակության նկատմամբ պատկերացումները, մշակվեցին նոր եղանակներ ու մոտեցումներ: Այդ տասնամյակների մանկապատանեկան գրականության հաջողությունները պայմանավորված էին նաև գրողների՝ մանկավարժահոգեբանական գիտությունների նկատմամբ ցուցաբերվող հետաքրքրությամբ: Գրողները սկսեցին կարևորել ընթերցողների տարիքային ու հոգեբանական զարգացման առանձնահատկությունները: Գրականություն բերեցին նոր կերպարներ, որոնք զգալիորեն տարբերվում էին նախորդ տարիների իրենց հասկակիցներից. ավելի տեղեկացված էին աշխարհի անցուղարձից, ունեին անձնականի ու ներանձնականի վերաբերյալ իրենց յուրահատուկ պատկերացումները:
4. 1960-1980-ական թվականների մանկապատանեկան արձակն աչքի է ընկնում ոչ միայն թեմատիկ ու ժանրային բազմազանությամբ, այլև ձևակառուցվածքային յուրահատկություններով, պատումի անպաճույճ ոճով:

Օգտագործված գրականություն

1. Ավագյան Էդ., Մենք ապրում ենք Կոնդում, Եր., 1965:
2. Ավագյան Էդ., Կորած գաղտնիք, Եր., 1985:
3. Գյուլնազարյան Խ., Մեռած աշխարհի ակամա բնակիչները, Եր., 1968:
4. Գյուլնազարյան Խ., Հետքեր գետնի վրա և գետնի տակ, Եր., 1984:
5. Խանգաղյան Ս., Երեք տարի և 291 օր, Եր., 1972:
6. Խանգաղյան Ս., Խոսք, Հայաստանի լեռներ. Եր., 1976:
7. Խանգաղյան Ս., Քարանձավի բնակիչները, Եր., 1979:
8. Սարինյան Ս., Գեղարվեստական գրականության պատմականությունը, Եր., 1979:
9. Միմոնյան Կ., Թափառող մոլորակ, Եր., 1961:
10. Միմոնյան Կ., Կրկես լուսնի վրա, Եր., 1961:
11. Սևակ Պ., Երկերի ժողովածու 3 հատորով, հ. 3, Եր., 1983:
12. Շայբուն Ա., Սպիտակ սովերների աշխարհում, Եր., 1963:
13. Շայբուն Ա., Տիեզերական օվկիանոսի կապիտանները, Եր., 1986:

**Тенденции и закономерности развития детской и юношеской прозы
новейшего периода (1960-1980-е гг.)**

Заключение

Ключевые слова и фразы: рассказ, роман, жанр, далекое и недавнее прошлое, беспокойная юность, мир грез, стеклянный город, золотая пуговица, реальное и мифическое, традиционное и инновационное.

При изучении темы «Тенденции и закономерности развития армянской детской и юношеской прозы новейшего периода (1960-1980-е годы)» мы пришли к ряду выводов:

1. После развенчания культа личности литературно-художественное развитие также вступило на новый путь развития. Литература постепенно стала преодолевать идейные и тематические преграды предшествующих десятилетий. Реформы коснулись и детской литературы, которая, несомненно, является одной из неотъемлемых частей общей литературы, а значит, ее проблемы, направления и закономерности развития должны освещаться в общем контексте литературно-художественных исследований.
2. Детская проза 1960-1980-х годов отличается тематическим и жанровым разнообразием, интересными творческими поисками писателей.

Преодолевая тематическую ограниченность, писатели искали новые пути и подходы к описанию исторического прошлого и настоящего. Из исторического прошлого эстетизировались те события и страницы истории, которые продолжали повторяться в настоящем и отмечались своим познавательным и воспитательным значениями.

3. В 1960-1980-е годы кардинально изменились представления об образовании и воспитании подрастающего поколения, были разработаны новые методы и подходы.

Успех детской и юношеской литературы этих десятилетий был обусловлен также интересом писателей к психолого-педагогическим наукам. Писатели стали выделять особенности возраста и психологического развития читателей. В литературу вошли новые персонажи, существенно отличавшиеся от ровесников прошлых лет: они более информированные о мировых событиях, имели присущие им личностные и внутриличностные представления о мире.

4. Детская проза 1960-1980-х годов отличается не только тематическим и жанровым разнообразием, но и структурными особенностями, незамысловатым повествовательным сюжетом.

**The Modern Period's (1960s-1980s) Tendencies and Measures of the Progress
of Armenian Children's Prose**

Conclusion

Keywords and phrases: short story, novel, genre, distant and recent past, troubled youth, dream world, city of glass, golden button, the real and the mythical, the traditional and the innovative.

During the study of the topic “The Modern Period's (1960-1980s) Tendencies and Measures of the Progress of Armenian Children's Prose” we made a number of conclusions.

1. After overcoming the cult of the individual, literary-fictional developments entered a new direction of progress. Literature gradually began to overcome the ideological and thematic barriers of the previous decades. Atmospheric reforms also had their impact on children's literature, which is, without a doubt, one of the integral parts of general literature, which means that its problems, trends and patterns of progress should be covered in the general overview of literary-fictional developments.
2. Children's prose of the 1960s-1980s is notable for its thematic and genre diversity, interesting searches of writers. Overcoming the thematic limitations, the writers were looking for new ways and approaches to fictionalize the historical past and present. From the historical past those incidents and events were fictionalized, which continued in the same or similar form in the present and were distinguished by cognitive and educational significance.
3. In the 1960s-1980s, ideas about the education and upbringing of the younger generation were also seriously changed, new methods and approaches were developed. The success of children's and youth literature of those decades was also due to the interest shown by writers in pedagogical and psychological sciences. Writers began to emphasize the features of the readers' age and psychological development. New characters were brought to literature, which were significantly different from their peers of previous years: were more informed about world events, had their own unique ideas about the personal and the intrapersonal.
4. Children's prose of the 1960s-1980s stands out not only for its thematic and genre diversity, but also for its form-structural peculiarities, uncomplicated narrative style.

Խմբագրություն է ուղարկվել 08.12.2022թ.

Հանձնարարվել է գրախոսության 25.12.2022թ.

Տպագրության է հանձնարարվել 13.03.2023թ

ԵՎԱ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

Խաչատուր Աբովյանի անվան ՀՊՄՀ

Բան. գիտ. դոկտոր, դոցենտ

Էլիասցե՝ MnacakanyanEva@mail.ru

**ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՄԱՀՎԱՆ ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐԸ
ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ՄԱՍՈՒԼՈՒՄ**

Ամփոփում

1923 թ. մարտի 25-ին «Խորհրդային Հայաստանի» հմ. 61-ում հրապարակվում է Հովհ. Թումանյանի մահաբոլոր գուժող հեռագիրը Մոսկվայից: Բանաստեղծի մահը վերածվում է համաժողովրդական սգահանդեսի: Բացառիկ տաղանդի մեծարանքը չէր միայն, որ հարկադրում է զլուխ խոնարհել ու արտասվել նրա հիշատակի առաջ: Բանաստեղծ քաղաքացու, մարդու մեծագործությունն էր միաժամանակ, որ նրան դարձրել էր համագգային: Ժողովրդի հավաքական գիտակցությունն էր հասկացել, որ հավերժի ճամփորդ է դարձել իր բովանդակ կյանքի խորերում արմատներ ձգած ու իրեն ձուլված մեկը, ով իր հոգու և սրտի հանճարեղ թարգմանն էր, կենսառաք լույս տարածող հարազատ հոգին:

Մարտի 25-ից սկսած՝ ամբողջ Հայաստանում, Վրաստանում, աշխարհի գրեթե բոլոր հայկական գաղթօջախներում և՛ պաշտոնապես, և՛ ինքնաբերական կազմակերպվում են սգահանդեսներ, բանախոսություններ, երեկոյթներ: Տեղական ու արտասահմանյան մամուլը հեղեղվում է Թումանյանին նվիրված հարյուրավոր մահախոսականներով, ցավակցական նամակներով, հեռագրերով, հուշերով, բանաստեղծություններով, հոդվածներով և այլն, որոնք աչքի են ընկնում ափսոսանքի, կորստյան ցավի, գնահատանքի ու մեծարման շեշտադրումներով: Թումանյանի անժամանակ մահը յուրաքանչյուրին ստիպում է առավել սթափ հայացք նետել նրա վաստակին, վերաբժնորել ստեղծագործությունների դերն ու նշանակությունը, հայտնաբերել իր Թումանյանին:

Թե՛ արձակ, թե՛ չափածո տողերում ուրվագծվում են Թումանյանի մարդկային տեսակն ու բանաստեղծական անկրկնելի տաղանդը, փորձ արվում ի մի բերելու երկու դարերի կենտրոնում վեր խոյացած հանճարեղ բանաստեղծի նկարագիրը:

Բանալի բառեր և արտահայտություններ. Հ. Թումանյան, Ս. Հակոբյան, Ա. Չոպանյան, Ա. Աբեղյան, Ս. Կոզյան, հայկական գաղթօջախներ, գնահատում ու մեծարում, գրական դիմանկար, ազնվական ու արժանավոր մշակ, պատմաքննական տեսություններ, անմահ պոետ:

Ներածություն

Սույն հոդվածում ներկայացվում են 1923 թ. Հովհ. Թումանյանի մահվան առիթով արտասահմանում տպագրված հրապարակումների հիմնական դրույթները, որոնք, գնահատանքի ու մեծարման շեշտադրումներով հանդերձ, գրական-պատմական բացառիկ արժեք են ներկայացնում: Մահվան արձագանքների մեծ մասը տարբեր դիտանկյուններից է վերլուծում ու արժեքավորում բանաստեղծին, փորձում նորահայաց քննությամբ հայտնաբերել ի՛ր Թումանյանին: Նկատի ունենալով հետմահու նյութերի բազմաբնույթ ու ծավալուն լինելու փաստը՝ մենք դրանց հանգամանորեն անդրադառնալու հնարավորությունը համարում ենք ոչ միայն սահմանափակ, այլև ոչ նպատակահարմար: Մեկ հոդվածի սահմանում խմբավորելով առանձնացրել ենք արտասահմանյան մամուլում տպագրված որոշ նյութեր, որոնք ըստ էության նշանակիրներն են Թումանյան բանաստեղծի, մարդու, հասարակական գործչի եզակիության ու անկրկնելիության:

Սույն հոդվածի նպատակն է հարյուրամյա հեռավորությունից ուսումնասիրել ու քննել բանաստեղծի մահվան առիթով արտասահմանյան հրապարակումների հիմնական դրույթները և ընդգծել, որ հոդվածների գաղափարական հանրագումարի բանաձևումը մեկն է. Թումանյանը ժամանակի կենտրոնաձիգ ուժն էր, որ դարձել էր համայն հայության հավաքական հիշողության ու հոգեբանության կրողն ու հայ ժողովրդի մեծ աշխարհի ձայնը հնչեցնողը:

Մեթոդաբանություն

Բանաստեղծի մահվան առիթով արտասահմանյան հրապարակումների պատմահայաց քննությունը կատարելիս օգտվել ենք պատմա-համեմատական, համադրական, վերլուծական մեթոդներից, խմբավորելով առանձնացրել 1923 թ. արտասահմանյան հայալեզու մամուլում, գրական-հասարակական հանդեսներում տպագրված նյութերը, որոնք ըստ էության ձևավորում են Թումանյան բանաստեղծի, մարդու, հասարակական գործչի եզակի ու անկրկնելի կերպարը:

Ս. Հակոբյանի «Հովհաննես Թումանյան» գրական դիմանկարի շուրջ

Սիմեոն Հակոբյանի «Հովհաննես Թումանյան»¹ գրական դիմանկարը արտերկրի առաջին արձագանքներից էր՝ տպագրված Բեռլինի «Արեգ»

¹ Ս. Հակոբյանը բանախոսությամբ հանդես է գալիս նաև Թումանյանի հիշատակին նվիրված սգահանդեսի ժամանակ՝ կազմակերպված Բեռլինի Անդրկովկասյան հանրա-

ամսագրում: Հ. Թումանյանի երկերի քննության հիմքում Հակոբյանը նախևառաջ դնում է հասարակական հանգամանքների, սոցիալական հարաբերությունների վերլուծությունը: Քննադատը Թումանյանին համարում է երկրորդ սերնդի փայլուն ներկայացուցիչ, որ «բանաստեղծությունը մոտեցրեց կյանքին և ժողովրդին: Եվ այսպիսով մեր գրականության պատմության մեջ նոր դարագլուխ առաջացրեց»²: Նա, ինչպես բացատրում է Հակոբյանը, բանաստեղծն էր ժողովրդական այն զանգվածի, որ ապրում ու ստեղծագործում է հարազատ հողում, հնչեցնում «ուժեղ ու առնական» լեզու: Այդ պայմաններում էլ ստեղծվում է կյանքի գրականությունը, որը տարբերվում է հայրենիքից դուրս «հայրենաբաղձ» զգացումներից ծնված գրականությունից: «Բայց նրանք, ընդգծում է քննադատը, որոնք երգում են հայ լեզվով և կամենում են արտահայտել հայ ժողովրդի զգացումները, պետք է անշուշտ նրա աշխատավոր, ստեղծագործող մեծամասնության միջավայրում սնվեն և այդ հավաքականության հետ կապված լինեն: Ուրիշ կերպ չի զարգանում բանաստեղծությունը և ընդհանրապես արվեստը ոչ մի երկրի մեջ»³: Բացառված չէ քննադատի այս մտքերի անմիջական կապը «Բնաշխարհիկ» և «տարաշխարհիկ» գրականությունների մասին թումանյանական հայտնի դիտարկումների հետ:

Քննադատի համոզմամբ՝ Թումանյանի բազմաթեմա, բազմաժանր ու բազմախորհուրդ ստեղծագործական աշխարհում հատկանշականն այն է, որ նա տեսնում և ժողովրդական պարզ, բայց և բարձր ու ազնվական շնչով հյուսում է նրա «անաղմուկ տանջանքների» երգը: «Մի ամբողջ աշխարհայացք էր տապալվում Հովհաննես Թումանյանի բանաստեղծության մեջ, - գրում է Ս. Հակոբյանը, - մի հոռի աշխարհայացք, որի համաձայն բանաստեղծականը, ազնիվը միայն ուռուցիկ, փայլուն իրերի մեջ էր: Հովհաննես Թումանյանը այս տեսակետից ռեալական բանաստեղծության ներկայացուցիչը եղավ և ցույց տվեց, որ կյանքի պարզության ու խորության մեջ է թաքնված ճշմարիտ բանաստեղծությունը»⁴:

պետությունների ներկայացուցչության կողմից («Ճակատամարտ», հմ. 3179, Կ. Պոլիս, 1923): Հավանաբար նույն սգահանդեսի մասին է «Արմենիա» շաբաթաթերթը հաղորդում՝ «բանաստեղծ Հովհ. Թումանյանի հիշատակին Անդրկովկասյան խորհրդային հանրապետությունների ներկայացուցչությունը մարտի 30-ին, հատուկ հրավերներով Բեռլինի համայն հայ, վրացի գաղութիս և ռուս, գերման լրագրների միջոցով հրավիրել էր Բեռլինի շատ վայելուչ մի հաստատությունում հարգելու Հ. Թումանյանի հիշատակը»: Ներկա է եղել նաև Համիկ Թումանյանը («Արմենիա», հմ. <15>, Մարսել, 1923):

² «Արեգ», հմ. 4, Բեռլին, 1923, էջ 218:

³ Նույն տեղում, էջ 219:

⁴ Նույն տեղում, էջ 223:

Այս դիտակետից Ս. Հակոբյանը հանգամանորեն անդրադառնում է «Մարոն», «Լոռեցի Սաքոն» և «Անուշ» պոեմներին: Ընդհանուր դրվածքով հետևում է դիպաշարերի վերլուծական վերաշարադրանքի եղանակին, որ տարածված էր ժամանակի հայ քննադատության մեջ, մի տարբերությամբ, որ նրա վերլուծությունների տեսական հիմքում «արվեստի սոցիալական համարժեքի» փոխարեն հիմնականում գործում էր ժամանակի և միջավայրի դրապաշտական նախադրյալը: Այդ պոեմների վերաբերյալ դատողություններում սեփական կողմնորոշումն ունի: Մասնավորապես վիճարկում է բանաստեղծի կողմից «անցյալի մեծարանքի» կամ նահապետական աշխարհի իդեալականացման մասին պնդումները, նաև այն, թե Թումանյանի հերոսների արարքները հոգեբանորեն հիմնավորված չեն:

Հատկապես «Անուշի» վերլուծումներում կան դիտարկումներ, որ այսօր էլ կողմնորոշիչ կարող են լինել ուսումնասիրողների համար: Օրինակ՝ «Անուշը» հուզում է ոչ միայն միջավայրին ծանոթ հայ ընթերցողին, այլև նրան, «որ մտավորապես և բարոյապես չի հասկանում միջավայրը, բայց որ հանրամարդկային կապերով կապված է այնտեղ գործող և տանջվող անձերին»⁵: Կամ այն դիտարկումը, թե պոեմում պատկերված են գյուղական տիպեր, որոնք բնորոշում են ոչ միայն 19-րդ դարավերջի սոցիալական ընդհանուր միջավայրը, այլև կենդանի մարդկանց, որոնք կրողներն են ընդհանրապես գյուղի «հոգեբանության, փիլիսոփայության, բարոյականության»: Այս եռյակ միասնության դիտակետից հետաքրքիր մեկնաբանություն է տալիս «անցորդ ախպոր» հետ Անուշի խոսակցությանը և ինքնագոհաբերմանը. «Այս ինքնամերժումը և այս աստիճան ծանր գոհաբերումը չի արդարանում սակայն ժողովրդի բարոյական աշխարհայացքի մեջ: Անուշը երիտասարդ աղջիկ է և ապրելու իր անկապտելի իրավունքն ունի: Մարդի սերը նվիրական բան է. դժբախտ հովվի հիշատակի հարգանքը պարտադիր է անշուշտ: Բայց այդ նվիրական պարտականությունը ավելի նվիրական չէ, քան երիտասարդ աղջկա իրավունքը կյանքի և նոր սիրո վրա.

«...Նրա անբախտ հողի վրա

Պաղ ջուր ածա աղբյուրի...

Դու էլ գնա նոր սեր արա,

Այդպես է կարգն աշխարհի:

Եվ այս բարոյական փիլիսոփայության մեջ ամենևին խստասրտություն չկա դեպի անմեղ գոհը: Նա պարզապես կամենում է պաշտպանել ապրող

⁵ «Արեգ», հմ. 7, Բեռլին, 1923, էջ 415:

մարդկության դատը, ցույց տալով այն սահմանը, ուր պիտի կանգ առնի գոհաբերությունը անհատի համար»⁶:

Ինքնատիպ է նաև պոեմի գեղարվեստական աշխարհի եզրափակիչ բնութագիրը: «Անուշը» քնարական պոեմ է, ամփոփում է իր ասելիքը քննադատը, որն արտացոլում է սիրո, կարոտի, երազի, վշտի, մահվան զգացումները, որը փառաբանությունն ու օրինաբանությունն է հավերժական սիրո: Բայց պոեմը նաև էպիկական կերպարանք ունի՝ իր գյուղական միջավայրով, անցուղարձեռով, տարբեր հերոսներով. «Կարելի է ասել, որ Հովհաննես Թումանյանի գրականության մեջ հետագայում զարգացած վիպական-էպիկական տարրերը գտնվում են «Անուշ»ի էջերում, որ ո՛չ հեքիաթ էր և ո՛չ դյուցազներգություն, բայց որ Լոռու իրական կյանքը ներկայացնելով՝ հաճախ դառնում էր հեքիաթ և դյուցազներգություն: Որովհետև այդ իրական կյանքի մեջ ապրում էին տակավին հին կյանքի ձևերը և նրանց միջոցով կենդանի էին ավանդական սովորությունները»⁷:

Անցնելով բանահյուսական թեմաների թումանյանական մշակումներին՝ Ս. Հակոբյանը դրանք սովորական նախասիրություն չի համարում բանաստեղծի համար: Որտե՞ղ է այդ գործերի հաջողության գաղտնիքը՝ հարցադրում է նա և պատասխանում. «Նախևառաջ այնտեղ է անշուշտ, որ Հովհաննես Թումանյան տաղանդավոր մարդ էր: Բայց և միաժամանակ այնտեղ է գաղտնիքը, որ Հովհաննես Թումանյանի տաղանդը զարգացավ բնականոն ճանապարհով, մշակվեց ժողովրդական ստեղծագործության զարմանալի շքեղ միջավայրում, գործեց հարուստ, պարզ, իմաստուն նյութերի շրջանում, մի խոսքով զարգացավ և ոչ աղավաղվեց»⁸: Իր այս ելակետային դրույթը քննադատը հիմնավորում է հեքիաթների, բալլադների ու լեգենդների մի քանի օրինակների նպատակային վերլուծություններով: Այդ գործերում, ինչպես նկատում է քննադատը, Թումանյանն ստեղծեց «մի աշխարհ, որ լրացնում է» նրա «ներկայացրած իրական աշխարհը, իրական մարդիկ և իրական հոգեբանությունը» արձագանքելով նաև «Ժամանակի պրոբլեմներին և տրամադրության»⁹:

Ավելի հանգամանորեն անդրադառնում է «հեղինակի և մեր գրականության մնայուն գլուխգործոցներից»¹⁰ մեկին՝ «Սասունցի Դավիթ» պոեմին, որը, ըստ Ս. Հակոբյանի, ժողովրդի հավաքական մտածողության,

⁶ Նույն տեղում:

⁷ Նույն տեղում, էջ 416:

⁸ «Արեգ», հմ. 8, Բեռլին, 1923, էջ 474:

⁹ Նույն տեղում:

¹⁰ Նույն տեղում, էջ 477:

կենսափիլիսոփայության բացառիկ արտահայտություն լինելով, իր մեջ ամբողջացնում է ոչ թե անհատի, այլ մի քանի դարերի ժողովրդական զանգվածների հավաքականության գաղափարը: «Եթե կամենանք երկու խոսքով ամփոփել այդ կարևոր գործը,- բացատրում է քննադատն իր հատուկ հետաքրքրությունն այդ պոեմով,- պիտի ասենք որ նա բանաստեղծական *ֆրազի* փոխարեն ստեղծեց բանաստեղծական *խորք*, հայ բանաստեղծությունը *անհող միջավայրից* տանելով դեպի *իրական միջավայր*, մտավորական անկերպարանությունից տանելով դեպի ժողովրդական *ինքնություն կերպարանք*, անհատի տկար ստեղծագործությունից դեպի *հավաքական ուժեղ ստեղծագործությունը*»¹¹: Պետք է նկատել՝ Հակոբյանի այս բնութագրումները բավական մոտ են ժողովրդական թեմաների մշակման հենց իր՝ Թումանյանի սկզբունքներին, որ ծանոթ են այդ խնդրին վերաբերող նրա հրապարակային և այլ բնույթի ելույթներից:

Քննադատը թեթևակի անդրադառնում է նաև «Դեպի Անհունը» պոեմին՝ այնտեղ տեսնելով «նորագույն մարդու ներքին խռովքն ու ողբերգությունը» և, իբրև փիլիսոփայական պոեմ՝ այն համարելով «նորություն» հայ գրականության մեջ: Այսպիսով՝ Ս. Հակոբյանը Թումանյանի գործերի քննության հիմքում դնում է ազգային-հասարակական միջավայրի ու գրականության անխզելի կապի սկզբունքը և այդ լույսի ներքո էլ քննում դրանք:

«Արեգ» ամսագիրը Թումանյանին նվիրված հատուկ խմբագրականում այլ կողմից է հաստատում այս իրողությունը: «Այն,- կարդում ենք խմբագրականում (հեղինակը անկասկած Ս. Հակոբյանն է - Ե. Մ.),- ինչ որ նրանից առաջ և մինչև իսկ նրա ժամանակ համարվում էր գեղջուկ, ռամկական, բանաստեղծության համար անարժան և անվայել - նրա գրչի տակ հետզհետե մեծացավ, ազնվացավ և գեղեցկացավ որպես իսկական աղամանդ»¹²: Այսինքն՝ Թումանյանն ստեղծում է ըստ էության նոր բանաստեղծություն, որ զարգացած մտավորականից մինչև անգրագետ գյուղացին, բոլորը «կարդում կամ լսում էին իրենց սիրելի բանաստեղծի պոեմները, հեքիաթները, լեգենդները գեղարվեստական և բարոյական խորին բավականությամբ»¹³: Սա մի պատասխան էր տարիներ առաջ իր հեքիաթները Հայկունու ժողովածուից գրագողություն համարող դրամբյաններին ուղղած Թումանյանի հարցին, թե հապա ինչու Հայկունու ժողովածուն կարդում են միայն հատ ու կենտ ազգագրագետներ, իսկ իր հեքիաթները ժողովուրդը ձեռքից ձեռք է խլում: Հաջողության բանաձևը Թումանյանը գիտեր. «Արեգի» խմբագրականը

¹¹ «Արեգ», հմ. 9, Բեռլին, 1923, էջ 539:

¹² «Արեգ», հմ. 3, Բեռլին, 1923, էջ 130:

¹³ Նույն տեղում:

շարունակում է մեկնաբանել. բանաստեղծությունն արժեք ունի այնքան, որքան կարողանում է հնչեցնել ժողովրդի մեծ աշխարհի ձայնը. «Նրա միջոցով մեր բանաստեղծությունը և գրականությունը սկզբնավորվելով ժողովրդական աղբյուրից՝ գնաց դեպի լեզվի և արվեստի նրբությունը, դեպի մտավորական բարձրություն...»¹⁴:

Ամենն «ազգային» ու «հայ» Թումանյանը

Թումանյանի անեղծ հայկականության հետ կամ հենց իբրև դրանից բխող տրամաբանական հետևություն, արտասահմանյան մամուլում շարունակվում է հիշատակությունը նրա ստեղծագործության համամարդկայնության մասին: Օրինակ՝ Պոլսում Հ. Շեմս ստորագրությամբ հրապարակման մեջ նշվում է. «Հովհաննես Թումանյան հայրենի բանաստեղծ մըն է: Սակայն ի պատիվ իրեն պետք է ըսել թե ազգային երանգներու մեջ միշտ ալ շողացուցեր է համամարդկայինը: Եվ արդեն մեծ է բանաստեղծ մը այնքան, որքան իր միջավայրի անկեղծ արտահայտիչն է և որքան տեղական հույզերու մեջեն համաշխարհայինը կը ցոլացնե...»¹⁵: Այս իրողությունը հետագա տասնամյակներին ավելի լայն դրվածքով հաճախ պիտի արձանագրվեր թումանյանագիտական գրեթե բոլոր ուսումնասիրություններում:

Սիրելի մարդու անժամանակ կորստյան ցավագին շեշտադրությամբ է գրված Ա. Չոպանյանի հոդվածը Փարիզի «Ապագա» թերթում¹⁶: Բայց կան նաև դիտարկումներ, որ կարող են հետաքրքրել անգամ այսօրվա ուսումնասիրողներին: Հոդվածի հենց սկզբում հիշեցնում է. «...Նույն ինքն հայ ցեղն էր որ անոր մեջ ինքզինքը կերգեր իր հատուկ զգայնությամբ ու մտայնությամբ. իր բնորոշ ոգվով ու ճաշակով: Մեր ներկա բանաստեղծներուն

¹⁴ Նույն տեղում, էջ 132:

¹⁵ «Ճակատամարտ», հմ. 3169, Կ. Պոլիս, 1923:

¹⁶ Հունիսի 9-ին Չոպանյանը բանախոսությամբ հանդես է գալիս Փարիզի Սորբոնի Ռիշլիեյի ամֆիթատրոնում Հ. Թումանյանին նվիրված գրական-գեղարվեստական երեկույթի ժամանակ: Ելույթ են ունենում նաև Շիրվանզադեն, Զ. Շապանը, Կ. Ահարոնյանը, Կ. Բալմոնտը և ուրիշներ: «Ապագան» իր էջերում (հմ. հմ. 30, 31) տեղ է հատկացնում Զ. Շապանի ելույթին: Գրողը հետահայաց քննությամբ փորձում է հիշողության մեջ կենդանագրել Թումանյանի լուսավոր կերպարը: Մեծ էր նա, լավատես, «լայն հոգիով և պայծառ իմացականությամբ», սիրելի ամենքին և օժտված էր սիրելու ամենաբարձր հատկությամբ: «Իր դրդիչ ուժը, - նկատում է Զ. Շապանը, - իր զորության վառարանը սիրո զգացումն էր... Արդար ու բարի, իր սերը կը ճառագայթեր ամենուն վրա և որքան առիթ ունենար գայն շռայլելու, այնքան և առավելապես հարստացած ու գեղուն կը զգար ինքզինքը սիրով»: Զ. Շապանն անուղղակիորեն առաջ է տանում այն թեզը, որ Հ. Թումանյանն ինքը ամբողջ հայ ժողովուրդն է՝ ամենաբարձր հատկություններով:

ամենեն «ազգային»ն էր Թումանյան. ամենեն «Հայ»ը, ամենեն ավելի ցեղային համն ու հոտը բնականորեն և ճոխապես ունեցողը»¹⁷: Այն, որ «հայ հոգին» էր խոսում Թումանյանի լեզվով, շատերն էին ասել Չոպանյանից առաջ: Բայց որ այդ հոգու վերագոյավորման ձևը, լեզուն, մտածողության կերպն ու ոճը խորապես անհատական ու միաժամանակ ընդհանրական «հայերեն» էին, այդ մասին քչերն էին ակնարկում. այս տեսակետից Հ. Թումանյանն այսօր էլ դեռ լիովին ուսումնասիրված չէ որպես անկրկնելի պոետիկական տիպ ու անհատականություն: Հենց այս իմաստով նա Թումանյանին համարում է Աբովյանի լավագույն հաջորդն ու գրական ավանդների շարունակողը:

Չոպանյանը, իհարկե, առաջինը չէր, որ նկատում էր, թե Թումանյանը «մտցուց գործողությունը մեր բանաստեղծության մեջ. զարգացուց վիպերգին կարևոր կյանքոտ ճյուղը, և անոր մեջ տվավ գլուխգործոցներ»¹⁸: Բայց նա առաջին արձանագրողներից էր, որ ժամանակակից բանաստեղծների մեջ միայն Թումանյանը կարող էր ու արժանի «Մասնա ծռերից» ընտրել Սասունցի Դավիթի դրվագը և «զայն արվեստական անթերի կատարելությամբ շարադրել, գորեղ, կուռ, ներդաշնակ տողերով վերարտադրել»¹⁹:

Ա. Չոպանյանը առաջին նկատողներից է նաև, որ համատարած մեղամադձոտ բանաստեղծության մեջ «Թումանյանի գործը փթթում մըն է հոգեկան լուսավոր ու արու առողջության. անոր երգը ուժի, զվարթության, հավատքի, լավատեսության պոռթկում մըն է, պայծառ ու խրոխտ՝ նույնիսկ ցավի արտահայտության մեջ»²⁰: Այս կապակցությամբ առանձնապես կարևորում է բանաստեղծի մանկագրությունը:

Վերջում Ա. Չոպանյանը, իբրև պատշաճ տուրք օրվա սգավոր խորհրդին, անդրադառնում է Հ. Թումանյանի հասարակական գործունեությանը, առանձին

¹⁷ «Ապագա», հմ. 19, Փարիզ, 1923:

¹⁸ «Ապագա», հմ. 19, Փարիզ, 1923: Այս իրողությունը հետագայում բազմիցս հաստատվել է թումանյանագիտության մեջ հատկապես խորհրդային տարիներին: Էդ. Ջրբաշյանը, օրինակ, գրում է. «Կա մի բնագավառ, ուր Թումանյանի դերը հատկապես մեծ է, բացարձակ իմաստով առաջնակարգ և անփոխարինելի: Դա էպիկական պոեզիայի, պատմողական բանաստեղծական ժանրերի (պոեմի, բալլադի) բնագավառն է: Թումանյանի անունը մեր գիտակցության մեջ ամենից առաջ կապվում է էպիկական լայն ու հզոր պոեզիայի հասկացողության հետ: Այստեղ ոչ մի ուրիշ բանաստեղծ չի կարող մրցել Թումանյանի հետ» (Էդ. Ջրբաշյան, Թումանյանի պոեմները, Երևան, 1986, էջ 5-6):

¹⁹ «Ապագա», հմ. 19, 1923:

²⁰ Նույն տեղում:

ջերմությամբ խոսում նրա մարդկային բացառիկ առաքինությունների մասին, այն մասին, որ «գուտ բանաստեղծ էր ան կյանքի մեջ ալ»²¹:

Բանաստեղծի հասարակական գործունեության այլ վկայություն է Սիմոն Վրացյանի «Էջեր մոտիկ անցյալից» մեծածավալ հոդվածը, որի կենտրոնում Հ. Թումանյանն է՝ հայտնված Փետրվարյան հեղափոխությանը հաջորդած երևանյան իրադարձությունների բովում: Շրջանցելով արտաքին և ներքաղաքական գործընթացների մանրամասները՝ արձանագրենք միայն, որ բանաստեղծի այցի²² նպատակը ազգի առաջ ծառացած գոյաբանական հարցադրումներին իրատեսական լուծումներ գտնելն էր, ոչ թե քաղաքական որևէ ուժի²³ սատարելը: Վրացյանն ինքն այն համոզմունքին էր, որ «Հովհ. Թումանյանը մինչև իր ոսկորի ծուծը ազգային բանաստեղծ էր և ազգային գործիչ: Եվ այս տեսակետից նա ո՛չ մի դասակարգի և ո՛չ մի կուսակցության մարդը չէր: Նա Դաշնակցական չէր և՛ այն ժամանակ, երբ անդամ էր Դաշնակցության: Եվս առավել նա չի կարող լինել բոլշևիկ կամ բոլշևիկների մարդը: Նա համազգային է: Նրա մեջ կարող են ներշնչման աղբյուրներ գտնել ամենքը - և՛ նրանք, որոնց համար նվիրական է «Էջմիածնի կանթեղը», և՛ նրանք, որոնք հայոց ազգային անցյալի մեջ են փնտրում ոգևորության փարոսներ, և՛ նրանք, որոնց հայացքը ուղղված է դեպի առաջ և որոնք հայ

²¹ Նույն տեղում;

²² Այցի մասին որոշ մանրամասներ կան «Թումանյանը ժամանակակիցների հուշերում» գրքում: Հուշագիրներից Աշ. Թումանյանը, Ստ. Ջորյանը, Ա. Երզնկյանը, հայտնի պատճառներով, բոլորովին այլ տեսանկյունից են ներկայացնում Փետրվարյան իրադարձությունները, Վրացյանի հիշատակած որոշ փաստեր: Մեր նպատակից դուրս է պատմական այս իրողության ճիշտ ու սխալ կողմերի քննությունը. բարդագույն այդ ժամանակահատվածի ուսումնասիրությունը պատմաբանների իրավասության ներքո է:

²³ 1923 թ. հունիսի 9-ին Սորբոնում տեղի ունեցած գրական-գեղարվեստական երեկույթի ժամանակ Ավ. Ահարոնյանը նշում է. «Ինչպես բոլոր հանկարծակի ու անսպասելի հայտնված գանձերը շատերը կփորձեն հայ ժողովրդական այս վիթխարի տաղանդը գունավորել այս կամ այն քաղաքական հոսանքի մտայնությամբ, յուրացնել այս կամ այն նպատակներով: Անօգուտ ու անմիտ փորձեր: Հովհ. Թումանյան ոչ մի քաղաքական հոսանքի չի պատկանել, նա ինքը հայ ժողովուրդն է նրա բոլոր առաքինություններով ու ցավերով: Հարգանք ու պաշտամունք Հայ ցեղի մտքի այդ հազվագյուտ ծաղկին, այս եզակի ու ինքնուրույն տաղանդին, որ մեր միտքը զարդարելուց հետո, իր մահով իսկ հրաշք է կատարել այսօր Հայոց աշխարհի բոլոր ծայրերից, իրար անձանոթ, իրարից գուցե խորթ օտար հորիզոնների տակ դեգերող բեկորներին այսօր այս օտար հորիզոնների տակ իր մեծ անունով, իր հզոր շնչով, իր անմահ ժայիտով ի մի է համախմբել մեկ գաղափարի, մեկ մտածումի, մեկ զգացումի շուրջը, որ մեր հայրենիքն է՝ Հայոց աշխարհը» («Հայաստանի ձայն», հմ. 47, Փարիզ, 1923):

աշխատավոր գյուղացիության ստեղծագործ հանճարի հետ են կապում հայ ժողովրդի քաղաքական ու մշակութային զարգացումը»²⁴:

Արտասահմանում Թումանյանի մահվան արձագանքներից առանձնանում է 1923թ. ապրիլի 17-ին Վիեննայի հայկական գաղութի կազմակերպած սգահանդեսում Մխիթարյան միաբանության ներկայացուցիչ դոկտ. Հ. Սահակ Կոզյանի ելույթը, որ տպագրվում է նաև առանձին գրքույկով:

«Բանաստեղծը կա՛մ հսկա է կա՛մ գաճաճ: Չունի՛ միջին տեղ», - հայտարարում է բանախոսը և «խոր և առարկայական համոզմունքով»²⁵ Թումանյանին «հռչակում» հսկա: Բանախոսության ընթացքում նրբախույզ դիտարկումներով նա հիմնավորում է իր այդ համոզմունքը: Ժողովուրդն ու բնությունն են կազմում Թումանյանի աշխարհը սնուցող գլխավոր զարկերակը, «գաղափարներու ձուլարանը», լեզվի, ոճի «ներշնչարանը». այսպես է ձևակերպում իր ելակետային կանխադրույթը բանախոսը: Ամբողջ բանախոսության ընթացքում նա տարբեր առիթներով ու զանազան դրվածքներով մշտապես ուշադրության կենտրոնում է պահում բանաստեղծի «ջղուտ ու կուռ» տողերի, լեզվի, ոճի, բանաստեղծական մտածելակերպի, բանաստեղծումի «գեղարվեստական ձևի» խնդիրները: Սա հատկանշական դիտարկում էր, եթե նկատի ունենանք, որ արևմտահայ շրջաններում, մեծ մասամբ նաև սփյուռքում էին կա՛մ կիսաբերան, կա՛մ վերապահումով մոտենում արևելահայերի գեղարվեստին:

Հիշեցնելով Բուալոյի հայտնի միտքը, թե առանց լեզվի աստվածային հեղինակն անգամ վատ գրող է, Կոզյանը այդ տեսանկյունից անչափ բարձր է գնահատում Թումանյանին: «Թումանյան համակ հայ է լեզվով...,- ասում է բանախոսը:- Ու Թումանյան առաջնակարգ, գերազանց գրող է, և, ինչ որ ավելի՛ կը մոտեցնե գինքը մեր սրտին, հա՛յ գրող: Ունի լեզու մը փայփայող, շոյող, դյուրող, պատկերավոր, խնամված միշտ, իսկ տեղվույն համեմատ՝ վես, գոռ, ահարկու, կամ քնքուշ ու հրապուրիչ... Թումանյան կենդանի՛ աղբյուրեն ծծած է մայրենի լեզուն և զայն կը կիրարկե գեղարվեստական ընտրողությամբ ու զտությամբ... Որքա՛ն բառեր ասություններ, ամբողջ երգեր ժողովուրդի կենդանի բերնեն անցած են գրականության՝ հղկված Թումանյանի գրչով...»²⁶:

Թումանյանը, ինչպես համոզված է բանախոսը, համակ հայ է ոչ միայն լեզվով, այլև սրտով ու երևակայությամբ: Եվ հենց այստեղ է նրա բանաստեղծության ներքին արժեքը, վարակիչ ուժը: Ազգային հոգին ու կյանքն են կենսական այն աղբյուրը, որի ակունքներին մշտապես վերադառնում է

²⁴ «Հայրենիք», հմ. 10, 1923, Բոստոն, էջ 77:

²⁵ **Կոզյան Հ. Սահակ**, Յովհաննէս Թումանեան. 1869-1923, Վիեննա, 1923, էջ 3:

²⁶ Նույն տեղում, էջ 7-8:

բանաստեղծը: Նրա գրչի տակ ամեն ինչ կենդանանում է, շնչում ու խոսում՝ դառնալով ներդաշնակ մի համանվագ տիեզերական անհունի մեջ: Սակայն բնության կենդանի շարժի մեջ մշտապես ներկա է մարդը՝ գյուղացին, հողի մշակը, պապերն ու թոռները, հարսներն ու աղջիկները... Այս պատկերներին ավելանում, նաև հակադրվում են քաղաքի անիրավությունն ու դրամապատկությունը: Կոգյանը ընդգծում է բանաստեղծի խոր դիտողականությունը, պատմելու և նկարագրելու վարպետությունը: Սրանք դիտարկումներ են, որոնց շուրջ պիտի կենտրոնանար հետագա տասնամյակների թումանյանագիտական ամբողջ միտքը:

Հետաքրքրական է Ս. Կոգյանի մեկնաբանությունը հատկապես Լեոյի կողմից շրջանառության մեջ դրված այն տեսակետի վերաբերյալ, թե Թումանյանի հերոսները հոգեբանական հարստություն չունեն, այսինքն՝ նրանց «ներքին աշխարհը, զգացմունքները, տանջանքները» թույլ են բացահայտված: «Բայց մի թե կարելի՞ է տարակուսիլ,- բացատրում է բանախոսը,- որ ունե՞ր նա հասկացողություն Անուշի, Մարոյի, Մարոյի ներքին փոթորիկներուն... Ո՛հ, նա ունի հասկացողություն, ու խոր հասկացողություն, և սակայն կը զգուշանա պրպտելէ, վերլուծման ենթարկելէ այն սրտերն ու հոգիները, որոնք չեն հպատակիր քաղաքացիական չափանիշներու: Բնության ու ժողովուրդի երգիչը լավ տեղյակ էր յուր դյուցազներուն հոգեկան ալիքներուն, և, առանց մանրամասնությանց վրա դեգերելու, մե՛կ խոսքով, մե՛կ պատկերով կը ճառագայթե ու կը սահի կ'անցնի:- Այդ կարող է տկարություն ըլլալ, բայց նաև քննադատական չափերէ վեր սրատեսություն ու փափկանկատություն»²⁷: Խոսքն այստեղ վերաբերում է «զեղարվեստական չափի» թումանյանական բացառիկ զգացողությանը, որ նրա բանաստեղծական մտածողության հիմնական հատկանիշներից է, և որի մասին խոսում են հետագա բոլոր ուսումնասիրողները:

Հայկական սփյուռքում Հ. Թումանյանի մահվան արձագանքներից կարելի է առանձնացնել նաև Արտ. Աբեղյանի «Հովհաննես Թումանյան (իր մահվան առիթով)» մեծածավալ հոդվածը՝ տպագրված մայիսի 1-6-ը «Հայրենիք» օրաթերթի մի քանի համարներում: Հեղինակը փորձում է տալ Թումանյան մարդու, ստեղծագործողի, հասարակական գործչի՝ իր արտահայտությամբ «աղոտ ուրվագիծը» պատշաճ մեծարանքի ու սիրո սրտաբուխ ջերմությամբ:

Հոդվածն ուղղված է առաջին հերթին ամերիկաբնակ հայ ընթերցողին, որով և պայմանավորված է շարադրանքի շեշտված հանրամատչելի բնույթը: Հեղինակի դիտողություններում ու դատողություններում քիչ բան կա, որ

²⁷ Նույն տեղում, էջ 12-13:

կարող է հետաքրքրել այսօրվա ընթերցողին: Բայց դրանցից մեկ-երկուսը կարող էին օգտակար լինել ամերիկահայ լսարանին՝ կողմնորոշվելու ժամանակի քննադատության մեջ հաճախ արծարծվող վիճահարույց խնդիրներում: Օրինակ՝ այն համոզմունքի ամրագրումը, թե բանաստեղծն ինչպես «ողջ հասակի վեհությամբ ու մեծությամբ»²⁸ է կանգնած եղել ժամանակի քննադատության, նույն կերպ էլ ներկայանալու է ապագա քննադատների դատին:

Այնուհետև՝ Թումանյանը «գերազանցորեն *հայ գյուղի և հայ շինականի երգիչն է*»²⁹: Իր ժամանակին բազմիցս կրկնված հայտնի բանաձև է: Բայց ինչո՞ւ է շղագրով հատուկ ընդգծված, արդյոք լռելյայն հակադարձումը չէ՞ դա սահմանափակություն դիտելու փորձերի, որ քիչ չէին ժամանակի քննադատության մեջ: Այդ ենթադրության օգտին է խոսում նաև ընդգծված մտքի հեղինակային բացատրությունը. «Հայ գյուղական իրականությունը իր լուսավոր և մանավանդ իր ստվերոտ կողմերով գեղարվեստական արտացոլումն է գտել Թումանյանի երկերի մեջ: Թումանյան գյուղի, այն ևս սարի գյուղի զավակ է ուտից-գլուխ: Եվ որովհետև բնությունը օժտել էր նրան մի արտակարգ տաղանդով, ներշնչել նրան ճշմարիտ բանաստեղծի անաղարտ շունչը, ուստի և Թումանյան դարձավ հայ գրականության ընտրելագույն անոթներից մեկը, որ դարեր, երկար դարեր պիտի հանդիսանա մեր ժողովուրդի գուրգուրանքի ու սիրո առարկան»³⁰:

Ա. Աբեղյանը ևս Թումանյանի «գրական գլխավոր արժանիքը» տեսնում է նրա էպիկական գործերի մեջ: Հանրամատչելի բնութագրումներով ներկայացնելով դրանք՝ «Դեպի Անհունը» և «Պոետն ու Մուսան» «խոտորումներ» է համարում բանաստեղծի իրական ստեղծագործական «բնագավառից», որն է՝ «հայ գյուղը և հայ գյուղացին, որ նա այնպե՛ս վեհորեն և սքանչելիորեն կանգնում է մեր առաջ իր ողջ հասակի պատկառելիությամբ ու հմայքով: Այդտեղ նա իր նմանը և մրցակիցը չունի»³¹:

Ա. Աբեղյանի հոդվածում թերևս ամենաարժեքավորը բանաստեղծի լեզվի բնութագիրն է. «Թումանյանի *լեզուն* էլ՝ հարազատ և անարվեստ, գերազանցորեն գեղարվեստական ընտրելագույն անոթն է իր ստեղծագործության: Ինչպես որ իր գրվածքների նյութը առողջ է և իրական - *ժողովրդական*, այնպես նաև այդ իրականությունը գեղարվեստորեն վերարտադրելու գրական գործիքը՝ իր լեզուն: Ժողովրդական է այդ լեզուն. ո՛չ այն մտքով որ ժողովրդի

²⁸ «Հայրենիք», հմ. 3345, Բոստոն, 1923:

²⁹ «Հայրենիք», հմ. 3346, 1923:

³⁰ Նույն տեղում:

³¹ «Հայրենիք», հմ. 3348, 1923:

խոսած լեզվով է գրում Թումանյան, այսինքն՝ բարբառով, ո՛չ, գրական ընտիր լեզու և հարուստ ու պատկերավոր, նկարչագեղ ոճ ունի Թումանյանը»³²:

Ա. Աբեղյանը առանձին դրվատանքով է խոսում Թումանյանի մանկագրության, հատկապես «Հասկեր» մանկական ամսագրի և «Լուսաբեր» դասագրքերի ստեղծման, կենսունակության մեջ բանաստեղծի բացառիկ դերի մասին, որ, ինչպես եզրակացնում է նա, «ինքնին բավական պիտի համարվեր, նրան հայոց գրականության մեծանուն երախտավորներից մեկը համարելու համար»³³:

Ա. Աբեղյանի հոդվածից հետո «Հայրենիք» օրաթերթի մայիսյան համարներում տպագրվում է Մկ. Պարսամյանի «Հովհաննես Թումանյանի՝ ստեղծագործությունը» հոդվածը: Գրված է նույն նպատակով, ինչ որ նախորդը՝ գուտ նկարագրական եղանակով ամերիկահայությանը ներկայացնելու բանաստեղծի ստեղծագործությունը և հայոց կորստի մեծությունը³⁴: Ուշադրության արժանի են մեկ-երկու բնութագրական դիտողություն առանձին ստեղծագործությունների վերաբերյալ: Օրինակ՝ «Անուշը» համարում է «հովվերգական տոամ», իսկ հեղինակին՝ «առաջնակարգ հովվերգակ ողբերգու»³⁵:

Բոլորովին այլ հետաքրքրություն է ցուցաբերում Պարսամյանը «Սասունցի Դավիթ» պոեմի նկատմամբ: Այն համարում է խտացումը ոչ միայն պատմական տվյալ ժամանակահատվածի մարդկային հոգեբանության, այլև դյուցազներգություններին հատուկ բոլոր արժանիքների: Երկրորդ կարևոր հատկությունը Պարսամյանը համարում է հայ ժողովրդի նախահոր՝ Հայկի սերնդի ժառանգական դիմագծությունը. պատանի Դավիթը չի հպատակվում Մսրա Մելիքին՝ մի հատկանիշ, որ բնորոշ է մեր պատմության ընտրյալներին:

Ի տարբերություն «Դեպի Անհունը» պոեմի հանդեպ քննադատության մեջ ձևավորված թեական մոտեցման՝ Պարսամյանը փորձում է հասկանալ ու գնահատել Թումանյանի նաև այս «խոտորմունք» համարված գործը, որտեղ բանաստեղծը՝ «իբրև մի նոր Համլետ», ձգտում է հասկանալու «կյանքի և

³² Նույն տեղում:

³³ «Հայրենիք», հմ. 3349, 1923:

³⁴ Նյու Յորքում հրատարակվող «Բանվոր» թերթը մայիսի 12-ի համարում տպագրում է մեծածավալ մի խմբագրական «Հովհաննես Թումանյանի ուղիով» խորագրով, որտեղ անդրադառնում է բանաստեղծի հասարակական-քաղաքական հայացքներին, մարդկային նկարագրին՝ անվանելով նրան «ժողովուրդի մարդ» որը «մշտապես պատրաստ՝ իր գրիչը սեղանին վրա ձգելու և հրապարակ նետվելու, երբ դժվարության մեջ գտնվող ժողովուրդը իր օժանդակության պետք ուներ» (Հովհաննես Թումանյանի կյանքի և ստեղծագործության տարեգրություն (1920-1923), էջ 393-396):

³⁵ «Հայրենիք», հմ. 3362, 1923:

մահվան մե՛ծ իմաստը»³⁶, և «ուր կը խոսին միայն զգացումն ու խորհուրդը, և ուր տեղ չունի երևակայությունը»³⁷:

Հոդվածի գրության առիթին միանգամայն պատշաճ է նաև վերջաբանը. «...Անոր ստեղծագործության մեջ, իբրև վճիտ ու թափանցիկ հայելի մը, իրենց դեմքն ու նկարագիրը ցուցած պիտի գտնեն թե անցնող սերունդները և թե ապրող հոգիները: Որովհետև՝ ամեն հասակի մարդոց հոգեկան ներքին աշխարհի տառապանքն ու ցավը պատմեց անիկա զմայելի արվեստով մը զալիք սերունդներուն համար»³⁸:

Եզրակացություն

1. Արտասահմանյան հրապարակումներում ուրվագծվում են ամենայն հայոց բանաստեղծի մարդկային տեսակն ու ստեղծագործական անկրկնելի տաղանդը, փորձ արվում ի մի բերելու երկու դարերի կենտրոնում վեր խոյացած հանճարեղ բանաստեղծի նկարագիրը:
2. Հրապարակումների ուսումնասիրությունը ակնհայտ է դարձնում անառարկելի մի իրակություն. Թումանյանը ժամանակի կենտրոնաձիգ ուժն էր, որ դարձել էր հայ ժողովրդի և առհասարակ աշխարհի չորս ծագերում ապրող հայության հոգևոր ստեղծումների հավաքական հիշողության ու հոգեբանության կեցուցիչը:

³⁶ Նույն տեղում:

³⁷ Նույն տեղում:

³⁸ Նույն տեղում:

Թումանյանի թանգարանի մամուլի արխիվում պահվում է Գ. Մ. ստորագրությամբ հոդվածի կտրոն (ԹԹ ԳՕՖ ՄԲ 98, 1923), որտեղ հեղինակը անդրադառնում է բանաստեղծի ծնողներին, կրթությանը, գրական գործունեությանը, գրական նախասիրություններին և այլն: Գրում է. «...Սակայն Թումանյան ոչ միայն առակախոս բանաստեղծ մըն է, որ մանկական գրականությունը ճոխացնող մը եղած է, այլև ժողովրդական բանահյուսության վերարտադրող մը, քնարերգակ մը և դյուցազներգակ մը եղած է: Քնարերգական քերթվածներուն մեջ գերազանցապես բնության երգիչն է ան: Բայց կերգե նաև սերը, կարոտը, հովվական կյանքը, ժողովուրդին բարքերը, հույզերն ու ցավերը: Բսկ դյուցազներգություններուն նյութը ընդհանրապես կառնե ան ժողովուրդե, ժողովրդական բանահյուսություններեն, որուն կը հագցնե գեղարվեստական նոր տարազ...» (Հովհաննես Թումանյանի կյանքի և ստեղծագործության տարեգրություն (1920-1923), էջ 503):

Օգտագործված գրականություն

1. «Ապագա» (թերթ), Փարիզ, 1923, հմ. 19, 30, 31:
2. «Արեգ» (ամսագիր), Բեռլին, 1923, հմ. 3, էջ 129-133; հմ. 4, էջ 215-223; հմ. 5, էջ 298-300; հմ. 7, էջ 412-416; հմ. 8, էջ 473-477; հմ. 9, էջ 539-544:
3. «Արմենիա» (թերթ), հմ. <15>, Մարսել, 1923:
4. «Խորհրդային Հայաստան» (թերթ), հմ. 61, Երևան, 1923:
5. Կոզեան Ս., Յովհաննէս Թումանեան. 1869-1923, Վիեննա, Մխիթարյան տպ., 1923, 16 էջ:
6. «Հայաստանի ձայն» (շաբաթաթերթ), Փարիզ, 1923, հմ. 47, էջ 3-6:
7. «Հայրենիք» (ամսագիր), Բոստոն, 1923, հմ. 10, էջ 69-78:
8. «Հայրենիք» (թերթ), Բոստոն, 1923, հմ. 3345, 3346, 3348, 3349, 3362:
9. Հովհաննէս Թումանյանի կյանքի և ստեղծագործության տարեգրություն (1920-1923), Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրտ., 2020, 883 էջ:
10. «Ճակատամարտ» (թերթ), Կ. Պոլիս, 1923, հմ. 3169, 3179:
11. Զրբաշյան Էդ., Թումանյանի պոեմները, Երևան, Երևանի համալսարանի հրտ., 1986, 487 էջ:

Ева Мнацаканян

Реакция зарубежной прессы на смерть Ованеса Туманяна

Заключение

Ключевые слова и выражения: О. Туманян, С. Акопян, А. Чопанян, А. Абемян, С. Когян, армянские поселения, оценка и почитание, литературный портрет, благородный и достойный труженик, критико-исторические теории, бессмертный поэт.

В статье представлены основные положения публикаций, вышедших в 1923 г. за рубежом по случаю смерти О. Туманяна, содержащие высокую оценку, выражение почтения и представляющие собой исключительную литературно-историческую ценность. В большинстве отзывов представлен многоаспектный анализ и оценка творчества поэта и сделана попытка, по-новому изучив его творчество, открыть своего Туманяна.

В статьях, опубликованных в зарубежной печати, представлен человеческий облик и непревзойденный талант всеармянского поэта, сделана попытка дать обобщенную характеристику гениального поэта, фигура которого видится устремленной вверх на стыке двух столетий. Мы хотим подчеркнуть, что идейный смысл всех статей един: Туманян был

центростремительной силой своего времени, носителем коллективной памяти и психологии армянства, рупором армянского народа.

Задача статьи состоит в том, чтобы, сгруппировав, выделить опубликованные в зарубежной печати материалы, в которых выражается уникальность и неповторимость Тумяна как поэта, человека и общественного деятеля. При изучении проблемы использовались сопоставительный, сравнительно-исторический и аналитический методы. В статье делается вывод: в посвященных О. Тумяну зарубежных публикациях, вышедших в свет после его смерти, зримо представлен тот неоспоримый факт, что поэт, вольно или невольно оказавшийся на перекрестке разных времен и пространств, стал залогом духовных свершений и продолжения существования армянского народа.

Yeva Mnatsakanyan

Reaction of Foreign Press to the Death of Hovhannes Tumanyan
Conclusion

Keywords and expressions: H. Tumanyan, S. Hakobyan, A. Chopanyan, A. Abeghyan, S. Kogyan, Armenian settlements, appreciation and veneration, literary portrait, noble and worthy worker, critical-historical theories, immortal poet.

The article presents the main provisions of the publications issued abroad in 1923 on the occasion of the death of H. Tumanyan, containing a high assessment, an expression of respect and representing an exceptional literary and historical value. Most of the reviews present a multi-aspect analysis and assessment of the poet's creative work, and an attempt was made, having studied his creativity in a new way, to open his own Tumanyan.

The articles published in the foreign press present the human appearance and unsurpassed talent of the pan-Armenian poet, an attempt has been made to give a generalized description of the poet of genius, whose figure is seen as looking upwards at the turn of two centuries. We would like to emphasize that the ideological meaning of all the articles is the same: Tumanyan was the centripetal force of his time, a bearer of the collective memory and psychology of the Armenians, the mouthpiece of the Armenian people.

The purpose of the article is to group and highlight the materials published in the foreign press, which express the uniqueness and originality of Hovhannes Tumanyan as a poet, person and public figure. Comparative, comparative-historical and analytical methods have been used by us during the

study of the problem. The article concludes that the foreign publications devoted to Hovhannes Tumanyan and issued after his death, visibly present an indisputable fact that the poet voluntarily or involuntarily found himself at the crossroads of different times and spaces, became a guarantee of spiritual accomplishments and the continuation of the existence of the Armenian people.

Խմբագրություն է ուղարկվել 15.01.2023թ.

Հանձնարարվել է գրախոսության 30.01.2023թ.

Տպագրության է հանձնարարվել 13.03.2023թ.

ՆԱՌԱ ՍԱՐԳՍՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Մանուկ Աբեղյանի անվ. գրականության

ինստիտուտի գիտաշխատող

Բան. գիտ. թեկնածու

Էլ փոստ՝ nara77706@mail.ru

**ՎԱՀԱԳՆ ԴԱՎԹՅԱՆԸ 20-ՐԴ ԴԱՐԱՍԿԶԲԻ ԱՐԵՎՍՏԱՀԱՅ
ՊՈԵԶԻԱՅԻ ՄԵԿՆԻԶ**

Ամփոփում

Վահագն Դավթյանի՝ արևմտահայ գրականությանը նվիրված հոդվածները մշտապես եղել են քննադատության ուշադրության առանցքում, արժևորվել, բարձր գնահատվել գրականագետների, բանաստեղծների կողմից, սակայն առանձին ուսումնասիրության առարկա չեն դարձել:

Մեր հետազոտությունում առաջին անգամ մանրամասն քննվում են Վ. Դավթյանի՝ արևմտահայ պոեզիային վերաբերող հոդվածները, որոնցում արտահայտված են գրականագետ Դավթյանի գեղագիտական սկզբունքները, աշխարհայացքը: Նա հայ բազմադարյան պոեզիայի պատմության մեջ նորովի է վերագնահատում, մեծ դեր ու նշանակություն տալիս արևմտահայ քնարերգությանը, որն իր բարձր գեղարվեստականությամբ, ազգային ու համամարդկային համաձուլմամբ, հայ գրականությունը բարձրացրեց համաշխարհային պոեզիայի մակարդակի:

Բանալի բառեր ու բառակապակցություններ. վերածնունդ, մարդասիրություն, ազգային բանաստեղծ, իդեալի ու իրականության հակադրություն, անձնական դրամա, անանձություն, լուսերգություն:

Ներածություն

Տաղանդավոր բանաստեղծ, գեղագետ, քննադատ Վ. Դավթյանի հուշագրությունը, հրապարակախոսությունը, հայ ու համաշխարհային դասականների դիմանակարային ուրվագծերը, հոբելյանական և օրացուցային հոդվածները, որոնք ամփոփված են նրա «Զուգահեռ ճանապարհ»¹ (1976) և «Ի սկզբանե էր բանն» (1989) գրքերում, աչքի են

¹ «Ներդաշնակության որոնում. այս է Վ. Դավթյանի ժողովածուում ընդգրկված գրաքննադատական հոդվածների հիմնական մեկնակետը», - բնորոշում է Ե.

ընկնում խոր ընդհանրացումներով, նրբին դիտարկումներով, դիպուկ բնութագրումներով²: Դրանք ծանրակշիռ գրականագիտական լուրջ արժեք ունեն և մինչև այսօր էլ չեն կորցրել իրենց ուժն ու արդիականությունը:

Տաղանդավոր գրողը, ինչպես պոեզիայում, այնպես էլ հոգվածներում «արթնացնում» է իր նախորդների իմաստուն, կենսունակ Խոսքը, ընդհանրացնող դիտարկումներով զուգահեռում իրականությանը³. «Վահագն Դավթյանն իր հոգվածներում ու դիմանկարներում դարձյալ ու դարձյալ ընթերցողին մղում է դեպի հայկական համամարդկայնության ոլորտը...: Խոսելով հայոց պատմության անցած ուղու, ազգային հիշողության և սերունդների նորօրյա զարթոնքի մասին՝ Դավթյանը մշտապես հուշում է՝ աչքը պահել անցյալի դասերին, հոգևոր ժառանգությանը, դարերի ազնիվ նստվածքներին, լեզվին, մշակույթին, հանուն վաղվա օրվա»⁴:

Գրական դիմանկարների ու հոգվածների մեջ Դավթյանը բացահայտում է այս կամ այն գրողի ստեղծագործության արժեքայնությունը, նշում այն առանցքայինը, որ կազմում է տվյալ գրողի էությունը, և որից բխում են նրա ստեղծագործության մյուս որակները. «Այս սկզբունքն իրականացնելիս գրականագետ Դավթյանին մեծապես օգնել է բանաստեղծ Դավթյանը՝ ճշտորեն բնութագրելու երևույթը, ընտրելու ամենահարմար բառը, ամենախոսուն վերնագիրը»⁵, - դիպուկ կերպով բնորոշում է գրականագետ Ժ. Քալանթարյանը, ապա ընդգծում. «Կարևոր է նաև այն հանգամանքը, որ բանաստեղծների մասին խոսելիս Դավթյանը բացահայտում է գրականության, արվեստի, պոեզիայի մասին իր

Պետրոսյանը: Մանրամասն տե՛ս Պետրոսյան Ե., «Ներդաշնակության որոնում», «Սովետական Հայաստան» թերթ, Եր., 1976, №196, 22 օգոստոսի, էջ 4:

² Հատկանշական է այն, որ «Վ. Դավթյանի գրաքննադատական հոգվածներին բնորոշ է պատկերավոր վերլուծությունը»: Տե՛ս Աճեմյան Գր., «Քնարերգակի զուգահեռ ճանապարհ», «Սովետական գրականություն», Եր., 1976, №10, էջ 138:

³ Այս առումով կարծում ենք՝ պատահական չեն ընտրվել գրքերի վերնագրերը՝ «Ի սկզբանե էր բանն...», «Զուգահեռ ճանապարհ»: Այդ նկատելի է նաև Դավթյանի՝ պոեզիայի մասին դատումներում. ժամանակակից պոեզիան պետք է նոր որակի պահանջ դնի, «ընթանա ... արյան հիշողությունը, հոգու հիշողությունը արթնացնելու (ընդգծումն իմն է՝ Ն. Ս.), նախնական անադարտ զգացողությունները ժամանակի բարդ զգացողություններին զուգորդելու ուղիներով»: Տե՛ս Դավթյան Վ., Ի սկզբանե էր բանն..., Եր., 1989, էջ 11:

⁴ Տե՛ս Թամրազյան Հր., Երկեր, Դ., Եր., 2013, էջ 460:

⁵ Քալանթարյան Ժ., Վահագն Դավթյան, Եր., 1991, էջ 149:

ըմբռնումները, նախընտրած սկզբունքներն ու չափանիշները, ուստի գուցահեռ կերպով բնութագրվում է նաև ինքը»⁶:

Մասնավորապես արևմտահայ պոեզիային վերաբերող հոդվածներում արտահայտված են քննադատ Դավթյանի գեղագիտական, տեսական ըմբռնումները, սկզբունքները, որոնք ավելի հստակ ու որոշակի են դարձնում գրողի գեղագիտական հավատամքը, աշխարհայացքը. «Բայց բանաստեղծի անհատականությունը նաև մի ուրիշ, շատ մեծ հատկանիշ ունի, և դա իմ խորին համոզմունքով, այն է, թե նա որքանով է ազգային: Եթե բանաստեղծը անհատականություն է, շեշտված անհատականություն, չի կարող նաև ազգային չլինել... Ինձ համար դա տաղանդի չափանիշ է, որքան ազգային է բանաստեղծը, այնքան ավելի մեծ ու բնական տաղանդ է նա, այնքան նրա մեջ ավելի է խոսում արյունը»:

Մեթոդաբանություն

Վ. Դավթյանի՝ արևմտահայ քնարերգությանը վերաբերող գրականագիտական հոդվածները քննելիս կիրառել ենք գեղարվեստական ստեղծագործության քննաբանության մի շարք մեթոդներ՝ վերլուծական, քննական, համեմատական, համադրական:

«Հայ քերթողության ասպետը» (1971) հոդվածում Դավթյանը թափանցում է Միամանթոյի գրական ժառանգության ներքին խոր ենթաշերտերի մեջ. «Իրականության և երագի բախման ողբերգությունն է Միամանթոյի ստեղծագործության մեջ: Աշխարհի բոլոր մեծ բանաստեղծների ստեղծագործություններն առհասարակ ծնունդ են այդ նույն բախման»⁷: Բայց մեծ բանաստեղծի պատկերած իրականությունը շատ էր տարբերվող, մոայլ ու արյունոտ: Խորաթափանց գրողը տեսնում է Միամանթոյի՝ իր ժողովրդի դաժան ճակատագրով, հայրենիքի ցավով այրվող, մխացող բանաստեղծի հոգու դրաման, տագնապը, ընդվզումը: Նա ինքնագոհությամբ ու «ասպետաբար» հրաժարվում է սիրո երգից՝ «իբր ժողովրդի «Ասպետականը» գրելու համար»: Թերևս աշխարհի ոչ մի բանաստեղծ երբևէ կանգնած չի եղել այդքան ահավոր իրականության դեմ. «Մի ամբողջ ժողովրդի ազգային ու սոցիալական ողբերգություն էր դա, մի ամբողջ ժողովրդի լինելու և չլինելու ողբերգությունը»⁸: Իբրև երագի ու

⁶ Նույն տեղում, էջ 150:

⁷ Դավթյան Վ., Ձուգահեռ ճանապարհ, Եր., 1976, էջ 152:

⁸ Նույն տեղում, էջ 153:

իրականության բախում՝ Դավթյանը բերում է խոր ու նուրբ ապրված «Արցունքներս» չքնադ բանաստեղծության հետևյալ տողերը.

Եվ մաքրաթև երագիս հետ մինակ էի հովիտներուն մեջ հայրենի,

Քայլերս էին թեթև, ինչպես քայլերը խարտիշագեղ եղնիկին,

Եվ զվարթությամբ կը վազեի, կապույտեն և օրերեն բոլորովին գինով,
Աչքերս ոսկիով և հույսով՝ և հոգիս աստվածներով լեցուն...

«Ազատության, արդարության, «մարմարեղեն հույսի» երգիչն ու «հսկայաձև ռահվիրան» եղավ նա: Երգեց ցավն ու տառապանքը, հայրենի տան «ափ մը մոխիր»-ն ու անդրշիրիմյան աղաղակները, մահվան տեսիլներն ու Մաշտոցի գյուտի փառքը»⁹, - ընդհանրացնում է Դավթյանը:

Հետագայում մեկ այլ առիթով քննադատ բանաստեղծը կրկին անդրադառնում է Սիամանթոյի «կարապային մի երգի»՝ «Թաղում» (1987) բանաստեղծությանը: Դավթյանը խոստովանում է՝ այն, պատանության տարիներից սկսած, երգել է իր մեջ որպես եղերական ու թախծալի մեղեդի, որ կորովի ու զորեղ է նաև:

Կոտորած, նախճիր է եղել այլուր, նաև՝ անտառում, որ սովորական իրողություններ էին Թուրքիայի համար, և բանաստեղծը անտառ է վերադարձել վերջին անգամ համբուրելու ու թաղելու իր բարեկամին. Ոչ ոք չի եկել... բնությունն է միայն ոտքի ելել՝ մասնակցելու այդ տխուր թաղմանը: Եվ այստեղ խորաթափանց Դավթյանը հայտնաբերում է Սիամանթոյի գեղարվեստական գյուտը. բանաստեղծության կոնկրետ, զուտ ազգային ցավը սկսում է համամարդկային, տիեզերական չափեր ընդունել. «Մարդկային խղճի զանգերը բարեպաշտորեն գուժում են աշխարհին այդ միակ թաղումի մասին, որ սակայն թաղումն է ամբողջ արարչագործության»¹⁰:

Բոլոր մեծ բանաստեղծներն էլ ինչ-որ առումով մարգարեներ են: Եվ Սիամանթոն բացառություն չէ. «Սիամանթոն հայկական նախճիրների մեջ առավել մեծ արհավիրքների գալուստ էր կանխագուշակում: Դարասկզբից նա իր սևեռուն հայացքն ասես նետում էր դեպի դարակեսը և ազդարարում.

Գիտեք թե հեռավոր ու մոտավոր քաղաքները բոլոր,

Օրերուն ու մարդերուն ճճիրներեն քանդվեցան.

Կարապներն ու խարտյաշ եղնիկները հովերուն մեջ խեղդվեցան...

Զանգակները հին եկեղեցիներու փառքերուն հետ լռեցին...»:

Ավելին, Սիամանթոն հայացքը հառում էր ոչ միայն մեր դարակեսին, այլև մինչև մեր օրերը և գնում առավել հեռուները: Ահա թե հայկական

⁹ Նույն տեղում, էջ 154-155:

¹⁰ Ի սկզբանե էր ..., էջ 221:

կոտորածների ու նախճիրների մասին գրելով, ինչպես կարելի է գերաճել ու բարձրանալ մինչև համամարդկային գաղափարները, մինչև դարի ցավերն ու վերքերը»¹¹:

«Տերևի սոսափյունից մինչև անհունը» (1970) հոդվածի սկզբում Դավթյանը ոչ պատահականորեն անդրադառնում է Մեծարենցին նվիրված չարենցյան քառյակին, որն ականա ստիպում է բանաստեղծին խորհրդածել Մեծարենցի քնարերգության հասարակական բովանդակության, ժամանակի հետ ունեցած նրա հարաբերության շուրջ: «Արև է երգել ու զարուն այս հիվանդ, հանճարեղ պատանին» չարենցյան տողերը քննադատ Դավթյանին մղում են մի կարևոր հարցադրման. արդյո՞ք Մեծարենցը ժամանակից, հասարակական խնդիրներից կտրված մի ինքնանպատակ քնարերգու է: Եվ ինքն էլ ճշմարտացորեն հիմնավորում է իր հարցադրումը, բացահայտում առեղծվածը: Եթե Մեծարենցը ժամանակից կտրված արևի ու զարնան մի ինքնամոռաց քնարերգու լիներ, Չարենցը չէր կարող մեծարել նրան: Արյան ու եղեռնի մեջ եղեգնյա սրինգով արև ու զարուն երգող բանաստեղծը ոչ միայն չի հնացել, այլև իր ժամանակից «գերաճելով» հասել է մեզ, ավելի է բացել իր գեղեցկության հյուսվածքը. «Ահա այդ գաղտնիքի բանալին է, որ իր սքանչելի քառյակով մեզ է մեկնում Չարենցը»:

Դավթյանը տեսնում է իրականության երկու հակադիր կողմերը. մի կողմում՝ եղեռն, նախճիր, մյուս կողմում՝ զարնան ու արևի երգ, մի կողմում՝ ոտնահարվող մարդկայնություն, մյուս կողմում՝ մարդկայնության փառաբանություն: Նա Մեծարենցի բանաստեղծական աշխարհի մեջ հայտնաբերում և նորովի է մեկնում երազի և իրականության հակադրությունը: Հանճարեղ քնարերգուն զարմանալիորեն մղձավանջային իրականությանը հակադրել է իր մարդկային մեծ երազանքը, մարդասիրությունը, բարությունը, լույսի տենչը: Նա ա՛յս կերպ էր հակադրվում կյանքի մղձավանջին. «Աշխարհում լեռնացող ամեհի ուժերի, արյան ու եղեռնի դեմ հանդիման բանաստեղծը մարդկայնության ու գեղեցկության իր տառապագին որոնումը, իր ցավագին երազանքն է դրել և դրանով իսկ դարձել ժամանակի հարազատ արտահայտիչը, թեև ժամանակի դեպքերի ու իրադարձությունների մասին հիշատակություն իսկ չկա նրա ստեղծագործության մեջ»¹²:

Դավթյանը նաև նկատում է, որ հայրենիքի զգացողությամբ զարմանալիորեն իրար նման են Մեծարենցն ու Եսենինը: Եվ հիշում է Եսենինի խոսքը իր հայրենիքի, ծննդավայրի մասին. «- Գիտե՞ս, թե ինչու եմ

¹¹ Նույն տեղում, էջ 221:

¹² Զուգահեռ ճանապարհ ..., էջ 167

ես բանաստեղծ, - հարցրել է նա մի գրողի: - ...Ես հայրենիք ունեմ: Ես այնտեղից եմ դուրս եկել և ինչպիսին էլ լինեմ, կգնամ այնտեղ... Ուզո՞ւմ ես բարի խորհուրդ ստանալ... Հայրենի՛ք փնտրիր, կգտնես՝ իշխան ես: Չես գտնի՝ ոչինչ ես»¹³: Իսկ հայրենիքի զգացողությունը պոեզիայի «քաղաքացիականության» հենց առաջին հատկանիշը չէ՞ արդյոք: Մեծարենցի ստեղծած բանաստեղծական աշխարհը «ոգեղեն հայրենիքն» է: Դավթյանը նրբորեն նկատում է, որ մեծ քնարերգուն պատկերում է ոչ թե ժամանակակից, այլ իր երազի գյուղը, երազի աշխարհը, և այդ աշխարհն էր որոնում նա, և այդ որոնումը նրա «ստեղծագործական անհատականության էությունն» էր, որ անսպառ գեղեցկություն է բերել հայ պոեզիային: Նա համոզված է, որ հնարավոր չէ ավելի լավ բնորոշել մեծարենցյան պոեզիան, քան բնորոշել է ինքը՝ բանաստեղծը. «Ինչ երջանկություն, տերևի մը խարշափին մեջ տեսնել տիեզերական գործության գաղտնիքը, ու այդ փոքրիկ մասնավորեն մեկնիլ դեպի անհունը»¹⁴:

Լուսեղեն է նրա աշխարհը: Դավթյանը բնորոշում է. «Լույսն առհասարակ Մեծարենցի պոեզիայի հիմնական շաղախն է»: Լույս է երգել Մեծարենցը, երբ «Արյուն է եղել աշխարհում, եղել է եղեռն ու կոնիվ»: Այդ լույսերի, այդ երազի միջով ձգվում է նրա անձնական ողբերգության ցավազին թելը: Բայց անձնական ողբերգությունն էլ չի կարողանում մթագնել բանաստեղծի մարդկայնության պայծառ երազը: Դրա վառ ապացույցն «Ըլայի՛, ըլլայի՛» շարքն է, որը, ըստ Դավթյանի, Մեծարենցի ամբողջ ասելիքի խտացումն ու հայ քնարերգության գլուխգործոցներից մեկն է:

Դավթյանը բացահայտում է Մեծարենցի տաղանդի յուրահատկության գաղտնիքը. նրա ուղին բողոքի, ընդվզման ուղին չէ, այլ մարդկության, գեղեցկության որոնման ճանապարհն է, որ իր հետ բերել է մի մեծ մարդասիրություն: Նա եզրահանգում է՝ Մեծարենցի պոեզիան ազնիվ մի կոչ է մարդուն՝ վերադառնալու ինքն իրեն: Եվ որքան հեռանանք ինքներս մեզանից, այնքան նա ավելի սիրելի ու մոտիկ պիտի դառնա մեզ:

Դավթյանը Մեծարենցի անհատականության, նրա քնարերգության մեկնությանը կրկին անդրադառնում է **«Հրաշալին ու զարմանալին»** (1986) հոդվածում՝ նրա պոեզիան համեմատելով «անբառ աղոթքի», բնության ու մարդու, կյանքի ու աշխարհի «անբառ մի օրհներգության», «լույսի ու ցավի մի խորհրդավոր միասնքի», «գույների մոգական ալեվետման» հետ. կարծես հաղորդվում ես հրաշքի: Դավթյանը դարձյալ հայտնաբերում, նորովի է

¹³ Նույն տեղում, էջ 169:

¹⁴ Նույն տեղում, էջ 170:

վերաբժնորում հանճարեղ քնարերգուի խառնվածքը, բանաստեղծական մեծ աշխարհը, որ իր շարժման օրենքներն ունի, ունի նյութերի իր յուրահատուկ բաղադրությունը, իր գաղտնիքներն ու առեղծվածները. «Մինչև այս պատանու հայտնությունը հայ բազմադարյան քնարերգության քարտեզի վրա նման աշխարհի գոյություն չուներ»¹⁵: Գաղտնիքն այն էր, որ նա անդավաճան եղավ իր ակունքներին, իր մանկությանը, այն գյուղաշխարհին, ուր այժ էր բացել ինքը: Գրականագետը Մեծարենցին համարում է միջնադարյան տաղերգուների հարազատ շառավիղը, որ արհավիրքի ու խավարի մեջ փառաբանում էին լույսը, երգում արարչագործող սերը:

Դավթյանն այս հոգվածում ավելի խոր է մեկնում տառապող բանաստեղծի բարդ, խորհրդավոր ու բազմազան ներաշխարհը. մեծարենցյան քնարերգությունը միայն արևի ու լույսի փառաբանություն չէ. «Թախծալի ու ցավոտ աշխարհ է դա, քանի որ մարդկային մեծ երազանք է, իսկ երազանքը միշտ էլ իրականության հակադրությունն է, յուրօրինակ բողոք և միշտ էլ ցավից ու տառապանքից է ծնվում»¹⁶: Գրականագետը տալիս է մեծարենցյան պոեզիայի գաղտնիքները բացելու բանալին՝ «Շողա՛, շողա՛, բարի արև, հիվանդ եմ...». «Այս տողը բնաբան կարող է լինել Մեծարենցի ամբողջ ստեղծագործության համար, բանալի, որ բացում է նրա ստեղծագործական գաղտնարանները, թույլ է տալիս մտնելու նրա հոգու աշխարհը, որ անհուն ցավի, բայց և անհուն բարության աշխարհ է»¹⁷: Կրկին զարմանում է Դավթյանը. անխուսափելի մահվան եզերքին կանգնած բանաստեղծը ինչպե՞ս է կարողանում իր ցավից ու տառապանքից այդքան բարություն, անձնական ուրախություն քամել ու տալ աշխարհին: Պատասխանը մեկն է՝ միայն տարիների փորձով իմաստնացած հոգին է, որ պիտի կարողանար հասնել այդպիսի անանձնության, այդպիսի համապարփակ փիլիսոփայության՝ «Տո՛ւր ինձի, Տե՛ր, ուրախություն անաձնական...»: Իրոք որ՝ հրաշալի ու զարմանալի:

Դավթյանը բանաստեղծի իր ներքնատեսությամբ հայտնաբերում է, որ միայն նարեկյան տառապանքով մաքրված սիրտը կարող էր նվաճել

¹⁵ Ի սկզբանե էր..., էջ 69:

¹⁶ Նույն տեղում, էջ 73:

¹⁷ «Մեծարենցը մշտապես ներկա է եղել Դավթյանի գեղարվեստական աշխարհում: Դա աննկատ ներկայություն է այնքանով, որքանով բանաստեղծական աշխարհընկալման մեծարենցյան հայացքը խորքից առկա է Դավթյանի գեղագիտության մեջ», - դիտարկում է գրականագետ Դ. Գասպարյանը: Տե՛ս Գասպարյան Դ., Վահագն Դավթյան. Կյանքը և ստեղծագործությունը, Եր., 2007, էջ 57:

այդպիսի բարձունքներ, հասնել այդպիսի վեհության: Իսկ Նարեկացին Մեծարենցի պաշտամունքն էր. նա առաջինն էր, որ կարողացավ խորամուխ լինել մատյանի անհուն էության մեջ և ասել, որ «խավարներուն ու մշուշներուն, ծփծփումներուն ու հորձանքներուն ետին հավիտենական, երջանիկ, անշիջանելի գաղափարը կա պահված», կա կամքի ու գիտակցության արևոտ վայրկյանը: Մեծարենցը, դեռ նախորդ դարասկզբին զգալով բնությանը սպառնացող վտանգը, աղոթում էր նրա հրաշքի առաջ և, ցանկանալով փրկել նրա «Լուսականությունը», վերստեղծում էր այն: Ապա Դավթյանը եզրահանգում է՝ մարդու և բնության, բարության և անանձնության աղոթքանման երգը շուրթերին, վաղուց արդեն հավերժության ճանապարհն է բռնել այդ «սքանչելին ու զարմանալին»: Այստեղ տեղին է հիշել «**Մեծարենցի հետ**» հրաշալի բանաստեղծությունը, որ կարծես լիարժեք է դարձնում հանճարեղ բանաստեղծի գրական ժառանգության դավթյանական մեկնությունը.

Ու ասես ցավն աշխարհում
Դարձավ աղոթք մի պայծառ,
Ու ասես մահն աշխարհում
Փոխվեց անմահ զրույցի...

«Շքեղ բռնկում» (1973) հոդվածն սկսվում է Դավթյանի՝ հայ քնարերգության պատմության ճանապարհի վերագնահատմամբ. հայ գրականության ոչ մի ժանրում այդքան համապարփակ չի արտացոլվում հայ ժողովրդի ոգեկան կերտվածքն ու դիմանկարը, որքան նրա հանճարեղ էպոսում ու քերթողական արվեստի մեջ, նույնիսկ՝ «19-րդ և 20-րդ դարերի պոեզիայի հայելին իսկ բավական է, մեջը տեսնելու մեր ժողովրդի հոգեկան դիմանկարն ու վայելույչ հասակը, «ազնվության վկայականը»¹⁸: Նա Պետրոս Դուրյանին համարում է 19-րդ դարի երկրորդ կեսի մեր նոր քնարերգության սկզբնավորողը, որը մեր պոեզիան հասցրեց համամարդկային բարձրության՝ առերևույթ անձնական թվացող իր երգերի մեջ դնելով մեր ժողովրդի տառապագին ոգին: Նա հայի դրաման տարրալուծել է մարդու դրամայի մեջ:

Դավթյանը այն համոզման է, որ հայ ժողովրդի եզակիորեն տարաբախտ ճակատագիրը մեր մի շարք հզոր տաղանդների՝ սկսած Աբովյանից վերջացրած Սիամանթոյով, թույլ չի տվել ինչպես հարկն է առնչվելու նաև համամարդկային թեմաների, երգելու նաև Մարդու երգը... Այս առումով առանձնանում է Դ. Վարուժանը. «Բարեբախտաբար Վարուժանը կարողացավ «Ցեղին սիրտը» երգելուն զուգընթաց, գրիչը

¹⁸ Զուգահեռ ճանապարհ..., էջ 156:

թաթախել նաև իր սրտի մեջ, երգել նաև Մարդու սիրտը, սերտորեն առնչվել համամարդկային թեմաների, նրանց մեջ դնելով իր ժամանակի ողբերգություններն ու հասարակական-սոցիալական հակասությունները, նաև իր անձնական ողբերգությունները, որոնք ... հնչում են իբրև համամարդկային ողբերգության նվագներ»¹⁹: Նա եկել էր՝ ներբողելու գեղեցիկն ու վսեմը, արդարն ու բարին, երգելու ազատ, «սրբագործված Մարդուն», քայլելու դեպի «աղբյուրը լույսին», սակայն ստիպված էր հաճախ իջնել իր համամարդկային ճախրանքներից՝ ազգային վիշտը, ցեղին սիրտը երգելու:

Դավթյանը չի թաքցնում, որ Վարուժանը իր ընտրյալ բանաստեղծների շարքում է: Նա տեսնում է բանաստեղծի հոգում գեղեցիկ ու շքեղ երազի բախումը բիրտ իրականությանը, որից ծնունդ էր առել մարդկային մի մեծ դրամա: Այդ իմաստով իրար է հակադրում «Հեթանոս երգեր» և «Գողգոթայի ծաղիկները» շարքերը: Առաջինը երազն է, երկրորդը՝ իրականությունը, որը նրա ստեղծագործության ամբողջ էությունն է, նրա հոգու երկփեղկվածությունը: Երկփեղկված, բայց միաձույլ՝ սիրո ու տառապանքի փոխներթափանցմամբ: Այստեղ ամենաբնորոշը «Տրտունջ» բանաստեղծությունն է:

Վարուժանը կարողացել է տեսնել ոչ միայն սոցիալական հակասությունները, այլև բանաստեղծականցնել, գեղարվեստականացնել այն ժամանակվա մեր պոեզիային շատ քիչ ծանոթ այնպիսի երևույթներ, ինչպիսիք են գործարանը, մեքենաները և այլն: Այս իմաստով նա Վարուժանին նորարար է համարում և հայ պոեզիայի առաջին իսկական «ուրբանիստը», որ տեսավ մետաղյա դարի, մեքենայական դարի բերած արհավիրքների հեռանկարը:

Դավթյանը նկատում է, որ «Յեղին սիրտը» գրքից ձգվող ազգային ողբերգությունը «Գողգոթային ծաղիկներում» վերաճում է համամարդկային ողբերգության, դարի ողբերգության: Դրա փայտուն վկայությունը «Ո՛վ դար, ո՛վ Դար» բանաստեղծությունն է, որ ավարտվում է հույսով ու երազանքով: Իսկ երազանքը Վարուժանի քնարի ամենահիմնական լարերից է: Դավթյանը, հակադրվելով «Հեթանոս երգեր» շարքի վերաբերյալ եղած կարծիքներին՝ վերադարձ դեպի հինը, անցյալը, գրում է, որ «Հեթանոս երգերի» մեջ հեթանոսությունը ոչ թե անցյալն է, այլ ապագայի երազանքը, ուր մարդը կլինի ազատ, գեղեցիկ, սերը չի գնվի ոսկով, մարդը կբարձրանա իբրև հոգևոր ու մարմնավոր գեղեցկության ներդաշնակություն՝

«... Գեղեցիկն ու գորությունը արբուն,

¹⁹ Նույն տեղում, էջ 158:

Եվ խորհրդանիշը անմահ Գեղեցկին, գործության՝

Փրփուրներու դիցուհին ստինքներով ռոշնական...»:

Գրականագետը հայտնաբերում է նաև Վարուժանի մեկ այլ գեղարվեստական գլուխգործոցի խորհուրդը՝ «Հացին երգը»՝ պատկերը իր իսկ երազանքի²⁰: Նա գտնում է, որ այս շարքում ողբերգություն չկա, իսկ եթե կա, ապա միայն սիրային է: Բայց սա էլ դեռ ողբերգություն չէ, այլ հոգևոր գեղեցիկ հարստության վկայություն. «Առնական, հզոր, հոգեպես հարուստ մարդիկ են Վարուժանի երազանքի հերոսները, որ անգուգական «Հարձի» տողերից ելած, հաղթական երթով անցնում են նաև «Հացին երգի» միջով»²¹: Հարազատ ժողովրդի ու համայն մարդկության «առնական» տառապանքը, սերն ու երազանքն է շարքում արտահայտված:

Այսպիսին է Վարուժանի պոեզիայի հասարակական-քաղաքական բովանդակությունն ու լիցքը: Նա հայ քնարերգության դոները բացեց 20-րդ դարի շնչի դեմ՝ բերելով գեղարվեստական նոր արտահայտչամիջոցներ, հարստացնելով հայոց լեզվի բազմերանգությունը. «Համարյա ոչինչ նա ճակատային, ուղիղ խոսքով չի ասում, ամեն ինչ զգեցած է պատկերով ու համեմատությամբ»²²: Ամփոփելով՝ Դավթյանը գրում է, որ Վարուժանը նորոգչական առաքելությամբ անսահմանորեն ընդարձակեց մեր քերթողական արվեստի «կալվածքները», և պոեզիայի հիմնալի դասեր տվեց իրենից հետո եկածներին և տալու է նաև եկողներին:

Տարիներ անց Դավթյանը դարձյալ անդրադառնում է Վարուժանի ստեղծագործական աշխարհի քննությանը **«Երգ գեղեցկության ու տառապանքի»** (1984) հոդվածում՝ նրան համարելով հայ բազմադարյան պոեզիայի ամենաշքեղ, ամենալուսավոր բռնկումներից մեկը: Նա Վարուժանին համարում է «խորապես ազգային բանաստեղծ», «թանձր ռեալիստ», որի բարձր պոեզիայի լայն դոներով պիտի մտնեն քսաներորդ «մետաղյա դարը»: Կրկին քննելով վարուժանական պոեզիայի գեղարվեստական առանձնահատկությունները՝ գտնում է, որ նրա ստեղծագործության մեջ կարելի է տեսնել սիմվոլիզմից, ֆուտուրիզմից, իմպրեսիոնիզմից եկող բաղկացուցիչներ, որ երկը դարձնում է հարուստ ու գունեղ:

Դավթյանը բարձր է գնահատում այն, որ Վարուժանի համար կարևոր է եղել հայ մշակույթի, քաղաքակրթության վերածնունդը՝ «Գեղարվեստով է,

²⁰ «Երգ գեղեցկության ու տառապանքի» հոդվածում Դավթյանը «Հացին երգը» անվանում է նոստալգիա, կարոտախոս՝ «ապագայի, լավագույնի կարոտախոս»:

²¹ Զուգահեռ ճանապարհ..., էջ 163:

²² Նույն տեղում, էջ 164:

որ կապրի ցեղ մը»: Մեծ քանաստեղծներն իրենց ժողովրդի ոգին են, նրա երազանքների, տենչերի կրողները, նրա պատգամախոսները: Նա համոզված է՝ Վարուժանի շուրթով ժողովուրդն էր խոսում, որ ուզում էր ընթանալ դեպի աղբյուրը լույսի, դեպի արդարության, ճշմարտության և բարության ակունքները: Եվ, չնայած նրա եղերական վախճանին, անհնար էր սպանել այդ ոգին ու երազանքը («Դեպի աղբյուրը լույսի» (1984)): Միահյուսել, համադրել ազգայինն ու համամարդկայինը. ահա այս էր մեծ քանաստեղծի, գրականության տեսաբանի մեծ իղեայրը:

«Ասպետի երգը» (1985) հողվածում Դավթյանը մեծ սիրով և հիացումով է խոսում նաև Ռուբեն Սևակի մասին, որ իր ժամանակակից հզոր քանաստեղծների պես ընտրեց «դասական պոեզիայի մայրուղին»: Նա տաղանդավոր քանաստեղծին ներկայացնում-դնում է Սիամանթոյի, Վարուժանի կողքին՝ նշելով նրանց քանաստեղծական աշխարհների ընդհանրություններն ու յուրահատկությունները: Գրականագետը առանձնահատուկ սիրով է քննում «Ինչու»-ն. «Եթե ես երբևէ համաշխարհային սիրային լիրիկայի անթուղիա կազմելու լինեի, ապա առանց գեղչի ու զիջման այս քանաստեղծությունը կտեղադրեի այնտեղ: Համաշխարհային սիրային լիրիկայի մեջ ես քիչ գիտեմ քանաստեղծություններ, որոնց մեջ տրոփեր այսպիսի ասպետականություն, այսպիսի անանձնություն»²³: Հետագայում Դավթյանը կրկին մեկնում է զլուխգործոցային «Ինչու» քանաստեղծությանը նույնանուն հողվածում՝ ընդհանրացնելով ասելիքը. «Ինչու»-ն հառաչանքի նման է պոկվել մարդկային կրծքից (**«Ինչու»**, (1987)):

Եզրակացություն

Թեմայի ուսումնասիրության արդյունքում մեր եզրահանգումները հետևյալն են՝

1. Վ. Դավթյանը հայ պոեզիայի պատմության մեջ նորովի է արժևորում, գնահատում, մեծ դեր ու նշանակություն տալիս 20-րդ դարասկզբի արևմտահայ քնարերգությանը, որն իր բարձր գեղարվեստականությամբ, ազգային ու համամարդկային համաձուլմամբ, հայ գրականությունը բարձրացրեց համաշխարհային գրականության մակարդակի:
2. Վ. Դավթյանի՝ արևմտահայ պոեզիային վերաբերող հողվածներում արտահայտված են քննադատ Դավթյանի փիլիսոփայական-գեղագիտական, տեսական ըմբռնումները, սկզբունքները, որոնք

²³ Ի սկզբանե էր..., էջ 90:

ավելի հստակ ու որոշակի են դարձնում գրողի գեղագիտական դավանանքը, աշխարհայացքը:

3. Այդ հոդվածները խորաթափանց վերլուծությունների ընդհանրացումներ են, աչքի են ընկնում նուրբ դիտումներով, սեղմ ու դիպուկ բնութագրումներով, ունեն գրականագիտական բարձր արժեք ու արդիականություն:
4. Դրանք աչքի են ընկնում անհատական ու ազգային դրամայի ցնցող պատկերներով:
5. Դավթյանը արևմտահայ պոեզիայում ստեղծված դասական ավանդների ժառանգորդական շարունակման ջերմ կողմնակիցն է:
6. Բացահայտում է դարասկզբի արևմտահայ քնարերգության փոքիկ գլուխգործոցների գեղարվեստական արժեքը, հայտնաբերում չնկատված գեղեցկություններ:
7. Շոշափում է արևմտահայ բանաստեղծի անհատականության, ազգային դիմագծի, քաղաքացիականության հարցերը:
8. Արևմտահայ բանաստեղծների ստեղծագործական սխրանքը նրանց անձնական ողբերգությամբ է ուղեկցվել, որ ձեռք է բերում համամարդկային արժեք:
9. Արևմտահայ քնարերգուի մեծությունը գրականության մեջ չափվում է սիրո որակով և ըմբռնումներով, անհատական, ազգային և համամարդկային զգացումների հոսանքով:
10. Ներկայացնում է իդեալի ու իրականության հակադրությունը:
11. Կենտրոնանում է գրողին բնութագրող էական, առանցքային հարցի վրա, որ կազմում է տվյալ գրողի էությունը:

Օգտագործված գրականություն

1. Աղաբաբյան Ս., «Բանաստեղծության իր ճանապարհը», «Սովետական Հայաստան», Եր., 1982, № 189, օգոստոս 15:
2. Աճեմյան Գր., «Քնարերգակի զուգահեռ ճանապարհը», «Սովետական գրականություն», Եր., 1976, №10, էջ 137-139:
3. Բախչինյան Ֆ., «Ներդաշնակության բանաստեղծը», «Գրական թերթ», Եր., 2002, №38, նոյեմբեր 8:
4. Գասպարյան Դ., Վահագն Դավթյան. Կյանքը և ստեղծագործությունը, Եր., 2007, 376 էջ:
5. Գրիգորյան Ս., Վահագն Դավթյանի պոեմները, Եր. 2021, 460 էջ:
6. Դավթյան Վ., Զուգահեռ ճանապարհ, Եր., 1976, 404 էջ:
7. Դավթյան Վ., Ի սկզբանե էր բանն..., Եր., 1989, 608 էջ:
8. Թամրազյան Հր., Երկեր, Գ., Եր., 2010, 996 էջ :

9. Թամրազյան Հր., Երկեր, Դ., Եր., 2013, 1008 էջ:
10. Հայրապետյան Ղ., «Բանաստեղծի զուգահեռ ճանապարհը», «Գրական թերթ», Եր., 1976, №38, սեպտեմբեր 17:
11. Մաթևոսյան Հր., «Հետնորդը և նախորդը», «Հայաստանի Հանրապետություն», Եր., 1996, թիվ 36, փետրվար 24:
12. Մահարի Գ., «Ճանապարհ սրտի միջով», «Գրական թերթ», Եր. 1966, №43, հոկտեմբեր 21:
13. Մեծարենց Մ., Երկեր, Եր. 1986, 256 էջ:
14. Պետրոսյան Եղ., «Ներդաշնակության որոնում», «Սովետական Հայաստան», Եր., 1976, №196, օգոստոս 22:
15. Սարինյան Ս., «Բանաստեղծի զուգահեռը», «Գրական թերթ», Եր. 1990, № 15, ապրիլ 6:
16. Սիամանթո, Ընտիր երկեր, Եր., 1957, 252 էջ:
17. Քալանթարյան Ժ., Վահագն Դավթյան, Եր., 1991, 164 էջ:

Нара Саркисян

В. Давтян как интерпретатор западноармянской поэзии начала XX века

Заключение

Ключевые слова и выражения: ренессанс (возрождение), гуманизм, народный поэт, противопоставление идеала и реальности, личная драма, безличность, поэзия света.

Полученные результаты исследования позволяют сделать следующие выводы:

1. В истории армянской поэзии В. Давтян заново переоценивает и придает огромное значение западноармянской лирике начала XX века, которая своим превосходным артистизмом, слиянием национального и общечеловеческого подняла армянскую литературу на уровень мировой литературы.
2. Статьи В. Давтяна, как литературного критика о западноармянской поэзии выражают его философско-эстетические, теоретические представления и принципы, которые четко определяют эстетическое вероучение и мировоззрение писателя.
3. Статьи Давтяна являются обобщениями глубокого анализа, которые отличаются тонкими наблюдениями, краткими и точными описаниями, тем самым определяя высокую литературную ценность и актуальность.
4. Статьи отличаются потрясающими образами, которые опираются на индивидуальной и национальной драмы.

5. В. Давтян является сторонником продолжения классических произведений, созданных в западноармянской поэзии из поколения в поколение.
6. В. Давтян раскрывает художественную ценность небольших шедевров западноармянской лирики начала века, выявляя невиданные красоты.
7. Критик затрагивает вопросы личности западноармянского поэта, его национальный облик и общественно-политическую деятельность.
8. Личная трагедия западноармянских поэтов сопровождалась с творческими подвигами, которые приобретали общечеловеческое значение.
9. Величие западноармянского лирика в литературе выявляется индивидуальными, национальными и общечеловеческими чувствами, любовью и пониманием.
10. В. Давтян рассматривает противоположность между идеалом и реальностью.
11. В центре внимания критика является сущность армянского писателя, стремясь сохранить литературные традиции и переплести их с новым периодом.

Nara Sargsyan

V. Davtyan as the Interpreter of Western Armenian Poetry of the Beginning of the 20th century

Conclusion

Key words and expressions: Renaissance, humanism, national poet, contrast between ideal and reality, personal drama, impersonality, light poetry.

The results of the research allow us to outline the following conclusions;

1. In the history of Armenian poetry V. Davtyan newly evaluates and underlines the importance of Western Armenian lyric poetry of the beginning of the 20th century, which differs with its high artistry, intertwinement of the national and universal and upgrades Armenian literature to the level of the world literature.
2. The articles of V. Davtyan reveal him as a literary critic of Western Armenian poetry. They illustrate the philosophical-aesthetic, theoretical understandings and principles of the theorist, which clearly define the aesthetic creed and the worldview of the writer.
3. V. Davtyan's articles are the generalizations of profound analysis distinguished with subtle observations, brief and accurate descriptions, high literary value and relevance.

4. The articles are differentiated with a stunning imagery based on individual and national dramas.
5. V. Davtyan supports the continuous reverberation of the classical poetry created in Western Armenia from generation to generation.
6. The Armenian critic reveals the artistic value and the hidden beauty of the tiny masterpieces of Western Armenian lyrical poetry of the beginning of the century,
7. The critic touches upon the question of the identity of the Western Armenian poet, his national image and socio-political activities.
8. The personal tragedy of the Western Armenian poets was accompanied by their creative accomplishments which acquired universal significance.
9. The literary greatness of the Western Armenian poet is measured by his individualism, national and universal perception, love and understanding.
10. V. Davtyan in his research juxtaposes the ideal and the reality.
11. The critic focuses on the essence of the Armenian writer, aiming at preservation of the literary traditions and intertwining them with the modern periods.

Խմբագրություն է ուղարկվել 19.01.2023թ.

Հանձնարարվել է գրախոսության 05.02.2023թ.

Տպագրության է հանձնարարվել 13.03.2023թ.

ԱՆՈՒՇ ԹԱՍԱԼՅԱՆ

Եղիշե Չարենցի տուն-թանգարանի գլխավոր ֆոնդապահ

ՀՀ ԳԱԱ Մանուկ Աբեղյանի անվան

գրականության ինստիտուտի հայցորդ

Էլհասցեն՝ anush.tasalyan@gmanil.com

**ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑԻ 1920-ԱԿԱՆ ԹԹ. ՊՈՆԶԻԱՅԻ ԺԱՆՐԱՅԻՆ
ԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅՈՒՆԸ, ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՈՒ ԼԵԶՎԱՈՒՃԱԿԱՆ
ՅՈՒՐԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Ամփոփում

1920-ական թվականների Ե. Չարենցի բազմաժանր ստեղծագործությունների մի ծանրակշիռ հատվածն իրենց վրա կրում են ֆուտուրիզմի ազդեցությունը: Սակայն պետք է նկատել, որ Ֆ. Պ. Մարինետիի և ռուս ֆուտուրիստների ոչ բոլոր հիմնադրույթներն են ընդունելի: Եթե վերոհիշյալ հեղինակների մանիֆեստները, հանգանակները, ծրագրերի մեծ մասը նաև քաղաքական բովանդակություն ունեն, ապա, «Դեկլարացիա երեքին» և նրա հիմնադրույթները գրական ծրագրեր էին առաջադրում և ունեին պոեզիայի զարգացումը նոր հունով տանելու, նրա բովանդակությունը ժամանակի սրընթաց ոլորտին համապատասխանեցնելու միտումներ:

Ե. Չարենցն այդ նպատակով փորձարկում է բանաստեղծական կառուցվածքի նոր ձևեր, պոեզիայի լեզուն մոտեցնում է ժողովրդախոսակցականին, փոփոխում գունային համակարգը, առավելություն տալիս հեռագրային ոճին, բանաստեղծության «հատակագիծը» մաքրում ավելորդ դետալներից՝ ածականներից, մակդիրներից ու ստեղծում բանարվեստի իր ինքնատիպ մոդելը:

Բանալի բառեր և արտահայտություններ: Ժանր, լեզու, ոճ, կառուցվածք, բանաստեղծություն, պոեմ, գունային համակարգ:

Ներածություն

1920-ական թվականներին Ե. Չարենցի ստեղծագործական կյանքում սկսվեց նոր շրջափուլ, որը հատկանշվեց ժանրային փոփոխությամբ, կառուցվածքի նոր ձևերի, նոր ոճի որակումներով: Այդ տասնամյակում Ե. Չարենցը գրեց տարբեր ժանրերի ստեղծագործություններ՝ հանգավոր ու անհանգ բանաստեղծություններ, պոեմներ, ռուբայաթներ, ագիտկաներ, ռադիոպոեմներ, ռապսոդիաներ, ինչպես նաև «Տաղարան» շարքը, ինչը վկայում է, որ չէր բավարարվում միայն «Դեկլարացիա երեքի»

հիմնադրությունների գործնական կիրառություններով: Այդ ամենին եթե ավելացնենք գրականության տարբեր հարցերին նվիրված և իր ընդդիմադիրներին հակադարձող հոդվածները, պարզ կդառնա, թե ինչպիսի համառությամբ ու ջանասիրությամբ էր բանաստեղծը հաղթահարում իր ճանապարհի խոչընդոտները և գնում դեպի «Գիրք ճանապարհի» կոթողային ժողովածուն:

Նպատակն ու խնդիրները

Սույն հոդվածում մենք հիմնականում կանդրադառնանք Ե. Չարենցի ֆուտուրիստական շրջանի ստեղծագործությունների ժանրային բազմազանությանը, կառուցվածքային ու լեզվառճական յուրահատկություններին և կփորձենք բացահայտել՝ ֆուտուրիզմը նրա համար ժամանակավոր հրապուրանք էր, ինչպես պնդում էին գրականագետներից շատերը խորհրդային տարիներին, թե՞ իր յուրահատուկ կողմերով հետագծային շարունակություն ունեցավ բանաստեղծի ստեղծագործական կյանքում:

Մեթոդաբանությունը

Օգտագործել ենք գեղարվեստական երկի արժևորման մի շարք մեթոդներ՝ վերլուծական, քննադատական, քերականական, կենսագրական: Օգտվել ենք հայ և օտարերկրյա մի շարք անվանի գրականագետների «Աղաբաբյան Ս., Գասպարյան Դ., Զաքարյան Ալ. Թամրազյան Հր., Սարինյան Ս., Քալանթարյան Ժ., Էդոյան Հ., Ա. Եղիազարյան, Քնյուք Հ., Բարթ Ռ. և այլք» տեսական ուսումնասիրություններից:

1920-ական թվականներին՝ Ե. Չարենցի, Գ. Աբովի, Ա. Վշտունու հեղինակած «Դեկլարացիա երեքի» հրապարակումից հետո, գրական զարգացումները մտան առաջընթացի նոր հուն, սկիզբ դրվեց նոր շրջափուլի, պոեզիայի բովանդակությունը ժամանակի ռիթմերին համապատասխան հարստացնելու խնդիրը դարձավ օրվա հրամայական:

Այս առումով անտարակույս է, որ պոեզիայի նոր բովանդակությունը պահանջում է կառուցվածքի նոր ձևեր՝ բանարվեստի նոր «հատակագիծ», նոր լեզվամտածողություն ու բառապաշար, նոր ոճեր:

Գրական զարգացումները նոր հունով տանելու որոնումներում անուրանալի է Ե. Չարենցի դերը, ում բանաստեղծություններն ու պոեմները նորություն էին ինչպես բովանդակային, այնպես էլ կառուցվածքային, կերպարակերտման ու պատկերաստեղծման, նորաստեղծ բառերի պոեզիա ներմուծման, գունային համակարգը նոր նրբագծերով ու նրբերանգներով հարստացնելու առումներով:

Ե. Չարենցը փորձարկում է բանաստեղծության կառուցվածքի նոր մոդելներ, որտեղ պատկերավորման միջոցները դառնում են ավելի առարկայական, բառերը «պատռում են իրենց կեղևը», նրանց բառարանային իմաստները հարստանում են նոր բովանդակությամբ, գործնական կիրառությունները՝ շարահյուսական նոր դաստիարակներով:

Նա մեծ տեղ էր հատկացնում բանաստեղծության լեզվին, տաղաչափությանը, որն իր դասախոսություններից մեկում անվանում է «պոեզիայի մաթեմատիկա» և ընդգծում, որ առանց այդ իմացությանն հնարին է բանաստեղծ դառնալ: Իսկ «Ռուսական արդի պոեզիան» դասախոսության ժամանակ նա ասում է. «Նախկին մեղկ և հասարակական կյանքի ամենամեթ տրամադրությունների դիմաց՝ ֆուտուրիզմը հայտնաբերում է իր նոր լեզուն, նոր ռիթմերը, հանգերն ու թափը»¹: Դժվար չէ նկատել, որ Ե Չարենցը խիստ բծախնդիր էր պոեզիայի նոր բովանդակությանը համահունչ ռիթմական միավորներ ստեղծելու հարցում: Իսկ բանաստեղծության ռիթմը ստեղծում են չափը, հանգը, հնչյունաբանությունը, տոնը, ոտքը, անդամը, տոնը, կիսատոնը, դադարը, հատածը, որոնք բանաստեղծական կառուցվածքի ամրաններն են: Այս կապակցությամբ Վ. Գ. Բելինսկին գրում է. «Իզուր են շատերը կարծում, թե վատ լեզուն և տգեղ ոտանավորը ոչինչ չարժեն և կարող են փրկվել զգացմունքի լրիվությամբ, երևակայության հարստությամբ և խոր գաղափարներով: Պոեզիայի էությունը գեղեցկությունն է, տգեղությունը նրա մեջ ոչ թե որևէ մասնավոր և ներելի թերություն է, այլ մահացու մի տարր, որը պոետի ստեղծագործության մեջ սպանում է նույնիսկ իսկապես գեղեցիկ տողերը, միակ վատ տողը, մի պրոզայիկ արտահայտությունը, մեկ անճիշտ բառը երբեմն ոչնչացնում է մի ամբողջ և այն էլ գեղեցիկ բանաստեղծության արժեքը»²:

Բանաստեղծներն իրարից տարբերվում են ոչ թե թեմաների ընտրությամբ, այլ լեզվի նկատմամբ ունեցած պատկերացումներով: Այդ առումով տեղին է հիշել Ռ. Բարթին, ով «Գրականություն և ճշմարտություն» գրքում գրում է. «Գրողը նա է, ում համար լեզուն խնդիր է առաջադրում, ով զգում է լեզվի խորությունը և ոչ թե գործիքայնությունը կամ գեղեցկությունը»³:

¹ **Չարենց Ե.**, Գրականության մասին, Երևան, Սովետական գրատղ հրատ., 1957, էջ 192:

² **Белинский В. Г.**, Собр. Соч. в 3-х томах, т-3, Москва, „Госиздат“, 1948, стр. 294.

³ **Բարթ Ռ.**, Գրականություն և ճշմարտություն, Էսսեներ, Երևան, 1999, էջ 8:

Լեզվի խորությունն ընդհանրապես լավագույնս է դրսևորվում տաղաչափության «որը «պոեզիայի մաթեմատիկայի» ամենաբարդ բնագավառներից մեկն է» խոր իմացությամբ: Ե. Չարենցի ստեղծագործություններում դժվար է հանդիպել այսպես կոչված տաղաչափական «կազուսների»՝ «կադ», աղքատիկ հանգերի, որոնց տողերն իրար կցվում են բայի անդամ կամ խոնարհված ձևերով կամ բառավերջի մի երկու հնչյունի միացումով: Ե. Չարենցը հանգավորման մեծ վարպետ է, նրա հանգերը հարուստ են, հնչեղ, զույնի և հնչյունի համամիությամբ հյուսված, օրինակ՝ «Տեսն՝ է եք// Դուք// Երբևե// Աչքերով ձեր կույր, **անոթի**»// Ոսկեզօծ զուռնան արևի// Կախված ամառվա **զենիթից**»⁴

Կամ՝

Օ՛, զուռնա՛, զուռնա՛, զուռնա՛...

Տխրություն:

Թախիժ դեղին:

Օրերը ցնորք կդառնան,

Աշխարհը – անդուռ փակուղի⁵:

Ռիթմական միավորները Ե. Չարենցի բանաստեղծություններում ու պոեմներում ձևավորվում են տաղաչափական տարբեր համակարգերով: Հայերենին ընդհանրապես յուրահատուկ է վանկային «ոչ հաճախ՝ վանկաշեշտային» համակարգը: Սակայն Ե. Չարենցի պոեզիայում վանկային կառուցվածքների կողքին հանդիպում ենք նաև վանկաշեշտային, համաշերտ, ազատ ոտանավորների: Հայերենում վեց վանկանի ոտանավորներ համարյա չկան «բացառություն են Վ. Տերյանի մի քանի բանաստեղծությունները»: Ե. Չարենցի մոտ բացի վեցվանկանի տողերից, առկա են նաև տասնվեց վանկից կազմված տողերը «Տաղարան»:

1920-ական թվականներին Ե. Չարենցին յուրահատուկ են նաև հանգավորման տարբեր եղանակները՝ ներքին հանգավորում.

Ուխտավոր, մի անգամ կյանքիդ

Օրերում **տխուր** ու մռայլ

Թող ցոլա **հրահուր** ու անգին

Այդպիսի մի բախտ քո վրա⁶:

Հատաձը և բառամիջի դադար տողի կեսում «Աղետ եղավ// Պատերազմ//⁷ «առձայնություններն «ասոնանս», նմանաձայնությունները,

⁴ **Չարենց Ե.**, Երկերի ժողովածու, հ 3, Երևան, Հայկական ՍՍՌ ԳԱ հրատ., 1968, էջ 8:

⁵ Նույն տեղում, էջ 19:

⁶ **Չարենց Ե.**, Երկերի ժողովածու, հ 3, Երևան, Հայկական ՍՍՌ ԳԱ հրատ., 1964, էջ 44:

բաղաձայնությո՞ւնե՞րը «ալիտերացիա» Ե. Չարենցի ստեղծագործություններում ընդհանրապես «որոշ վերապահումներով նաև ֆուտուրիստական շրջանի բանաստեղծություններում ու պոեմներում» բառերը հանդես են գալիս որպես «իրերի որոշակի դասավորություն, երևույթների նկատմամբ դիտակետ, աշխարհայացք, պոեզիայի տարրեր, որոնք կազմավորվում են բանաստեղծության տաղաչափությունն ու մորֆոլոգիան»⁸:

Ե. Չարենցի 1920-ական թվականների ստեղծագործություններն ուշագրավ են նաև քերականական-շարահյուսական տարբեր ձևերի համադրություններով: Ստեղծագործության բովանդակությունն ու հնչեղությունն ավելի ընդծելու համար բանաստեղծն օգտագործում է շարահյուսական տարբեր ձևեր: Մեծ տեղ են զբաղեցնում բառ-նախադասությունները ««Ուտել»// «Պաչել»// «Փաշա»// «Ես – նախագահ»// «Կնյազ Բեբույթով», «Կապկազ» «Թամաշա»: Բառ-նախադասություններն ընդգծում են շարժման անընդհատությունը, ռիթմը ««Սողում է»// «Սողում էր»// «Վերև// Ներքև»// «Փրկեցեք,// փրկեցեք», «թրախկ, թոփ, թնդանոթ», «Չյուն»// «Բուք»// «Քամի»// «Ուրազան», «Մնռուդեն ամուսիններ կամ ինքնին կոմունիզմ»»:

Խոսքին յուրահատուկ երանգ հաղորդելու, այն կտրուկ ու հատուկ դարձնելու նպատակով Ե. Չարենցն օգտագործում է նոր դիմավոր կամ անենթակա, բայական անդեմ միակազմ, անվանական անդեմ միակազմ նախադասություններ, որոնք յուրահատուկ են հեռագրական ոճին.

Ես տեսնում եմ – Ստամբուլի հեռուն,

Ու կռիվ

Ու պայքար

Ու ռումբ...

Բանաստեղծը տողերը չի ծանրաբեռնում ավելորդ դետալներով, գործողությունները նկարագրում է մեկ-երկու բառով, գործողությունների տարածաժամանակային սահմանները ընդգծված.

Երևա՛ն,

Քեզ

Իմ խոպոտ ճի՛չը էսօր.-

Ես

Թողնում եմ մի տարով

Փողոցներդ նեղ ու քոսոտ:

⁷ Նույն տեղում, էջ

⁸ **Սարինյան Ս.**, Անհնարին է բառի մեջ չտեսնել հավերժությունը, Գրական թերթ, 2016, թիվ 26:

Գնում եմ

Նորից

Հյուսիս.

Գնում եմ - Մոսկով⁹:

Շարժումն ընդգծելու համար Ե. Չարենցը հաճախ օգտագործում է շաղկապներով սկսվող տողեր:

Եզրակացություն

1. XX դարասկզբին համաշխարհային և ռուս գրականության, արվեստի ու մշակույթի բնագավառներում սկսվեց նոր շրջափուլ, որի կողքով չէր կարող անտարբերությամբ անցնել նաև հայ գրականությունը: Հետհոկտեմբերյան բանարվեստի առաջընթացը նոր հունով տանելու, բանաստեղծության «հատակագիծը» փոխելու, բովանդակությունը հարստացնելու, կերպակերտման ու պատկերաստեղծման նոր մեթոդներ ու եղանակներ փնտրելու տեսական հիմնադրույթներն առաջադրվեցին «Դեկլարացիա երեքի» մեջ, որն այդ ուղղությամբ առաջին փորձը լինելով, բնականաբար զերծ չէր նաև վիճահարույց ձևակերպումներից:

2. Գրական-գեղարվեստական զարգացումները, նոր հունով տանելու որոնումներում անուրանալի է Ե. Չարենցի դերը, ում բանաստեղծություններն ու պոեմները նորություն էին ինչպես բովանդակային, այնպես էլ կերպակերտման ու պատկերավորման, նորաստեղծ բառերի՝ պոեզիա ներմուծման, ժանրային համակարգը նոր նրբագծերով ու նրբերանգներով հարստացնելու և մի շարք այլ առումներով: Ե. Չարենցը փորձարկում էր բանաստեղծության կառուցվածքի նոր մոդելները, որտեղ պատկերավորման միջոցները դառնում էին ավելի առարկայական, բառերի բառարանային իմաստները՝ հարստանում են նոր բովանդակությամբ, գործնական կիրառությունները՝ շարահյուսական նոր դասդասումներով:

3. 1920-ական թվականների Ե. Չարենցի ստեղծագործություններն աչքի էին ընկնում ժանրային բազմազանությամբ՝ բանաստեղծություն, պոեմ, ագիտկա, ռադիոպոեմ, ռուբայաթներ, ռաբսոդիա, հրապարակախոսություն, պլակատ և այլն: Պետք է արձանագրել, որ դժվար է ժանրային կայուն բնորոշում տալ այդ ստեղծագործություններից շատերին, որովհետև բանաստեղծը համադրում է տարբեր ժանրերի յուրահատկությունները՝ ոճը, լեզուն, կառուցվածքը և այլն: Միշտ չէին, իհարկե, որ բանաստեղծի համառ որոնումները պսակվում էին հաջողությամբ: Նա երբեմն անցնում է

⁹ **Չարենց Ե.**, Երկերի ժողովածու, հ 3, Երևան, Հայկական ՍՍՌ ԳԱ հրատ., 1964, էջ 227:

պատշաճության սահմանները, կտրուկ ձևակերպումներով իր դեմ ուղղում քննադատության սլաքները, որոնք հաճախ ուղղորդված էին կամ միտումնավոր: Բայց, ի պատիվ բանաստեղծի, պետք է արձանագրել, որ նա համառորեն շարունակում էր գրական-գեղարվեստական պրպտումներն առաջընթացի նոր հուն մղելու իր ձգտումները՝ հայ գրականությունը հարստացնելով նոր յուրահատկություններով և իր որոնումները եզրափակելով «Գիրք ճանապարհի» կոթողային ժողովածուով:

Օգտագործված գրականություն

1. **Չարենց Ե.**, Գրականության մասին, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1957:
2. **Չարենց Ե.**, Երկերի ժողովածու 4 հատորով, հատոր 1, Երևան, «Սովետական գրող» հրատ., 1986:
3. **Չարենց Ե.**, Երկերի ժողովածու 4 հատորով, հատոր 2, Երևան, «Սովետական գրող» հրատ., 1986:
4. **Աղաբաբյան Ս.**, Եղիշե Չարենց, գիրք 1, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1973:
5. **Աղաբաբյան Ս.**, Հայ սովետական գրականության պատմություն, գիրք 1, Երևան, «Սովետական գրող» հրատ., 1986:
6. **Գասպարյան Դ.**, Եղիշե Չարենց. կյանքը և ստեղծագործությունը, Երևան, 2022:
7. **Զաքարյան Ալ.**, Եղիշե Չարենց. կյանքը, գործը, ժամանակը, գիրք 1, Երևան, ՀՀ, ԳԱԱ հրատ., 1997:
8. **Էդոյան Հ.**, Չարենցի պոետիկան, Երևան, «Վան Արյան» հրատ., 2011:
9. **Բարթ Ռ.**, Գրականություն և ճշմարտություն, էսսեներ, Երևան, Ապոլոն, 1999:
10. **Քնյուր Շ.**, Մոդայիկ գրականության մասին, «Նոր դար», հրատ., 2022:

Аннуш Тасалян

Разнообразие, структурные и языковые особенности жанровой поэзии 1920 - х годов Егише Чаренца.

Заключение

Ключевые слова и выражения: жанр, язык, стиль, структура, стихотворение, поэма, цветовая система.

1. В начале 20 века в области мировой и русской литературы, искусства и культуры началась новая эпоха, которую не могла обойти стороной и армянская литература. Третья Декларация, которая, будучи первой попыткой в этом направлении, естественно, не была свободна от спорных

формулировок. В ней были выдвинуты теоретические принципы по направлению послеоктябрьского литературного творчества в новое русло, изменение стихотворного плана, обогащение содержания, поиск новых приемов и способов характеристики и создания образов.

2. В стремлении направить литературно-художественное развитие в новое русло неоспорима роль Е. Чаренца, стихи и поэмы которого были новыми и по содержанию, и по характеру, и по образности введения в поэзию новых слов, обогащения жанровой системы новыми оттенками и ряд других аспектов. Е. Чаренц экспериментировал новые модели построения стихотворения, где средства изображения становились более предметными, словарное значение слов обогащалось новым содержанием, а практические приложения — новыми синтаксическими классификациями.

3. Произведения Е. Чаренца 1920-х гг. отличались жанровым разнообразием: стихотворение, поэма, агитка, радиопоэма, рубайаты, рапсодии, реклама, плакат и др. Следует отметить, что трудно дать устойчивое жанровое определение этим произведениям, поскольку поэт сочетает в них особенности разных жанров: стиль, язык, структуру и т. д. Конечно, настойчивые поиски поэта не всегда венчались успехом. Он иногда переходил грани приличия, направлял на себя критику с резкими формулировками, которая часто была направленной или преднамеренной. Но, в честь поэта следует отметить, что он настойчиво продолжал свои усилия продвижения литературно-художественной деятельности по новому пути развития, обогащая армянскую литературу новыми особенностями и завершил свои поиски монументальным сборником «Книга пути».

Anush Tasalyan

Diversity, structural and linguistic features of the genre poetry of the 1920s by Yeghishe Charents.

Conclusion

Key words and expressions: Genre, language, style, structure, poetry, poem, color system.

1. At the beginning of the 20th century, a new era began in the fields of world and Russian literature, art and culture, which Armenian literature could not remain indifferent. The theoretical foundations of taking the progress of the post-October art in a new direction, to changing the plan of the poem, enriching the content, of looking for new methods and ways of creating images were presented in declaration in three, which being the first attempt in that direction was naturally not free from controversial formulations.

2. In the quest to take the literary and artistic developments in a new direction the role of Y. Charents can't be renounced, whose poems were new both in terms of content and imagery, introducing newly created words into poetry, enriching the genre system with new nuances and a number of other aspects. Charents was experimenting with new models of poem structure, where the means of representation became more objective, the dictionary meanings of words were enriched with new content, and practical applications with new syntactic classifications.

3. Charents' works of the 1920s were notable for their genre variety: poem, poetry, agitka, radio poem, rubayats, rhapsody, publicity, poster, etc. It should be noted that it is difficult to give a stable definition of genre to many of these works, because the poet combines the peculiarities of different genres: style, language, structure, etc. Of course, the poet's persistent search was not always successful. He sometimes crosses the boundaries of propriety, directs the arrows of criticism against him with sharp wordings, which were often directed or intentional. But in honour of the poet it should be noted that he persistently continued his efforts to push literary and artistic productions to a new path of progress enriching Armenian literature with new peculiarities and concluding his search with the monumental collection of "Book of the way.

Խմբագրություն է ուղարկվել 24.02.2023թ.

Հանձնարարվել է գրախոսության 10.03.2023թ.

Տպագրության է հանձնարարվել 13.03.2023թ.

ԱՆԻ Ժ. ԱՎԵՏԻՍՅԱՆ

Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան

Արևելագիտության բաժնի գիտաշխատող

aniavet@matenadaran.am

ORCID ID 0000-0003-3071-8649

ՕՐՀԱՆ ՓԱՄՈՒՔԻ ԿՑԱՆՔՆ ՈՒ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ¹

Ամփոփում

Հոդվածում ներկայացրել ենք 21-րդ դարի թուրք գրող, թուրքական պոստմոդեռնիզմի վառ ներկայացուցիչ, Գրականության Նոբելյան մրցանակի դափնեկիր Օրհան Փամուքի կյանքի և ստեղծագործությունների մանրամասնությունները:

Հոդվածի առաջին մասում անդրադարձել ենք Օրհան Փամուքի ընտանիքին՝ փորձելով նկարագրել այն միջավայրը, որտեղ ծնվել է Օրհան Փամուքը և ձևավորվել է Օրհան Փամուք-անձի և Օրհան Փամուք-գրողի աշխարհայացքը: Երկրորդ մասում ներկայացրել ենք Օրհան Փամուքի կենսագրականին վերաբերող մանրամասները՝ ուրվագծելով հատկապես նրա գրող դառնալու ուղին: Վերջին՝ երրորդ մասում, ժամանակագրորեն ամբողջացրել ենք Օրհան Փամուքի մինչ օրս գրած և հրատարակած ստեղծագործությունները՝ համառոտ սյուժեն, թեմատիկան, եթե եղել են՝ նաև օտարալեզու թարգմանությունները և արժանացած գրական մրցանակները ընդգծելով գրողի բեղուն ստեղծագործական կյանքը և գործերի տարածվածության քարտեզը:

Բանալի բառեր և արտահայտություններ. Օրհան Փամուք, թուրքական գրականություն, վեպ, թուրքական վեպ, Ջնդեթ բեյն ու նրա որդիները, Լռության տուն, Սպիտակ ամրոց, Սև գիրք, Նոր կյանք, Իմ անունը Կարմիր է, Ջյուն, Անմեղության թանգարան, Գլխումս խառնաշփոթ, Կարմրահեր կինը, Ժամտախտի գիշերները:

Ներածություն

70-ականները կարելի է համարել թուրքական գրականության զարգացման ամենաբեղուն շրջանի սկիզբը: Գրականություն են մուտք

¹ Օրհան Փամուքի կենսագրական որոշ տվյալների անդրադարձ տե՛ս **Անի Ավետիսյան [=Անի Ժ. Ավետիսյան], Օրհան Փամուքը և իր «Սև գիրքը»,** Թուրքագիտական և օսմանագիտական հետազոտություններ, IV, Երևան, Ասողիկ հրատ., 2006, էջ 166-183:

գործում գրողներ, որոնք շարունակելով ռեալիզմի ավագ սերնդի ներկայացուցիչների ավանդույթները և յուրացնելով համաշխարհային մոդեռնիստական գրականության նվաճումները՝ ժանրային և թեմատիկ առումներով, թուրք գրականությունը թարգմանաբար հանում են համաշխարհային շուկա՝ տիրելով գրականության բարձրակարգ մրցանակներին:

Նրանցից է իր գրական վաստակով՝ թուրք և արտասահմանյան գրական աշխարհներում լայն ճանաչում գտած, Գրականության Նոբելյան մրցանակակիր Օրհան Փամուք գրողը:

Այդուհանդերձ, Օրհան Փամուքը իր ստեղծագործական ուղին սկսել է մի շրջանում, երբ վեպի տարածված ձևը եղել է «գյուղական վեպը», որի կենտրոնում հասարակ մարդու սոցիալ-տնտեսական խնդիրներն ու անարդարություններն էին և ոչ մարդը որպես անհատ: Իսկ վեպում անհատի վրա կենտրոնացումը պարզապես դիտարկվել է սոցիալական իրավիճակները ներկայացնելու միջոց:

Փամուքին հաջողվել է շեղվել այս գրելառձից և վեպ գրելու արվեստը դարձնել էսթետիկական ներառելով պատմությունն ու պոստմոդեռնիստական հնարքները: Այս կերպ հյուսվել են երկեր, որոնք արտացոլել են պատմության երկակի կողմերը, Արևելք-Արևմուտք աշխարհների երկճյուղավորումները, փոխազդեցությունները, հակադրությունները՝ կենտրոնում պատկերելով մշտապես մարդուն որպես անձի, նրա ինքնությանը («ես»-ին) և ինքնաճանաչմանը հասնելու փնտրտուքներով լի ուղիները:

Մեթոդաբանություն

Հոդվածը գրելիս օգտվել ենք Օրհան Փամուքի անձին և ստեղծագործություններին վերաբերող ժամանակի հայերեն և օտարալեզու (թուրքերեն, անգլերեն, ռուսերեն) տպագիր և էլեկտրոնային աղբյուրներից (թերթային, ամսագրային հոդվածներ, հարցազրույցներ ևն), գրողի գրչին պատկանող էսսեներից և ստեղծագործություններից: Պատրաստել ենք մեր աշխատանքը փաստերի, աղբյուրների, նաև ստեղծագործություններում կենսագրական տվյալների զուգադրմամբ, համեմատական մեթոդի կիրառմամբ:

Օրհան Փամուքի ընտանիքը

Օրհան Փամուքը (ինքը Ֆերիդ Օրհան Փամուքը) սերում է հին և հարուստ ընտանիքից, Մանիսային մերձ Գյորդես՝ հունաթուրքական համայնքից²:

Հորական պապը՝ Մուսթաֆա Շևքեթ Փամուքը, եղել է Օսմանյան կայսրության ժամանակաշրջանի ճանաչված քաղաքային ճարտարագետներից, որը Աթաթուրքի և Ինենյուի իշխանության տարիներին կառուցվող երկաթգծերի աշխատանքներում մեծ պարտավորություններ ստանձնելով՝ կարճ ժամանակամիջոցում հարստացել է³:

Հորական տատը՝ Փաքիզե Հանըմը, եղել է չերքեզուհի, որի հայրը ժամանակին՝ ռուս-թուրքական պատերազմի տարիներին (1877-1878 թթ.), տեղափոխվել է Իզմիր, ապա հաստատվել է Ստամբուլում⁴:

Հայրը՝ Գյունդուզ Փամուքը, ղեկավար պաշտոններ է զբաղեցրել Ստամբուլի Ամերիկյան "IBM"⁵, թուրքական "AYGAZ"⁶ և "KOÇ HOLDING"⁷, "PETKİM"⁸ ընկերություններում: Այնուհետև, լինելով Իսմեթ Ինենյուի⁹ մերձավորներից՝ դարձել է նրա ղեկավարած «Ժողովրդական կուսակցության» (թրք.՝ *Halk Partisi*) անդամ¹⁰:

² Борис Дубин, Вступление, Орхан Памук, Черная книга, www.lib.votkinsk.net, 21.01.2006.

³ Орхан Памук, *Другие цвета*, Перевод: Аполлинария Сергеевна Аврутина, Санкт Петербург, Амфора, 2008, стр. 187 (այսուհետ՝ Օրհան Памук, *Другие цвета*, стр.).

⁴ Orhan Pamuk, *Istanbul Memories and the City*, (translated from the Turkish by **Maureen Freely**), Vintage International Vintage Books A Division of Random House, New York, 2006, p. 12 (այսուհետ՝ **Orhan Pamuk**, *Istanbul Memories and the City*, p.).

⁵ IBM -Ներկայումս աշխարհի էլեկտրոնային սարքերի և համակարգչային ծրագրերի խոշոր արտադրողներից և ներմուծողներից է:

⁶ AYGAZ - Թուրքիայի Հանրապետության խոշոր արդյունաբերական ընկերություններից՝ հիմնադրվել է 1961 թ.:

⁷ KOÇ HOLDING - Ֆինանսարդյունաբերական խոշոր կազմակերպություն՝ հիմնադրվել է 1926 թ.:

⁸ PETKİM - Թուրքական քիմիական ընկերություն՝ հիմնադրվել է 1965 թ.:

⁹ Թուրքիայի Հանրապետության հիմնադիր նախագահ Մուստաֆա Քեմալ Աթաթուրքի օրոք եղել է վարչապետ (1923-1924 թթ., 1925-1937 թթ.) և Արտաքին գործերի նախարար (1922-1924 թթ.): Թուրքիայի Հանրապետության երկրորդ նախագահը (1938-1950 թթ.):

¹⁰ Ալին Օզինյան, *Ով է Օրհան Փամուք. Ընտանիքը, ընկերները, անհաջողությունները*, Առաջին մաս, 30. 12. 2005 թ.,

Մայրը՝ Շեքուրեն, ևս բարձրաշխարհիկ ընտանիքից է, արմատներով Կրետե կղզուց: Մոր կողմի նախապապերից՝ Իբրահիմ փաշան, 1870-ականներին եղել է Կրետեի կառավարիչը: Նրա ընտանիքը 20-րդ դարի սկզբին նույնպես տեղափոխվել է Ստամբուլ¹¹:

Եղբայրը՝ Շեքթե Փամուքը, մասնագիտական (տնտեսագիտություն) ուսումնառությունն իրականացրել է ԱՄՆ-ում՝ Յելի և Բերքլի հայտնի համալսարաններում, դասախոսել թուրքական և արտասահմանյան համալսարաններում¹²:

Փամուքի ընտանիքը եղել է հանրապետական ընտանիք, բարձրաշխարհիկ արժեքների կրող՝ «օտարի մշակույթով միշտ հետաքրքրված», ինչպես ինքն է բնութագրում՝ «... Ընտանիքիս անդամները լուսավորյալ արևմտականներ են եղել և իրենց առաքելությունը տեսել են «մույթ» ժողովրդի լուսավորման մեջ, քեմալական գաղափարախոսության կրողներ, ... այսինքն՝ Հանրապետության բարձրաստիճան խավին բնորոշ կարգավիճակի տերեր՝ առավելություն, որն, ըստ էության, հեռու չի եղել իրականությունից»¹³:

Օրհան Փամուքի պապի մահը մեծ ընտանիքի կյանքում բեկումնային անդրադարձ է ունեցել, հատկապես Փամուքի մանկության վրա...: Պապի հարստությունը երեխաներն անփութորեն սկսել են ծախսել: Հայրը և հորեղբայրը անխոհեմ ներդրումների, աճուրդների են մասնակցել և կրել նյութական մեծ կորուստներ, թեև չեն սնանկացել, բայց պապի դրամական շահութաբեր մեխանիզմը դադարել է գոյություն ունենալ¹⁴:

Փամուքի մայրը (որի կերպարը, բնավորության այս կամ այն գծերը հաճախ եղել են գրողի վեպերի հերոսուհիների կերտման աղբյուր), իր վրա է վերցրել ընտանիքի հոգսը՝ տղաների դաստիարակությամբ զբաղվելու, նրանց հետ հիմնական ժամանակն անցկացնելու պատասխանատվությունը, որի սիրուց և ուշադրությունից, հաստատված կանոններից կախյալ, մրցակցության մեջ են եղել մշտապես Փամուքն ու եղբայրը:

<http://www.alinozinian.wordpress.com>, 25. 07. 2016 (այսուհետ՝ **Ալին Օզինյան**, *Ուլ է Օրհան Փամուք ...*):

¹¹ **Նույն տեղում**:

¹² **Ալին Օզինյան**, *Ուլ է Օրհան Փամուք*, <http://www.alinozinian.wordpress.com>, 25. 07. 2016:

¹³ **Алексей Золотницкий**, *Орхан Памук: “Я пишу ради красавиц”*, www.naviny.by/rubrics/culture, 12. 10. 2006.

¹⁴ **Ալին Օզինյան**, *Ուլ է Օրհան Փամուք*, <http://www.alinozinian.wordpress.com>, 25. 07. 2016:

Փամուքի հայրը, ի տարբերություն մոր, խիստ չի եղել զավակների հետ, երբեք չի արգելել կամ պատժել որդիներին, թեև համեմատաբար քիչ ժամանակ է անցկացրել նրանց հետ, այնուամենայնիվ, եղել է որդիների զբոսանքների ուղեկից-գրուցակիցը, Փամուքի դեպքում նաև՝ նրա գաղտնի երազանքների հաղորդակիցը¹⁵:

Փամուքին՝ գրքի նկատմամբ սերը, հայրն է սերմանել: Նա զավակների հետ մշտապես քննարկել է մեծ վիպասանների՝ (Կաֆկա, Դոստոևսկի, Տոլստոյ ևն) գրական արժեքները, որոնց միջոցով էլ վաղ տարիքից Փամուքը մտքով «փոխկապակցվել է Եվրոպայի հետ»¹⁶:

Երիտասարդ տարիներին հայրը նույնպես երազել է բանաստեղծ դառնալ, նույնիսկ թուրքերեն է թարգմանել ֆրանսիացի գրող Պոլ Վալերիի ստեղծագործությունները, սակայն ինչ-ինչ պատճառներով հրաժարվել է իր երազանքից¹⁷:

Փամուքի համար «**աշխարհի փոքրիկ պատկեր**» ընկալվող հազարավոր գրքերից բաղկացած հոր գրադարանը եղել է հարազատ վայր՝ **Աշխարհ**, որին նայել է իր անձնական անկյունից՝ Ստամբուլից¹⁸ և արձանագրել՝ «Երբ 22 տարեկան էի, թեև չէի կարդացել հորս գրադարանի բոլոր գրքերը, բայց ծանոթ էի յուրաքանչյուր գրքին՝ լուրջ, թեթև, հեշտ ընթերցվող, դասական, անհետաքրքիր, պարտադիր, հորս համար կարևոր ֆրանսիացի գրողների գրքեր...»¹⁹:

Այս **Աշխարհին** մոտենալու, կամ այս **Աշխարհում** ապրելու, կամ մի **Աշխարհից** մյուսը տեղափոխվելու, կամ նոր **Աշխարհներ** գտնելու, և առհասարակ Փամուքն ինքն իրեն բացահայտելու ճանապարհներից ընտրել է գրքեր կարդալն ու գրելը: Հաջող գրված կես էջը դարձել է նրա երջանկության աղբյուրը, չհաջողվածը՝ տխրության, չշփվելու առիթը: Կյանքի գլխավոր կոչումն էլ, որն իրեն կապել և կապում է կյանքի հետ՝ դարձել է **վեպեր գրելը**²⁰, իսկ կյանքի հիմնական բնութագրիչներն են դարձել՝ հերթական, ընթացքի մեջ գտնվող գիրքը, արդեն ավարտուն գիրքը,

¹⁵ **Orhan Pamuk**, *Istanbul Memories and the City*, p. 16.

¹⁶ *Արվեստագետի արտահայտվելու ազատությունը նաև մեր ազատությունն է*, Ազգ, օրաթերթ, թիվ 16, Հավելված մշակույթ, (թարգմ.՝ **Հակոբ Մուլիկյանի**), 28.10.2006 թ., էջ Ա (այսուհետ՝ *Արվեստագետի արտահայտվելու ազատությունը նաև մեր ազատությունն է*, էջ):

¹⁷ **Орхан Памук**, *Другие цвета*, стр. 187.

¹⁸ *Արվեստագետի արտահայտվելու ազատությունը նաև մեր ազատությունն է*, էջ Ա:

¹⁹ **Орхан Памук**, *Другие цвета*, стр. 209.

²⁰ **Orhan Pamuk**, *Öteki Renkler, Seçme Yazılar ve Bir Hikâye*, İstanbul, İletişim Yay., 1999, ss. 14, 49 (այսուհետ՝ **Orhan Pamuk**, *Öteki Renkler*, s.):

որին հաջորդում է գովազդային ուղևորությունը այն երկիր, որտեղ գիրքը հրատարակվելու է: Կրկին վերադարձ տուն, նոր գրքի սկիզբ և այսպես շարունակ ... միայն թե չմոռանալով՝ շեշտում, որ այս ամենի հետ մեկտեղ. «Կարծում եմ երջանիկ մարդ եմ, այդպես չէ»²¹:

Օրհան Փամուքի անձի մասին

Օրհան Փամուքը ծնվել է 1952 թ. հունիսի 7-ին Ստամբուլում՝ Նիշանթաշը (թրք.՝ *Nişantaşı*) թաղամասում²²:

Մանկությունն անցել է շատ բնակարաններ ունեցող հինգհարկանի տան մեջ, որի շքամուտքին (ինչպես ընդունված է եղել այդ տարիներին) փակցված է եղել ցուցատախտակ՝ «Փամուքների տունը» (թրք.՝ *Pamuk Apartmanı*) վերտառությամբ: Բոլոր այդ բնակարաններում ապրել են նրա հարազատները՝ տատը, հորեղբայրները, հորաքույրները. «Բնակարանները գրեթե նման էին իրար ...: Դռները միշտ բաց էին և ես մի տնից մյուս տունն էի անցնում...»²³:

2008 թ. քաղաքական հետապնդումների պատճառով²⁴ Փամուքը բնակվում է Ամերիկայի Միացյալ Նահանգներում՝ Նյու Յորքում²⁵, երբեմն որոշ ժամանակով վերադառնում է Ստամբուլ և որպես մխիթարություն՝ արձագանքում. «Ի տարբերություն Նազըմ Հիքմեթի»²⁶ իմ բախտը բերել է. երբ ցանկանում եմ, կամ երբ աշխատանքը պահանջում է՝ վերադառնում եմ...»²⁷:

²¹ **Փամուկի ուղով**, [Փամուքի հարցազրույցը ռուս լրագրող Գլեբ Շուլպակովի հետ], Երևանի համալսարան, ԵՊՀ պաշտոնաթերթ, ամսաթերթ, հ. 1, մարտ 2007 թ., էջ 8:

²² Ստամբուլի Գալաթա հատվածամասի հյուսիս-արևելյան թաղերից մեկը:

²³ **Orhan Pamuk**, *Istanbul Memories and the City*, pp. 16-17.

²⁴ Տե՛ս հայտարարության և դատավարության մասին **Անի Աւետիսեան [=Անի Ժ. Ավետիսյան]**, *Օրհան Փամուքի «Թուրքիայում 30,000 քուրդ է սպանուել, 1 միլիոն էլ հայ» արտայայտութեան յարուցած փոթորիկը*, Հայկազեան հայագիտական հանդես, հտ. ԼԵ, Պէրոյթ, էջ 803-818:

²⁵ *Pamuk Believed to be in Exile in US*, *The Guardian*, <https://www.theguardian.com/books/2007/feb/14/nobelprize.awardsandprizes>, 14.02.2007.

²⁶ Նազըմ Հիքմեթ Ռան (1902-1963 թթ.)՝ թուրք խոշոր կոմունիստ գրող, դրամատուրգ, թուրքական հեղափոխական (իմա՝ ազգայնական) պոեզիայի հիմնադիր: Նազըմ Հիքմեթի մահից 45 տարի հետո նրան վերադարձվել է Թուրքիայի Հանրապետության քաղաքացիությունը:

²⁷ **Анатолий Стародубец**, *Орхан Памук: Чувство грусти перевозжу в ощущение счастья*, Из досье "Эхо планеты", www.Day.az, 25.12.2009.

Փամուքը իհարկե կապված է իր ծննդավայր Ստամբուլի հետ, տեսնում և զգում է իր պատկանելությունը Ստամբուլին, Ստամբուլի հոսող ջրերին, նստած տեղին, իր տանը, գրվածքներին, գրքերին, գրքերի պատկերած օղին, միջավայրին²⁸։ Ստամբուլը մի «միջավայր» է, որտեղ միահյուսվում են Փամուքի ներկա, անցյալ ու ապագա ժամանակային խաչմերուկները։

Ապրելով հայրենիքում և հայրենիքից դուրս՝ նրան մշտապես ուղեկցում են երկակի զգացողություններն ու ապրումները, և նա հրաշալի մեկնում է այդ երևույթը. «Ազգային ինքնագիտակցությունը հրաշալի երևույթ է. երբ ես հայրենիքում չեմ, ինձ ավելի թուրք եմ զգում, քան Ստամբուլում ապրելիս։ Իսկ երբ տանն եմ, իմ եվրոպական կողմն ավելի ցայտուն է երևում։ Իմ հակառակորդները՝ հատկապես թուրք ազգայնականները, այս հանգամանքը շահագործում են՝ ինձ վրա հարձակումներ գործելիս։ Դա ինձ ավելի է զարմացնում, քանի որ դժվար թե մեկ ուրիշը մեր մշակույթի հետ այնքան խոր շփում ունեցած լինի, որքան ես՝ իմ գրքերում։ Միննույն ժամանակ, անժխտելի փաստ է՝ ես սիրահարված եմ եվրոպական գրականությանն ու ապրելակերպին»²⁹։

Օրհան Փամուքը սովորել է Ստամբուլի ամերիկյան Ռոբերտ քոլեջում³⁰, երեք տարի ուսանել է Ստամբուլի ճարտարագիտական համալսարանում (1970-1973 թթ.), ապա նախասիրությունը փոխել է և 1977 թ. ավարտել Ստամբուլի համալսարանի Ժուռնալիստիկայի ֆակուլտետը՝ բանակից խուսափելու և համալսարանի դիպլոմ ունենալու համար (նկատում է Օրհան Փամուքը-Ա.Ա.)³¹։

Փամուքը պատանեկության տարիներին երազել է գեղանկարիչ դառնալ, բայց ի վերջո նախընտրել է վիպասանի ճանապարհը և վիպասանից պահանջվող նվիրումով փորձել է իրականություն դարձնել իր ստեղծագործ երևակայությունը։

²⁸ Orhan Pamuk, *Öteki Renkler*, s. 62.

²⁹ Օրհան Փամուկ, «Ես ինձ ավելի արհեստավոր եմ զգում, քան՝ արվեստագետ», «SPEGEL»-ի հարցազրույցը Օրհան Փամուքի հետ, (անգլ. թարգմ. **Դվին Գալստյան**), <http://lit-bridge.com>, 20.07.2016 (այսուհետ՝ *Օրհան Փամուկ, «Ես ինձ ավելի արհեստավոր եմ զգում, քան՝ արվեստագետ»*):

³⁰ Ստամբուլի Ռոբերտ քոլեջը հիմնվել է 1863 թ., Նյու Յորքի ուսումնական հաստատություններից է և ենթարկվել է Ամերիկյան համալսարանի վերահսկողությանը։ Քոլեջն ավարտողները իրավունք են ստացել ընդունվել ԱՄՆ-ի բարձրագույն ուսումնական հաստատություններ։

³¹ Orhan Pamuk, *Öteki Renkler*, s. 49.

Վիպասանի ճանապարհը հարթելու համար Փամուքից պահանջվել է ուղիղ 8 տարի, վկայելով՝ «Այդ տարիներին զբաղվել եմ ինքնակրթությամբ, ծանոթացել համաշխարհային վեպի արվեստի հետ, ի վերջո սիրել եմ վիպասանությունը և ցանկացել եմ զբաղվել վիպասանությամբ, քանի որ «հավատացել եմ իմ կարողությանը, տաղանդին և ամենակարևորը շնորհին»³²:

Օրհան Փամուքը, 1985-1988 թթ. ապրելով ԱՄՆ-ում, մասնակցել է Այովա համալսարանի «Միջազգային գրողների ծրագրով» (անգլ.՝ *International Writing Program*) հատուկ գրողների համար ԱՄՆ-ի Արտաքին գործերի նախարարության կողմից կազմակերպվող ամենամյա դասընթացին և նրա հավաքականության միջավայրում հնարավորություն ունեցել մոտենալ համաշխարհային գրական կյանքը ներկայացնող շրջանակներին, խորապես ուսումնասիրել, յուրացնել եվրոպական և ամերիկյան դասական արվեստը՝ կրելով այդ արժեքի դրական ազդեցությունը, ինչպես իր անհատականության, այնպես և իր գրական ստեղծագործությունների վրա: Պատահական չէ, որ նա հատուկ ընդգծել է՝ **«Մի դասընթացի գնացի և կյանքս փոխվեց»**³³:

Ընդհանրապես, Օրհան Փամուքն իր կյանքը կազմակերպել ու կազմակերպում է մտավորականի վաստակով՝ համատեղելով հոբբին և աշխատանքը³⁴: Այդ մասին անձամբ է վկայում՝ «Ես սիրում եմ աշխատել: Շատերն ինձ կարող են համարել հավակնոտ մարդ: Միգուցե, նրանք իրավացի են, բայց ինձ դուր է գալիս այն, ինչ ես անում եմ: Ես սիրում եմ նստել սեղանի առաջ, այնպես ինչպես երեխան կլանված, հիացած կզբաղվեր իր խաղալիքներով»³⁵:

³² **Նույն տեղում**, էջ 49-50:

³³ **Nazan Haydari and Mujdat Pakkan**, *Orhan Pamuk's Biography*, www.opamuk.com, 30.06.2005.

³⁴ Օրհան Փամուքը դասախոսություններով հանդես է գալիս տեղի և օտար համալսարաններում: Տարվա մեջ մի շրջան՝ դեռևս 80-ականներից, «Համեմատական գրականության» վերաբերյալ դասախոսություններ է կարդում Կոլումբիայի համալսարանում, իսկ 2008 թ. նույն թեմայի շրջանակում Ստամբուլում՝ գրականագետներ Անդրեաս Հույսսենի և Դավիթ Դամրոշի հետ միասին (**Orhan Pamuk**, *Biography*, www.realitycafe.blogspot.com, 27.08.2005, Օրհան Փամուկ, «Ես ինձ ավելի արհեստավոր եմ զգում, քան՝ արվեստագետ», <http://lit-bridge.com>, 20.07.2016):

³⁵ **Isaac Chotiner**, "I Don't Write My Books to Explain My Country to Others", http://www.slate.com/articles/news_and_politics/interrogation, 21.08.2017.

Անգլիական «Time» օրաթերթի գրական մեկնաբան Ջեյսոն Գուդուինը, անդրադառնալով Փամուքի գրող-կերպարին, նույնպես գնահատել է նրա աշխատասիրությունը. «Նա աշխատասեր է, օրական 11 ժամ գամված է գրասեղանին: Վեպ գրելը տաժանակիր աշխատանք է: Ժամանակագրական մանրամասներ ճշտելու համար հին թերթեր է կարդում: Գրում է ինքնահոս գրիչով, օգտագործում է իր մոր և մեծ մոր թուրքերենը»³⁶:

Փամուքի առաջին քայլերը գրական ասպարեզում միանգամից հաջողություն չեն ունեցել, ինչպես ինքն է հիշատակում՝ «Ես 22 տարեկան էի, երբ գրեցի իմ առաջին վեպը, սակայն այն ինձ ոչինչ չտվեց՝ ո՛չ փող, ո՛չ հոշակ, և կրկին շարունակեցի ապրել մորս հետ փոքրիկ, գրքերով լի սենյակում...»³⁷:

Այդ «անհաջողության» 8 տարիների ընթացքում Փամուքին հաջողվել է գրել «երկու և կես վեպ»³⁸ և միայն 30 տարեկանում կարողացել է հրատարակել դրանցից մեկը՝ դասական ոգով գրված ընտանեկան գրուցավեպը, և ինքն էլ զարմացել. «...Տարօրինակ կերպով այն շատ ընթեցողներ ունեցավ: Առաջին գիրքը վաճառվեց 2000 օրինակով, երկրորդը՝ 6000, երրորդը՝ 16000, իսկ հետո գրքի քանակը ավելացավ՝ սկսվեցին վաճառվել 100000 օրինակով: **Այդ ժամանակ էլ եկավ Արևմուտքի փառքը**»³⁹:

Գրքերի հրատարակումները Փամուքին բերել են հաջողություն և՛ երկրում, և՛ արտասահմանում, օտարերկրյա հրատարակիչները սկսել են հետաքրքրվել նրա գրքերով⁴⁰:

Գաղափարակից, աշխատանքային ընկերների և բարեկամների շարքում Օրհան Փամուքի կենսագրությանը և ստեղծագործական գործունեությանն անդրադարձողները տեսնում են նրա ստեղծագործությունների ընթերցանության տարածմանը նպաստող, նրա երկերի տպագրման մենաշնորհը տնօրինող, աշխարհում հայտնի ամերիկյան «Random House» և գերմանական «Bertelsmann»

³⁶ *Ստամբուլի ճակատագիրն իմ ճակատագիրն է, Խոստովանում է վիպասան Օրհան Փամուքը*, Ազգ, օրաթերթ, 23. 04. 2005 (այսուհետ՝ *Ստամբուլի ճակատագիրն իմ ճակատագիրն է*, Ազգ, 23.04.2005):

³⁷ **Orhan Pamuk**, *Öteki Renkler*, s. 49, s. 127.

³⁸ **Նույն տեղում**, էջ. 49:

³⁹ **Алексей Золотницкий**, *Орхан Памук "Я пишу ради красоты"*, www.naviny.by/rubrics/culture, 12.10.2006.

⁴⁰ *Case of the Mistaken Identities*, **Joan Smith** meets the latest literary talent, Turkey's Orhan Pamuk, *Interviews and Reviews*, Orhan Pamuk Site, <http://www.orhanpamuk.net/popuppage.aspx?id=31&lng=eng>, 07.09.2016.

հրատարակչությունները և վերջինիս հիմնադիր սեփականատեր Ռեյնհարդ Մոհնին⁴¹, ինչպես նաև Փամուքի քաղաքական մտքերի վրա հնարավոր ներգործություն ունեցող, ծագումով հրեա, ամերիկյան լրագրող, Թուրքիայի Հանրապետությունում մարդու իրավունքների պաշտպանության վերաբերյալ հողվածներով հանդես եկող, մարդու իրավունքների պաշտպանության հարցերով զբաղվող ավագ խորհրդական (անգլ.՝ *Senior Adviser to Human Rights*) Ջերի Լեյբերին⁴²:

Փամուքի՝ բնագրային լեզվով գրքերի հրատարակումն են ապահովում թուրքական «İletişim Yayınları» (*Բլեթիշիմ Յայընլարը*), «Can Yayınları» (*Ջան Յայընլարը*), «Yapı Kredi Yayınları» (*Յափը Զրեդի Յայընլարը*) հրատարակչությունները:

Նրա վեպերի օտարալեզու թարգմանիչներն են. Վիկտորիա Հուբբուկ՝ «Սպիտակ ամրոց» (անգլերեն), Գունեֆի Գան՝ «Սպիտակ ամրոց», «Սև գիրք», «Նոր կյանք» (անգլերեն), Մաուրեն Ֆրիլի՝ «Ստամբուլ. Հիշողություններ և քաղաք», «Սև գիրք», «Ձյուն» (անգլերեն), Ինգրիդ Իրեն՝ «Սև գիրք» (գերմաներեն), Էրդազ Գյոքնար՝ «Իմ անունը Կարմիր է» (անգլերեն), Գերհարդ Մեյեր՝ «Անմեղության թանգարան» (գերմաներեն), Վերա Ֆեռնովա՝ «Սև գիրք» (ռուսերեն), Ապոլինարիա Ավրուտինա՝ «Նոր կյանք» (ռուսերեն), Օլգա Մարոգովա՝ «Ստամբուլ. Հիշողություններ և քաղաք» (ռուսերեն), Խուան Գոյտիսոլո (ֆրանսերեն), Բարբարա Ռոսա՝ «Կարմրահեր կինը» (իտալերեն) և այլն:

Օրհան Փամուքն իր գործերի «հստակեցված» թարգմանություններ համարում է անգլերեն թարգմանությունները, քանի որ անձամբ **«մեկ առ մեկ է նայել թարգմանչի հետ»**⁴³:

Օրհան Փամուքի ստեղծագործությունները և գրական մրցանակները

Օրհան Փամուքը 1974 թ., 22 տարեկանում, դեռևս համալսարանական տարիներին, լույս է ընծայել իր առաջին գրական ստեղծագործությունը՝ **«Մթություն և լույս»** (թրք.՝ *Karanlık ve Işık*) նովելը (նորավեպը), որի համար

⁴¹ Ռեյնհարդ Մոհնը (1921-2009 թթ.) եղել է Երկրորդ համաշխարհային պատերազմի գեներալ, Ռոմենի աֆրիկյան կորպուսի սաներից: Գերեզմարվել է ամերիկացիների կողմից և տեղափոխվել Կանգասի գերիների հավաքակալան: Պատերազմից հետո վերադարձել է Գերմանիա, որտեղ անմիջապես հիմնադրել է հրատարակչատուն և սկսել տպագրել աստվածաբանական, կրոնական գրքեր՝ հետագայում ծնունդ տալով "Bertelsmann" հրատարակչությանը:

⁴² **Serdar Kuru**, *Orhan Pamuk Dosyası, Kuş Yumurtası Üretmek ve Orhan Pamuk*, www.guvercinevi.net, 25.09.2005.

⁴³ **Орхан Памук**, *"Я очень скромный человек"*, www.zn.ua, 25.05.2009.

1979 թ. պարգևատրվել է «Միլլիյեթ» թերթի սահմանած վեպի մրցանակով (թրք.՝ *Milliyet Yayınları Roman Yarışması*)⁴⁴:

1982 թ. «Մթություն և լույս» նովելը հրատարակվել է արդեն **«Ջևդեթ բեյը և նրա որդիները»** (թրք.՝ *Cevdet Bey ve Oğulları*) անունով: Այն համարվում է Փամուքի առաջին վեպը⁴⁵: Վերջինս պատմություն է ստամբուլյան ընտանիքի երեք սերունդների մասին՝ փոքրիկ խանութի տիրոջ, Աբդուլ Համիդի կյանքի վերջին տարիների և առաջին մուսուլման առևտրականներ Ջևդեթ բեյի և նրա որդիների մասին՝ դարասկզբից մինչև ներկա օրերը, որի միջոցով պատկերվում է նաև Թուրքիայի Հանրապետության մասնավոր կյանքը:

Վեպը 1983 թ. արժանացել է «Օրհան Քեմալի անվան վեպի մրցանակ»-ին (թրք.՝ *Orhan Kemal Roman Ödülü*)⁴⁶:

1983 թ. հրատարակել է իր երկրորդ **«Լռության տուն»** (թրք.՝ *Sessiz Ev*) վեպը⁴⁸, որն անմիջապես գրավել է ընթերցողների ուշադրությունը: Վեպի գործողությունները կատարվում են 1980-ականներին, երբ երկիրը կանգնած էր քաղաքացիական հեղափոխության շեմին: Մի ընտանիքի պատմություն, որի հինգ՝ տարբեր խառնվածքի ներկայացուցիչները որոշում են այցելել իրենց մանկության տուն՝ վերհիշելու երջանիկ անցյալը, քննարկելու երկրի ներկան՝ վախով դիտարկելով անորոշ ապագան:

Վեպը 1984 թ. արժանացել է «Մադարալը վեպի մրցանակ»-ին (թրք.՝ *Madaralı Roman Ödülü*)⁴⁹, իսկ ֆրանսերեն թարգմանությունը (ֆրս.՝ *La Maison du Silence*, 1988) վաստակել է 1991 թ. «Եվրոպական հայտնություն

⁴⁴ 1974-1977, 1979 և 1990 թթ. անցկացված վեպի մրցանակ, որին մասնակցել են սիրողական և պրոֆեսիոնալ թուրք գրողները՝ չհրատարակված իրենց ստեղծագործություններով (*Awards and Honors*, Orhan Pamuk Site, <http://orhanpamuk.net/prizes.aspx>, 10.08.2016):

⁴⁵ **Orhan Pamuk**, *Cevdet Bey ve Oğulları*, İstanbul, İletişim Yay., 1982.

⁴⁶ Օրհան Քեմալի մահից երկու տարի անց՝ 1972 թ. սահմանվել է «Օրհան Քեմալի անվան վեպի մրցանակը», որը կարճ ժամանակամիջոցում Թուրքիայում դարձել է վիպագրության ասպարեզում ամենահեղինակավոր գրական մրցանակներից մեկը, եթե ոչ առաջինը: Այն տրվում է ամեն տարի հունիսի 2-ին՝ գրողի մահվան օրը (**Ռուբեն Մելքոնյան**, *Թուրքական գրականության պատմություն (XX դարի 20-ական թթ. - XXI դարի սկիզբ)*, Բուհական դասագիրք, Երևան, ՎՄՎ-պրինտ, 2017, էջ 81):

⁴⁷ **Orhan Pamuk**, *Biography*, <http://www.realitycafe.blogspot.com>, 27.08. 2005.

⁴⁸ **Orhan Pamuk**, *Sessiz Ev*, İstanbul, 1 Basım, Can Yay., 1983.

⁴⁹ Մրցանակի հիմնադիրներն են Ֆիքրեթ Մադարալը իր կնոջ հետ: Տրվում է ամեն տարի նախորդ տարում լույս տեսած վեպերից մեկին: Առաջին անգամ մրցանակը հանձնվել է 1974 թ. իսկ վերջինը՝ 1989 թ.:

մրցանակ»-ը (ֆրս.՝ *Prix de la Découverte Européenne*⁵⁰), 2013 թ. անգլերեն թարգմանությունը (2012 թ.) ներառվել է «Տղամարդ» ասիական գրական մրցանակի (անգլ.՝ *"Man" Asian Literary Prize*)՝ «Ասիացի գրող» (անգլ.՝ *Asian Booker*) կարճ ցանկում⁵²:

1985 թ. տպագրել է իր «Մպիտակ ամրոց» (թրք.՝ *Beyaz Kale*) վեպը⁵³: Այն ընթերցողին տեղափոխում է 17-րդ դարի պատմական իրադարձությունների միջավայր՝ Վենետիկից Նեապոլ նավարկող նավ, որը զրոհի է ենթարկվում թուրքական ծովահեն նավատորմի կողմից: Ստեղծագործության սյուժեի հիմքում ընկած է վենետիկցի ստրուկի և օսմանցի Հոջայի բարեկամության և համակեցության պատմությունը⁵⁴:

Թարգմանվել և հրատարակվել է բազմաթիվ լեզուներով՝ բերելով հնչեղություն Օրհան Փամուք անվանը թե՛ երկրի ներսում, թե՛ արտերկրում: Փամուքի վեպերից առաջինն է, որ թարգմանվել է օտար լեզվով՝ անգլերեն (թրգմ.՝ Վիկտորիա Հոլբրուկ, Նյու Յորք) և 1990 թ. արժանացել է Անգլիայում «Անկախ օտարալեզու գրական մրցանակի» (անգլ.՝ *Independent Foreign Fiction Prize*⁵⁵)⁵⁶:

1990 թ. հրատարակել է «Սև գիրք» (թրք.՝ *Kara Kitap*) վեպը⁵⁷, որը ներկայացնում է Ստամբուլի Նիշանթաշը թաղամասում Շեհրիբալի կոչվող

⁵⁰ Եվրոպական միջազգային գրական մրցանակ, որը հիմնադրվել է 2005 թ. Ստրասբուրգում: Տրվում է եվրոպական առաջատար գրողներին՝ անկախ նրանց գրական ժանրից:

⁵¹ **Nazan Haydari and Mujdat Pakkan**, *Orhan Pamuk's Biography*, www.opamuk.net, 20.07.2005.

⁵² Մրցանակը տրվում է լավագույն նովելի համար ասիացի գրողին, որի ստեղծագործությունները գրվել կամ թարգմանվել են անգլերեն և հրատարակվել 2007-2012 թթ. (*Թուրք գրող Օրհան Փամուկի «Լոռության տուն» վեպը առաջադրվել է «Asian Booker» մրցանակին*, 10.01.2013, <http://www.tert.am/am/news/2013/01/10/orhan-pamuk/671070>, 05.06.2017):

⁵³ **Orhan Pamuk**, *Beyaz Kale*, İstanbul, İletişim Yay., 1985.

⁵⁴ Տե՛ս վեպի մասին մանրամասն **Անի Ավետիսյան** [= **Անի Ժ. Ավետիսյան**], *Օրհան Փամուքի «Մպիտակ ամրոց»-ը*, Բնօրրան, Հանդես Հայրենակցական Միությունների Խորհրդի, թիվ 1-4 (17-20), Երևան, 2007, էջ 231-236:

⁵⁵ Բրիտանական գրական մրցանակ (1990-2015 թթ.), որը հիմնադրել է "The Independent" թերթը, անգլերեն թարգմանված գրական ստեղծագործությունների համար: Մրցանակը շնորհվել է հեղինակին և թարգմանչին: Մրցանակային ֆոնդը կազմել է 5000 եվրո:

⁵⁶ **Maureen Freely**, *Talking Turkey*, Interviews and Reviews, Orhan Pamuk Site, <http://orhanpamuk.net/interviews.aspx>, 04.11.2016.

⁵⁷ **Orhan Pamuk**, *Kara Kitap*, İstanbul, İletişim Yay., 1990, 476 s..

տանն ապրող ավանդապահ մի ընտանիքի զավակների՝ երկու եղբայրների (Մելիհի և եղբոր) ժառանգների՝ Ջելալի, Գալիփի, Ռույայի պատմությունը: Մի առավոտ անհետանում են Գալիփի եղբայրը՝ Ջելալը և կինը՝ Ռույան: Վեպի հիմքում ընկած է Գալիփի փնտրտուքը, որոնումները, անդադար հնչող հարցադրումներն ու եզրակացությունները, որոնց միջոցով ընթերցողն իր համար սկսում է բացահայտել Ստամբուլ քաղաքը և ընդհանրապես մարդուն⁵⁸:

Վեպը թարգմանվել է բազմաթիվ լեզուներով՝ ռուսերեն, իսպաներեն, ֆրանսերեն, գերմաներեն, անգլերեն: Գրքի ֆրանսերեն թարգմանությունը 1995 թ. Ֆրանսիայում ստացել է «Ֆրանսիական մշակույթի մրցանակ»-ը (ֆր.՝ *Prix France Culture*⁵⁹): Վեպը Թուրքիայի Հանրապետությունում և ԱՄՆ-ում վաճառվել է 200,000 օրինակով⁶¹:

«Սև գիրք»-ը դարձել է նաև ֆիլմի ոգեշնչման աղբյուր. 1991 թ. Փամուքը «Սև գիրք» վեպի «Սուր զիջերվա սիրտ պատմություններ» (թրք.՝ *Karlı Gecenin Aşk Hikâyeleri*) անունը կրող գլխի հիման վրա կինոռեժիսոր Օմեր Քավուրի համար գրել է «Քողարկված դեմք» (թրք.՝ *Gizli Yüz*) ֆիլմի սցենարը⁶²:

Սցենարը 1991 թ. Անթալիայում կազմակերպված «Ոսկե նարինջ» միջազգային կինոփառատոնին (թրք.՝ *Uluslararası Antalya Film Festivali*)⁶³

⁵⁸ Տե՛ս վեպի մասին **Անի Ավետիսյան [=Անի Ժ. Ավետիսյան]**, *Օրհան Փամուքը և իր «Սև գիրքը»*, Թուրքագիտական և օսմանագիտական հետազոտություններ, IV, Երևան, Ասողիկ հրատ., 2006, էջ 166-183, նաև **Գևորգ Սահակյան**, *Հետմոդերնիստական առանձնահատկությունների դրսևորումը Օրհան Փամուքի «Սև գիրք» վեպում*, Արևելագիտության հարցեր, VIII, Երևան, ԵՊՀ հրատ., 2014, էջ 229-236:

⁵⁹ Մրցանակը հիմնադրել են 2006 թ. "France Culture" ռադիոկայանի ասոցիացիան և "Télérama" ամսագիրը: Մրցանակը հանդիսանում է 1979 թ. հիմնադրված "France Culture" մրցանակի հետևորդը:

⁶⁰ *Biography, Awards and Honors*, Orhan Pamuk Site, <http://orhanpamuk.net/prizes.aspx>, 04.02.2009.

⁶¹ **Օրհան Փամուք**, *"Я очень скромный человек"*, www.zn.ua, 25.05.2009.

⁶² **Orhan Pamuk**, *Öteki Renkler*, s. 142.

⁶³ Հիմնադրվել է 1950-ականներին, սակայն անցկացվել է 1964 թ. աշնանից: Ներկայումս այն անցկացվում է Անթալիայի քաղաքային մունիցիպալիտետի, Անթալիայի մշակույթի և արվեստի ֆոնդի, "Cam Piramit" ընկերության աջակցությամբ: Հավատարմագրված է Կինոպրոդյուսերների միավորման միջազգային ֆեդերացիայի կողմից: Մինչև 2005 թ. կոչվել է Անթալիայի «Ոսկե նարինջ» կինոփառատոն, 2005-2015 թթ.՝ Անթալիայի միջազգային «Ոսկե նարինջ»

արժանացել է մրցանակի «Լավագույն ֆիլմի սցենար» անվանակարգում⁶⁴, իսկ արդեն 1992 թ. ֆիլմի սցենարը նույն խորագրով հրատարակվել է որպես գիրք⁶⁵:

Հետագայում Փամուքը կրկին վերադարձել է «Սև գրքին» և հրատարակել է գրքեր, որոնք առնչվել են «Սև գիրք» վեպի հետ:

2013 թ. լույս է տեսել «Սև գրքի գաղտնիքները, Օրհան Փամուքի գրվածքներն ու նկարները» (թրք.՝ *Kara Kitap'ın Sırları, Orhan Pamuk'un Yazı ve Resimleri*) խորագրով գիրքը⁶⁶, որտեղ անդրադարձել է ընդհանրապես վեպ գրելու, սկսելու և զարգացնելու ընթացքին, քննարկել է վեպի ունեցած ազդեցությունը գրողի երևակայության, կյանքի և ուրիշների գաղափարների վրա, ինչպես նաև մեկնաբանել է «Սև գիրք» վեպի բովանդակության հետ կապված հարցեր՝ օգտագործելով սևագրությունները և հարցազրույցներից հատվածները, նոթատետրերում արված նշումները, լուսանկարները և այլն⁶⁷:

Իսկ արդեն 2015 թ. վեպի լույս ընծայման 25-ամյակի առիթով ընթերցասեր հասարակությանն է ներկայացվել վեպի հոբելյանական՝ «Սև գիրք, 25 տարեկան» (թրք.՝ *Kara Kitap, 25 yaşında*)⁶⁸ վերնագրով հրատարակումը: Գրքում առաջին անգամ տեղ են գտել վեպի ձեռագիր օրինակներից էջեր և փոքրիկ հատվածներ⁶⁹:

1994 թ. հրատարակել է իր «Նոր կյանք» (թրք.՝ *Yeni Hayat*) վեպը⁶⁹, որը կառուցվածքով և սյուժետային առանցքով նման է նախորդ՝ «Սև գիրք» վեպին: Վեպի հերոսները երիտասարդ ուսանողներ են, որոնք խորհրդավոր գրքի ազդեցությամբ ճանապարհ են ընկնում իրականությունը բացահայտելու, գրքի մույթ գաղտնիքները փնտրելու: Եվ ահա այս փնտրտուքի ճանապարհին հերոսները հանդիպում են փորձությունների:

կինոփառատոն, իսկ 2015 թ. նշանավոր միջազգային կինոփառատոնների օրինակով անվանումից հանվել է «Ոսկե նարինջ» արտահայտությունը:

⁶⁴ *Awards and Honors*, Orhan Pamuk Site, <http://www.orhanpamuk.net/prizes.aspx>, 17.08.2016.

⁶⁵ **Orhan Pamuk**, *Gizli Yüz*, İstanbul, Can Yay., 1992.

⁶⁶ **Orhan Pamuk**, *Kara Kitap'ın Sırları, Orhan Pamuk'un Yazı ve Resimleri*, İstanbul, Yapı Kredi Yay., 2013, 128 s..

⁶⁷ *The Secrets of the Black Book*, Books, Orhan Pamuk Site, <http://orhanpamuk.net/book.aspx?id=106&lng=eng>, 04.08.2016.

⁶⁸ **Orhan Pamuk**, *Kara Kitap, 25 yaşında*, İstanbul, Yapı Kredi Yay., 2015, 502 s..

⁶⁹ *Black Book-25th Anniversary Special Edition*, Books, Orhan Pamuk Site, <http://orhanpamuk.net/book.aspx?id=109&lng=eng>, 04.08.2016.

⁶⁹ **Orhan Pamuk**, *Yeni Hayat*, İstanbul, İletişim Yay., 1994.

Սյուժեն ընթերցողին տանում է իրական աշխարհից դեպի միատիկ աշխարհի և հակառակը:

Թուրքական գրականության ամենաընթերցելի գրքերից է, թարգմանվել է օտար լեզուներով⁷⁰, արժանացել է գրաքննադատների ուշադրության ու գնահատականին, համարվել լավագույն «պոստմոդեռնիստական մետաֆիզիկա», «հիպնոսացնող արձակ», «Բորխեսյան կոնտրաստային համեմատություն»⁷¹: Միայն Թուրքիայում վաճառվել է 200,000 օրինակով⁷²:

1998 թ. տպագրել է «**Իմ անունը Կարմիր է**» (թրք.՝ *Benim Adım Kırmızı*) պատմա-իմաստասիրական վեպը⁷³, որը նրան ճանաչում է բերել Արևմուտքում⁷⁴: Վեպի հիմնական թեման Արևմուտքն է, որը սպառնում է Սուլթան Մուրադ 3-րդի (1574-1595 թթ.) ժամանակներից սկսած որպես պարսկական մանրանկարչության մի ճյուղ հանդիսացող օսմանյան մանրանկարչական արվեստին: Բովանդակությունը արևելյան ավանդական և եվրոպական նորարարական սկզբունքները կրող երկու արվեստագետների պայքարն է՝ ավանդականի և եվրոպական կերպարվեստի ավանդույթները կիրառողի միջև: Բաղկացած է 59 գլխից, որոնք ներկայացնում են 12 հերոսների, այդ թվում՝ երկու սպանվածների և մարդասպանի իրական կյանքի և երևակայական միջավայրի վերաբերյալ պատմություն-պատկերացումները:

2001 թ. հրատարակվելով մի շարք լեզուներով արտերկրներում՝ վեպը ընդունվել է որպես տարվա «Լավագույն օտար գիրք» (*The Observer*)⁷⁵: 2002 թ. արժանացել է երկու մրցանակի՝ «Լավագույն տարօրինակ գիրք» (ֆրս.՝ *Prix du Meilleur Livre Étrange*)⁷⁶ և «Գրինցանե Կավուրի մրցանակ» (իտլ.

⁷⁰ Վեպի անգլերեն տարբերակը հրատարակվել է հայտնի ամերիկյան "Farrar, Straus & Giroux" ընկերության կողմից 50,000 օրինակով (**Fernanda Eberstadt**, *The Best Seller of Byzantium*, Orhan Pamuk Site, Interviews and Reviews, <http://orhanpamuk.net/popuppage.aspx?id=27&lng=eng>, 03.11.2016):

⁷¹ Նույն տեղում:

⁷² Նույն տեղում:

⁷³ **Orhan Pamuk**, *Benim Adım Kırmızı*, İstanbul, İletişim Yay., 1998.

⁷⁴ **Robert Cottrell**, *To Have and Have Not*, Interviews and Reviews, Orhan Pamuk Site, <http://orhanpamuk.net/interviews.aspx>, <http://orhanpamuk.net/popuppage.aspx?id=25&lng=eng>, 04.11.2016.

⁷⁵ **Orhan Pamuk**, *Kar*, İstanbul, İletişim Yay., 2002, s. 430.

⁷⁶ Ֆրանսիական գրական մրցանակ, որը հիմնադրվել է 1948 թ.: Այն ամեն տարի շնորհվում է երկու անվանակարգում՝ ֆրանսերեն թարգմանված նովել և էսսե:

*Premio Grinzane Cavour*⁷⁷: Իսկ 2003 թ. Իռլանդիայում ստացել է միջազգային «IMPAC»⁷⁹ դուբլինյան գրական մրցանակը⁸⁰: 2014 թ. վեպը թարգմանվել է նաև հայերեն⁸¹:

Վեպի հիման վրա ներկայացում է բեմադրվել Սարանոյի (Բոսնիա և Հերցեգովինա) պետական թատրոնում, որի պրեմիերան, ըստ «Hurriyet Daily News»-ի հաղորդած տվյալների, նախապես պլանավորված է եղել 2010 թ. սեպտեմբերի 17-ին⁸²:

1998 թ. Փամուքը ընթերցողներին է հանձնել «Այլ գույներ» (թրք.՝ *Öteki Renkler*) ինքնակենսագրական բնույթի գիրքը (էսսե), որի հրատարակման համար Փամուքից պահանջվել է քսան տարվա աշխատանք: Այն եղել է Փամուքի մտահղացումը՝ ստեղծել իր դիմանկարը էսսեի, գրվածքների, դասախոսությունների և վեպերի մասին տարբեր տարիներին գրված նյութերի միջոցով:

Գիրքն ընդհանրապես ամփոփում է հեղինակի կյանքը, մանկության հուշերը, երիտասարդ տարիներից ի վեր ամսագրերում, թերթերում հրապարակված լրատվական նյութերն ու քննադատական հոդվածները, զեկույցները, անցյալի, ճանապարհորդությունների ժամանակ արված նշագրումները, հետահայաց նետելով իր վեպերին՝ բերել դրանց ստեղծման պատմությունները և այլ մանրամասնություններ, պատմել է հին քաղաք-ներկայիս Ստամբուլի, Բոսֆորի, կիևոյի, իր սիրած գրողների, նրանց

⁷⁷ Իտալական և միջազգային գրական մրցանակ (քաղաք Գրինցանե Կավուր), որը 1982 թ. սկսած տրվում է մի քանի անվանակարգով՝ երիտասարդ գրողի ստեղծագործություն, էսսե, գիրք, որը խորհուրդ է տրվում կարդալ և այլն: 2009 թ. դադարեցվել է մրցանակի գործունեությունը:

⁷⁸ *Biography, Awards and Honors*, Orhan Pamuk Site, <http://orhanpamuk.net/prizes.aspx>, 04.02.2009.

⁷⁹ IMPAC-ը աշխարհում հայտնի ամերիկյան կազմակերպություն է, որի ղեկավարն է դոկտոր Ջեյմս Իրվինը: Նա 1996 թ. սահմանել է այս մրցանակը: Մրցանակը տրվում է ամեն տարի վաստակաշատ գրողի: Մրցանակակիրներին որոշում են աշխարհի խոշոր գրադարանները: Մրցանակային ֆոնդը կազմում է 100,000 եվրո:

⁸⁰ *Орхан Памук-Лауреат IMPAC*, www.7news.ru, 22.01.2006.

⁸¹ **Օրհան Փամուք**, *Իմ անունը Կարմիր է*, թարգմանությունը Արփի Աթաբեկյանի, Երևան, Անտարես, 2014 թ., 496 էջ:

⁸² Բեմադրության ռեժիսորն է Մարտին Կոսովսկին: Ներկայացման մեջ խաղալու համար ներգրավված են դերասաններ Բոսնիայից և Հերցեգովինայից, Մակեդոնիայից, Չեռնոգորիայից, Սլովենիայից, Իտալիայից, Թուրքիայից (*Սարանոյի պետական թատրոնը մտադիր է բեմադրել Օրհան Փամուքի «Իմ անունը Կարմիր է» վեպը*, 11 օգոստոս 2010, <http://www.panarmenian.net/arm/news/52086>, 20.07.2016):

գրքերի, նկարների և այլնի մասին, ընդգրկել է նաև վաղ տարիքում գրած «Պատուհանից նայել» (թրք.՝ *Pencereden bakmak*) պատմվածքը, որտեղ պատկերված է Օրհան Փամուքի ընտանեկան կյանքից մի փոքրիկ դրվագ՝ մանկության տարիները, եղբոր և իր հարաբերությունները, առօրյա կյանքը, հոր հեռանալը տնից, ինչպես նաև տարբեր մրցանակների հանձնման արարողության ժամանակ արված իր ամբողջական կամ հատվածաբար, կրճատումներով ելույթները⁸³:

2002 թ. հրատարակել է «Ձյուն» (թրք.՝ *Kar*) քաղաքական վեպը⁸⁴, որը հայտնի է դարձել և՛ երկրում (վաճառվել է 140,000 օրինակ)⁸⁵, և՛ նրա սահմաններից դուրս: Վեպի բուն պատմությունը սկսվում է, երբ գլխավոր հերոս Կան (Քերիմ Ալաքուշօղլու)՝ Գերմանիայից մոր մահվան լուրը ստանալուն պես գալիս է Ստամբուլ, ապա մեկնում Կարս՝ որպես թերթի լրագրող գրելու քաղաքապետի ընտրությունների և գլխաշորով մահմեդական կանանց միջավայրում կատարվող ինքնասպանությունների մասին: Հանդիպում է նաև իր երիտասարդ տարիների սիրուն՝ Իփեթին: Վեպի ընթացքում Կան անդադար մտածում էր սիրեցյալի հետ կյանքը կապելու և Ֆրանկֆուրտ վերադառնալու մասին, սակայն այդ ընթացքում ներքաշվում է զինվորական հեղաշրջման մեջ և ձեռնունայն վերադառնում է Գերմանիա, որտեղ տարիներ անց սպանվում է⁸⁶:

Գիրքը կարճ ժամանակամիջոցում թարգմանվել է երկու տասնյակ լեզուներով, ինչպես և հայերեն⁸⁷: Վեպը գրավել է իր տեղը գրական աշխարհի 10 «գնայուն գրքերի» (անգլ.՝ *bestseller*) ցուցակում⁸⁸: 2004 թ. ստեղծագործության անգլերեն թարգմանությունը նրան հռչակ է բերել

⁸³ Orhan Pamuk, *Öteki Renkler*, ss. 21-41.

⁸⁴ Orhan Pamuk, *Kar*, İstanbul, İletişim Yay., 2002, 429 s..

⁸⁵ Robert Cottrell, *To Have and Have Not, Interviews and Reviews*, Orhan Pamuk Site, <http://orhanpamuk.net/popuppage.aspx?id=25&lng=eng>, 04.11.2016.

⁸⁶ Տե՛ս վեպի մասին թեմատիկ հրատարակումներ Անի Ավետիսյան [= Անի Ժ. Ավետիսյան], *Պատմական Կարս քաղաքը Օրհան Փամուքի «Ձյուն» վեպում*, Հայոց Ցեղասպանություն-100 ճանաչումից՝ հատուցում, Միջազգային գիտաժողովի զեկուցումների ժողովածու, Երևան, 2016 թ., էջ 709-718; նաև Գևորգ Սահակյան, *Քաղաքական իսլամի խորհրդանիշի պոստմոդերնիստական արծարծումը Օրհան Փամուքի «Ձյուն» վեպում*, Արևելագիտության հարցեր (Գիտական հոդվածների պարբերական ժողովածու), XI, Երևան, ԵՊՀ հրատ., 2016, էջ 188-195:

⁸⁷ Օրհան Փամուք, *Ձյունը*, թարգմանությունը Հակոբ Սողոմոնյանի, Երևան, Համազգային հայ կրթական և մշակութային միություն, 2009, 408էջ:

⁸⁸ *Мир зачитывается Орханом Памуком*, Архив: Новости, 26 октября 2006 года, четверг, www.pravda.kursknet.ru, 26.10.2006.

Արևմուտքում⁸⁹: «New York Times»-ը այն համարել է «10 լավագույն գրքերից մեկը»⁹⁰: 2005 թ. վեպի ֆրանսերեն թարգմանությունն արժանացել է ֆրանսիական «Մեդիչի» մրցանակին (ֆրս.՝ *Prix Médicis Etranger*)⁹¹՝ «Ֆրանսերեն թարգմանված լավագույն արտասահմանյան վեպ» անվանակարգում⁹²:

2014 թ. դեկտեմբերին վեպի առաջին հրատարակությունը Նյու Յորքում «Christie's» աճուրդի տան կազմակերպած «Առաջին հրատարակություններ, երկրորդ մտքեր» աճուրդի ընթացքում վաճառվել է 13,000 դոլար արժողությամբ⁹³:

Վեպը Փամուքի ներկայությամբ բեմականացվել է Գերմանիայում (Ֆրեյբուրգի քաղաքային թատրոն)⁹⁴, ապա 2009 թ.՝ Ստամբուլում (Հալդուն Թաների անվան թատրոն)⁹⁵ և 2017 թ.՝ Ֆրանսիայում⁹⁶:

2003 թ. լույս է ընծայել «Ստամբուլ. Հիշողություններ և քաղաք» (թրք.՝ *İstanbul. Hatıralar ve Şehir*) հերթական ինքնակենսագրական երկը⁹⁷, որը

⁸⁹ Александр Колесников, *Русский турецкий писатель* [Gazeta.Ru, 18.10.2005], 25.10.2007.

⁹⁰ Orhan Pamuk, *Biography*, www.realitycafe.blogsome.com, 27.08.2005.

⁹¹ «Մեդիչի» մրցանակը հիմնադրվել է անցյալ դարի 70-ականներին և յուրաքանչյուր նոյեմբերին շնորհվում է երկու անվանակարգում՝ «Լավագույն ֆրանսիական վեպ» և «Ֆրանսերեն թարգմանված լավագույն արտասահմանյան վեպ»:

⁹² Волков Валерий, *Опубликован первый список премии Медици*, www.reshe.to.ru, 12.10.2005.

⁹³ Աճուրդը կազմակերպվել է 1922 թ. հիմնադրված "PEN American Centre" միջազգային կազմակերպությանն աջակցելու նպատակով: Գործում է Նյու Յորքում, նպատակն է սատարել գրողներին և պաշտպանել ազատ արտահայտվելու իրավունքը: Ինչպես հաղորդում է "Hurriyet Daily News"-ը. «Գրառումներում հեղինակները պատմել են իրենց գրքի նպատակի կամ այն գրելու ընթացքի մասին կամ կիսել են իրենց զգացմունքները»: Օրհան Փամուքը պարզապես նախընտրել է Կարսի երկու պատկեր նկարել, որոնք ներառվել են ԱՄՆ-ում վեպի առաջին հրատարակության մեջ (*Փամուկի «Չյունը» աճուրդում վաճառվել է 13 հազ. դոլարով*, 4 դեկտեմբեր 2014, <http://www.civilnet.am/news/2014/12/04/orhan-pamuk-christies-auction-snow-sold/253852>, 05.08.2017):

⁹⁴ Theatre Freiburg Put on Scene Orhan Pamuk's "Snow" at the Presence of the Author, www.orhanpamuk.net/news.aspx?id=18&lng=eng, 20. 10. 2015.

⁹⁵ Orhan Pamuk'un "Kar" adlı romanından uyarlanan "Kar" (Schnee) oyununu İstanbul'da sahneledi. Oyun bu akşam tekrarlanacak, <http://www.trt.net.tr>, 04.03.2009.

⁹⁶ Pamuk's Stage Adaptation of Snow by Blandine Savetier is on the Tour in France, News, Orhan Pamuk Site, <http://orhanpamuk.net/news.aspx>, 05.06.2017.

⁹⁷ Orhan Pamuk, *İstanbul: Hatıralar ve Şehir*, İstanbul, Yapı Kredi Yay., 2003.

նվիրել է հորը՝ Գյունդուզ Փամուքի (1925-2002 թթ.) հիշատակին: Այն բովանդակում է ծննդավայր քաղաքի վերաբերյալ երիտասարդ տարիների հուշերը, մտորումները: Գրքում ընդգրկվել են նաև քաղաքի լուսանկարները, որոնք հեղինակի անձնական, օտար և տեղի լուսանկարիչների (մեծ մասը պատկանում է պոլսահայ լուսանկարիչ Արա Գյուլերին, որը «հիշողությունների արխիվ»-ին է հանձնել 1950-ականներից մինչև ներկա օրերի ստամբուլյան կյանքն ու առհասարակ քաղաքը, որոշները Աբդուլլահյան եղբայրների արխիվից են) հավաքածուների մասն են կազմել: Այս առիթով Փամուքը ընդգծել է՝ «Իմ բոլոր գրքերը կապված են Ստամբուլի հետ: Ծնվել և ապրել եմ իմ կյանքն այս քաղաքում: Եվ մարդիկ, ում ես գիտեմ և նկարագրում եմ իմ գրքերում, նույնպես ծնունդով Ստամբուլից են: Դրա համար չկա ոչ մի զարմանալի բան, որ ես մի օր որոշեցի հավաքել քաղաքի հիշողությունները մեկ գրքի մեջ, որտեղ պատմում էի Ստամբուլի կարոտի, տխրության մասին, որ կար 50-60-ականներին ...: Այժմ Ստամբուլն այդ նույն հանգիստ և աղքատ քաղաքը չէ, որ իմ մանկության տարիներին էր, այն վառ, գունագեղ, հարուստ, աղմկոտ, խցանումներով լի քաղաք է»⁹⁸:

2015 թ. Փամուքը տասներկու տարի անց, որպես հիշյալ գործի հարստացված տարբերակ, հրատարակել է **«Պատկերազարդ Ստամբուլ»** (թրք.՝ *Resimli İstanbul*) խորագրով գիրքը⁹⁹: Այն հեքիաթային Ստամբուլ քաղաքի 450 մեծարժեք սև և սպիտակ լուսանկարների մի ժողովածու է՝ լուսանկարների, որոնց հեղինակներն են պոլսահայ Արա Գյուլերը, ֆրանսիացի Հենրի Քարթեր Բրեսսոնը, հույն Սամանջը եղբայրները, մի մասն էլ վերցված են շրջիկ եվրոպացի լուսանկարիչներից, տեղական թերթերի հրապարակումներից, ընտանեկան չիրապարակված հավաքածուներից¹⁰⁰:

Փամուքը 2007 թ. տպագրել է **«Հայրիկիս ճամպուկը»** (թրք.՝ *Babamın Bavulu*) հերթական գիրքը¹⁰¹, որտեղ ընդգրկվել են տարբեր ժամանակներում մրցանակների շնորհման ժամանակ Փամուքի ընթերցած երեք բանախոսությունները: Գրքի հիմնական նյութը Գրականության Նոբելյան մրցանակը ստանալիս «Հայրիկիս ճամպուկը» ելույթն է, որտեղ

⁹⁸ **Анатолий Стародубец**, *Орхан Памук: Чувство грусти перевозжу в ощущение счастья*, Из досье "Эхо планеты", www.Day.az, 25.12.2009.

⁹⁹ **Orhan Pamuk**, *Resimli İstanbul, Hatıralar ve Şehir*, İstanbul, Yapı Kredi Yay., 2015:

¹⁰⁰ *Illustrated İstanbul*, Books, Orhan Pamuk Site, <http://orhanpamuk.net/book.aspx?id=110&lng=eng>, 08. 08. 2016:

¹⁰¹ **Orhan Pamuk**, *Babamın Bavulu*, İstanbul, İletişim Yay., 2007.

անդրադարձել է իր 32 տարվա գրական գործունեությանն ու կյանքին: Հաջորդ երկուսը՝ 2006 թ. ապրիլին «Համաշխարհային գրականություն» ամսագրի շնորհած «Փութերբաու մրցանակ»-ը (անգլ.՝ *Puterbaugh Prize*) ստանալիս ընթերցած «Ակնարկներով հեղինակը» ելույթն է, որտեղ խոսել է գրելու հոգեբանության, գրող լինելու կոչման, արկածախնդրությունների մասին և 2005 թ. հոկտեմբերին գերմանական գրաքաղաքակրթության միության խաղաղության մրցանակին (անգլ.՝ *Peace Prize of the German Book Trade*)¹⁰² արժանանալիս կարդացած «Կարսում և Ֆրանկֆուրտում» (թրք.՝ *Kars'ta ve Frankfurt'ta*) բանախոսությունն է, որտեղ ներկայացրել է գրողի ինքն իրեն ուրիշի իրավիճակում դնելու կարողությանն ու ուժին և այս ստղանդի պատճառով ի հայտ եկած քաղաքական հետևանքներին:

2008 թ. հրատարակել է «Անմեղության թանգարան» (թրք.՝ *Masumiyet Müzesi*) վեպը¹⁰³: Վեպի գործողությունները կատարվում են Ստամբուլում 70-ականներին և հասնում մինչև մեր ժամանակները: Պատմում է Քեմալի և Ֆուսունի սիրո մասին՝ մարդու հոգևոր աշխարհը թափանցող խորհրդանշաններով և դեպքերով: Այս թեմային զուգահեռ ընթանում են Թուրքիայի Հանրապետության հասարակական և մշակութային կյանքի պատկերները՝ առանձնակի ընդգծելով Ստամբուլի գեղեցկությունը: Վեպը գրելու համար Փամուքից պահանջվել է 10 տարի¹⁰⁴: Նրա ստեղծագործությունների մեջ երկրորդն է իր մեծությամբ, որը գրողը կոչում է «եսասեր, պատվախնդիր գիրք»:

Գրքի շնորհանդեսը տեղի է ունեցել Ստամբուլի գրախանութներից մեկում: Այն անմիջապես արժանացել է թուրք և օտար ընթերցողների ուշադրությանը՝ թարգմանվելով գերմաներեն Գերհարդ Մեյերի (գեր.՝ *Museum Der Unschuld*)¹⁰⁵, իսկ անգլերեն 2009 թ.՝ Էրոզ Գյոքնարի (անգլ.՝ *The Museum of Innocence*)¹⁰⁶, նույն թվականին նաև ռուսերեն՝ Ապոլինարի

¹⁰² Մրցանակի հանձնման արարողությունը տեղի է ունեցել Ֆրանկֆուրտի Փաուլի եկեղեցում: Մրցանակային ֆոնդը կազմում է 25,000 ֆրանկ (*Ophuan Փամուքը Գերմանիայում արժանացել է խաղաղության մրցանակի*, Ազգ. օրաթերթ, թիվ 192 (3358), 25 հոկտեմբեր 2005 թ., էջ Ա, *Orhan Pamuk'a Ödülü Alman Istihbaratı verdirdi*, Aydınlık, 30 Ekim 2005, www.aydinligazete.com, 30.10.2005):

¹⁰³ **Orhan Pamuk**, *Masumiyet Müzesi*, 1 Basım, İstanbul, İletişim Yay., 2008.

¹⁰⁴ **Арте́м Еффи́мов**, *Сентиментальный музей Орхана Памука*, [Лента.Ру, 28.08.2009], p. 2, www.noblit.ru, 25.11.2014.

¹⁰⁵ *Орхан Памук закончил новый роман*, www.info.ru/tour-news, 03. 05. 2007.

¹⁰⁶ **Hande Gurses**, *Fictional Displacements: An Analysis of Three Texts by Orhan Pamuk (A Thesis submitted in fulfilment of the requirements for the PhD Degree at UCL)*, June 2012, (pdf version), p. 14.

Ավրուտինի կողմից (ռուս.՝ *Музей Невинности*), որին հաջորդել է Փամուքի մեկժամյա դասախոսությունը Մոսկվայի պետական համալսարանի Ժուռնալիստիկայի ֆակուլտետում¹⁰⁷:

2012 թ. ապրիլի 28-ին Չուքուրջումայում (Ստամբուլի հարևանությամբ) Փամուքը բացել է վեպի անունը կրող գրական թանգարանը¹⁰⁸: Այդ առիթով ընդգծել է. «Որքան գիտեմ, սա աշխարհում առաջին թանգարանն է, որի հիմքում ընկած է վեպը», նաև հավելել, որ «Վեպի և թանգարանի ստեղծման գաղափարը մտքում միաժամանակ են ծագել»¹⁰⁹:

Թանգարանում ցուցադրվում են ոչ խոր անցյալի նմուշներ, ինչպես ընդունված է աշխարհի բազմաթիվ թանգարաններում, այլ մոտ անցյալի առարկաներ, որոնք դեռևս հիշում են շատերը (1950-2000 թթ.)¹¹⁰: 2014 թ. Թալինում (Էստոնիա) Եվրոպական թանգարանային հանձնաժողովը

¹⁰⁷ **Артём Ефимов**, *Сентиментальный музей Орхана Памука*, [Лента.Ру, 28.08.2009], www.noblit.ru, 25.11.2014.

¹⁰⁸ Ե՛րբ է Փամուքի մտքում ծագել սեփական թանգարան ունենալու գաղափարը: Հրապարակումներից մի քանիսի մեջ նշում է, որ 1982 թ. երեկոյաններից մեկի ժամանակ, երբ ծանոթացել է 1924 թ. Թուրքիայից Ալեքսանդրիա աքսորված, մաքսային թանգարանում աշխատող թագածառնագ Ալի Վասիֆ Էֆենդիի հետ (Մուրադ 5-րդի թոռներից)՝ վերջինս սեղանակիցներին, այդ թվում՝ Փամուքին հայտնել է, որ երազում է վերադառնալ Թուրքիա, բայց պատկերացում չունի, թե ինչով կարող է զբաղվել: Խոսակցության ընթացքում ծագել է միտք, որ արքայազնը կարող է զբոսավար աշխատել թանգարանի վերածված իր մանկության պալատում: Հենց այդ ժամանակ էլ Փամուքը մտորում է, թե ինչպես կլինի, եթե ինքն էլ իր սեփական հուշերի, անձնական կյանքի թանգարանում զբոսավար աշխատի: Փամուքի մոտ ծնվում է «սենտիմենտալ թանգարան» ունենալու մտահղացումը, որտեղ հավաքված պետք է լինեին ամենասովորական, գործածությունից դուրս մնացած առարկաները՝ որպես պայծառ, կարոտալի հիշողության ապացույցներ (**Орхан Памук**, *Текст открытой лекции в МГУ* 28 августа 2009 года [OpenSpace.ru, 03.09.2009]):

¹⁰⁹ Թանգարանում ցուցադրվում են համանուն վեպի 83 գլուխներում հիշատակվող առարկաները: Թանգարանի առաջին հարկում այցելուները կարող են տեսնել վեպի հերոսուհի Ֆուսունի ծխախոտների պատը, իսկ տանիքի տակ պատրաստված սենյակում՝ գլխավոր հերոս Քեմալի անկողինը (*Orhan Pamuk Opened the Museum of Innocence in Istanbul*, News, Orhan Pamuk Site, <http://orhanpamuk.net/news.aspx?id=26&lng=eng>, 09.08.2016):

¹¹⁰ Նույն տեղում:

թանգարանին շնորհել է «Տարվա եվրոպական թանգարան» մրցանակը (անգլ.՝ *European Museum of the Year Award*)¹¹¹:

Թանգարանի բացմանը հաջորդել է «Անմեղության առարկաներ» (թրք.՝ *Şeylerin Masumiyeti*) վերնագրով թանգարանային ցուցանմուշների ցուցակի հրատարակումը¹¹², որի համար 2014 թ. արժանացել է «Մերի Լինն Քոթզի մրցանակ»-ին (անգլ.՝ *The Mary Lynn Kotz Award*, ԱՄՆ)¹¹³:

Իսկ 2016 թ. հրատարակած «Անմեղության հիշողություններ» (թրք.՝ *Hatıraların Masumiyeti*) գրքում¹¹⁴ Փամուքը վերաշարադրել է «Անմեղության թանգարան» վեպի գլխավոր հերոսների՝ Ֆուսունի և Քեմալի սերը, վեպի կերպարներից՝ Այլայի աչքերով: Փամուքը Այլայի պատմությունը հարստացրել է Գրանտ Ջիի «Անմեղության հիշողություններ» կոչվող ֆիլմի համար գրված սցենարի հատվածներով¹¹⁵, ինչպես և նոր հատվածներ, վեպի վերաբերյալ տված հարցազրույցներ, թանգարան և ֆիլմ: Այն համարվել է կինոգիրք՝ սիրո, Ստամբուլի և հիշողությունների մասին¹¹⁶:

2010 թ. լույս է տեսել «Համայնապատկերից հատվածներ. Կյանք, փողոցներ, գրականություն» (թրք.՝ *Manzaradan Parçalar. Hayat, Sokaklar*,

¹¹¹ *The Museum of Innocence Received the European Museum of the Year Award*, Orhan Pamuk Site, News, <http://orhanpamuk.net/news.aspx?id=35&lng=eng>, 09. 08.2016.

¹¹² **Orhan Pamuk**, *Şeylerin Masumiyeti*, İstanbul, İletişim Yay., 2012.

2012 թ. աշնանը հրատարակվել է ցուցակի անգլերեն տարբերակը (*Biography*, Orhan Pamuk Site, <http://orhanpamuk.net/prizes.aspx>, 04.02.2009):

¹¹³ Այս մրցանակը շնորհվում է այն գրքին, որը գրվել է ի պատասխան արվեստի գործի (կամ գործերի) և միաժամանակ ներկայացնում է որևէ ստեղծագործական կամ գիտական աշխատանքի լավագույն օրինակը: Մրցանակը հիմնադրվել է 2013 թ. Վիրջինիայի գրադարանի և կերպարվեստի թանգարանի կողմից, անվանակոչվել է ի պատիվ Մերի Լինն Քոթզի, որը երկար տարիներ եղել է "ARTnews" թերթի խմբագիրը (*Awards and Honors*, Orhan Pamuk Site, <http://www.orhanpamuk.net/prizes.aspx>, 17.08.2016):

¹¹⁴ **Orhan Pamuk**, *Hatıraların Masumiyeti*, İstanbul, Yapı Kredi Yay., 2016.

¹¹⁵ Ֆիլմը ցուցադրվել է 2012 թ. մարտի 25-ին Թուրքիայում, այնուհետև Անգլիայում և Եվրոպայի այլ քաղաքներում: Փամուքը դրական է արտահայտվել ֆիլմի մասին և հավելել, որ «Այն միայն «Անմեղության թանգարան» վեպի հիման վրա չէ, այլ վերցված են մտքեր իր մյուս՝ «Սև գիրք», «Ստամբուլ», «Գլխումս խառնաշփոթ» գրքերից (*Hatıraların Masumiyeti: Orhan Pamuk Masumiyet Müzesi*, <https://indigodergisi.com/2016/02/hatıraların-masumiyeti-orhan-pamuk-masumiyet-muzesi/>, 16.08.2016):

¹¹⁶ *Innocence of Memories*, Books, Orhan Pamuk Site, <http://orhanpamuk.net/book.aspx?id=112&lng=eng>, 08. 08. 2016.

Edebiyat) էսսեների ժողովածուն¹¹⁷, որտեղ հեղինակն անկեղծորեն պատմում է ամենատարբեր բաների՝ մանկության տարիներից սկսած իր կյանքի և փորձի մասին, անդրադառնում հոր մահվանը, իր քաղաքական մտահոգություններին, թե ինչ է զգացել, երբ ֆուտբոլ է խաղացել կամ վեպեր է գրել, որոնք ընթացքում վերածվել են հեղինակի կողմից վարպետորեն նկարված հսկա համայնապատկերի՝ ընդգրկելով մանրամասնություններ, ինչպես օրինակ՝ ծխախոտի պատրաստումը, մոր պատրաստած պանրով կարկանդակները, մժեղների շարժը ամառային գիշերները, նավերի շարժընթացը Բոսֆորի վրայով և այլն:

Առհասարակ գիրքը ընթեցողին տանում է ճամփորդության երեխայի աչքերով՝ երկրաշարժերի, ճանապարհային պատահարների, կրոնների, հին քաղաքի հրդեհների և ավերումների միջով, մեկ անգամ ևս ապացուցելով, թե ինչքան նոր և հետաքրքիր կարող է լինել աշխարհը, երբ այն տեսանելի է դառնում Փամուքի աչքերով¹¹⁸:

2011 թ. «Նայիվ և զգայուն վիպասանը» (թրք.՝ *Saf ve Düşünceli Romancı*)¹¹⁹ խորագրի ներքո լույս է տեսել Փամուքի Հարվարդի համալսարանում իր ընթերցած Չարլս Նորթոն Էլիոթի վերաբերյալ դասախոսությունների գիրքը՝ զուգահեռ ներկայացնելով իր գրելու արվեստի և վիպասան լինելու՝ 35 տարվա մասնագիտական գաղտնիքները¹²⁰:

2013 թ. հրատարակվել է «Ես ծառ եմ» (թրք.՝ *Ben Bir Ağacım*)¹²¹ փոքրածավալ գիրքը, որտեղ Փամուքը ընդգրկել է իր չորս՝ «Սև գիրք», «Իմ անունը Կարմիր է», «Ջյուն», «Ստամբուլ. Հիշողություններ և քաղաք» վեպերից հատվածներ՝ ավելացումներով, որոնք ընթերցվում են որպես առանձին պատմություններ: Գիրքը կարելի է բնութագրել մեկ նախադասությունով՝ «Օրհան Փամուքը բոլորի համար»:

Գիրքն ունի նաև երկարաշունչ գլուխ՝ Փամուքի այդ տարիներին դեռևս չհրատարակված «Գլխումս խառնաշփոթ» (թրք.՝ *Kafamda Bir Tuhaflik*)

¹¹⁷ **Orhan Pamuk**, *Manzaradan Parçalar*, İstanbul, İletişim Yay., 2010.

¹¹⁸ *Fragments of the Landscape*, [Books, Orhan Pamuk Site](http://orhanpamuk.net/books), <http://orhanpamuk.net/book.aspx?id=103&lng=eng>, 08.08.2016.

¹¹⁹ **Orhan Pamuk**, *Saf ve Düşünceli Romancı*, İstanbul, İletişim Yay., 2011.

¹²⁰ *The Naive and the Sentimental Novelist has been Released in Turkish*, News, Orhan Pamuk Site, <http://orhanpamuk.net/news.aspx?id=24&lng=eng>, 08.08.2016.

¹²¹ **Orhan Pamuk**, *Ben Bir Ağacım*, İstanbul, Yapı Kredi Yay., 2013, 128 s..

վեպից, որտեղ պատմում է գլխավոր հերոս Մևուդ Քարաթաշի դպրոցական տարիների մասին¹²²:

2014 թ. Փամուքը ընթերցողներին է ներկայացրել արդեն իր իններորդ «Գլխումս խառնաշփոթ» (թրք.՝ *Kafamda Bir Tuhaflik*) վեպը¹²³, որն անմոռանալի սիրո պատմության և ժամանակակից էպիկական ժանրի օրինակ է: Պատմություն է Մևուդի և նրա սիրած աղջկա սիրո մասին: Վեպի գլխավոր հերոս Մևուդ Քարաթաշը փողոցում թուրքական ավանդական *pnqaw*¹²⁴ խմիչքի վաճառական է: Վեպի գործողությունների ժամանակաշրջանը ընդգրկում է 1969-2012 թթ.: Ուրվագծվում է Մևուդի կյանքի չորս փուլերը, որի ընթացքում էլ հերոսի կերպարով ներկայանում է քաղաքը, ժողովուրդը և ընդհանրապես Թուրքիայի Հանրապետությունում կատարվող վերափոխումները: Իսկ այս ընթացքում Մևուդը մշտապես մտորում է իր գլխում կատարվող «խառնաշփոթի» շուրջ, որը նրան առանձնացնում է այլ մարդկանցից¹²⁵:

2015 թ. վեպը երկրում արժանացել է երկու պատվավոր մրցանակների՝ «Այդըն Դոդան հիմնադրամի մրցանակ» (թրք.՝ *Aydın Doğan Vakfı Ödülü*)¹²⁶ և «Էրդալ Օզի գրական մրցանակ» (անգլ.՝ *Erdal Öz Literary Prize*)¹²⁸ և¹²⁹:

¹²² *I am a Tree*, Books, Orhan Pamuk Site,

<http://orhanpamuk.net/book.aspx?id=107&lng=eng>, 08.08.2016.

¹²³ **Orhan Pamuk**, *Kafamda Bir Tuhaflik*, İstanbul, Yapı Kredi Yay., 2014.

¹²⁴ Եգիպտացորենից, ցորենից, ածիկից, գարուց պատրաստված ոչ ալկոհոլային, կաթի նման խմիչք: Այն հայտնի է եղել 8-9-րդ դարերում Միջագետքի ժողովուրդների շրջանում: 10-րդ դարից սկսած ստացել է *pnqaw* անվանումը և տարածվել է նաև Կենտրոնական Ասիայի թուրքական ժողովուրդների մոտ, հետագայում՝ Կովկասում և Բալկաններում, այնուհետև Օսմանյան կայսրության ժամանակաշրջանում: Խմիչքը արգելվել է 16-րդ դարում, քանի որ սկսել են խմիչքի մեջ օփիում ավելացնել: Արդեն 17-րդ դարում Մեհմեդ 4-րդն այն դասել է ալկոհոլային խմիչքների շարքին և փակել է *pnqaw*ի խանութները:

¹²⁵ *Turkish Writer Orhan Pamuk to Release a New Book After Six-Year Break*,

<http://www.dailysabah.com/books/2014/12/08/turkish-writer-orhan-pamuk-to-release-a-new-book-after-sixyear-break>, 10.12.2014.

¹²⁶ Մրցանակի հիմնադրման հիմքում ընկած է հետևյալ փիլիսոփայությունը, որ հասարակական և մշակութային որևէ արդյունքի գնահատումը, խրախուսումը բարձրացնում է հասարակության կյանքի որակը: Այդ իսկ պատճառով մրցանակն ամեն տարի հանձնվում է արվեստի, գրականության, գիտության և տարբեր բնագավառներում՝ ազգային, միջազգային հարթակներում գովասանքի արժանացած մարդուն կամ կազմակերպություններին:

2016 թ. հրատարակել է «Կարմիրահեր կինը» (թրք.՝ *Kırmızı Saçlı Kadın*) խորագրով տասներորդ վեպը¹³⁰՝ հողափոր վարպետի և նրա աշակերտի մասին: Վեպ է գաղափարների մասին, որոնք կրում են ֆրանսիական կոնսյան փիլիսոփայության ավանդույթները: Գործողությունները տեղի են ունենում 1980-ականների Ստամբուլում: Վարպետ Մահմուդը և նրա աշակերտ Ջեմը նոր հորեր գտնելու համար օգտագործում են հին մեթոդներ, որն ինքնին խորհրդանշ է հնի և նորի պայքարի, սերունդների՝ հայրերի և զավակների գաղափարների, ավտորիտարիզմի և անհատականության, պետության և ազատության, ընթերցելու և տեսնելու մասին:

Դետեկտիվ ժանրի այս վեպը քննում է իրական պատմություն, որը տեղի է ունեցել երեսույն տարի առաջ Ստամբուլի մոտակայքում: Սպանության հետաքննությունը կատարվում է գրական քաղաքակրթությունների հիմքով՝ համադրելով երկու հիմնարար Արևելքի և Արևմուտքի առասպելները՝ Սոֆոկլեսի «Էդիպ Արքան» (որպես հայրասպանության պատմության օրինակ) և Ֆիրդուսիի «Ռուսթամ և

¹²⁷ 2015 թ. ապրիլի 16-ին Այդըն Դոդան հիմնադրամի հանձնախումբը 19-րդ մցանակը հանձնել է Օրհան Փամուքին հետևյալ ձևակերպմամբ. «Արևելք և Արևմուտք բնեռները վարպետորեն համախմբելու կարողության և աշխարհին թուրքական վեպը ներկայացնելու համար»: Հանձնաժողովը միաձայն, փակ քվեարկությամբ ընտրել է Փամուքին՝ «գրականության լավագույն վարպետին» գնահատականով: Մրցանակային ֆոնդը կազմել է 50,000 թուրքական լիրա (*Aydin Doğan Award presented to Orhan Pamuk*, Daily News, Leading News Source For Turkey and the Region, <http://www.hurriyetdailynews.com/aydin-dogan-award-presented-to-orhan-pamuk.aspx?pageID=238&nid=81201>, 17.08.2016):

¹²⁸ Էրդալ Օզը եղել է «Ջան» (թրք.՝ *Can*) հրատարակչատան հիմնադիրը (1981 թ.): Մահացել է 2006 թ.: Նրա մահից հետո՝ 2008 թ., Օզի ընտանիքը հիմնադրել է նրա անունով այս գրական մրցանակը: Մրցանակը հանձնվում է վերջին երեք տարիների ընթացքում աշխատանք հրատարակած գրողին: 2015 թ. սեպտեմբերի 15-ին մրցանակի պատմության մեջ արդեն 8-րդը հանձնվել է Օրհան Փամուքին: Մրցանակային ֆոնդը կազմել է 15,000 թուրքական լիրա: Փամուքն իր ողջույնի խոսքում ասել է. «Իմ և Էրդալ Օզի ընկերությունը 40 տարվա պատմություն ունի, 1983-1994 թթ. եղել է իմ հրատարակիչը, ընկերն ու խմբագիրը: Ես Օզից բավական շատ բան եմ սովորել՝ աշխատասիրություն, ուշադրություն, մտքի կայունություն (*Orhan Pamuk Receives Erdal Öz Literary Prize in Istanbul*, Daily News, Leading News Source for Turkey and the Region, <http://www.hurriyetdailynews.com/orhan-pamuk-receives-erdal-oz-literary-prize-in-istanbul.aspx?pageID=238&nID=88583&NewsCatID=386>, 17.08.2016):

¹²⁹ *Biography*, Orhan Pamuk Site, <http://orhanpamuk.net/biography.aspx>, 08.08.2016.

¹³⁰ **Orhan Pamuk**, *Kırmızı Saçlı Kadın*, İstanbul, Yapı Kredi Yay., 2016.

Զոհրապ» պատմությունը (որպես մանկասպանության պատմության օրինակ)¹³¹:

2016 թ. թարգմանել է սերբերեն «Geopoetika» Փամուքի պաշտոնական հրատարակիչը¹³², իսկ 2017 թ.՝ անգլերեն (անգլ.՝ *The Red-Haired Woman*): Վեպի իտալերեն թարգմանությունը՝ «*La donna dai capelli rossi*» հրատարակել է Էյնաուդին (անգլ.՝ *Einaudi*) 2016 թ. դեկտեմբեր ամսին, որն էլ 2017 թ. օգոստոսի 12-ին Իտալիայում ներկայացվել է «Լամպեդուսա գրական մրցանակ»-ին (անգլ.՝ *Lampedusa Literary Prize*)¹³³: Բնագիր լեզվից հայերենի թարգմանությունը հրատարակվել է 2017 թ.¹³⁴:

2021 թ. մարտ ամսին Փամուքը հրատարակում է «**Ժանտախտի գիշերները**» (թրք.՝ *Veba Geceleri*) վերնագրով պատմական վեպը¹³⁵, որի մասին մտածել է շուրջ 35 տարի, բայց ստեղծագործաբար աշխատել 5 տարի: Նախքան ամբողջական վեպի հրատարակումը՝ Փամուքը 2020 թ. ստեղծագործությունից մի գլուխ հրատարակել է թուրքական «*Gazete Duvar*» ինտերնետային թերթում:

Վեպի գործողությունների վայրն է Օսմանյան կայսրության 29-րդ նահանգի Մինգեր կղզին՝ 1901 թ., երբ կղզում բռնկված է եղել ժանտախտի երրորդ համաճարակը: Սուլթան Աբդուլհամիդը համաճարակը կանգնեցնելու նպատակով կղզի է ուղարկում Առողջապահության գլխավոր տեսուչ, քիմիկոս Բոնկովսկի փաշային, իսկ հետո երիտասարդ և հաջողակ բժիշկ Նուրիին:

Վեպում պատկերվում են համաճարակի, համաճարակով պայմանավորված արգելքներին դիմակայելու, ավանդույթների և մահվան վախի դեմ պայքարելու կարողությամբ օժտված երեք սիրո պատմություններ երիտասարդ բժշկի և պալատում բանտարկյալի կյանքով ապրող Մուրադ 5-րդի դստեր՝ Փաքիզե Սուլթանի, կղզում ապրող երիտասարդ և ազգայնական օսմանցի սպա, ավագ հարյուրապետ Քամիլի ու նրան սիրահարված Զեյնեփի, նաև նահանգապետ Սամի փաշայի և

¹³¹ *The Red-Haired Woman*, Books, Orhan Pamuk Site,

<http://orhanpamuk.net/book.aspx?id=111&lng=eng>, 08.08.2016.

¹³² *Orhan Pamuk receives "Milovan Vidaković" Award*, 21.12.2016,

<http://novisad2021.rs/en/orhan-pamuk-receives-milovan-vidakovic-award>, 23.02.2017.

¹³³ *"The Red-Haired Woman" Awarded with Lampedusa Prize in Italy*,

News, Orhan Pamuk Site, <http://orhanpamuk.net/news.aspx>, 07.08.2017.

¹³⁴ **Օրհան Փամուք**, *Գարմախեր կիներ*, թարգմանեց **Արփի Աթաբեկյանը**, Երևան, Անտարես հրատ., 2017, 272 էջ:

¹³⁵ **Orhan Pamuk**, *Veba Geceleri*, İstanbul, Yapı Kredi Yay., 2021, 544 s..

գեղեցկուհի Մարիկայի: Այսինքն, իրականում վեպը միաժամանակ իրենից ներկայացնում է քաղաքական և սիրային հետաքրքրաշարժ մի վեպ¹³⁶:

Եզրակացություն

Օրհան Փամուքը լինելով հանրապետական գաղափարներ կրող ընտանիքի զավակ, մշտապես զգացել և տեսել է իր ծայրահեղ կախվածությունն արևմտյան բանականությունից, որի ներկայությունը տեսանելի է նաև գործերում:

Այսպիսով, Օրհան Փամուքը հեղինակ է աշխարհի ընթերցասեր հասարակությանը դեռևս հայտնի 11 վեպերի և բազմազան թեմաներով գրված հոդված-գրույցների, կենսագրական և փոքրածավալ ստեղծագործությունների:

Եվ ժամանակակից թուրքական գրականության ամենավիճահարույց, ամենակարդացվող և գնայուն գրքերի այս ամբողջությունը Օրհան Փամուքին բերել է հռչակ և լայն ճանաչում տեղի և արտասահմանյան գրական աշխարհներում՝ թարգմանվելով աշխարհի առայժմ 60 լեզուներով և տարածվելով մոտավորապես 11 միլիոն օրինակով:

Օրհան Փամուքի աշխարհաստարած հաջողության գաղտնիքը պայմանավորվում է հատկապես նրա վարած երկակի «Մշակութային քաղաքականությամբ», ստեղծագործությունների պոլիէթնային և գաղափարական ուղղվածությամբ, որտեղ արտացոլվում են իսլամական և քրիստոնեական մշակույթներում գոյություն ունեցող հարցադրումները, նաև երկու աշխարհների՝ Արևմուտքի և Արևելքի փոխներթափանցումների, միմյանց մոտեցնելու ճանապարհների որոնումները, ավանդույթի և նորարարության մրցակցությամբ, որի ժամանակ միավորվում-հանգուցվում են արևելյան պատմվածքի ավանդույթները արևմտյան մոդեռնիզմի էլեմենտների հետ և ի վերջո ստեղծվում են «ինտելեկտուալ, սրամիտ և նրբագեղ» ոճով «հիանալի գեղեցկությամբ» աշխատանքներ:

Ամբողջացնելով հանդերձ մեր հոդվածը, պետք է նկատենք, որ Օրհան Փամուքի կենսագրությունը և ստեղծագործությունների մատենագիտությունը հարստանալու և լրացվելու է նորանոր տեղեկություններով, քանի որ գրողն ապրում և ստեղծագործում է մեր օրերում, որի համար գրելն ապրելակերպ է, այլ աշխարհներում լինելու մշտական ցանկություն և իրականությունից հեռանալու հանգրվան:

¹³⁶ *Orhan Pamuk yeni romanı ‘Veba Geceleri’ hakkında ilk kez kitaplık dergisine konuştu,* <http://www.milliyetsanat.com/haberler/edebiyat/orhan-pamuk-tan-tarihi-bir-roman-veba-geceleri-/10669>, 29.12.2021.

Օգտագործված գրականություն

1. Ալին Օզինյան, *Ով է Օրհան Փամուքը. Ընտանիքը, ընկերները, անհաջողությունները*, Առաջին մաս, 30. 12. 2005 թ., <http://www.alinozinian.wordpress.com>, 25. 07. 2016:
2. Անի Ավետիսյան [=Անի Ժ. Ավետիսյան], *Օրհան Փամուքը և իր «Մե գիրքը»*, Թուրքագիտական և օսմանագիտական հետազոտություններ, IV, Երևան, Ասողիկ հրատ., 2006, էջ 166-183:
3. Անի Ավետիսյան [=Անի Ժ. Ավետիսյան], *Օրհան Փամուքի «Սպիտակ ամրոց»-ը*, Բնօրրան, Հանդես Հայրենակցական Միությունների Խորհրդի, թիվ 1-4 (17-20), Երևան, 2007, էջ 231-236:
4. Անի Ավետիսյան [=Անի Ժ. Ավետիսյան], *Օրհան Փամուքի «Թուրքիայում 30,000 քուրդ է սպանուել, 1 միլիոն էլ հայ» արտայայտության յարուցած փոթորիկը*, Հայկազեան հայագիտական հանդես, հտ. ԼԵ, Պէյրուք, 2015, էջ 803-818:
5. Անի Ավետիսյան [=Անի Ժ. Ավետիսյան], *Պատմական Կարս քաղաքը Օրհան Փամուքի «Ջուն» վեպում*, Հայոց Ցեղասպանություն-100 Ճանաչումից՝ հատուցում, Միջազգային գիտաժողովի զեկուցումների ժողովածու, Երևան, 2016 թ., էջ 709-718:
6. Արվեստագետի արտահայտվելու ազատությունը նաև մեր ազատությունն է, Ազգ. օրաթերթ, թիվ 16, Հավելված մշակույթ, (թարգմանությունը՝ Հակոբ Ծուլիկյանի), 28.10.2006:
7. Ստամբուլի ճակատագիրն իմ ճակատագիրն է, Խոստովանում է վիպասան Օրհան Փամուքը, Ազգ. օրաթերթ, 23. 04. 2005:
8. Փամուկի ուղով, [Փամուքի հարցազրույցը ռուս լրագրող Գլեբ Շուլպակովի հետ], Երևանի համալսարան, ԵՊՀ պաշտոնաթերթ, ամսաթերթ, հ. 1, մարտ 2007:
9. Օրհան Փամուքը Գերմանիայում արժանացել է խաղաղության մրցանակի, Ազգ. օրաթերթ, թիվ 192 (3358), 25 հոկտեմբեր 2005:
10. Թուրք հայտնի գրող Օրհան Փամուկը Պրահայում. «Գրում եմ, որպեսզի երջանիկ լինեմ», 19 ապրիլի, 2013, <http://orer.eu/hy/>, 10.11.2016:
11. Թուրք գրող Օրհան Փամուկի «Լռության տուն» վեպը առաջադրվել է «Asian Booker» մրցանակին, 10.01.2013, <http://www.tert.am/am/news/2013/01/10/orhan-pamuk/671070>, 05.06.2017:

12. Սարակոյի պետական թատրոնը մտադիր է բեմադրել Օրհան Փամուքի «Իմ անունը Կարմիր է» վեպը, 11 օգոստոս 2010, <http://www.panarmenian.net/arm/news/52086>, 20.07.2016:
13. Օրհան Փամուք, «Ես ինձ ավելի արհեստավոր եմ զգում, քան՝ արվեստագետ», «SPIEGEL»-ի հարցազրույցը Օրհան Փամուքի հետ, (անգլ. թարգմ.՝ Դվին Գալստյան), <http://lit-bridge.com>, 20.07.2016:
14. Փամուքի «Ձյունը» աճուրդում վաճառվել է 13 հազ. դոլարով, 4 դեկտեմբեր 2014, <http://www.civilnet.am/news/2014/12/04/orhan-pamuk-christies-auction-snow-sold/253852>, 05.08.2017:
15. Алексей Золотницкий, Орхан Памук: “Я пишу ради красоты”, www.naviny.by/rubrics/culture, 12. 10.2006.
16. Александр Колесников, Русский турецкий писатель [Gazeta.Ru, 18.10.2005], 25.10.2007.
17. Анатолий Стародубец, Орхан Памук: Чувство грусти перевозжу в ощущение счастья, Из досье "Эхо планеты", www.Day.az, 25.12.2009.
18. Артем Ефимов, Сентиментальный музей Орхана Памука, [Лента.Ру, 28.08.2009], www.noblit.ru, 25.11.2014.
19. Борис Дубин, Вступление, Орхан Памук, Черная книга, www.lib.votkinsk.net, 21.01.2006.
20. Волков Валерий, Опубликован первый список премии Медичи, www.reshto.ru, 12.10.2005:
21. Орхан Памук, Другие цвета, Перевод: Аполлинария Сергеевна Аврутина, Амфора; Санкт Петербург, 2008.
22. Орхан Памук-Лауреат IMPAC, www.7news.ru, 22.01.2006.
23. Орхан Памук, "Я очень скромный человек", www.zn.ua, 25.05.2009.
24. Орхан Памук закончил новый роман, www.info.ru/tour-news, 03. 05. 2007.
25. Орхан Памук, Текст открытой лекции в МГУ 28 августа 2009 года [OpenSpace.ru, 03.09.2009].
26. Aydın Doğan Award presented to Orhan Pamuk, Daily News, Leading News Source For Turkey and the Region, <http://www.hurriyetdailynews.com/aydin-dogan-award-presented-to-orhan-pamuk.aspx?pageID=238&nid=81201>, 17.08.2016.
27. Hande Gurses, Fictional Displacements: An Analysis of Three Texts by Orhan Pamuk (A Thesis submitted in fulfilment of the requirements for the PhD Degree at UCL), June 2012, (pdf version).
28. Isaac Chotiner, "I Don't Write My Books to Explain My Country to Others", http://www.slate.com/articles/news_and_politics/interrogation, 21.08.2017.

29. **Maureen Freely**, Talking Turkey, Interviews and Reviews, Orhan Pamuk Site, <http://orhanpamuk.net/interviews.aspx>, 04.11.2016.
30. **Nazan Haydari and Mujdat Pakkan**, Orhan Pamuk's Biography, www.opamuk.com, 30.06.2005.
31. **Orhan Pamuk**, Istanbul Memories and the City, (Translated from the Turkish by Maureen Freely), Vintage International Vintage Books A Division of Random House, New York, 2006.
32. **Orhan Pamuk**, Biography, <http://www.biyografi.net/kisiyrinti.asp?kisiid=2665>, 29.07.2016.
33. **Orhan Pamuk Site** (Biography, Books, Awards and Honors, News, Interviews and Reviews), [Orhan Pamuk Official Web Site](http://OrhanPamukOfficialWebSite), 04.08.2016.
34. **Orhan Pamuk Receives Erdal Öz Literary Prize in Istanbul**, Daily News, Leading News Source for Turkey and the Region, <http://www.hurriyetdailynews.com/orhan-pamuk-receives-erdal-oz-literary-prize-in-istanbul.aspx?pageID=238&nID=88583&NewsCatID=386>, 17.08.2016.
35. **Orhan Pamuk Receives "Milovan Vidaković" Award**, 21.12.2016, <http://novisad2021.rs/en/orhan-pamuk-receives-milovan-vidakovic-award>, 23.02.2017.
36. **Pamuk Believed to be in Exile in US**, The Guardian, <https://www.theguardian.com/books/2007/feb/14/nobelprize.awardsandprizes>, 14.02.2007.
37. **Robert Cottrell**, To Have and Have Not, Interviews and Reviews, Orhan Pamuk Site, <http://orhanpamuk.net/interviews.aspx>, <http://orhanpamuk.net/popuppage.aspx?id=25&lng=eng>, 04.11.2016.
38. **Orhan Pamuk**, Öteki Renkler, Seçme Yazılar ve Bir Hikâye, İstanbul, İletişim Yay., 1999.
39. **Orhan Pamuk**, Kar, İstanbul, İletişim Yay., 2002.
40. **Hatıraların Masumiyeti**: Orhan Pamuk Masumiyet Müzesi, <https://indigodergisi.com/2016/02/hatiralarin-masumiyeti-orhan-pamuk-masumiyet-muzesi/>, 16.08.2016.
41. **Orhan Pamuk'un "Kar" adlı romanından uyarlanan "Kar" (Schnee) oyununu İstanbul'da sahneledi**. Oyun bu akşam tekrarlanacak, <http://www.trt.net.tr>, 04.03.2009.
42. **Orhan Pamuk'a Ödülü Alman İstihbaratı verdirdi**, Aydınlık, 30 Ekim 2005, www.aydinlikgazete.com, 30.10.2005.
43. **Orhan Pamuk yeni romanı 'Veba Geceleri' hakkında ilk kez kitaplık dergisine konuştu**,

<http://www.milliyetsanat.com/haberler/edebiyat/orhan-pamuk-tan-tarihi-bir-roman-veba-geceleri-/10669>, 29.12.2021.

44. **Serdar Kuru**, Orhan Pamuk Dosyası, Kuş Yumurtası Üretmek ve Orhan Pamuk, www.guvercinevi.net, 25.09.2005.

Ани Ж. Аветисян

Жизнь и творчества Орхана Памука

Заключение

Ключевые слова и выражения: Орхан Памук, турецкая литература, роман, турецкий роман, Джевдет-бей и его сыновья, Дом тишины, Белый замок, Черная книга, Новая жизнь, Меня зовут Красный, Снег, Музей невинности, Мои странные мысли, Рыжеволосая женщина, Ночи Чумы.

Орхан Памук, будучи сыном семьи с республиканскими идеями, всегда чувствовал и видел свою крайнюю зависимость от Западного интеллекта, присутствие которого также заметно в его работах.

Так, Орхан Памук является автором 11 романов и статей-бесед, биографических и небольших произведений, написанных на различные темы, которые до сих пор известны мировой читающей публике.

И этот набор самых противоречивых, читаемых и пользующихся спросом книг современной турецкой литературы принес Орхану Памуку известность в местном и зарубежном литературном мире, будучи переведенным на 60 языков и распространенным тиражом примерно в 11 миллионов экземпляров.

Секрет всемирного успеха Орхана Памука обусловлен, в частности, его двойной «Культурной политикой», сюжетной и идеологической направленностью произведений, в которых отражаются вопросы существующие в исламской и христианской культурах, а также взаимопроникновение двух миров-Запада и Востока, поиском путей сближения друг с другом, конкуренцией традиций и инноваций, во время которой традиции восточного повествования соединяются с элементами западного модернизма и, наконец, создаются произведения “чудесной красоты” в “интеллектуальном, остроумном и изящном” стиле.

Завершая нашу статью, отметим, что биография и библиография произведений Орхана Памука будет обогащаться и наполняться новой информацией, ведь писатель живет и творит в наши дни, для которого писательство – это образ жизни, постоянное стремление быть в других мирах и убежище от реальности.

The life and writings of Orhan Pamuk

Conclusion

Key words and expressions: Orhan Pamuk, Turkish Literature, Novel, Turkish Novel, Cevdet Bey and His Sons, The Silent House, The White Castle, The Black Book, New Life, My Name is Red, Snow, Museum of Innocence, A Strangeness in My Mind, The Red-Haired Woman, Nights of Plague.

Orhan Pamuk, being a son of a family with republican ideas, has always felt and seen his strong dependence on Western intelligence, the expression of which is also visible in his works.

Thus, Orhan Pamuk is the author of 11 novels and articles-conversations, biographical and small-scale works written on various topics, which are still known to the world's reading-society.

And this set of the most controversial, most read and bestselling books of modern Turkish literature has brought Orhan Pamuk the fame and wide recognition in the local and foreign literary worlds, being translated into 60 languages and distributed in approximately 11 million copies.

The secret of Orhan Pamuk's worldwide success is determined especially by his dual "Cultural Politics", the plot and ideological direction of his works, which reflect the questions existing in Islamic and Christian cultures, as well as the interpenetrations of the two worlds: the West and East, the search for ways to bring each other closer together, with a competition of tradition and innovation, in which the traditions of Eastern storytelling are combined with elements of Western modernism, ultimately creating works of "exquisite beauty" in an "intellectual, witty and elegant" style.

While completing our article, we should note that the biography and bibliography of Orhan Pamuk's works will be enriched with new information, because the writer lives and creates in our days, for whom writing is a way of life, a constant desire to be in other worlds, and a refuge from reality.

Խմբագրություն է ուղարկվել 29.12.2022թ.

Հանձնարարվել է գրախոսության 01.14.2023թ.

Տպագրության է հանձնարարվել 13.03.2023թ.

ՊԱՏՈՒԹՅՈՒՆ

ԱՆՆԱ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

Երևանի պետական համալսարան
Հայոց պատմության ամբիոնի ասպիրանտ
Էլիասցե՝ annatadevosyan800@gmail.com

**ՍՈՑԻԱԼ-ԴԵՄՈԿՐԱՏԱԿԱՆ ՀՆՉԱԿՑԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆՆ ԱՄԵՐԻԿԱՅՈՒՄ 1908-1914ԹԹ.**

Ամփոփում

1908թ. երիտթուրքերը Թուրքիայում իրականացրեցին հեղաշրջում և իշխանությունը վերցրին իրենց ձեռքը: Երկրում հաստատվեցին սահմանադրական կարգեր, ինչը հնարավորություն ընձեռեց հայ քաղաքական ուժերին ազատ գործունեություն ծավալելու: Ողջունելով երկրում քաղաքական փոփոխությունները՝ հայ քաղաքական կառույցներից՝ Հնչակյան կուսակցությունը, զգուշավոր մոտեցում դրսևորեց նոր քաղաքական ուժի նկատմամբ: Հասկանալով երիտթուրքերի ազգայնամոլ էությունը՝ հնչակյանները իրենց շրջափերականներում հրատապ խնդիր էին համարում ժողովրդի ինքնապաշտպանության նախապատրաստումն ու զինումը: Կուսակցության կենտրոնական վարչությունը հանձնարարում է կուսակցության մասնաճյուղերին շարունակել տարածել կուսակցության գաղափարները՝ բացառելով անջատողական ցանկացած գործելակերպ: Այսպես նման մոտեցումը տարածվեց նաև Ամերիկայում գտնվող հնչակյան կուսակցության մասնաճյուղի վրա: Այն առաջադրել էր ընդունել նոր փոփոխությունները, սակայն, զինման և այդ գործի աջակցությունը, նույնպես շարունակական բնույթ էր կրելու:

Հայ քաղաքական կուսակցություններից՝ Սոցիալ-դեմոկրատական հնչակյան կուսակցությունը, Ամերիկայում 1908-1914 թթ. որոշակի քայլեր ձեռնարկեց արևմտահայերի պաշտպանության համար:

1908 թ. Սոցիալ-Դեմոկրատական Հնչակյան կուսակցությունը փորձ է կատարում իրականացնել արևմտահայերի ինքնապաշտպանությունը սահմանադրական ճանապարհով. այս հիմքով Ամերիկայում կուսակցությունը որոշում է նյութապես աջակցել Կենտրոնին արևմտահայերի ազատագրման հարցում և օգտագործել իր ազդեցությունը տեղում այդ գործը կազմակերպելու համար: Կուսակցության ազդեցությունն ավելացնելու

Հիմք ընդունելով առկա փաստերը, պարզ է դառնում, որ կուսակցությունը, շեղվելով իր գլխավոր նպատակից ունեցած միջոցները հատկացնում է ոչ թե տեղում արևմտահայերի աջակցությանը, այլ թերթի հրատարակմանը: Այս ամենից կարելի է եզրակացնել, որ 1908-14 թթ. ինչպես Ամերիկայում, այնպես էլ այլ վայրերում կուսակցությունը արևմտահայերի ինքնապաշտպանության հարցում լիարժեք և արդյունավետ գործունեություն չծավալեց:

Բանալի բառեր և արտահայտություններ. Կենտրոնական վարչություն, Օսմանյան կայսրություն, որոշում, հանգանակություն:

Ներածություն

Սույն հոդվածով մեր առջև խնդիր ենք դրել առկա աղբյուրների և արխիվային նյութերի հիման վրա ցույց տալ Ս.Դ.Հ.Կ գործունեությունն Ամերիկայում 1908-14 թթ.:

Հայ քաղաքական կուսակցություններից՝ Սոցիալ-դեմոկրատական հնչակյան կուսակցությունը, Ամերիկայում 1908-1914 թթ. որոշակի քայլեր ձեռնարկեց արևմտահայերի շահերի պաշտպանության համար:

1908 թ. Ս.Դ.Հ.Կ փորձ է կատարում իրականացնել արևմտահայերի ինքնապաշտպանությունը սահմանադրական ճանապարհով. այս հիմքով Ամերիկայում կուսակցությունը որոշում է նյութապես աջակցել Կենտրոնին արևմտահայերի ազատագրման հարցում և օգտագործել իր ազդեցությունը տեղում այդ գործը կազմակերպելու համար: Կուսակցությունն Ամերիկայում նույնպես ընդունեց մի շարք շրջափերականներ, որոշումներ այդ ժամանակաշրջանում հայության առջև դրված խնդիրը լուծելու ուղղությամբ: Այդ որոշումները, սակայն այդպես էլ գործողության չվերաճեցին:

Հայոց ցեղասպանության իրականացման նախօրեին Ամերիկայում կուսակցության գործունեության ուսումնասիրությունը նույնպես կարևորվել է, քանի որ մասնաճյուղի օրինակով հնարավոր է հասկանալ կուսակցության գործունեությունն ու դրա նշանակությունը:

Ամերիկայում Ս.Դ.Հ. Կուսակցությունը կարևոր դեր է խաղացել տեղում հայության համախմբման, արևմտահայերի ազատագրման ծրագրերի ներկայացման գործում: Մասնաճյուղն իր պաշտոնաթերթ <<Երիտասարդ Հայաստան>>-ի միջոցով իրականացրել է կուսակցության գաղափարական մոտեցումների, դրանց իրականացման, մյուս մասնաճյուղերի հետ կապի և գործունեության պարզաբանման խնդիրները:

Մեթոդաբանություն

Թեմայի ուսումնասիրության ընթացքում կիրառել ենք քննական, վերլուծական մեթոդներ: Աշխատանքի աղբյուրագիտական բազան համալրելու համար օգտվել ենք արխիվային նյութերից, և այլ տեսական ուսումնասիրություններից:

* * *

1908-14 թթ. Հնչակյան կենտրոնական վարչության հետ հարաբերությունների մանրամասնությունների, նրա ազդեցության պարզաբանումը հնարավոր է դառնում Հայաստանի Ազգային արխիվում Ներսես Փիլիկյանի անունը կրող ֆոնդի փաստաթղթերի շնորհիվ: Ն. Փիլիկյանը եղել է Հնչակյան կուսակցության համախոհներից և գործել կուսակցության ամերիկյան մասնաճյուղում: Նա հետագայում եկել է Արևելյան Հայաստան և իր տպավորությունների մասին գրել է հետևյալը Մեսրոպ Լևոնին ուղղված նամակում. «...եղա Հայաստանի գրեթե բերոր շրջաններում և հանդիպեցի և՛ գյուղացի աշխատավորներին, և՛ վարչական ներկայացուցիչների՝ հասկանալու վեջիններիս վերաբերմունքը մեր նպատակի և կուսակցության նկատմամբ...»¹: Հոդվածում փորձ ենք կատարել ներկայացնել կուսակցության ռազմավարական առանձնահատկությունները, ուստի պետք է նախ անդրադառնանք 1908 թ. Օսմանյան Թուրքիայում ծավալվող դեպքերին և դրանց հնչակյան ամերիկյան շրջանի դիրքորոշմանը:

Հնչակյան կուսակցությունը Ամերիկայում:

1908 թ. երիտթուրքական հեղաշրջումից հետո Ն. Փիլիկյանը գրում է. «Մենք անվտանգ քաջությունով պետք է կռվենք մեր հայրենի հողի համար, ուր որ կը հանգչին մեր նախնիների ոսկորները, և ուր կը գտնվեն մեր պատմական անցեալի յիշատակները: Մեր դատը արդար է և ազնիվ: Մենք պետք է համերաշխելով համախմբվենք առանց կրոնի և քաղաքական խտրութեան, ծառայենք Ազատութեան գործին անշահախնդրորեն, ինչպես մի սրբութիւն այն ատեն հայն կը լինի ազատ...»:

Հնչակյաններն, այսուհանդերձ, հանդես էին գալիս նմանատիպ հայտարարություններով, պահպանելով զգուշավոր դիրքորոշում երիտթուրքերի նկատմամբ: Նրանք համագործակցում էին ավելի լիբերալ գործիչ իշխան Սաբահեդդինի հետ: Վերջինս, ի տարբերություն այլ երիտթուրքերի, հանդես էր գալիս Օսմանյան կայսրության ազգային փոքրամասնությունների իրավունքների ընդլայնման և

¹ ԳԱԹ (Գրականության և Արվեստի թանգարան), գ. 62, թ. 2:

ապակենտրոնացման կոչերով: Կուսակցության դիրքորոշումը հստակեցվում է 1908 թ. նոյեմբերի 24-ին Փարիզից կենտրոնական վարչության մասնաճյուղերին ուղղված շրջաբերականով, որից պարզ է դառնում, որ Սահմանադրության առկայության պայմաններում հայ ժողովուրդը սեպարատիստական (անջատողական) ձգտումներ չունի: Շրջաբերականում նախատեսվում էր նաև «զինել ժողովրդին նոր տեսակի զենքերով, որն անհրաժեշտ է ինքնապաշտպանության համար»: Ստացվում է, որ հնչակյանները, քաջատեղյակ երիտթուրքերի ազգայնամոլությանը, ի սկզբանե դրել են արևմտահայության զինման խնդիրը՝ կանխազգալով սպասվող վտանգը:

1908թ. Թուրքիայում քաղաքական փոփոխություններից հետո Հնչակյան կուսակցության կենտրոնական օրգան «Հնչակ»-ի հրապարակումներից հստակ են դառնում կուսակցության երկու՝ Հայաստանի ինքնավարության և հայ ժողովրդի ինքնապաշտպանության նախապատրաստման նպատակները: Չնայած երիտթուրքերի նկատմամբ հնչակյանների դիրքորոշմանը՝ Օսմանյան խորհրդարանի պատգամավորների թվում էր նաև հնչակյան գործիչ Մուրադը: Վերջինս ակտիվ գործունեություն ծավալած անդամներից էր և պաշտպանում էր ինչպես ժողովրդավարության սկզբունքները, այնպես էլ Օսմանյան կայսրության հպատակ ժողովուրդների տեղական ինքնավարության սկզբունքը:

Հիմք ընդունելով նման դիրքորոշումը կուսակցության ամերիկյան մասնաճյուղի հրապարակած շրջաբերականում /1908 թ. նոյեմբեր./, կարդում ենք. <<Հաշվի առնելով Թուրքիայի քաղաքական փոփոխությունները Հնչակյան կենտրոնական վարչության օրինակով, Ամերիկյան մասնաճյուղը հաստատում է, որ հեղափոխության առաջին շեփորը փչող կուսակցությունը պետք է համախմբի և կազմակերպի իր ուժերը և հաստատուն պահի սահմանափակ ազատությունը, ընդլայնի այն և զենք պատրաստի գալիք խռովությունների ժամանակ կազմ ու պատրաստ լինելու համար: Կարևոր տեղ է հատկացվում «Երկիր սլանալու» գործի նյութական աջակցության կազմակերպմանը, միաժամանակ նախատեսվում էր շրջաբերականի որոշումը տարածել այլ մասնաճյուղեր, որպեսզի դրանք բոլորը ևս կատարեին իրենց նյութական և բարոյական պարտականությունները²:

1909թ. հուլիսի 16-ին ամերիկյան շրջանի կենտրոնական վարչությունը շրջաբերական է հղում Արևմտյան Հայաստանում

² Հայաստանի Ազգային արխիվ (ՀԱԱ), ֆ.408, ց.1, գ. 85, թ.2 :

կուսակցության նոր մասնաճյուղի ձևավորման և Ադանայի հայ բնակչությանը օգնություն ցույց տալու մասին: Ամերիկյան վարչությունը կոչ է անում օգնություն ցույց տալ Ադանայի հայ բնակչությանը՝ հաշվի առնելով տեղի հայության օրհասական վիճակը: Ինչ վերաբերում է նոր մասնաճյուղերին, ապա այդ մասին ունեցած տեղեկությունները ոգևորիչ են այն առումով, որ կուսակցության դրոշի տակ հավաքվողների թիվը գնալով ավելանում էր, հետևաբար ժողովրդի շրջանում հավատ է առաջացել այդ կուսակցության նպատակների իրականացման ուղղությամբ:

Կուսակցության Ամերիկյան մասնաճյուղի ազդեցությունը մեծ էր հատկապես Խարբերդում: Կուսակցությունը Խարբերդի մասնաճյուղին ցուցաբերում է հատկապես նյութական աջակցություն, ինչը ծառայում էր տեղում կրթական գործի կազմակերպմանը: Փոխադարձ համագործակցության արդյունքում ամերիկյան մասնաճյուղի գլխավոր մարմինը՝ Գործադիր Հանձնախումբը բրոշյուր հրատարակելու գործով էր զբաղված և հույսեր կային, որ մասնաճյուղը նյութապես կաջակցի թերթին հրատարակման համար: Շրջաբերականում կարևորվում էին անդամավճարների փոխանցման վերաբերյալ տեղեկությունները, այնուհետև արձանագրվում էր, որ խնդիրը դրականորեն կարելի է լուծել Փարիզում գտնվող ընկ. Շահումյանի/ թավրիզցի Ալեքանդր Անդրիասյան/ միջոցով որոշակի գումար հասցնելով «Երիտասարդ Հայաստանի» հրատարակման համար³ : Այսպիսով նյութական աջակցությունն ու համագործակցությունը էապես նպաստում էր կուսակցության ազդեցության ամրապնդմանը և նպատակների իրագործմանը:

1909 թ. սեպտեմբեր 15-ին Գործադիր հանձնախումբը նոր շրջաբերական /N11/ է տարածում Թուրքիայում ծավալված իրադարձությունների և պատգամավորական ժողովի վերաբերյալ, վերլուծում քաղաքական փոփոխությունները՝ դրանք անվանելով «անակնկալներու վայր», այնուհետև նշում, որ գլխավոր խնդիրները մոռացած պետությունը զբաղված է հայ քաղաքական կուսակցություններին ասպարեզից վերացնելու խնդրով, միաժամանակ շարունակելով իրենց հայաջինջ քաղաքականությունը: Հնչակյան կուսակցությունը, հավատարիմ էր իր ավանդույթներին, ինչպես համիդյան, այնպես էլ այս շրջանում, կարևոր էր համարում ժողովրդի առանձին հատվածների համախմբումը և դրանց միավորումը Կենտրոնական Գլխավոր Հանձնախմբի շուրջ: Մասնաճյուղի արդյունավետ գործունեության կազմակերպման գլխավոր

³ ՀԱՍ, ֆ. 408, ց.1, գ. 87. թ 2:

խնդիրը մնում է «Երիտասարդ Հայաստան»-ի հրատարակումը, որն իրականացվում էր մասնաճյուղերի փոխանցած անդամավճարների շնորհիվ: Այս շրջանում ամերիկյան մասնաճյուղի նյութական վիճակը բավական բարդ էր, ուստի կենտրոնը դիմում է հատկապես այն մասնաճյուղերին, որոնք նյութական աջակցություն չեն ցուցաբերել, ու հորդորում պատրաստակամություն հայտնել գործը իրականացնելու հարցում:

Այդ ընթացքում Գլխավոր Գործադիր հանձնախումբը քայլեր է կատարում Նյու-Յորքի մասնաճյուղի մի քանի անդամների /Պ. Գասպարյան, Մ. Շամախյան, Թ. Ավիտիսեան/ գործողությունները գնահատելու վերաբերյալ: Այս շրջաբերականից պարզ է դառնում ամերիկյան մասնաճյուղին վերոնշյալ դիմումներից հետո տրամադրած անդամավճարների չափը: Այսպես. Հատուկ Հանձնախումբի ստացած է հետևյալ անդամավճարները մասնաճյուղերից՝ Նյու Պրինթըն 20 դոլար, Փորթլետ- 40 դոլար, Համիլթը- 65 դոլ., Ս. Քաթարիա -60դոլար, Տըստես - 11դոլ, Բեյսինա 85 դոլ., Կոլտ 23 դոլ, Պրատֆորտ 100դոլ., սրան ավելացվում է որպես փոխառություն ընկ. Պոդիկեանի կողմից տրված 100 դոլ, Միլֆրեթից՝ ԸՆԿ. Միրայախյանի 100 դոլ., ընդամենը 714 դոլար 50 սենտ: Մյուս մասնաճյուղերը պիտի հետևեին այս օրինակին օրինակ, Ֆիլադելֆիայի մասնաճյուղը 2 տարվա ընթացքում բավական գումար էր փոխանցել: Կարևոր էր համարվում նաև քարոզչական նպատակներով երգարանի հրատարակությունը: Այստեղ քննարկվում էին նաև հնչակյաններ Իզմիրյանի, Բ. Վարազդատի դեմ հերթական անիմաստ ամբաստանությունները: Նման բանասրկությունների հեղինակը «Հնչակյան զինվորական» անունով ստորագրող Պաղդասար Գասպարյանն է (վերջինս Կահիրեում դավաճանական քայլերից հետո հանդես է գալիս այլ անունով):

Հնչակյան կուսակցության 6-րդ պատգամավորական ժողովը ամերիկյան շրջանի որոշումների և անելիքների հստակեցման համար վճռորոշ նշանակություն ունեցավ: Ժողովը բացվեց 1909թ. հուլիսի 12-ին Կ.Պոլսում և տևեց չորս ամիս: Մասնակցում էին Թուրքիայի, Ռուսաստանի, Կիպրոսի, Պարսկաստանի, Ամերիկայի, Ռումինիայի, Եգիպտոսի 124 հնչակյան մասնաճյուղերից 79 հոգի՝ 108 պատգամավորական ձայնով: Ռուսաստանից պատգամավորներ էին Ստ. Սապահ-Գյուլյանը, Սյունիքը, Փարամազը/Մատթեոս Սարգսյան/, Ամերիկայից՝ Ն. Փիլիկյանը, Օհան Գասպարյանը, Թուրքիայից՝ Մուրադը, Արամ Աչըքպաշյանը և այլք: Պատգամավորական ժողովի գլխավոր խնդիրն էր վերջնականապես հստակեցնել Օսմանյան պետության հանդեպ իր դիրքորոշումը: Ժողովը բացվեց Փարամազի նախագահությամբ և Ն. Փիլիկյանի քարտուղարությամբ: Հաջորդ նիստում /Փրովիտենս, նոյեմբերի 27/ 3

հոգուց բաղկացած հանձնաժողովը որոշում է քննարկվելիք հարցերը, որենք էին «Երիտասարդ Հայաստան»-ի հրատարակումը և հրատարակման ուղղությունը, տեղափոխությունը Բոստոն, կուսակցության դիրքորոշումը այլ կուսակցությունների նկատմամբ, անդամավճարների ավելացում, հաշվեքննիչ հանձնաժողովի ստեղծում, անպարտաճանաչ մասնաճյուղերի հարցեր, անդամների բաժանորդագրությունը, անդամավճարների, երգարանի, արտաքսված անդամների և այլ կազմակերպչական հարցեր»⁴ :

Հայության, այդ թվում՝ Հնչակյան կուսակցության համար բավական բարդ դրություն ստեղծվեց երիտթուրքերի 1911թ. Սալոնիկի գաղտնի ժողովից հետո: Այն դարձավ իթթիհատականների հակահայկական դիրքորոշման գագաթնակետը: Ժողովը հաստատեց մի հայեցակարգ, որի արդյունքը դարձավ Հայոց ցեղասպանությունը: Այս պարագայում 1912 թ. փետրվարի 7-ին Հնչակյան կուսակցության և Օսմանյան Թուրքիայի ընդդիմադիր կուսակցության՝ Իթիլաֆի միջև ստորագրվեց համագործակցության պայմանագիր, որից հետո հնչակյանները շրջաբերական ուղղեցին մասնաճյուղեր՝ իթիլաֆականների հետ համագործակցելու կոչով: Պետք է նշել, որ այդ պայմանագիրը կասեցվեց իթիլաֆի արևմտահայերի ազգային հարցի հետ կապված դիրքորոշման պատժառով⁵: Հնչակյան կուսակցության ամերիկյան մասնաճյուղի ընդունած որոշումները և գործունեություն արդյունքներն հետևյալն էին: 1911 թ. սեպտեմբերի 3-ին Վաքենիի մասնաճյուղը ժողով է հրավիրում և որոշում ընդունում քույր մասնաճյուղերից օժանդակություն ստանալու վերաբերյալ: Այնուհետև առաջարկվում է «Երիտասարդ Հայաստանի» խմբագրական կազմը թողնել նույնը՝ Ս. Խան, Հրադուխտ, Գասպարյան: Այսուհանդերձ նյութական աջակցությունը մնում է օրակագային խնդիր: 1912 թ. մարտի 2-3-ը Բոստոնում հրավիրված ամերիկյան շրջանի ժողովում հստակեցվում են մասնաճյուղերի մասնակցության ու կազմակերպական հարցերը, որոշվում է առժամանակյա մարմին ընտրել Գործադիր հանձնախումբը, որի գլխավոր խնդիրը պիտի լիներ ամերիկյան մասնաճյուղի խնդիրների համակարգումը: Սա ժամանակավոր մարմին էր լինելու և դեռ պիտի համաձայնեցվեր մասնաճյուղերի հետ: Մայիսի 12-ին Չըլսի մայիսի 4-ին Փրովիտենսում հրավիրված ժողովից հետո հաստատվում է Գործադիր հանձնախումբը, որի գործունեության

⁴ ՀԱԱ, ֆ. 408, ց.1, գ. 89, թ.7:

⁵ Ճիզմանեան Մ., Պատմութիւն ամերիկայահայ քաղաքական կուսակցութեանց, Ֆրէզնո, 1930, էջ 141:

առանցքում դրվում է ոչ միայն գաղափարական, այլև ամենագլխավորը նյութական օժանդակության խնդիրը կենտրոնին: Բայց ինչպես երևում է շրջաբերականից այդ աջակցությունը ուշանում է և գործնական կիրառություն չի գտնում:

1912 թ. օգոստոսի 12-ին մեծ դժգոհություն է առաջանում՝ կապված հանգանակությունների և մասնաճյուղերի կողմից նյութական միջոցների տրամադրման հետ: Վիճակը բավական լուրջ էր և մթնոլորտը անորոշությամբ լեցուն: Այսպիսի պայմաններում պատգամավոր Ս. Գարագաշյանը չի կարողանում մասնակցել Վառնայում հրավիրվելիք 7րդ ժողովին/ նյութական միջոցների բացակայության պատճառով անհնար էր ճանապարհի ծախսերը հոգալ/, այնուհետև բերվում է ամերիկյան մասնաճյուղի 3000 դոլարի պարտքի խնդիրը, որից 1000 դոլարն է վերադարձվել Ուեթսի մասնաճյուղից, որից 1300 դոլար 28 սենթը Մելիտոնեանի պարտքն է: Հնչակյան Գործադիր Հանձնաժողովի հաղորդմամբ՝ թերթն իր գոյությունը պահում է արտաքին փոխառության շնորհիվ միայն: Այսպես, նյութական անբավարար վիճակը հաշվի առնելով «Երիտասարդ Հայաստան» թերթը փոխադրվում է Փրովիտենս, որտեղ հրատարակության ծախսերը պիտի նվազեին: Այս ուղղությամբ զգալի աշխատանքներ է ծավալում Սիրվարդը ամերիկյան շրջանի Իսթնի մասնաճյուղում, սակայն շարունակում է անհրաժեշտություն մնալ նյութական աջակցություն ցուցաբերումը⁶:

1912 թ. կուսակցության Բոստոնի մասնաճյուղի շրջաբերականում կոչ էր ուղղված կուսակցական ընկերներին և մասնաճյուղերին՝ յուրաքանչյուրը 100-ական դոլարով հանգանակություն կազմակերպելու առաջարկով: Այս շրջանում, Գործադիր հանձնաժողովի տվյալներով, մասնաճյուղերն ունեին 800 դոլար պարտք, որը պիտի փոխանցվեր կենտրոնին: Նշվում էր նաև, որ Սոցիալ-դեմոկրատական հնչակյան կուսակցության ամերիկյան մասնաճյուղը վերջապես պիտի բարձր պահի իր անունը և ծառայի նպատակին՝ հայ ժողովրդի ազատագրմանը:

Ի պատասխան Գործադիր Հանձնաժողովի շրջաբերականի, որտեղ խոսվում է անհույս վիճակի և պարտքի, «Երիտասարդ Հայաստանի»-ի հրատարակման խափանման, դրա վերահրատարակման անհրաժեշտության մասին, կուսակցության ամերիկյան մասնաճյուղի /Զիկագոյի, Ռեյսնի, Վաքենիի/ ժողովի շրջաբերականներում մատնանշվում է. քանի որ մամուլը «գրավված է» վճարումների հետաձգելու պատճառով և կա իրական վտանգ՝ մնացած պարտքը չվճարելու դեպքում տպագրության

⁶ ՀԱՍ, ֆ. 408, ց.1, գ. 105, թ. 3:

դադարեցման, մասնաճյուղերը պետք է հնարավորինս աջակցեն պարտքի մարմանը՝ յուրաքանչյուրը 20 դոլար տրամադրելով: Խնդիրը պետք է վերացվեր միայն աջակցության դեպքում:

Խնդիրը մնում է չլուծված, ինչը պարզ է դառնում 1913թ. հունվարի 1-ի Պրովիդենսի մասնաճյուղի շրջաբերականից, որտեղ նույնպես այս խնդիրը քննարկվում է: Նշվում էր, որ ամերիկյան մասնաճյուղն ունի 500 պարտաճանաչ անդամ, որոնք պատրաստ են նյութական աջակցություն տրամադրել «Երիտասարդ Հայաստան»-ի փոխարեն «Նոր աշխարհ»-ի հրատարակմանը: Փրովիդենսի մասնաճյուղի անդամները նույնպես պատրաստ էին աջակցելու վերահրատարակման գործին: 1913 թ. մայիսի 14-ին կուսակցության «Բրիչ Պորտի» մասնաճյուղը և վարչությունը «Երիտասարդ Հայաստան»-ի հրատարակման անհրաժեշտությունը հաշվի առնելով, որոշում է, որ մասնաճյուղի անդամները պիտի իրենց 3 ամսվա անդամավճարները ուղարկեն կենտրոնական վարչություն:

Ելնելով շրջաբերականից՝ մայիսի 30-ին հատատվում է 3 ամսվա անդամավճարի հարցը / որոշվում է այն բոլոր մասնաճյուղերը, որոնք մինչև հիմա չեն օժանդակել նյութապես, կապերը խզել/, որոշումները համառոտ ուղարկվում են կենտրոն: Նախատեսվում է հրատարակել ամսաթերթ/բաժանորդներին՝ անվճար, բաժանորդագրվողներին՝ մեկ դոլ.: 1914 թ. կուսակցության Կենտրոնական վարչությունը ամերիկյան /Բոստոնի/ մասնաճյուղին ուղղված շրջաբերականով տեղեկացնում է Բոստոնի մասնաճյուղի գործունեությունը դատապարտելու և լուծարելու մասին:

Եզրակացություն

Թեմայի ուսումնասիրության արդյունքում մեր եզրահանգումները հետևյալն են՝

- 1908 թ. Ս.Դ.Հ.Կ որդեգրելով նոր քաղաքականություն, խնդիր էր դրել սահմանադրական ճանապարհով արևմտահայերի ինքնորոշման իրականացումը, ինչը հիմք ընդունելով Հնչակյան ամերիկյան կենտրոնը որոշում է ընդունում նյութապես աջակցել Կենտրոնին արևմտահայերի ազատագրման խնդրում և օգտագործել իր ազդեցությունը տեղում այդ գործը կազմակերպելու համար:
- Ամերիկյան մասնաճյուղը շեղվելով գլխավոր նպատակից, ունեցած միջոցները հատկացնում է տեղում թերթի հրատարակմանը: Առաջնային խնդիրը՝ արևմտահայերի աջակցությունը, ըստ էության, դառնում է երկրորդական:
- Վերոնշյալից կարելի է պատկերացում կազմել ինչպես կենտրոն-մասնաճյուղ համագործակցության, այնպես էլ 1915 թ. նախորդած

շրջանում հայ քաղաքական ուժերի կազմակերպվածության, մշակած ռազմավարության և դրանց արդյունքների մասին:

Օգտագործված գրականություն

1. ԳԱԹ (Գրականության և Արվեստի թանգարան), գ. 62, թ.2:
2. Հայաստանի Ազգային արխիվ (ՀԱԱ), ֆ.408, ց.1, գ. 85, թ.2:
3. ՀԱԱ, ֆ. 408, ց.1, գ. 87, թ. 2:
4. ՀԱԱ, ֆ. 408, ց.1, գ. 89, թ.7:
5. Ճիզմանեան Մ., Պատմություն ամերիկայահայ քաղաքական կուսակցութեանց, Ֆրեզնո, 1930, էջ 141:
6. ՀԱԱ, ֆ. 408, ց.1, գ. 105, թ. 3:

Анна Тадевосян

Социал-демократическая партия Гнчака в Америке 1908-1914 гг.

Заключение

Ключевые слова и выражения: Центральное управление, Османская империя, решение, финансирование.

1908 г. младотурки устроили переворот в Турции и захватили власть. В стране был установлен конституционный порядок, что позволило армянским политическим силам свободно действовать. Приветствуя политические изменения в стране со стороны армянских политических структур, партия Гнчака проявила осторожный подход к новой политической силе. Понимая националистический характер младотурок, Гончаканы в своих циркулярах считали подготовку и вооружение народа для самообороны насущной задачей.

Среди армянских политических партий социал-демократическая партия Гончака в Америке в 1908-1914 гг. предпринял определенные шаги для защиты интересов западных армян. В 1908 году СДХК пытается реализовать самооборону западных армян конституционным путем. на этом основании партия в Америке решает материально поддержать Центр в освобождении западных армян и использовать его влияние для организации этой работы на местах. На основании имеющихся фактов становится ясно, что партия, уклоняясь от своей основной цели, направляет свои средства не на поддержку западных армян на месте, а на издание газеты. Из всего этого можно сделать вывод, что в 1908-14 гг. как в Америке, так и в других местах партия не вела полноценных и эффективных мероприятий по самообороне западных армян.

The Social-Democratic Hnchak Party in America 1908-1914

Conclusion

Key words and expressions: Central Administration, Ottoman Empire, Decision, Funding.

1908 the Young Turks did revolution in Turkey and gained power. Constitutional order was established in the country, which enabled Armenian political forces to operate freely. Welcoming the political changes in the country from the Armenian political structures, the Hnchakyan Party showed a cautious approach towards the new political force. Understanding the nationalist nature of the Young Turks, Honchakyans considered the preparation and arming of the people for self-defense an urgent problem in their circulars.

Among the Armenian political parties, the Social-Democratic Honchakyan Party in America in 1908-1914. took certain steps to protect the interests of Western Armenians. In 1908 S.D.H.K is trying to realize the self-defense of Western Armenians in a constitutional way. on this basis, the party in America decides to materially support the Center in the liberation of Western Armenians and use its influence to organize this work on the ground. Based on the existing facts, it becomes clear that the party, deviating from its main goal, allocates its funds not to the support of Western Armenians on the spot, but to the publication of the newspaper. From all this it can be concluded that in 1908-14 both in America and elsewhere, the party did not carry out full and effective activities in the self-defense of Western Armenians.

Խմբագրություն է ուղարկվել 12.02.2023թ.

Հանձնարարվել է գրախոսության 25.02.2023թ.

Տպագրության է հանձնարարվել 13.03.2023թ.

ԼԻԼԻԹ ՄԵԼԻՔՅԱՆ

Երևանի պետական համալսարան
Հայաստանի հարակից երկրների
պատմության ամբիոն
lilit777.az@gmail.com

ՎՐԱՍՏԱՆՈՒՄ ԲԵՀԲՈՒԴՅԱՆՆԵՐԻ ՏՈՀՄԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

Ամփոփում

Հոդվածը նվիրված է XVII դ. Վրաստանում հայ ավատատիրական ավագանին ներկայացնող ընտանիքներից մեկի՝ Բեհբուդյան տոհմի պատմության առանցքային հարցերի լուսաբանմանը: XVII դ. Բեհբուդյանների տոհմը պատվավոր տեղերից մեկն է զբաղեցրել վրացական հասարակության վերնախավում: Հայտնի է, որ տոհմի անդամները օժտված են եղել ինչպես զորավարական կարողություններով, այնպես էլ զբաղեցրել են վարչական բարձր պաշտոններ: Վրաց արքունիքում Բեհբուդյանները զբաղեցրել են դրամահատարանի կառավարչի, քալանթարի՝ այսինքն քաղաքապետի, ինչպես նաև այլ բարձրաստիճան զինվորական պաշտոններ: Թերևս, այս տոհմի կարևոր առանձնահատկություններից մեկն այն է, որ գերդաստանի մի ճյուղն էլ գործունեություն է ծավալել Պարսկաստանում: Ավելին, Արևելյան Վրաստանում այս իշխանական տան առավել ուժեղացման փուլում նրա անդամները զուգահեռ ծառայությանն են անցել նաև պարսկական արքունիքում:

Առանձնահատուկ հետաքրքրություն է ներկայացնում Բեհբուդյանների մշակութային գործունեությունը Տփղիսում: Ուսումնասիրվող ժամանակաշրջանում՝ լինելով հայոց եկեղեցու հետևորդ, նրանք ձեռնամուխ են լինում մի շարք հայկական եկեղեցիների կառուցմանը: Տոհմի անդամների ջանքերով Տփղիսում հիմնադրվեց առաջին հայկական կուսանոցը, որը կառուցվեց Նոր Ջուղայի Մբ. Կատարիների հայոց կուսանոցի օրինակով: Բեհբուդյանների կողմից եկեղեցիներին հովանավորելու գործը չէր սահմանափակվում միայն Վրաստանով, այլև ընդգրկում էր Հյուսիս Արևելյան Հայաստանի խոշոր հոգևոր կենտրոնը՝ Հաղբատի վանքը:

Բանալի բառեր և արտահայտություններ. տոհմ, Բեհբուդյան, Վրաստան, դրամահատ, քալանթար, Պարսկաստան, տոհմագրություն, դավանանք, հայոց եկեղեցի, Մբ. Ստեփանոս կուսանոց անապատ

Ներածություն

XVII դարում վրաց թագավորները իրենց դիրքը և ազդեցությունը ամրապնդելու համար ձգտում էին ստեղծել տնտեսական և քաղաքական հենարան: Ակնհայտ է, որ այս պարագայում այդ նեցուկը պետք է դառնար հայ ազգաբնակչությունը, որը կազմում էր քաղաքային բնակչության գերակշիռ մասը՝ հայտնի մոքալաք հորջորջմամբ: XVII դարում մոքալաքներ էին դառնում արքունիքի հետ կապված հայ խոշոր վաճառականները և արհեստավորները, ովքեր աստիճանաբար ձևավորում էին այսպես կոչված պետական մոքալաքների դասը¹: Նրանք ունեին ազնվական ծագում և զուգահեռ խոշոր ավատատերեր էին: Պետական մոքալաքները վրաց արքունիքում զբաղեցնում էին զանազան պաշտոններ՝ քաղաքապետի, դրոշակակիրի, արքունի երաժշտի և դպրագրի, պատվիրակի, կնքապահի, ինչպես նաև զինվորական ծառայություն էին մատուցում: Ուսումնասիրվող ժամանակաշրջանում, պետական մոքալաքների դասում ներկայացված էր նաև հայ բնակչության ստվար զանգված: Դրանց թվում էին հայ ազնվական ընտանիքներից մեկը Բեհբուլյանները (Բեբուլովներ):

XVII դարում և հետագա դարերի ընթացքում այս տոհմի պատմությունը, գերազանցապես կազմելով Վրաստանի քաղաքական անցուղարձերի, սոցիալ-տնտեսական և մշակութային կյանքի մասը, առաջին հերթին հետաքրքիր է իր ծագման, գործունեության և դավանական կողմնորոշման տեսանկյունից: Թերևս, Բեհբուլյանների յուրակերպությունն է հայկական տարածքներից դուրս գործունեություն ծավալելը, որը պայմանավորել է հայագետների անուշադրությունը տոհմի պատմության նկատմամբ: Բեհբուլյանների տոհմի ուսումնասիրությունը զբաղեցրել է արտերկրի կովկասագետների ուշադրությունը, սակայն Ս. Դումինի և Պ. Գրեբելսկու աշխատությունում միայն տոհմածառը վերականգնելու փորձեր են ձեռնարկված²: Այս ամենը խիստ ցանկալի է դարձնում Բեհբուլյանների տոհմի համակողմանի ուսումնասիրությունը:

¹ Պետրոսյան Ա., Մոքալաքները հայ-վրացական տնտեսական-քաղաքական հարաբերություններում, – «Լրաբեր հաս. գիտ.», 1966, N 12, էջ 94: Այս մասին տես նաև՝ Месхиа Ш., Города и городской строй Грузии XVII-XVIII вв., Тбилиси, 1959, с. 169.

² Думин С., Гребельский П., Дворянские роды Российской империи, князя царство Грузинского, т. 4, Москва, 1998, с. 130-134.

Մեթոդաբանություն

Հոդվածի առանցքը կազմել է Վրաստանում Բեհբուդյանների տոհմի պատմության քննությունը, և կիրառվել են պատմահամեմատական, պատմանկարագրողական և վերլուծական մեթոդները: Ուսումնասիրությունը հիմնված է հայկական, վրացական, պարսկական տպագիր, ինչպես նաև Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռագիր աղբյուրների հիման վրա:

Տոհմագրություն

Վրաստանում Բեհբուդյան տոհմի վերաբերյալ առաջին հիշատակությունները կապված են Խոջա³ Բեհբուդի հետ (մահացել է 1662 թ.⁴): Զաքարիա Ագուլեցու հաղորդմամբ՝ Խոջա Բեհբուդը եղել է վրաց արքունիքի դրամահատարանի կառավարիչ⁵: Խոջա Բեհբուդի գերդաստանի տոհմագրությունը կազմելու տեսանկյունից արժեքավոր տեղեկություններ են պահպանված Խոջա Բեհբուդի թոռնորդի Մելիք Աղայի և նրա եղբայր Ստեփանոսի արտոնագրում (1745 թ.): Արտոնագրով շաքաթ և կիրակի օրերին Խոջիվանքի քահանաները իրավունք էին ստանում անվարձ լողանալու Խոջայի բաղնիքում և դրամարկից կարող էին վերցնել 100 դինար: Այստեղ նշվում է՝ «...թիֆլիզեցի Մելիք Աղայ հանդերձ հարազատ եղբարք իմով Ստեփաննոսի, որդի Մելիք Աշխարհբեկին, որդույ Խոջազադային, որդույ Խոջա Բեհբուդին զայս մշտնջենական ուխտս եղի ընդ Թիֆլիզու բոլոր եկեղեցեացն...», իր եղբայրների շարքում նշում է նաև «...գեղբայրն իմ գԲեհբուդն»⁶: Մատենադարանի վրացերեն մի վավերագրից իմանում ենք, որ Խոջա Բեհբուդի որդիներից Ասլանը 1663 թ. Մթ. էջմիածին է նվիրում երեք խանութ⁷: Այս մասին է հիշատակում նաև Սիմեոն Երևանցին, որը հավանաբար վրիպմամբ 1663 թվականի փոխարեն

³ Խոջա տիտղոսը կրում էին մեծահարուստ վաճառականները և դրամատերերը, որոնք հաճախ արքունի բարձր պաշտոններ էին զբաղեցնում և կալվածքների տեր էին:

⁴ Մելիքսեթ-Բեկ Լ., Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հտ. 3, Երևան, 2013, էջ 169:


⁵ Զաքարիա Ագուլեցու Որագրությունը, Երևան, 1938, էջ 37:

⁶ Բնագիրը հրատարակված է «Լումայ» հանդեսում, 1899, Գիրք Բ, Յուլիս, էջ 279-281: Տե՛ս նաև Մուրադյան Պ., Հին Թիֆլիսի հայկական եկեղեցիները, Մթ. էջմիածին, 2009, էջ 192-194:

⁷ Կաթողիկոսական դիվան, թղթ. 258, վավ. 6, էջ 002a (վրացերեն):

նշում է 1664 թ.⁸: Միմեոն Երևանցին հիշատակում է նաև Խոջա Բեհբուդի մյուս որդուն՝ Աշխարհբեկին, ով ևս Մբ. էջմիածնին նվիրում է խանութ. «Այստեղից դեպի Նորաշեն բարձրացած՝ Յաշպագ խանի փողոցում մի խանութ եւս ունի Սուրբ աթոռը, որի աջ կողմում Ղարանի խանութն է, իսկ ձախ կողմում՝ Աբովենց: Այս խանութը նույնպես մելիք Աշխալ բեկն է հիշատակ տվել Սուրբ Աթոռին, որը նույն Ասլանի եղբարն է»⁹:

Հստ այդպիսի, առկա աղբյուրների համադրմամբ XVII դ. վերջին – XVIII դ. սկզբին Բեհբուդյանների տոհմաձառը Վրաստանում ուներ հետևյալ պատկերը.



Խորեն քահանա Խուցյանը, իր ձեռքի տակ ունենալով որոշ փաստաթղթեր, առանց մասնավորեցնելու նույնացնում է Խոջա Բեհբուդին ոմն Ասլանի հետ¹⁰: Միաժամանակ նա իր աշխատության սկզբում նշում է,

⁸ Միմեոն Երևանցի , Ջամբո, Թարգմ. Վ. Գ. Համբարձումյանի, Պատմա-աշխարհագրական բնույթի ծանոթագրությունները եւ քարտեզները՝ Գ. Բադալյանի, Երևան, 2003, էջ 377:

⁹ Նույն տեղում, էջ 377:

¹⁰ Խորեն քահ. Խուցեան, Թիֆլիսի Ս. Ստեփանոս Կուսանաց անապատի պատմությունը, Թիֆլիս, 1914, էջ 14:

որ օգտագործված աղբյուրները վատթար վիճակում են պահպանվել և աշխատանքը գերծ չէ վրիպակներից: Հավանաբար, հենվելով այս հաղորդման վրա, Պ. Մուրադյանը ևս Խոջա Բեհբուղին նույնացնում է Ասլան Մելիք հետ¹¹: Նկատենք, որ Խոջա Բեհբուղը Ասլան անունով չի հիշատակվում ոչ մի հարակից աղբյուրում: Թերևս, կարելի է կռահել, որ Ասլանը նույնանուն է ոչ թե Խոջա Բեհբուղի, այլ նրա որդիներից մեկի՝ Ասլանի հետ:

Բեհբուղյանների տոհմաբանությունը քննելիս առանձնակի ուշադրության է արժանի նրանց գաղթություն: Խորեն քահանա Խուցյանի հաղորդմամբ՝ Խոջա Բեհբուղն իր ընտանիքով Պարսկաստանից է գաղթել Տփղիս¹²: Վրաց պետական գործիչ և գրող Իոան Բագրատիոնին (1768-1830) նշում է, որ Բեհբուղյանների տոհմը գաղթել է Անի քաղաքից, որն ավերել են պարսիկները¹³, և հաստատվել են Կախեթի մի մասում՝ Թբիլիսիի մոտակայքում գտնվող Պիրշավաթ¹⁴ գյուղում:

Ըստ հեղինակի՝ նրանք շատ հարուստ մոքալաքներ էին. գնել են հողեր, կառուցել բաղնիք¹⁵ և քարվանսարաններ (իջևանատներ)¹⁶: Նկատենք, որ XVII դարում Անին արդեն լքված էր և, հավանաբար, Ի. Բագրատիոնիի կողմից նշվել է որպես Շիրակում առավել հայտնի տեղանուն: Անիի վերաբերյալ նմանատիպ հիշատակություն հանդիպում ենք նաև 1606 թ. ձեռագիր հիշատակարանում. «Եւ [Շ]ահն [Շահ Աբասը – Լ. Մ.] այրեաց յԱնու քաղաքէն մինչև ցճուղայ և ցՆախճրւան զամենայն զիւղ և զքաղաք և զմարդն լալով և ողբով քըշեաց ի յԱսպահան»¹⁷: Սա հաստատում է նաև 1604 թ. դեպքերին քաջատեղյակ Առաքել Դավրիժեցին¹⁸: Այսպես, Ռոստոմ

¹¹ Մուրադյան Պ., նշվ. աշխ., էջ 113:

¹² Խորեն քահ. Խուցեան, նշվ. աշխ., էջ 14:

¹³ Հավանաբար, խոսքը 1604 թ. Շահ Աբասի նահանջի և բռնագաղթ կազմակերպելու մասին է: Տե՛ս Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ (1601-1620 թթ.), հտ. 1, Կազմեցին՝ Վ. Հակոբյան, Ա. Հովհաննիսյան, Երևան, 1974, էջ 196; Առաքել Դավրիժեցի, Գիրք պատմութեանց, Աշխատասիրությամբ՝ Ա. Խանլարյանի, Երևան, 1990, էջ 76:

¹⁴ Համաժամանակյա այլ աղբյուրներում այս գյուղը չի հիշատակվում:

¹⁵ Бакрадзе Д., Берзенов Н., Тифлис в историческом и этнографическом отношениях, Санкт-Петербург, 1870, с. 117.

¹⁶ Իրանը Զեգրադիոն, Մեթոքլեթիտ ալֆերա Տեյարտեզելոսա Մոնա մեթոքլեթիտ տաջադտա և շենալտա զեգրեթիտ, տեղոսի, 1997, զգ. 37.

¹⁷ Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ (1601-1620 թթ.), նշվ. աշխ., էջ 196; Առաքել Դավրիժեցի, էջ 76:

¹⁸ Նույն տեղում:

թագավորի կողմից 1654 թ. տրված նվիրագրում նշվում է. «Մախաթա [ըստ Պ.Մուրադյանի՝ սարի – *Հ. Մ.*] ներքև, այնտեղ ձեր նախնյաց ու սերոց ունեցած բնիկ գերեզմանոցում եկեղեցի կառուցելու թույլտվություն խնդրեցիք»¹⁹: Ստացվում, է որ խոջա Բեհբուդի գերդաստանի ներկայացուցիչները վաղուց էին գաղթել Վրաստան, ինչով էլ պայմանավորված էր տոհմական գերեզմանոցի գոյությունը:

Հետաքրքիր է, որ իրանցի պատմագիր Ֆազլի Բեկ Իսֆահանի Խուզանին Շահ Աբաս I պաշտոնյաների շարքում հիշատակում է ուն Բեհբուդ Աղա ²⁰, որպես իր-նագիր 1592 թ.²¹: Պատմագիրը նկարագրում է նաև Շահ Աբբաս Ա-ի 1614 թ. ժամանումը Քարթլի, որտեղ շահը Բեհբուդ Աղայի որդիներին հանձնարարում է բարեկարգել Տփղիսը²²: Ուշագրավ է, որ Տփղիսի Սբ. Ստեփանոս կուսանոցի մայրապետ Գայանեի հաղորդած տեղեկության, երբ Բեհբուդյան տան ներկայացուցիչները լինում են Նոր Ջուղայում, տեսնելով Սբ. Կատարինեի հայոց կուսանոցը՝ իրենց մոտ գաղափար է ծագում հիմնել նման մի կուսանոց Տփղիսում: Ուշագրավ է, որ Սբ. Ստեփանոս կուսանոց անապատը հիմնադրվել է հենց Նոր Ջուղայի Ս. Կատարինե անապատի օրինակով²³: Նկատեք նաև, որ մինչև 1901 թ. Սբ. Ստեփանոս կուսանոց անապատի արժանավոր կույսերը սարկավազության աստիճան ստանում էին Նոր Ջուղայի և Սպահանի առաջնորդ արքեպիսկոպոսի կողմից²⁴: Ավելին, տոհմի ներկայացուցիչների մեծ մասը կրում էր պարսկական անուններ՝ Բեհբուդ (պրս.՝ Բիհբուդ անունից²⁵), Խոջազադե (պրս.՝ խոջա «տեր», գաղե «ծնված»²⁶), Աշխարիբեկ

¹⁹ «ქართულ-სპარსულ ისტორიის საბუთები», ექსტი დაადგინა, თარგმნა და შენიშვნები დაურთო **3. ფუთურიძემ** – საქართველოს სსრ მეცნიერებათა აკადემია – ივანე ჯავახიშვილის სახელობის ისტორიის ინსტიტუტი, თბილისი, 1955, გვ.244-245 (528 გვ.); Մուրադյան Պ., նշվ. աշխ., էջ 188:

²⁰ Հավանաբար Խոջա Բեհբուդի նախնիներից մեկն է:

²¹ **Նագեր** – (ناظر) - Վերահսկիչ, վերակազմ: Մեֆյան պետության մեջ կային տարբեր վարչությունները վերահսկող ու կառավարող նագերներ:

²² Fazli Beg Khuzani Isfahani. *A Chronicle of the Reign of Shah 'Abbas*, edited by K. Ghereghlu, vol. II, Gibb Memorial Trust, 2015, pp. 21. (թարգմանությունը Ք. Կոստիկյանի)

²³ Դոկտ. Աբել քահ. Մանուկեան, Հայ եկեղեցւոյ սարկւազուհիները, Լիբանան, 2022, էջ 95: Տե՛ս նաև Մուրադյան Պ., նշվ. աշխ., էջ 74:

²⁴ Նույն տեղում, էջ 95:

²⁵ Աճառյան Հ., Հայոց անձնանունների բառարան, հտ. 1, Երևան, 1942, էջ 405:

²⁶ Աճառյան Հ., Հայոց անձնանունների բառարան, հտ. 2, Երևան, 1944, էջ 527:

(համարժեքը՝ պրս. Արջահան²⁷) և այլն: Այսպիսով՝ ուրվագծվում է Վրաստանում հաստատված Բեհբուդյանների տոհմի և Պարսկաստանի միջև սերտ առնչությունները: Ուստի, սա թույլ է տալիս արժանահավատ համարելու՝ քահանա Խուցյանի հաղորդումը՝ Խոջա Բեհբուդի Պարսկաստանից Վրաստան հաստատվելու մասին:

Բեհբուդյանների տոհմի գործունեության ընդհանուր բնութագիրը

Բեհբուդյանների տոհմի ներկայացուցիչներն օժտված են եղել ինչպես գորավարական կարողություններով, այնպես էլ զբաղեցրել են վարչական բարձր պաշտոններ: Ինչպես վերը նշվեց, 1651 թ. Խոջա Բեհբուդը եղել է վրաց արքունիքի դրամահատարանի կառավարիչը²⁸: Վերջինիս թոռնորդին Մելիք Աշխարիբեկը հիշատակվում է իբրև զինվորական, ով մշտապես զբաղված է եղել պատերազմներով²⁹: Նրա որդի Մելիք Աղան ևս փայլուն զինվորական էր և հռչակ էր վայելում Նադիր Շահի բանակում: Աբրահամ Կրետացու հաղորդմամբ՝ Նադիր Շահին այցելության ժամանակ Մելիք Աղան է ուղեկցել անչափահաս Հերակլին: Վարչական գործառնությամբ բնութագրական էր մնում Բեհբուդյաններին ամբողջ XVII դարի ընթացքում: Աբրահամ Կրետացին Բայրամի տոնի մասին նշելուց հետո հայտնում է, որ ինքը հրավիրվել է մի ճաշկերույթի Տփղիսի Աշխարիբեկի որդի Աղայի կողմից, «...որ էր քալանթար և մելիք Թիֆլիզու՝ ի նոյն տեղեաց...»³⁰: Փաստորեն, Մելիք Աղան նշանակվել էր Տփղիսի քալանթար (քաղաքագլուխ), ինչը հավանաբար նաև Շահին մատուցած մեծ ծառայությունների հետևանքն էր:

Դավանաբանական կողմնորոշումը

Բեհբուդյաններն անվերապահորեն Հայոց եկեղեցու հետևորդներ էին: Նրանց հովանավորությամբ կառուցվում և գործում էին Տփղիսի մի ամբողջ շարք հայկական եկեղեցիներ: Այսպես՝ Խոջա Բեհբուդը 1621 թ. դիմում է Շահ Աբաս Ա-ին և 1654 թ.՝ վրաց թագավոր Ռուստոմին՝ «Հավլաբարի կողմում, Մախաթ սարի ստորոտին» իր հայրենի հանգստարանում եկեղեցի կառուցելու արտոնության խնդրանքով³¹: Ռուստոմ թագավորն արտոնել է և միաժամանակ եկեղեցուց վերև հողատարածք է հատկացրել այգին տնկելու

²⁷ Աճառյան Հ., Հայոց անձնանունների բառարան, հտ. 1, էջ 179:

²⁸ Զաքարիա Ագուլեցու Որագրությունը, էջ 37:

²⁹ Խորեն քահ. Խուցեան, նշվ. աշխ., էջ 87:

³⁰ Աբրահամ Կրետացի, Պատմութիւն, Քննական բնագիր, ռուսերեն թարգմանություն, առաջաբան և ծանոթագրություններ Ն. Կ. Դորդանյանի, Երևան, 1973, էջ 110:

³¹ «ქართულ-სპარსულ ისტორიული საბუთები», გამოსწა ვ. ფუთურაძემ, თბილისი, 1955, გვ. 244.

համար: Ուշագրավ է, որ Խոջա Բեհբուղի գործունեությունը չի սահմանափակվել միայն Տփղիսով: 1656 թ. Խոջա Բեհբուղը ձեռնամուխ է եղել Հաղբատի Սբ. Նշան եկեղեցու կամարի վերաշինմանը³²: Սբ. Աստվածածին եկեղեցում պահպանված արձանագրությունից իմանում ենք, որ այն կառուցվել է 1655 թ.³³: Եկեղեցեցաշեն գործունեությունը շարունակում են նաև Խոջա Բեհբուղի հաջորդ սերունդները: Այս մասին ուշագրավ տեղեկություններ են պահպանվել մայրապետ Գայանեի Նոր-Ջուղայի Կատարինե վանքին ուղղված նամակում: Ըստ այդ պատումի՝ Մելիք Աշխարհբեկ Բեհբուղյանցի և նրա որդի՝ Մելիք Աղայի կողմից և անմիջական հովանավորությամբ կառուցվում է Սուրբ Ստեփաննոս անապատ կուսանոցը: Մայրապետը, նշում է, որ Աշխարհբեկի գործը կիսատ է մնում, քանի որ վերջինս 1724 թ. սպանվում է Տաճիկների (թուրքերի) դեմ արշավանքի ժամանակ³⁴: Խորեն քահանա Խուցյանը Մելիք Աշխարհբեկին նույնացնում է Խոջա Բեհբուղի որդու հետ: Հետազոտողներից Պ. Մուրադյանը ևս կուսանոցի հիմնադրումը վերագրել է Խոջա Բեհբուղի որդի Աշխարհբեկին³⁵: Դոկտ. Աբել քահանա Մանուկյանը ելակետային համարելով Խորեն քահանայի կարծիքը՝ կուսանոցի հիմնադիրներ է համարում Աշխարհբեկին և նրա որդի Մելիք Աղային³⁶: Սամվել Կարապետյանը առանց մանրամասնելու կուսանոցի հիմնադիր է համարում Խոջա-Բեհբուղի թոռնորդի Աշխարհբեկին³⁷:

Ելնելով վերոշարադրյալից՝ պետք է վերստին անրադառնանք սկզբնաղբյուրներին և ճշտենք, թե ովքեր են կուսանոցի հիմնադիրները:

Այսպես, Բեհբուղյանների վերոնշյալ տոհմագրությունից պարզ է դառնում, որ գերդաստանում գործել են երկու Աշխարհբեկներ՝ Խոջայի որդին և թոռնորդին: Այս խնդիրն արծարծելիս կարևոր է երկու Աշխարհբեկների գործունեության ժամանակագրության ճշգրտումը: Թերևս, դժվար չէ կռահել, որ 1664 թ., երբ Խոջա Բեհբուղի որդի Աշխարհբեկը խանութ է նվիրում Սբ. Էջմիածնին, նա արդեն չափահաս էր, եթե ոչ 30 տարեկանին մոտ երիտասարդ: Ըստ Խորեն քահանայի հաղորդած տեղեկության՝ Աշխարհբեկը սպանվում է 1724 թ. թուրքական արշավանքի

³² Դիվան հայ վիմագրության, Պր. 9, Երևան, 2012, էջ 133; Կ. Ղաֆադարյան, Հաղբատ. ճարտարապետական կառուցվածքները և վիմական արձանագրությունները, Երևան, 1963, էջ 148-149:

³³ Մուրադյան Պ., նշվ. աշխ., էջ 114:

³⁴ Խորեն քահ. Խուցեան, նշվ. աշխ., էջ 87-88:

³⁵ Մուրադյան Պ., նշվ. աշխ. էջ 74:

³⁶ Դոկտ. Աբել. քահ. Մանուկեան, նշվ. աշխ., էջ 95:

³⁷ Карапетян С., Меры Тифлиса (Тбилиси), Ереван, 2003, с. 33.

Ժամանակ: Սակայն հեղինակի նույն աշխատության մեջ տեղ գտած Գայանե մայրապետի նամակում Աշխարհբեկի մահվան թիվը նշվում է 1727 թ.³⁸: Այս խնդրի վրա լույս է սփռում Աբրահամ Կրետացին, ըստ որի՝ 1734 թ., երբ նա մեկնում է Սբ. Էջմիածին, Տփղիսից Ժամանած սուրհանդակը հայտնում է, որ Իսահակ փաշան հրամայել է կախաղան հանել Աշխարհբեկին. «Եւ ի նոյն աւուրս եկն սայի մի ի Թիֆլիզոյ և երբեք զրոյց և գիր, եթե՝ Իսակ փաշայն, զԱշխալ բեկն որ էր մելիք Թիֆլիզոյ՝ ի մեր ազգի, վասն ոչ ինչ պատճառի ետ խեղդել զնա և առաջի դռանն արկանել՝ մինչև էառ ԾՌ (50000) դուրուշ, և ապա ետ հրաման թաղել»³⁹: Եթե ընդունենք, որ սա Խոջա Բեհբուդի որդի Աշխարհբեկի մահվան տարեթիվն է, ապա կստացվի, որ նա արդեն 100 և ավելի տարեկան էր: Ի հավելումն աղբյուրներում բացակայում է որևէ տեղեկություն Խոջա Բեհբուդի որդի Աշխարհբեկի՝ Մելիք Աղա անունով որդի ունենալու մասին: Այլ է, Խոջա Բեհբուդի թոռան Մելիք Աշխարհբեկի դեպքում, ում որդիներից մեկը հիշատակվում է Մելիք Աղա անունով⁴⁰: Հետևապես, հիմքեր կան պնդելու, որ Սբ. Ստեփանոս անապատի կառուցման նախաձեռնությունը պատկանել է ոչ թե Խոջա Բեհբուդի որդուն, այլ նրա թոռանը՝ Աշխարհբեկին: Հավանորեն, հենց վերջինիս որդի Մելիք Աղայի կողմից է շարունակվել Սբ. Ստեփանոս կուսանոց անապատի շինարարությունը:

Եկեղեցիների կառուցմանը զուգահեռ, Բեհբուդյան տան ներկայացուցիչները ձեռնամուխ են լինում դրանց վերանորոգմանը և ծավալում հովանավորչական գործունեություն: Այսպես՝ 1651 թ. Խոջա Բեհբուդի կողմից վերանորոգվում է սբ. Նշանի փուլ եկած կամարը⁴¹: Տփղիսի Նորաշենի եկեղեցում պահպանված նորոգչական արձանագրություններից իմանում ենք, որ «Ի թուին ՌՂԹ 1650 շինեալ է Խոջայ Նազարն և զկնի շինութեան եկեղեցոյ բոլոր իշխանութիւնն յանձնեալ է ի ձեռն հանգուցեալ Մելիք Աշխարհբեգին Բեհբուդեան հաստատուն գրով, որոյ սոյն գրոյ թիւն է 1714»⁴²: Ըստ այդմ, Խոջա Նազարը եկեղեցու նորոգումը ավարտելուց հետո «բոլոր իշխանությունը» պաշտոնական հաստատուն գրով հանձնում է Աշխարհբեկ Բեհբուդյանին:

³⁸ Խորեն քահ. Խուցեան, նշվ. աշխ., էջ 14-16, 87-88:

³⁹ Աբրահամ Կրետացի, էջ 36:

⁴⁰ «Լուամյ» հանդես նշվ. աշխ. էջ 279-281: Տե՛ս նաև Մուրադյան Պ., նշվ. աշխ., էջ 192-194:

⁴¹ Ղաֆադարյան Կ., Հաղբատ, նշվ. աշխ., էջ 148-149: Տե՛ս նաև Սարգիս արքեպիսկոպոս Զայանց, Ճանապարհորդությունն ի Մեծն Հայաստան, հատ Բ, Տփղիս, 2016, էջ 62-63:

⁴² Մուրադյան Պ., նշվ. աշխ., էջ 45:

Իսկ 1795 թ. Աշխարհբեկ Բեհբուդյանի թոռնորդի Մելիք Ավետիքը հանձնարարում է Տեր Գրիգոր քահանային վերանորոգել եկեղեցին⁴³:

Հատկանշական է, որ վերը քննարկված 1745 թ. Խոջա Բեհբուդի թոռնորդի Մելիք Աղայի և նրա եղբայր Ստեփանոսի արտոնագրում Աղա Մելիքը Վանքի, Հավաբարի, Սբ. Նշանի, Մուղնիի, Նորաշենի, Սբ. Ստեփանոս Կուսանոցի, Բեթղեհեմի, Քամոյենց, Տիգրանաշենի և Քարափի եկեղեցիներին հորդորում է իրենց աղոթքներում հիշատակել իր տոհմի անդամներին⁴⁴: Աղա Մելիքի կողմից այս եկեղեցիներին դիմելը վկայում է, որ Բեհբուդյան տան ներկայացուցիչները եղել են դրանց հովանավորները:

Նկատի ունենալով վերոգրյալը՝ կարելի է առանց որևէ վերապահության համարել, որ ուսումնասիրվող ժամանակաշրջանում Բեհբուդյան տոհմի ներկայացուցիչները եղել են հայ առաքելական եկեղեցու հետևորդներ:

Եզրակացություն

Ամփոփելով XVII դարում Բեհբուդյանների գերդաստանի պատմության առանցքային հարցերը՝ կարող ենք նշել հետևյալը.

1. Հայերեն և վրացերեն աղբյուրների համադրությունը թույլ է տալիս մոտավոր ուրվագծել Բեհբուդյանների տոհմի դեպի Վրաստան գաղթուղին: Ստացվում է, որ Բեհբուդյանների տոհմը գաղթել է Վրաստան Արևմտյան Հայաստանից, հավանաբար՝ Շիրակի շրջանից: Այս տոհմի ներկայացուցիչները սերտ կապերի մեջ են եղել Պարսկաստանի՝ Նոր Զուղայի հետ, ինչը հնարավոր է դարձնում տոհմի մի ճյուղի Պարսկաստանում հաստատվելու և այստեղ գործունեություն ծավալելու վարկածը:

2. XVII դարում Վրաստանում ակտիվ գործունեություն էր ծավալում Բեհբուդյանների գերդաստանի ներկայացուցիչ, վրաց արքունի դրամահատարանի կառավարիչ Խոջա Բեհբուդի տոհմը: Նա և իր որդիները սերտ կապեր են պահպանել Սբ. Էջմիածնի հետ և աչքի ընկել իրենց նվիրատվություններով: Խոջա Բեհբուդի հաջորդ սերունդները զինվորական բարձր պաշտոններ են զբաղեցրել, ինչպես վրացական արքունիքում, այնպես էլ Պարսկաստանում: Ավելին, արդեն XVIII դարում նրա ժառանգները զբաղեցնում էին Տփղիսի քաղաքապետի պաշտոնը:

⁴³ Նույն տեղում:

⁴⁴ «Լումայ» հանդես, նշվ. աշխ., էջ 279-281: Տե՛ս նաև Մուրադյան Պ., նշվ. աշխ., էջ 192-194:

3. Բեհբուդյանների տոհմի դավանական պատկանելության վերաբերյալ մեր ձեռքի տակ եղած բոլոր աղբյուրները փաստում են, որ ուսումնասիրվող ժամանակաշրջանում նրանք եղել են հայոց եկեղեցու հավատարիմ հետևորդներ: Տփղիսում նրանք ձեռնամուխ եղան եկեղեցաշինության, համաձայն XVII դարի ձեռագիր հիշատակարանների՝ այս տոհմի ներկայացուցիչները հանդիսանում էին Տփղիսի հայկական եկեղեցիների մեծ մասի հովանավորները:

4. Աղբյուրների քննությունը ցույց տվեց, որ Մբ. Ստեփանոս անապատի կուսանոցը կառուցվել է ոչ թե Խոջա Բեհբուդի որդու, այլ նրա թոռնորդու՝ Մելիք Աշխարհբեկի որդիներից մեկի՝ Մելիք Աղայի նախաձեռնությամբ:

Օգտագործված գրականություն

1. Աբել. քինյ. Մանուկեան, Հայ եկեղեցույ սարկաւագուհիները, Լիբանան, 2022, էջ 216:
2. Խորէն քահ. Խուցեան, Թիֆլիսի Ս.Ստեփանոս Կուսանաց անապատի պատմութիւնը, Թիֆլիս, 1914, 100 էջ:
3. Մուրադյան Պ. 2009, Հին Թիֆլիսի հայոց եկեղեցիները, հրատ. Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 400 էջ:
4. Պետրոսյան Ա., Մոքալաքները հայ-վրացական տնտեսական-քաղաքական հարաբերություններում, Լրաբեր, 1966, N12, 89-99 էջ:
5. Бакрадзе Д., Берзенов Н., Тифлис в историческом и этнографическом отношениях, Санкт-Петербург, 1870, 153 с.
6. Думин С., Гребельский П., Дворянские роды Российской империи, князя царство Грузинского, т. 4, Москва, 1998, 294 с.
7. Карапетян С., Меры Тифлиса (Тбилиси), Ереван, 2003, 119 с.

Սկզբնաղբյուրներ

1. Աբրահամ Կրետացի, Պատմություն, Երևան, 1973, էջ 110:
2. Առաքել Դավրիժեցի, Գիրք պատմութեանց, Աշխատասիրությամբ Լ. Ա. Խանլարյանի, Երևան, 1990, 592 էջ:
3. Աճառյան Հ., Հայոց անձնանունների բառարան, հ. Ա, հ. Բ, Երևան, 1942-1962, 3155 էջ:
4. Դիվան հայ վիմագրության, Պր. 9, Երևան, 2012, էջ 611:
5. Զաքարիա Ագուլեցու, Որագրությունը, Երևան, 1938, 198 էջ:
6. <<Լումայ>> հանդես, 1899, Գիրք Բ. Յուլիս, էջ 279-281:
7. Կաթ. դիվ., թղթ. 258, վավ. 6 (վրացերեն):

8. Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ (1601-1620 թթ.), կազմեցին՝ Վ. Հակոբյան, Ա. Հովհաննիսյան, Երևան, 1974, 827 էջ:
9. Ղափաղարյան Կ., Հաղբատ. ճարտարապետական կառուցվածքները և վիմական արձանագրությունները, Ե., 1963, էջ 292:
10. Մելիքսեթ-բեկ Լ., Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ. Գ, Ա-Գ մեկ կազմում, Երևան, 2013, 343 էջ:
11. Սարգիս արքեպիսկոպոս Ջալանց, Ճանապարհորդություն ի Մեծն Հայաստան, հատ Բ, Տփղիս, 2016, 694 էջ:
12. Սիմեոն Երևանցի, Ջամբր, Երևան, 2003, 607 էջ:
13. Իօանե Բագրատիոնի, Ձեռագրերով աղբյուրը՝ Սաթրապեղոսի Մինա մեծադրությունը տաճարի և աշխարհի գեղեցիկ, Երևան, 1997, 176 էջ:
14. <<Երթուղ-Սարսուղ Իստորիոս Սաթրապեղոս>>, Երթուղ Երևան, 1955, 528 էջ:
15. Fazli Beg Khuzani Isfahani. *A Chronicle of the Reign of Shah 'Abbas*, edited by K. Ghahreghlu, vol. II, Gibb Memorial Trust, 2015, pp. 21, 107 .

Лилит Меликян

Из истории династии Бейбудянов в Грузии

Заключение

Ключевые слова и выражения: родословная, Бехбудян, Грузия, минцмейстер, калантар, Персия, генеалогия, религия, Армянская церковь, монастырь Св. Степанос.

Таким образом, резюмируя ключевые вопросы истории династии Бехбудянов в XVII веке, можно констатировать:

1. Изучение как армянских, так и грузинских источников позволяет примерно наметить маршруты миграции рода Бехбудянов в Грузию. Из чего следует, что род Бехбудянов переселился в Грузию из Западной Армении, вероятно, из Ширакской области. Одна из ветвей этой династии продолжила свою деятельность в Персии, где представители семьи Бехбудянов упоминаются как выходцы из Грузии. Соответственно, велика вероятность, что поселившиеся в Персию Бехбудяны мигрировали из Грузии.
2. В XVII веке в Грузии действовал род Ходжи Бехбуда, представителя династии Бехбудянов, управляющего монетным двором грузинского царя. Он и его сыновья поддерживали тесные связи со Св. Эчмиадзином и выделялись

своими пожертвованиями. Последующие поколения Ходжи Бехбуда занимали высокие военные посты как при грузинском дворе, так и в Персии. Более того, уже в 18 веке его потомки занимали должность мэра Тбилиси. 3. Во всех источниках относительно конфессиональной принадлежности рода Бехбудянов указывается, что в изучаемый период они были стойкими последователями Армянской церкви. Они занимались строительством церквей: согласно рукописным записям 17 века представители этого рода являются покровителями большинства армянских церквей в Тпгисе.

4. Изучение источников показало, что женский монастырь Св. Степаноса пустыни был построен не по инициативе не сына Ходжи Бехбуда, а внуком его сына Мелика Ашкарбеком и его сыном Меликом Агой.

Lilit Melikyan

From the history of Behbudyan dynasty in Georgia

Conclusion

Key words and expressions: kin, Behbudian, Georgia, coinage, kalantar, Persia, genealogy, religion, Armenian church, St. Stepanos nunnery.

Thus, summarizing the key issues in the history of the Behbudian dynasty in the 17th century, we can state:

1. The combination of Armenian and Georgian sources allows us to roughly outline the migration of the Behbudians to Georgia. Therefore, it turns out that the kin of Behbudians migrated to Georgia from Western Armenia, probably from Shirak region. Another branch of this dynasty continued its activity in Persia, where representatives of the Behbud family are mentioned as being from Georgia. Accordingly, there is a high probability that the Behbudians who settled in Persia migrated from Georgia.

2. In the 17th century, in Georgia the kin of Khoja Behbud, who was the manager of the mint of the Georgian court, carried out an active role. He and his sons maintained close ties with St. Etchmiadzin and stood out with their donations. The successors of Khoja Behbud held high military positions, both in the Georgian court and in Persia. Moreover, already in the 18th century, his descendants occupied the position of the mayor of Tpghis.

3. All published sources regarding the denominational affiliation of the Behbudyan family state that during the period under study, they were steadfast followers of the Armenian Church. In Tpghis, they started building a church, according to the 17th-century manuscript records, the representatives of this kin were the patrons of most of the Armenian churches in Tpghis.

4. The examination of the sources showed that the initiative to build St. Stepanos convent belongs not Khoja Behbud's son, but his grandson Melik Ashkarbek and one of the sons of Ashxarbek, Melik Agha.

Խմբագրություն է ուղարկվել 10.01.2023թ.

Հանձնարարվել է գրախոսության 01.02.2023թ.

Տպագրության է հանձնարարվել 13.03.2023թ.

ՄՇԱԿՈՒՅԹ

ԳՈՀԱՐ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի հայցորդ

Էլփոստ՝ gohar.karapetian03@gmail.com

ԷԴՈՒԱՐԴ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

ԴԱՇՆԱՄՈՒՐԱՅԻՆ ԿՎԱՐՏԵՏ (1981-1998)

Ամփոփում

Սույն հոդվածում անդրադարձ է կատարվել կոմպոզիտոր Էդուարդ Հայրապետյանի Դաշնամուրային կվարտետին: Այս ստեղծագործությունն իր ուրույն տեղն է զբաղեցնում թե՛ կոմպոզիտորի և թե՛ հայկական կամերային-գործիքային երաժշտության մեջ:

1981 թվականին գրվել է որպես Դաշնամուրային տրիո՝ ջութակ, թավջութակ և դաշնամուր, սակայն կոմպոզիտորը որոշ ժամանակ անց՝ 1998 թվականին այն վերափոխել և դարձրել է Դաշնամուրային կվարտետ (ջութակ, ալտ, թավջութակ և դաշնամուր): Էդուարդ Հայրապետյանը կվարտետի երկրորդ մասը կերպարային առումով փոփոխում և դարձնում է մեղիտացիոն, բայց ի նկատի ունենալով ոչ թե բուրդայական մեղիտացիան, որտեղ մարդու միտքն անջատվում է բանականությունից, այլ մարդու հուզական և խորն ապրումներն իր մեջ պահելով՝ նկարագրում է մարդու հոգեվիճակը ոչ թե երկրային, այլ երկնային մի ամբողջ աշխարհ:

Բանալի բառեր և արտահայտություններ. Դաշնամուրային կվարտետ, վարիացիոն ձև, թեմատիզմի բացակայություն, օկտավա, օբերտոն, անդրանիկ կատարում:

Ներածություն

Էդուարդ Հայրապետյանը հայկական կոմպոզիտորական դպրոցի վառ ներկայացուցիչներից մեկն է: Հիմնվելով եվրոպական դասական երաժշտության, արմատավորված հայկական պրոֆեսիոնալ երաժշտության ավանդույթների վրա, սինթեզելով ժամանակակից մեղեդային լեզվի տարրերը ժողովրդա-պրոֆեսիոնալ, ինչպես նաև մեծ հետաքրքրությամբ արձանքելով ժամանակակից պրոֆեսիոնալ երաժշտության ենթակառուցվածքներին, ստեղծեց իր կոմպոզիտորական ուղին:

Էդուարդ Հայրապետյանի ստեղծագործությունները հաջողությամբ հնչել են թե՛ բազմաթիվ միջազգային փառատոններում՝ Բուդապեշտում, Ջագրեբում, Շվեդիայում, Սալոնիկում, Օդեսայում, Բեռլինում, թե՛

միջազգային հեղինակավոր բեմահարթակներում՝ Եվրոպայում, Ռուսաստանում, ԱՄՆ-ում, Մերձբալթյան պետություններում, Կիպրոսում, Լիբանանում: Կոմպոզիտորն արժանացել է Հայաստանի կոմպոզիտորների միության և ՀՀ մշակույթի նախարարության ոսկե մեդալի, <<Թեքեյան>> մշակութային միության <<Վահան Թեքեյան>> մրցանակի: Էդուարդ Հայրապետյանը ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ է՝ 2018 թվականին նա արժանացել է ՀՀ պետական մրցանակի դափնեկրի պատվավոր կոչման:

Երկար տարիների քրտնաջան և անդադար ստեղծագործական աշխատանքի շնորհիվ կոմպոզիտորն ստեղծել է ընդարձակ ստեղծագործությունների ցանկ, որոնք գրված են տարբեր ժանրերում: Էդուարդ Հայրապետյանը հեղինակ է չորս սիմֆոնիայի, կանտատի՝ <<Յոթ խաղաղ խոսք>>, ութ վոկալ շարերի՝ <<Հայր մեր>>, <<Ինչ արբեցությամբ>>, <<Ստերմիկ տեսիլներ>>, <<Ըլլայի, ըլլայի>> <<Ջրտուք>>, 25 գործիքային և կրկնակի կոնցերտների, որոնք գրված են տարբեր գործիքների համար՝ ֆլեյտա, հորոյ, կլարնետ, ֆագոտ, հարվածային, դաշնամուր, ջութակ, ալտ, թավջութակ, 20 գործիքային սոնատի և այլ բազմաթիվ ստեղծագործությունների:

Մեթոդաբանություն

Թեմայի ուսումնասիրության ընթացքում լայն չափով ներկայացվել է Էդուարդ Հայրապետյանի ստեղծագործական կյանքն ու գործունեությունը: Դաշնամուրային կվարտետը մանրամասն ուսումնասիրվել և վերլուծվել է: Աշխատել ենք հաստատված երաժշտության մեջ տրադիցիոն կլասիկ մեթոդիկայով:

Էդուարդ Հայրապետյանի երաժշտության փոփոխվող ժամանակը, մտորումների գույները, ձևերը միշտ լսելի և արդիական են ժամանակակից կյանքի ռիթմերին: Կոմպոզիտորի երաժշտությունը կարող է չունենալ կոնկրետ բովանդակություն և կերպարներ, բայց հարուստ է փիլիսոփայական գաղափարներով: Կոմպոզիտորի ստեղծագործական կյանքը միշտ լի է ինքնակատարելագործումով, նոր գիտելիքների ձեռքբերմամբ, որը բավարարվում է ընթերցված գրքերով, ինչպես նաև ստեղծագործական սերտ կապը երաժիշտ-կատարողների հետ: Հայրապետյանի երկացանկում մեծ տեղ են զբաղեցնում նվիրումները, որոնք արտացոլվում են հայ կատարողների՝ Մեդեա Աբրահամյանի, Բագրատ Վարդանյանի, Ալեքսանդր Կոսեմյանի, Նարեկ Հախնազարյանի, Մերուժան Միմոնյանի, Արամ Ղարաբեկյանի, Մերգեյ Սմբատյանի, Սվետլանա Նավասարդյանի, Նարե Արդամանյանի վարպետությամբ և տաղանդով:

2016 թվականին <<Պավանա>> սիմֆոնիկ պատկերն ընդգրկվել է Արամ Խաչատրյանի անվան 12-րդ միջազգային մրցույթի <<Դիրիժորություն>> մասնագիտության ծրագրում, որպես պարտադիր կատարվող ստեղծագործություն: 2017 թվականի փետրվարի 28-ին <<Արամ Խաչատրյան>> համերգասրահում տեղի ունեցավ Էդուարդ Հայրապետյանի դաշնամուրի և սիմֆոնիկ նվագախմբի համար գրված կոնցերտի պրեմիերան, դաշնակահարուհի Նարե Արղամանյանի և Հայաստանի սիմֆոնիկ նվագախմբի կատարմամբ՝ դիրիժոր Մերգել Սմբատյանի ղեկավարությամբ: Այս ստեղծագործությունն առիթ հանդիսացավ Էդուարդ Հայրապետյանին առաջադրելու ՀՀ պետական մրցանակի: (2018թ.):⁷

Անդրադառնալով Էդուարդ Հայրապետյանի ուսումնական տարիներին՝ դեռ վաղ տարիքից մեծ հետաքրքրություն ցուցաբերեց դեպի երաժշտությունը. նվագում էր ակորդեոն և երգում «Աֆիցերների տան» դպրոցի երգչախմբում: Երգչախմբի ղեկավարը տեսնելով տղայի ընդունակությունները, խորհուրդ է տալիս տղային ընդունվել երաժշտական դպրոց: Շուտով Էդուարդ Հայրապետյանն ընդունվում է Տիգրան Չուխաջյանի անվան երաժշտական դպրոց: Այդ ժամանակ դպրոցում բացվում է կոմպոզիտորական դասարան, դպրոցի տնօրեն՝ Ջենմա Սարգսյանի հրավերով գալիս է դասավանդելու Գևորգ Արմենյանը՝ կոմպոզիտորական դասարանում և նրա մոտ Էդուարդ Հայրապետյանը սովորում է կոմպոզիցիա: Դպրոցն ավարտելուց հետո ընդունվում է Ռոմանոս Մելիքյանի անվան երաժշտական ուսումնարան՝ Գևորգ Հախինյանի կոմպոզիտորական դասարան, ավարտելով ուսումնարանը՝ ընդունվում է Կոմիտասի անվան կոնսերվատորիա՝ իր Դաշնամուրային տրիոյով: Գրիգոր Եղիազարյանի դասարանում Էդուարդ Հայրապետյանի հետ սովորում էին նաև Վահրամ Բաբայանը, Երվանդ Երկանյանը, Ռուբեն Սարգսյանը, ինչպես նաև բարձր կուրսերում սովորողներ՝ Մարտուն Իսրայելյանը և Աշոտ Զոհրաբյանը: Այդ դասարանում սովորող տաղանդավոր, երիտասարդ կոմպոզիտորները ձեռք բերեցին ժամանակակից երաժշտության լեզվի տարրեր՝ ներդնելով այն հայկական երաժշտության մեջ, որի վրա մեծ ազդեցություն ունեցավ XX դարի 50-60-ական թվականների Արևմտյան Եվրոպայի երաժշտությունը: Եվ այդ ժամանակ Հայաստանում կամերային-գործիքային ժանրն ունեցավ մեծ զարգացում:

⁷ Ռուխկյան Մ., Էդուարդ Հայրապետյանը 70 տարեկան է: Բարձր թոփչքի արվեստագետը: Արվեստագիտական հանդես 2 (4), Երևան, 2020, էջ 187:

Հայկական կամերային-գործիքային երաժշտության մեջ մենք հազվադեպ ենք հանդիպում դաշնամուրային կվարտետի, քանի որ կվարտետները հիմնականում գրվում էին լարային կազմի համար, ինչպես Հայդնի, Մոցարտի, Բեթհովենի և մի շարք կոմպոզիտորների ստեղծագործությունների ցանկում: Էդուարդ Հայրապետյանի բազմաթիվ կամերային-գործիքային ստեղծագործություններում հատուկ տեղ է գտել դաշնամուրային կվարտետը: Բնորոշ է այն փաստը, որ այս ստեղծագործությունն սկզբում գրվել է որպես Տրիո 1981 թվականին: Այդ տրիոն գրված է եղել ջութակի, թավջութակի և դաշնամուրի համար, որոշ ժամանակ անց կոմպոզիտորը նորից անդրադարձել է այս ստեղծագործությանը և 1998 թվականին վերանայել՝ վերաձևելով այն դաշնամուրային կվարտետի: Ստեղծագործության հարմոնիկ լեզուն և ֆակտուրան հարստացան ալտի ներդրմամբ: Հետաքրքիր է, որ կոմպոզիտորին Դաշնամուրային տրիոն չէր գոհացնում և դա էր պատճառը, որ մի քանի տարի անց վերանայեց և նորովի ներկայացրեց ունկնդրին:

Կոմպոզիտորը պատմում է. <<Երկար տարիներ է պահանջվել, որպեսզի այս ստեղծագործությունը վերջնական ձևով ներկայացնեմ, քանի որ կվարտետի երկրորդ մասը կերպարային առումով չէր համապատասխանում առաջին և երրորդ մասերին>>:

Առաջին անգամ կատարվել է որպես տրիո Կիևում, 1984 թ., իսկ որպես դաշնամուրային կվարտետ առաջին անգամ կատարվել է 2016 թ. Գյումրիի <<Վերածնունդ>> միջազգային մրցույթ-փառատոնին՝ արժանանալով առաջին կարգի մրցանակի: Կատարել են՝ Գևորգ Գասպարյանը (ջութակ), Անիտա Բայանդուրը (ալտ), Նարեկ Գասպարյանը (թավջութակ) և Գոհար Կարապետյանը (դաշնամուր):

Մրցույթին մասնակցում էին ԱՄՆ-ի, Էստոնիայի, Ռուսաստանի, ինչպես նաև Հայաստանի ներկայացուցիչներ:

Մրցույթին մասնակցելու համար հարկավոր էր երկու ստեղծագործություն՝ առաջին ստեղծագործությունն ըստ մասնակիցների ցանկության՝ մենք ընտրեցինք Յոհաննես Բրամսի Դաշնամուրային կվարտետը՝ op. 25, g moll: Իսկ երկրորդը՝ որպես մասնակից անդամների երկրի ստեղծագործություն՝ Էդուարդ Հայրապետյանի Դաշնամուրային կվարտետը: Շատ մեծ դժվարությամբ ԵՊԿ պրոֆեսոր՝ Իրինա Բադալյանը գտավ Էդուարդ Հայրապետյանի դաշնամուրային կվարտետը: Կոմպոզիտորը մեզ փոխանցեց իր նոտաները և սկսեցինք պարապմունքները: Որոշ ժամանակ անց մենք խնդրանքով դիմեցինք, որպեսզի կոմպոզիտորը լսի մեր կատարումը և ուղղություն ցույց տա: Էդուարդ Հայրապետյանի հետ պարապմունքների շնորհիվ մեկ այլ տեսանկյունից մոտացանք այս ստեղծագործությանը:

Կոմպոզիտորը դաշնամուրային կվարտետը գրել է ստեղծագործական վաղ շրջանում: Նկատելի են էմոցիոնալ ընկալումները՝ շրջապատում տեղի ունեցող իրականության մեջ: Դաշնամուրային կվարտետում կոմպոզիտորն օգտագործել է հարուստ ֆակտուրա, դինամիկա, ռիթմ և խրոմատիկ շարադրանք, որոնց շնորհիվ ստեղծագործությունը դառնում է ավելի ցայտուն, գունեղ, ինչպես նաև փոխանցում է կերպարների ինքնատիպությունը: Կոմպոզիտորը կվարտետում օգտագործել է այնպիսի հնարներ, որոնց շնորհիվ յուրաքանչյուր գործիք կարողացավ ցույց տալ իր հնարավորությունները: Հատկանշական է, որ կոմպոզիտորը կվարտետի մասերում հրաժարվում է տեմպերի անվանումներից, այլ միայն նշվում է. քառորդը հավասար է MM 138 զարկին (նկ.1):



(նկ.1)

Դաշնամուրային կվարտետը կազմված է երեք մասից: Կվարտետի առաջին մասը գրված է վարիացիոն ձևում: Կվարտետը յուրահատուկ է իր ձևակառուցվածքով: Առաջին մասում բացակայում է թեմատիկ զարգացումը, այսինքն՝ զարգացումը վարիացիոն է: Վարիացիայի անցումը հաջորդ վարիացիային քողարկված չէ, այլ հստակ երևում է: Կվարտետի առաջին մասն սկսվում է լարային գործիքների հզոր ff-ով, շեշտված ֆակտուրայով, իսկ դաշնամուրի մոտ fff, որի դինամիկան աստիճանաբար մարում և հանում է pp-ի: Դաշնամուրի նվագաբաժնում ակորդները պահում են լարվածությունը, հասցնում են նորից պոթելուն ff-ի: Այս դինամիկ կտրուկ փոփոխություններն արտահայտում են կոմպոզիտորի հոգեվիճակը, ապրումները, ըմբոստացումը, հակադրում են հզորությունը նուրբ և հանգիստ կերպարների հետ, որոնց երկխոսությունից էլ ծնվում է լարվածություն: Այնուհետև սկսվում է հաջորդ վարիացիան, որից հետո տեղի է ունենում չափերի փոփոխություն. 4/4-ը փոխվում է 3/4-ի: Կերպարային առումով երաժշտությունը դառնում է ավելի տոնական և

կենցաղային: Այդ կերպարին մոտենալու համար օգտագործել է դիստանս ինտերվալներ, գլիսանդներ, ակորդներ, տրիելներ, *col legno*: Գործիքներն ի հայտ են գալիս միասին, ունիսոն, խրոմատիկ տրիոլներով, շեշտված կանոնիկ շարադրանքով, խրոմատիկ գամմայաձև շարժումները դեպի վեր են անցնում հերթականությամբ բոլոր գործիքների նվագաբաժիններում՝ երաժշտությունը դարձնելով ավելի սուր և դրամատիկ: Այս մասում կատարողական բարդություններից է լարային գործիքների նվագաբաժնում ինտերվալների շարադրանքը. վերևի օկտավաներից մեծ թռիչքներով ներքև՝ արագ տեմպում, այս ամենին է ավելանում կանոնիկ շարադրանքը, որտեղ շատ կարևոր է ջութակահարի դերը՝ մուտքերը ցույց տալու համար (նկ.2): Ինչպես նշեց կոմպոզիտորն այսպիսի հատվածներում հարկավոր չէ փափկեցնել ինտերվալները, ինչպես նաև պետք է շատ մեծ կարևորություն տալ շեշտերին:



(նկ.2)

Վարիացիան ավարտվում է *pp* դինամիկայով, այնուհետև փոքր դադարից հետո սկսվում է հաջորդ վարիացիան՝ *ff* դինամիկայով, այստեղ կոմպոզիտորն օգտագործել է ոչ միայն դադար, այլ նաև դինամիկայով տարանջատել է վարիացիաները միմյանցից:

Այնուհետև տեղի է ունենում տրամադրության փոփոխություն, կրկին կտրուկ և չոր ինտերվալներով ի հայտ է գալիս չափի փոփոխություն, ավելի թափանցիկ ֆակտուրա, որն իր բնույթով կապող օղակ է հանդիսանում դեպի բարձրակետը: Առաջին մասի բարձրակետը հասնում է սկզբում հնչած շեշտված ակորդներից վերցված, բայց ավելի հզոր դինամիկ ակորդներով, որոնք ապահովում են կառուցվածքի ամրությունը՝ ինչպես ճարտարապետության մեջ պուլսը: Բարձրակետը կառուցված է չոր և շեշտված դիստանս ակորդների հարմոնիայի վրա, սակայն ավելի ուժգին, ինչը բնորոշ է բարձրակետին: Լարվածությունը հասնելով բարձրակետին՝ աստիճանաբար խաղաղվում, հանգստանում, դանդաղեցնում է տեմպը, մարում, ապա նորից *fff* հնչողություն և հանդարտվելով ավարտվում է առաջին մասը: Վերոհիշյալ նկարագիրը թույլ է տալիս ենթադրություններ

անել կոմպոզիտորի կոնստրուկտիվ մտածելակերպի մասին, որի մեջ երևում է գեղեցիկի և էսթետիկ կերպարների հետաքրքիր համադրությունը:



(նկ.3)

Էդուարդ Հայրապետյանը Կվարտետի երկրորդ մասը ենթարկում է ձևափոխությունների: Սկզբում այն կերպարային բնույթով չէր համապատասխանում կվարտետի առաջին և երրորդ մասերին, սակայն կոմպոզիտորը երկրորդ մասը դարձրեց մեղիտացիոն, բայց ի նկատի ունենալով ոչ թե բուդդայական մեղիտացիան, որտեղ մարդու միտքն անջատվում է բանականությունից, այլ մարդու հուզական և խորն ապրումներն իր մեջ պահելով, որն ստեղծեց ավելի դրամատիկ կերպար՝ կապելով ներքին լարման հետ, ունկնդրին ստիպելով լարված սպասել ստեղծագործության հետագա զարգացմանը: Երկրորդ մասն սկսվում է պարզ լրա բեմով նոտայով բոլոր գործիքների նվագաբաժնում (նկ.3), որն իր մեջ պարունակում է գաղտնիություն, նկարագրում է մարդու հոգեվիճակն ի հայտ գալով ոչ թե երկրային, այլ ավելի խորը երկնային մի ամբողջ աշխարհ, ինչն ավելի է հաստատում լարայինների մեղմոցով սկսելը:

Եվրոպական դասական երաժշտության մեջ օկտավան հաստատում է տոնայնությունը, իսկ հայկական երաժշտության մեջ ցույց է տալիս օբերտոնները: Բայց այստեղ օկտավան մեկ այլ դեր ունի, ինչպես վերը նշեցինք: Կոմպոզիտորը հիմա էլ է օգտագործում օկտավաներ, նախավերջին սիմֆոնիայի ֆինալում, ինչպես նաև կոնցերտում: Կարծես թե օկտավան կանգնած է, բայց այդ օկտավայի մեջ կա ներքին կուտակում, լարվածություն, որի մեջ տրիոլները *crescendo*-ով ու *diminuendo*-ով ավելի արտահայտված տենուտոններով և ռուբատոներով զարգանալով հասնում են *ff* (նկ.4): Այս մասում դինամիկայի նշանները կատարողներից մեծ վարպետություն են պահանջում: Կվարտետում բոլոր գործիքների մոտ դրված են նույն դինամիկայի նշանները, որը շատ հմտորեն և ճիշտ

չափաբաժիններով պետք է կատարել որպեսզի դինամիկ կերպարը փոփոխության չենթարկվի:

The musical score is for a piano piece, likely in 4/4 time. It consists of five measures, each with a key signature change indicated by a sharp sign and a new key signature (F# major, G# minor, A major, B minor, C# major). The score is written for four staves: two for the right hand (treble clef) and two for the left hand (bass clef). The dynamics are marked as follows: *pp* (pianissimo), *mf* (mezzo-forte), *piu mf* (piu mezzo-forte), *p* (piano), *f* (forte), *piu f* (piu forte), *mp* (mezzo-piano), and *ff* (fortissimo). The articulation is marked with slurs and accents. The first measure is marked *pp* and *mf*. The second measure is marked *pp* and *piu mf*. The third measure is marked *p* and *f*. The fourth measure is marked *p* and *piu f*. The fifth measure is marked *mp* and *ff*. The score is written in a modern, clean style with clear notation for dynamics and articulation.

(նկ.4)

Այնուհետև երկար ֆերմատայից հետո շարունակվում է սի բեմոլ՝ օկտավայով, որը երաժշտությունը դարձնում է կենդանի, ճկուն և շարժուն: Լարայինների մոտ մեղեդու անցումները կարծես թե ֆուգայի տարրեր լինեն, որը մշակվում և զարգանում են: Երկրորդ մասի վերջում արդեն ի հայտ է գալիս ընդ օկտավան, որը հանգստացնում, ամփոփում է երկրորդ մասը՝ միննույն ժամանակ այն կապող օղակ է հանդիսանում լյա բեմոլ և սի բեմոլ օկտավաների համար: Երրորդ մասը հակադրումն է երկրորդ մասին, որն ավելի ակտիվ է, կատաղի, ներքին կուտակումների բաց թողումով, չորությամբ և սրությամբ: Եթե առաջին մասում էպիզոդներ կան, որոնք ավելի հանգիստ բնույթի են, որի շնորհիվ հանդարտվում է երաժշտությունը, ապա երրորդ մասում կոմպոզիտորը հնարավորություն չի տալիս: Դաշնամուրն սկսում է *ff* ակորդներով, մեծ էներգիայով, օգտագործելով շեշտեր յուրաքանչյուր ակորդի վրա, զանազան ակորդներ, ֆլաժոլետներ, ինչն ավելի է ընդհանրացրել և ամփոփել երրորդ մասը (նկ.5):



(ն

կ.5)

Յուրաքանչյուր ակորդի վրա դրված են շեշտեր, որպեսզի կերպարը և կառուցվածքը չփոխվեն: Լարայինների մոտ օգտագործված գլխասանդոները դառնում են անկանոն, իսկ դաշնամուրի մոտ դեպի վարընթաց շարժումով, բայց մեղեդիական գիծը շեշտելով: Այս մասում կատարողական խնդիրներից է լարայինների նվագաբաժնում գլխասանդոները, որոնք կատարելիս հարկավոր է պահել ռիթմը: Պատահական չէ, որ կոմպոզիտորը դաշնամուրի բաժնում տասնվեցերորդական նոտաների վրա դրել է շեշտեր, որոնք հիմք են դառնում լարայինների համար՝ պահելով ռիթմը (նկ.6):



(նկ.6)

Ստեղծագործությունը որքան ընթանում է դեպի վերջաբան, այնքան տեմպն աստիճանաբար արագանում է, ինչը բերում է ավելի անհանգիստ վիճակի: Լարայինների նվագաբաժնում սինկոպաները դառնում են ավելի ակտիվ և դուրս են գալիս վերահսկողությունից: Այնուհետև դաշնամուրն է դառնում հիմք լարայինների համար: Ստեղծագործության արագ տեմպը դանդաղում է, վերադառնում ենք սկզբնական տեմպին, կրկնվում է երրորդ մասի սկիզբը, բայց ավելի խտացված ֆակտուրայով, ֆլաժոլետներով, գլիսանդոներով, դուոդեցիմա ինտերվալներով, սինկոպաներով, որտեղ դաշնամուրը հիմք է դառնում լարայինների համար: Երրորդ մասի բարձրակետից հետո տեմպը դանդաղում է: Կարծես սա կոդա լինի երրորդ մասի համար. փոխվում է ֆակտուրան, հարմոնիկ լեզուն, ի տարբերություն առաջին և երկրորդ մասերի՝ դաշնամուրն է ամփոփում երրորդ մասը:

Դաշնամուրային կվարտետի կատարողական բարդություններից են հանդիսանում լարային գործիքների ինտերվալային ֆակտուրան տարբեր ինտերվալներով ընդհուպ մինչև դուոդեցիմա, նվագաբաժինները տարբեր օկտավաներում, գլիսանդոները, տարբեր ինտերվալներով ֆլաժոլետները, իսկ դաշնամուրի նվագաբաժնում՝ ակորդային ֆակտուրայում գտնել ճիշտ դինամիկան և մոտեցնել լարայինների հնչողությանը, օկտավաների թռիչքներն արագ տեմպում՝ դինամիկ զարգացմամբ (նկ.7):



(նկ.7)

Անսամբլային կատարման բարդություններից է բոլոր մուտքերի, ինչպես նաև կոմպոզիտորի կողմից դրված փոքր դադարներից հետո մուտք գործելը ճիշտ հզորությամբ և ներքին էներգիայով: Այս կվարտետում

կոմպոզիտորը թե՛ դինամիկ և թե՛ կերպարային փոփոխության ժամանակ տվել է կատարողներին փոքր դադարներ, դատարկ տակտեր և փոքր շնչեր, որպեսզի կարողանան ճիշտ կերպարով շարունակել: Երրորդ մասում լարայինների գլխասանդոների հստակ միմյանց փոխանցելը համադրելով դաշնամուրի բաժնի շեշտված տասնվեցերորդական նոտաների հետ: Երրորդ մասի սինկոպաները միայն լարայինների բաժնում լի են կատարողական բարդություններով. ալտը և թավջութակը հիմք են հանդիսանում ջութակի համար, որի նվագաբաժինը համընկնում է թույլ մասերում: Այս կվարտետը կատարողներից պահանջում է շատ աշխատանք և կատարողական վարպետություն:

Լինելով Էդուարդ Հայրապետյանի դաշնամուրային կվարտետի առաջին կատարող, ես մեծ սիրով և հետաքրքրությամբ մոտեցա այս ստեղծագործությանը: Այս նյութը լի է նորարարական գաղափարներով, գրելաձևով, իր կառուցվածքով, տարբեր տրամադրությունների և կերպարների առկայությամբ:

Էդուարդ Հայրապետյանի դաշնամուրային կամերային-գործիքային ստեղծագործություններ.

Դաշնամուրային տրիո՝ ջութակի, թավջութակի և դաշնամուրի համար (2014)

Կվարտետ՝ ջութակի, ալտի, թավջութակի և դաշնամուրի համար (1981-1998)

<<Բնապատկեր սարով>> կվարտետ՝ ֆլեյտայի, կլարնետի, ֆագոտի և դաշնամուրի համար (2016)

Սյուիտ ֆլեյտայի համար, 5 հարվածայինների և դաշնամուր համար (1976)

<Երկխոսություն>՝ ջութակի և դաշնամուրի համար (1995)

<<Թիթեռների օրը>>՝ ալտի և դաշնամուրի համար (2019)

Սոնատ ֆլեյտայի և դաշնամուրի համար (2005)

Սոնատ հոբոյի և դաշնամուրի համար (2005)

Սոնատ կլարնետի և դաշնամուրի համար (2005)

Սոնատ ֆագոտի և դաշնամուրի համար (2005)

Սոնատ № 1 ջութակի և դաշնամուրի համար (1972)

Սոնատ № 2 ջութակի և դաշնամուրի համար (1980)

Սոնատ № 3 ջութակի և դաշնամուրի համար (1982)

Սոնատ № 4 ջութակի և դաշնամուրի համար (1992)

Սոնատ 2 ջութակի և դաշնամուրի համար (1988)

Սոնատ № 1 ալտի և դաշնամուրի համար (1980)

Սոնատ № 2 ալտի և դաշնամուրի համար (1983)

Սոնատ № 3 ալտի և դաշնամուրի համար (1986)

Սոնատ № 4 ալտի և դաշնամուրի համար (2006)

Սոնատ № 5 ալտի և դաշնամուրի համար (2016)

Սոնատ № 1 թավջութակի և դաշնամուրի համար (1980)

Սոնատ № 2 թավջութակի և դաշնամուրի համար (1984)

Եզրակացություններ

Թեմայի ուսումնասիրության արդյունքում մեր եզրահանգումներն են՝

1. Էդուարդ Հայրապետյանը հայկական կոմպոզիտորական դպրոցի վառ ներկայացուցիչներից մեկն է:
2. Հիմնվելով եվրոպական դասական երաժշտության, արմատավորված հայկական պրոֆեսիոնալ երաժշտության ավանդույթների վրա, սինթեզելով ժամանակակից մեղեդային լեզվի տարրերը՝ ժողովրդա-պրոֆեսիոնալ, ինչպես նաև մեծ հետաքրքրությամբ արձագանքելով ժամանակակից պրոֆեսիոնալ երաժշտության ենթակառուցվածքներին, ստեղծեց իր կոմպոզիտորական ուղին:
3. XX դարում Հայաստանի կոմպոզիտորական ստեղծագործական կյանքն իր պատմության ծաղկումն էր ապրում: Էդուարդ Հայրապետյանն այդ կոմպոզիտորների թվում է, ով իր ստեղծագործություններով արժանանում է թե՛ կատարողների և թե՛ ունկնդիրների ուշադրությանը:
4. Դաշնամուրային կվարտետը յուրովի է իր ձևակառուցվածքով. բացակայում է թեմատիկ զարգացումը՝ այսինքն վարիացիոն ձևում է: Վարիացիայի անցումը մյուսին քողարկված չէ, այլ հստակ երևում է:

Օգտագործված գրականություն

1. Ռուխկյան Մ., Էդուարդ Հայրապետյանը 70 տարեկան է: Բարձր թոփչքի արվեստագետը: Արվեստագիտական հանդես 2 (4), Երևան, 2020, էջ 187:
2. Ռուխկյան Մ., «Էդուարդ Հայրապետյանի ժամանակը» Երևան, 2020, էջ 10:

Гоар Карапетян

Эдуард Айрапетян

Фортепианный квартет (1981 – 1998)

Заключения

Ключевые слова и выражения: фортепианный квартет, форма вариаций, отсутствие тематики, октава, обертон, первое исполнение.

Нашы выводы рл результатам исследования темы:

1. В данной статье мы рассматриваем фортепианный квартет композитора Эдуарда Айрапетяна. Это произведение занимает свое неоспоримое место как в музыкальном творчестве композитора, так и в армянской камерной инструментальной музыке в целом.
2. В 1981 году он создал фортепианное трио для скрипки, виолончели и фортепиано, однако спустя некоторое время, в 1998 году преобразовал трио в фортепианный квартет (скрипка, альт, виолончель и фортепиано). Вторую часть квартета Айрапетян изменил в образном смысле и сделал ее медитационной, однако, имея в виду не буддистскую медитацию, где человеческое мышление отделено от разумного, а, сдерживая эмоции и глубокие переживания, описывает душевное состояние человека как небесный, духовный мир.
3. Эдуард Айрапетян - один из ярких представителей армянской композиторской школы.
4. Он создал европейскую классическую музыку, берущую корни в армянских профессиональных музыкальных традициях, синтезировал современные мелодические элементы с народными и народно – профессиональными, а также с большой заинтересованностью откликнулся на современную профессиональную музыкальную структуру, тем самым создав свое собственное композиторское направление.
5. В 20 веке армянская композиторская творческая жизнь переживала бурный расцвет. Эдуард Айрапетян принадлежит к тем композиторам, чье творчество удостоено внимания как исполнителей, так и слушателя.
6. Фортепианный квартет уникален по своей композиции. В нем отсутствует общее тематическое развитие, т.е. он основан на взаимопереходе вариаций, что не завуалировано, а ярко проявляется.

Gohar Karapetyan

Eduard Hayrapetyan
Piano quartet (1981 – 1998)
Conclusion

Key words and expressions: piano quartet, form of variations, thematic lack, octava, overtone, the first performance.

As a result of the study of the theme, our conclusions are as follows:

1. In the present article we deal with the piano quartet of the composer Eduard Hayrapetyan. This musical work has its incomparable place both in the creative activity of the composer and in the Armenian chamber instrumental music.
2. Eduard Hayrapetyan is one of the prominent representatives of the Armenian composer school.
3. He created European classic music derived from Armenian professional musical traditions, synthesized contemporary melodic elements with folk and folk - professional elements.
4. He also responded with great interest to the contemporary professional musical structure and in this way created his own special composer trend. In the 20th century composer creative life was flourishing. Eduard Hayrapetyan belongs to those composers whose creative activity is appreciated by the musicians and by the listeners.
5. In 1981 he created the piano trio for violin, cello and piano. However some time later he transformed the trio into the piano quartet (violin, viola, cello and piano). The second part of the quartet was transformed in the figurative meaning. It became more meditative, but not in the meaning of Buddhist meditation, where human thinking is separated from reasonable notion. He described spiritual state of a human being as the heavenly spiritual world. At the same time he restrained human emotions and deep feelings.
6. The piano quartet is unique by its composition. It lacks the general thematic development, i. e. it is based on the mutual transition of the variations, which is expressed very brightly.

Խմբագրություն է ուղարկվել 19. 01. 2023թ.

Հանձնարարվել է գրախոսության 30.01.2023թ.

Տպագրության է հանձնարարվել 13.03.2023թ.

ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ

ՆԱԻՐԱ ՏՈՂԱՆՅԱՆ

Խաչատուր Աբովյանի անվան ՀՊՄՀ

Մանկ. գիտ. թեկն., դոցենտ

Էլիասցե՝ narat64@mail.ru

**ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԵՐԿԽՈՍՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ
ՈՐՊԵՍ ԳՐԱԿԱՆ ԵՐԿԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՅՈՒՐՈՅՄԱՆ ՄԻՋՈՑ**

Ամփոփում

Հոգիվածում ներկայացված է ուսումնական երկխոսությունը որպես գրական երկի ընկալման արդյունավետ միջոց: Քննարկված են նման դասերկխոսությունների կազմակերպման ձևերն ու միջոցները: Ներկայացված են հարցերի կազմման ձևերը: Կարևորված է ուսուցչի և աշակերտի գիտակից, հավասար և համատեղ գործունեությունը՝ ուղղված գրական երկի ինքնուրույն ընկալմանը: Գրականության դասին ուսումնական երկխոսության արդյունավետ կազմակերպման արդյունքում սովորողը ձեռք է բերում ինքնուրույն, քննադատական մտածողություն, երևակայություն, դրական փոխկախվածություն, փոխըմբռնում, փոխադարձ շփումներ, եզրահանգումներ անելու կարողություն, վերլուծական միտք և որպես արդյունք՝ երկի բովանդակության ընկալում:

Բանալի բառեր և արտահայտություններ. Ուսումնական երկխոսություն, փոխըմբռնում, դրական փոխկախվածություն, առանցքային հարցեր, կարծիք, վերաբերմունք, մտագործունեություն:

Ներածություն

Ուսումնական նյութի արդյունավետ ընկալման ուղիներից մեկը համագործակցային ուսումնական միջավայրի ստեղծումն ու երկխոսության կազմակերպումն է: Համագործակցային փոխհաղորդակցության հիման վրա աշակերտի և աշակերտի, աշակերտի և ուսուցչի միջև կազմակերպվող երկխոսությունը ենթադրում է համագործակցային ուսուցման այնպիսի մոդել, որտեղ և՛ ուսուցիչը, և՛ աշակերտը միևնույն կողմում են և համատեղ ջանքերն ուղղում են դեպի առաջադրանքը¹: Ուսուցչի և աշակերտի

¹ Ի տարբերություն ավանդական մոդելի, երբ ուսուցիչն առաջադրանքի հետ մի կողմում է, իսկ աշակերտը՝ մյուս կողմում:

փոխհարաբերությունը այս պարագայում սուբյեկտ-սուբյեկտ հարաբերություն է: Ուսումնական գործունեությունն էլ բնութագրվում է որպես մտագործունեություն, այսինքն՝ որպես ուսուցչի և աշակերտի գիտակից, հավասար և համատեղ գործունեություն՝ ուղղված դեպի գիտելիքի կառուցումը, ոչ թե նյութի պարզ վերարտադրությունը: Նպատակաուղղված երկխոսության կազմակերպումը գրականության դասերին հնարավորություն կընձեռի գրական երկն ուսումնասիրել և իհարկե ընկալել փոխադարձ շփումների, փոխըմբռնման, քննարկումների մթնոլորտում: Միաժամանակ երկխոսության միջավայրը նպաստելու է աշակերտի մտածողության խթանմանը (վերջինս որակյալ ուսուցման առաջին գրավականն է): Եթե ի մի բերենք գրականության դասին ուսումնական երկխոսության կազմակերպման «հետևանքները», ապա կունենանք հետևյալ պատկերը. ինքնուրույն, քննադատական մտածողություն, երևակայություն, դրական փոխկախվածություն, փոխըմբռնում, փոխադարձ շփումներ, եզրահանգումներ անելու կարողություն, վերլուծական միտք և որպես արդյունք՝ երկի բովանդակության ընկալում:

Որպես կանոն, ուսումնական երկխոսության կիրառմամբ անցկացվող դասերը վերածվում են ստեղծագործության շուրջ առաջացող հարցերի պատասխանների փնտրտուքի: Այդպիսի աշխատանքի ընթացքում գրական երկը խորությամբ վերլուծվում և մեկնաբանվում է: Երկխոսության այսպիսի մթնոլորտի միջոցով տարբեր մտքեր են ձևավորվում, արտահայտվում, վերաձևակերպվում, առաջադրվում են նոր հարցեր, խնդիրներ: Համատեղ աշխատանքի ընթացքում սովորողի աչքի առաջ ստեղծագործությունը բացվում է, մեկնաբանվում, վերլուծվում: Ուսուցիչը ոչ թե պատմում է գրքի մասին կամ պատրաստի վերլուծություն ներկայացնում, այլ նպաստում է երկի բովանդակության շուրջ երկխոսության կայացմանը: Երկխոսության նպատակը պետք է լինի ստեղծագործության ընկալումը, վերլուծությունը, կերպարների բնութագրումը և այլն:

Ուսուցչի խնդիրն է կազմակերպել և վարել այնպիսի երկխոսություն, որի ընթացքում յուրաքանչյուր սովորող տարբեր հարցեր կձևակերպի, կպատասխանի դասընկերների և ուսուցչի հարցերին՝ այդ ընթացքում արտահայտելով, անհրաժեշտության դեպքում նաև պաշտպանելով սեփական տեսակետը, մտքերը կարծիքը:

Այս աշխատանքի նպատակը չէ ստանալ ընդհանուր, միասնական և վերջնական լուծում կամ պատասխան. նման երկխոսությունների

արդյունքում յուրաքանչյուր սովորող պետք է խորացնի կարդացածի իր ընկալումը, իր եզրահանգումներն ու վերլուծությունները:

Մեթոդաբանություն

Հայ նորագույն գրականության ամենատաղանդավոր արձակագիրներից մեկի՝ Հրանտ Մաթևոսյանի «Աշնան արև» վիպակի ուսուցման օրինակով փորձենք ներկայացնել ուսումնական երկխոսության արդյունավետությունը: «Աշնան արև»-ը այն ստեղծագործություններից է, որի ուսուցումը հնարավորություն է ընձեռում առնչվել բարձրաճաշակ խոսքի արվեստին: Մաթևոսյանական խիտ, հագեցած, բազմաճյուղ, երկարաշունչ (բայց ոչ երբեք ձանձրալի) մտքերը գրական մնայուն արժեքներ են, որոնց հետ շփումը կնպաստի աշակերտի և՛ գրական գիտելիքների հարստացմանը, և՛ գեղագիտական ճաշակի ձևավորմանը, և՛, անշուշտ, գրավոր ու բանավոր խոսքի զարգացմանը:

Վիպակի ուսուցումը կազմակերպելու համար առաջարկում ենք բնագրի շուրջ իրականացնել համագործակցային երկխոսություն՝ ապահովելով քայլերի որոշակի հաջորդականություն: Երկխոսության նախապատրաստման և անցկացման համար անհրաժեշտ է հաշվի առնել հետևյալ կարևոր հանգամանքները.

-առաջնահերթ պետք է ձևակերպվեն բնագրի վերաբերյալ առանցքային հարցերը (բանալի հարցեր), որոնց շուրջ կայացող երկխոսությունը կբացահայտի վիպակի որոշ, առաջին հայացքից անհասկանալի պահերը.

-հարցերը պետք է այնպես ձևակերպվեն, որ պատկերացում տան վիպակի սյուժեի, կառուցվածքի, դեպքերի հաջորդականության, կերպարների առանձնահատկությունների վերաբերյալ, ինչպես նաև նպաստեն վիպակում արտացոլված ժամանակի և տարածության խնդրի ընկալմանը.

-հարցերը պետք է նպատակաուղղված լինեն վիպակի լեզվական առանձնահատկությունների վերհանմանը, արժևորմանը, պետք է վեր հանեն նաև գեղարվեստական շարադրանքի ձևերը՝ մենախոսություն, երկխոսություն, հուշ և այլն.

-հարցերը պետք է նպաստեն ինքնուրույն կարծիքի, վերաբերմունքի ձևավորմանը:

Ստորև ներկայացնում ենք «Աշնան արև» վիպակի ուսուցմանն ուղղված ուսումնական երկխոսության կազմակերպման մոդել.

Հարցի թեման	Հարցը	Օրինակ
Սուբյեկտ	Ո՞վ	Վիպակի հերոսներից ո՞վ է իրադարձությունների կենտրոնում: Վիպակի հերոսներից ո՞վքեր և ի՞նչ առնչություն ունեն գլխավոր հերոսուհու հետ:
Օբյեկտ	Ի՞նչ	Ի՞նչն է ամենից շատ զայրացնում Աղունին: Ի՞նչն է վիպակում քեզ համար անհասկանալի կամ դժվարմբռնելի (իրադարձություն, արարք, խոսք, մանրամասնություն և այլն):
Ժամանակ	Ե՞րբ Որքա՞ն Ժամանակ	Ե՞րբ է հերոսուհին սկսում վերհիշել իր անցյալը: Որքա՞ն ժամանակ է պետք լինում հերոսուհուն վերհիշելու համար իր ողջ կյանքը: Ե՞րբ են ձևավորվել Աղունի հայացքները կյանքի նկատմամբ:
Տարածություն	Որտե՞ղ	Որտե՞ղ են տեղի ունենում իրադարձությունները: Ի՞նչ է Ծմակուտը:
Շարժում	Ո՞ւր, Ինչո՞ւ, Ո՞ր տեղից	Ո՞ւր էր պատրաստվում գնալ Աղունը և ինչո՞ւ: Ո՞ւր էր գնացել Աղունի որդին:
Նպատակ	Ինչո՞ւ Ի՞նչ նպատակով	Ինչո՞ւ է հեղինակը վիպակն անվանել «Աշնան արև»: Ի՞նչ նպատակով է հեղինակը հուշերի գիրկը նետում Աղունին:
Մեթոդը, միջոցը	Ինչպե՞ս Ի՞նչ միջոցով	Ինչպե՞ս են կապվում Աղունի հիշողությունները վիպակի իրադարձությունների հետ: Ինչպե՞ս են ներքաշվում վիպակի իրադարձությունների մեջ մյուս հերոսները: Ինչպե՞ս են վիպակի մյուս հերոսները վերաբերվում գլխավոր հերոսուհուն:

Այսպիսով, անհրաժեշտ է հստակ ամրագրել այն դրույթը, որ չնայած գրական ստեղծագործության ընկալման բազմաթիվ ձևեր կան, սակայն գրական երկը լիարժեքորեն կարելի է ընկալել միայն նրա ընթերցողների միջև երկխոսության ընթացքում:

Երկխոսություն, որը կարող է ընթանալ ինչպես աշակերտների (ընթերցողների) միջև, այնպես էլ՝ ուսուցչի և աշակերտների, աշակերտների և գրական երկի հերոսների և վերջապես՝ աշակերտների և երկի հեղինակի միջև:

Ուսուցիչը նաև երկխոսության մասնակիցներից մեկն է: Որպես երկի ընթերցող՝ նա է ներկայացնում ստեղծագործությունը, հեղինակին, պատմական ժամանակաշրջանը, ստեղծագործության իր ընկալումը, կարծիքը, մտքերը: Սակայն այս ամենով հանդերձ, կարևոր է այն հանգամանքը, որ ուսուցիչը չի պարտադրում իր կարծիքը, դատողությունները: Դրանք պետք է հնչեն որպես անհատական կարծիք, լինեն համոզիչ, ունենան հիմնավոր փաստարկներ, սակայն չպարտադրվեն որպես վերջնական ճշմարտություններ: Ուսուցիչը նաև միշտ պետք է պատրաստ լինի այն իրավիճակին, որ բանավեճը դասարանում իր սպասածից ու պլանավորածից տարբեր ուղղությամբ կարող է ընթանալ:

Եզրակացություն

Այսպիսով՝ արձանագրենք, որ գրականության դասավանդման մեթոդիկայում կարևոր տեղ պետք է գրավի ուսումնական երկխոսությունը՝ դառնալով ուսուցման կազմակերպման կարևոր բաղադրիչներից մեկը: Գրականության դպրոցական դասընթացը լիովին ընձեռում է այսպիսի հնարավորություն: Ուսուցչի խնդիրն է նախապես մտածել, կազմել երկխոսության, քննարկման արդյունավետ մոդելներ, ապա՝ իրականացնել բաց, անկաշկանդ և հետաքրքիր դաս-քննարկումներ: Հատկապես պետք է կարևորվի այն հանգամանքը, որ ուսուցչի կողմից երկի պատրաստի վերլուծությունը փոխարինվում է բովանդակային քննարկումներով, հարցերի պատասխանների համատեղ փնտրությամբ: Հնարավոր է, որ սովորողները հանգեն բոլորովին անսպասելի և չնախատեսված եզրակացությունների: Սակայն, եթե դասարանում հնարավորություն ստեղծվի քննարկման նյութ դարձնել սովորողի արտահայտած յուրաքանչյուր միտք, ապա, ի վերջո, արդյունքը տեսանելի է լինելու: Այս դեպքում սովորողը ոչ միայն ինքնուրույն տեսակետ արտահայտելու, գրագետ բանավիճելու, դիմացինի կարծիքը հարգելու կարողություններ է ձեռք բերելու, այլև երկի վերաբերյալ կարողանալու է հարցեր ձևակերպել, գտնել առաջադրված հարցերի պատասխանները, նային: Ուսուցիչն իր հերթին գերծ է մնում պատրաստի վերլուծություններ և բարձրացված

հարցերի պատասխանները ներկայացնելուց. նա դառնում է սովորողի օգնականն ու ուղղորդողը և միասին փորձում են գտնել երկի վերլուծության բանալիները:

Օգտագործված գրականություն

1. Методика преподавания литературы. Под ред. О. Ю. Богдановой и В. Г. Маранцмана. В 2-х частях. М., 2002.
2. Г. К. Селевко, Современные образовательные технологии, Москва, 1998, стр. 3.
3. Ն. Տոդանյան, Գրականության դասավանդման մեթոդիկա, Երևան 2018:

Наира Тоганян

Организация учебного диалога как средство эффективного освоения литературного произведения

Заключение

Ключевые слова и выражения: образовательный диалог, взаимопонимание, положительная взаимозависимость, ключевые вопросы, мнение, отношение, мыслительная деятельность.

В статье представлен учебный диалог как эффективный способ понимания литературного произведения. Рассмотрены формы и способы организации таких уроков-диалогов. Представлены формы составления вопросов. Подчеркнута важность осознанной, равноправной и совместной деятельности учителя и ученика, направленной на самостоятельное осмысление литературного произведения. В результате эффективной организации учебного диалога на уроке литературы у учащегося формируется самостоятельность, критическое мышление, воображение, позитивная взаимозависимость, понимание, коммуникативность, умения делать выводы.

Таким образом, мы пришли к следующим выводам, что в методике преподавания литературы важное место должен занимать учебный диалог, став одним из важных компонентов организации обучения. Школьный курс литературы дает такую возможность. Задача учителя-заранее продумать, составить эффективные модели диалога, обсуждения, а затем провести открытые, непринужденные и интересные уроки-обсуждения. Особо следует подчеркнуть тот факт, что подготовленный заранее учителем анализ литературного произведения заменяется содержательными обсуждениями, совместными поисками ответов на вопросы. Учащиеся могут прийти к совершенно неожиданным и непредвиденным выводам. Однако, если в классе появится возможность сделать предметом обсуждения каждую мысль,

высказанную учеником, то, в конце концов, результат будет очевиден. В этом случае учащийся не только приобретет навыки самостоятельного выражения точки зрения, грамотного обсуждения, уважения мнения другого человека, но и сможет сформулировать вопросы о литературном произведении, найти ответы на поставленные вопросы и т.д. Учитель, в свою очередь, должен воздерживаться от представления готовых анализов и ответов на поставленные вопросы; он становится помощником и наставником ученика и вместе пытаются найти ключи к анализу литературного произведения.

Naira Toghanyan

The organization of educational dialogue as a productive means of obtaining literary work.

Conclusions

Key words and expressions. Educational dialogue, mutual understanding, positive interdependence, key questions, opinion, attitude, thinking.

The article presents educational dialogue as an effective means of literary dialogue. The ways and means of organizing such lesson- dialogues are discussed. The means of wording questions are introduced. The importance is put on the teacher- student conscious, equal, and cooperative work aimed at the self-obtaining of the literary work. As a result of organizing productive educational dialogue during the Literature lesson, the learner acquires ability of self, critical thinking, imagination, positive interdependence, mutual understanding, interactions and coming up with conclusions. Thus, we conclude that in the methodology of teaching Literature, educational dialogue must have an important role, becoming one of the main components of teaching organization. Literature lesson at school completely provides such possibility. Teacher's main task is to think in advance, make up productive models of dialogue discussion, then conducting open, relaxed, and interesting lesson- discussions. Especially, the fact that the teacher's ready- made analysis of literate work is replaced with meaningful discussions, with the joint search for the answers to the questions must be emphasized.

It is possible for the learners to come to completely unexpected and unforeseen conclusions. However, if there is a possibility of making learner's ideas and thoughts into a discussion material, the result will be eventually noticeable. In this case, the learner will not only get abilities of expressing their perspectives on their own, debating literately, respecting others' opinions, but also will be able to word questions about the literary work, find the answers to the given questions, etc. Teacher, in their turn, refrains from introducing ready-made analysis and answers to the given questions. They become the helpers and the leaders of the learner and together they try to find the keys of literary work analysis.

Խմբագրություն է ուղարկվել 27.02.2023թ.

Հանձնարարվել է գրախոսության 09.03.2023թ.

Տպագրության է հանձնարարվել 13.03.2023թ.

**ԲԱՌԱՅԻՆ ՀՈՄԱՆՇՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ԲՈՒՀՈՒՄ՝
ԸՍՏ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՈՒՄՆԵՐԻ**

Ամփոփում

Սույն հոդվածում բառային հոմանշության ուսուցումը տրված է՝ ըստ մասնագիտական այս կամ այն բնագավառին վերաբերող բառապաշարի և տեքստային հատվածների: Բուհական համակարգի ոչ մասնագիտական ֆակուլտետներում արդի հայերենի հոմանիշ բառերի՝ ըստ մասնագիտացումների և նրանց համապատասխան բառապաշարի ավանդումը կարող է նպաստել բառերի ձևափոխության այս խմբի ուսուցման արդյունավետության բարձրացմանը: Կարևոր է բառային հոմանշության և հականշության ընդհանրությունների և տարբերությունների, ինչպես նաև բազմիմաստության և հոմանշության փոխհարաբերությունների վերհանումը:

Ուսանողների ձեռք բերած տեսական գիտելիքները հարկ է կիրառել գործնականում՝ ըստ տարաբնույթ առաջադրանքների և տեքստային աշխատանքի:

Արժևորվում են ուսուցման անհատականացմանը նպաստող բառարանային աշխատանքը, կապակցված խոսք կազմելը և, ընդհանրապես, ուսանողների ինքնուրույն աշխատանքներ կատարելու հմտությունների մշակումը:

Թեման ավանդելիս առաջարկվում է կիրառել գծագրական դասակարգիչներ, որոնք ապահովում են փոխներգործուն ուսուցումը, ինչպես նաև համակարգչային Microsoft Power Point (կամ Google) ներկայացումը՝ որպես ուսուցման միջոցներից մեկը:

Բանալի բառեր և արտահայտություններ. բառային հոմանշություն, հոմանշային շարք, հականշահոմանշային շարքեր, հոմանշություն և բազմիմաստություն, մասնագիտական բառապաշար, բուհական ուսուցում, տեքստային աշխատանք, բառարանային աշխատանք, փոխներգործուն մեթոդներ, մեթոդական հնարներ:

Ներածություն

Բառային հոմանիշները ձևով տարբեր, բայց նույնական (*նույնանիշներ*) կամ մոտ իմաստ ունեցող (*համանիշներ*) բառերն են: Տարբերակվում են *լեզվական* (խոսքից դուրս) և *խոսքային* (ոչ խոսքից դուրս) հոմանիշները:

Հոմանշությունն ու բազմիմաստությունը փոխկապակցվածություն են դրսևորում. բազմիմաստ բառը յուրաքանչյուր իմաստի համար առանձին հոմանիշ ունենալու հնարավորություն ունի:

Հոմանիշներն այդ կարգի (ձևաիմաստային) մյուս խմբերի և, մանավանդ, *հականիշների* նկատմամբ ցուցաբերում են թե՛ ընդհանրություններ (հականշություն և հոմանշություն. ա) խոսքիմասային արժեքի նույնականություն, բ) աղերսակցություն բառերի բազմիմաստությանը, գ) հականշություն հոմանշային գույգերի կամ շարքերի միջև, դ) *լեզվական* և *խոսքային* հոմանիշների և հականիշների առկայություն), թե՛ տարբերություններ (ա) հոմանիշների քանակական առավելությունը հականիշ բառերի համեմատությամբ, բ) հոմանիշների տարբեր ձև, բայց նույնական կամ մոտ իմաստ ունենալը՝ ի հակադրություն հնչյունական կազմով իրարից տարբեր կամ մասամբ տարբեր, իսկ իմաստով հակադիր բառերի՝ հականիշների, գ) հոմանիշների համեմատությամբ հականիշների սահմանափակ հնարավորությունները գործառական-ոճական տեսանկյունից և այլն):

Հոմանիշները բնութագրվում են նաև գործառական-ոճական տեսանկյունից. դրանք խոսքի ոճավորման, հուզարտահայտչականության, նրբերանգային-նրբիմաստային տարբերություններ դրսևորելու, իմաստային աստիճանական սաստկություն արտահայտելու, բառիմաստային կապակցելիության տարբերություններ ի հայտ բերելու և խոսքում միօրինակությունից խուսափելու լայն հնարավորություններ ունեն:

Ներկա հոդվածում քննարկվում են բուհում արդի հայերենի հոմանիշ բառերի ուսուցման հարցերը՝ ըստ տարբեր մասնագիտացումների:

Մեթոդաբանություն

Բուհական համակարգի ոչ մասնագիտական ֆակուլտետներում բառային հոմանշության ուսուցումը հոդվածում տրված է՝ ըստ պրակտիկ գործողության, փոխներգործուն (ինտերակտիվ) և վերահսկող-գնահատող մեթոդների ու հնարների:

Առաջարկում ենք թեմայի ավանդումն իրականացնելիս կիրառել *պրիզմա*, *համեմատության եռաթև աղյուսակ* և *հասկացությունների քարտեզ* մեթոդական հնարները, *տեքստային աշխատանք*, *վեբ-որոնում*, *հարցում*, *վարժություններ* և *առաջադրանքներ* մեթոդները:

Առհասարակ և՛ բառային, և՛ դարձվածային հոմանիշներին հատուկ են տարբեր ձև, ընդհանուր նշանակություն ունենալը, իմաստային ու ռճական տարբեր երանգներ արտահայտելը: Մասնագիտական գրականության մեջ հոմանիշներ են համարվում միևնույն հասկացությունն արտահայտող այն բառերը, որոնք տարբեր են ձևական կողմով, իսկ իմաստային կողմով կա՛մ նույնական են, կա՛մ ունեն նրբերանգային, հուզարտահայտչական կամ ռճական և գործառական տարբերություններ¹:

Թե՛ բառային, թե՛ դարձվածային հոմանիշների համար «հոմանշային շարք» եզրույթից բացի ընդունված են նաև «հոմանիշների փունջ» կամ «հոմանիշների բույն» տերմինները²:

Տվյալ հոդվածը գրվել է Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ ոչ մասնագիտական ֆակուլտետներում հեղինակի դասավանդման փորձի ընթացքում: Ներկայացված է բառային հոմանշության բուհական (գործնական) ուսուցումը: Հոմանիշ բառերի ուսուցմանը և համապատասխանաբար սովորողների ուսումնառությանը վերաբերող առաջադրանքները տրված են ըստ մասնագիտական բնագավառների (*Ս. Պատմություն և հասարակագիտություն: Բ. Կուլտուրա: Գեղարվեստական կրթություն: Գ. Կրթության հոգեբանություն և սոցիոլոգիա: Դ. Կենսաբանություն, քիմիա և աշխարհագրություն: Ե. Մաթեմատիկա, ֆիզիկա և ինֆորմատիկա*):

Բառագիտական իրողությունների՝ բառային միավորների բուհական ուսուցման առումով մասնագիտական գրականության մեջ կարևորվում են դասավանդման նախապայմանը, նպատակը, հիմնախնդիրները և ելքային արդյունքները, ինչպես նաև շեշտադրվում է մասնագիտական այս կամ այն բնագավառին վերաբերող թե՛ բառապաշարի, թե՛ համատեքստի հիման վրա ստեղծված վարժությունների և առաջադրանքների կարևորությունը լեզվական այդօրինակ իրողություններն ավանդելու գործընթացում: Այս առումով մասնավորապես նշվում է. «Ուսանողները, լեզվական, տվյալ դեպքում՝ բառիմաստաբանական, բառապաշարային, բառակազմական, դարձվածքներին ու շրջասույթներին վերաբերող, ինչպես նաև բառարանային աշխատանքներ կատարելու հմտություններ ձեռք բերելով, հընթացս առնչվում են իրենց

¹ Տե՛ս Գ. Դ. Առաքելյան, Ա. Հ. Խաչատրյան, Ս. Ա. Էլոյան, Ժամանակակից հայոց լեզու, հ. 1, Ե., ՀՄՄՀ ԳԱ հրատ., 1979, էջ 201:

² Ա. Մ. Սուքիասյան, Հոմանիշները ժամանակակից հայերենում, Ե., Եր. համալս. հրատ., 1971, էջ 135:

մասնագիտական ոլորտի բառապաշարին, տեքստային հատվածներին, որոնք ունեն ճանաչողական արժեք և նշանակություն»³:

Սույն հոդվածում առանձնակի տրվում են մասնագիտական տարբեր բնագավառների բառապաշարի հիման վրա ստեղծված վարժություններ և առաջադրանքներ, իսկ տեքստային աշխատանքի բնագրային նյութը վերաբերում է գիտական ոճին: Նկատենք, որ առաջադրանքներում տրված է նաև տեքստային աշխատանք՝ ըստ գեղարվեստական ոճի ստեղծագործության: Թեև բառային հոմանիշների ուսուցումը ներկայացված է՝ ըստ մասնագիտացումների, սակայն անշուշտ յուրաքանչյուր դասագործընթացում կարևորում ենք զուգահեռաբար գեղարվեստական ստեղծագործությունների հիման վրա թեմայի ուսումնասիրությունը՝ մանավանդ խոսքային հոմանիշների գոյությունը հաշվառելով, երբ բառերը գեղարվեստական խոսքում դրսևորում են հոմանշություն, իսկ խոսքից դուրս հոմանիշներ չեն:

Հոդվածում թեմայի ուսուցումը ներկայացվում է՝ ըստ *պրակտիկ մեթոդների* շարքը դասվող *վարժությունների* և *առաջադրանքների*, թեմայի յուրացման գործընթացը *վերահսկող* և *գնահատող* նշանակություն ունեցող *հարցման*⁴, ինչպես նաև ըստ ուսուցման *փոխներգործուն (ինտերակտիվ)* մեթոդական հնարների, որոնցից են *պրիզման*, *համեմատության եռաթև (Մ-աձև)* *աղյուսակը* և *հասկացությունների քարտեզագրումը*⁵: Նկատենք, որ *փոխներգործուն (ինտերակտիվ)* ուսուցումը համարվում է *հաղորդակցական տեխնոլոգիաների* տարբերակներից (կադապարային մոդելներից) մեկը: «Ինտերակտիվ ուսուցումը կրթության օբյեկտի և սուբյեկտի լավ կազմակերպված հետադարձ կապով դասավանդումն է՝ նրանց միջև տեղեկության երկկողմանի փոխանցումով»⁶: Թեման ուսուցանելիս կարևորում ենք նաև *համագործակցային տեխնոլոգիայում* կիրառվող, ժամանակակից մեթոդների շարքը դասվող *վեբ-որոնումը (Web-Quest)*⁷, երբ

³ Լ. Ն. Ավետիսյան, Մ. Ռ. Սողոմոնյան, Հայոց լեզվի գործնական դասընթաց: Բառագիտություն: Ուսումնական ձեռնարկ բուհերի ոչ մասնագիտական ֆակուլտետների համար Ե., «Էդիթ Պրինտ» հրատ., 2022, էջ 4-6:

⁴ Տե՛ս Ծ. Գ. Азимов, А. Н. Шукин, Новый словарь методических терминов и понятий (теория и практика обучения языкам), М., Изд-во ИКАР, 2009, էջ 70, 322-323:

⁵ Ս. Սարուխանյան, Ա. Դավաթյան, Ն. Դիշաղաջյան, Ուսուցման ժամանակակից մեթոդներ, հնարներ, վարժություններ, Վանաձոր, ԿԱԻ Լոռու մասնաճյուղ, «Վանատուր» ՍՊԸ տպ., 2008, էջ 69- 70, 72-73, 76-77:

⁶ Գ. К. Селевко, Энциклопедия образовательных технологий, Том 1, М., Народное образование, 2005, էջ 153:

⁷ Ս. Սարուխանյան, Ա. Դավաթյան, Ն. Դիշաղաջյան, նշվ. աշխ., էջ 18-21:

համացանցից (կայքեր, առցանց գրադարաններ և այլն) ձեռք են բերվում հետազոտության թեմայի վերաբերյալ տեղեկույթ և գիտելիքներ՝ գործնականում լուծելով առաջադիր հարցը, ինչպես նաև *համակարգչային Microsoft Power Point (կամ Google) ներկայացումը*⁸՝ որպես լեզվական իրողությունների ուսուցման միջոցներից մեկը⁹:

Բուհում հոմանիշ բառերի ըստ մասնագիտացումների գործնական ուսուցման հարցում անհրաժեշտ ենք համարում *տեքստային վարժությունները*⁹, *տեքստային աշխատանք* մեթոդի կիրառումը, երբ տեքստի հիման վրա կատարվում է ուսումնասիրված լեզվական, տվյալ դեպքում՝ բառագիտական իրողության քննարկում որպես ինքնուրույն աշխատանք, այս իմաստով կատարվում է տեքստի լեզվառճական վերլուծություն: Թեմայի ավանդույնն անշուշտ անկարելի է ներկայացնել առանց *բառարանային աշխատանքների* հանձնարարման:

Ստորև նշվող տեսական և գործնական նյութերը էլեկտրոնային տարբերակով (առցանց ուսուցման հարթակում) հիմնականում կանխավ տրվում են ուսանողներին:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՊԱՐԱՊՄՈՒՆՔ

ա) Գործնական պարապմունքի թեմայի անվանում. Բառերի ձևախմբատային տեսակները, հոմանիշ բառեր:


բ) Հիմնական հասկացություններ, առանցքային հարցեր (միայն գործնական պարապմունքի համար). Բառային հոմանշություն, հոմանիշների զույգ, հոմանիշների շարք, հականշահոմանշային շարքեր, նույնանիշներ, համանիշներ, հոմանշություն և բազմիմաստություն, մասնագիտական բառապաշար:

գ) Գործնական պարապմունքի անցկացման մեթոդներ և հնարներ. պրիզմա, համեմատության եռաթև (M-աձև) աղյուսակ, վարժություններ, առաջադրանքներ, հարցում, տեքստային աշխատանք, վեբ-որոնում, հասկացությունների քարտեզագրում:

դ) Գործնական պարապմունքի թեմային առնչվող ուսումնառության նյութեր և էլեկտրոնային նյութեր. 1-ին քայլ: Կառուցվում է *ուղղորդված պրիզմա*: Վերջինս միաժամանակ տրված մեկնաբանի (*հոմանիշներ*) և վերջնաբանի (*ժամանակակից հայերենի*) միջև տրամաբանական կապ հաստատելուն է ուղղված:

⁸ Տե՛ս Գ. Գ. Азимов, А. Н. Шукин, նշվ. աշխ., էջ 278:

⁹ Նույն տեղը, էջ 303-304:



2-րդ քայլ: Հոմանիշների, հականիշների, համանունների և հարանունների՝ որպես բառերի ձևախմբատային տեսակների ուսուցման հիմնախնդիրները փոխկապակցված և փոխադասարկված են: Այս խմբատու կարելի է անդրադարձ կատարել թե՛ համանունների հոմանիշներին, թե՛ հարանունների այդօրինակ խմբերին: Ներկա հոդվածում մեր առաջադիր խնդիրն է քայլաշարերի հաջորդականության մեջ այս քայլում *համեմատության եռաթև (M-աձև) աղյուսակի* օգնությամբ վեր հանել հոմանշության և բազմիմաստության, այլև հականշության և բազմիմաստության՝ որպես լեզվական երևույթների ընդհանրությունները և տարբերությունները, ինչպես նաև հոմանշության և հականշության փոխհարաբերությունները, հոմանշային գույգերի կամ շարքերի միջև հականշության առկայությունը խնդրո առարկա թեմայի ուսուցման ընթացքում:

Ընդհանրություն	Տարբերություն	
Բառերի իմաստային հարաբերություններ	Բառերի ներսում առկա իմաստային հարաբերություններ	Բառերի միջև առկա իմաստային հարաբերություններ
Ընդհանրություն 1. Բազմիմաստություն և հոմանշություն: Բառերի հոմանշության և բազմիմաստության փոխկապակցվածություն. բազմիմաստ բառի՝ յուրաքանչյուր իմաստի համար առանձին հոմանիշ ունենալու հնարավորություն: Ընդհանրություն 2. Բազմիմաստություն և հականշություն: Բառերի հականշության և բազմիմաստության փոխկապակցվածություն. բազմիմաստ բառի՝ ամեն իմաստի համար առանձին հականիշ ունենալու ներունակություն (իմաստներից ոչ բոլորի համար նույն բազմիմաստ բառի հականիշներ ունենալու հատկանիշ): Ընդհանրություն 3. Հոմանշություն և հականշություն: Խոսքիմասային արժեքի նույնական լինելը: Բառերի բազմիմաստությանն աղերսվելը: Հականշություն	Բազմիմաստություն Տարբերություն 1. Ներբառության իմաստային հարաբերություններ:	Տարբերություն 1. Հոմանշություն: Ձևով տարբեր, բայց նույն կամ մոտ իմաստ ունեցող բառեր: <i>Նույնանիշներ</i> (նույնական իմաստներ) և <i>համանիշներ</i> (մերձավոր իմաստներ): Գործառական-ոճական տեսանկյունից լայն հնարավորություններ:
	Տարբերություն 2. Մեկից ավելի իմաստների առկայություն մեկ բառի իմաստային ծավալում և այդ իմաստների միջև ընդհանրություն: Տարբերություն 3. Բազմիմաստ բառի՝ խոսքում յուրաքանչյուր անգամ իր իմաստներից որևէ մեկով հանդես գալու հնարավորություն:	Տարբերություն 2. Հականշություն: Բառագույգեր, որոնք հակադիր իմաստներ են արտահայտում: <i>Հակադրական</i> (տարաբնույթ) և <i>ժխտական</i> (նույնաբնույթ) հականիշներ: Տարբերություն 3. Հականիշների գործածությամբ <i>հակադրույթ</i> (անտիթեզ) ոճական միջոցի գոյություն:

հոմանշային գույգերի կամ շարքերի միջև (հականշահոմանշային շարքեր): <i>Լեզվական</i> (խոսքից դուրս) և <i>խոսքային</i> (ոչ խոսքից դուրս) հոմանիշներ և հականիշներ:		
---	--	--

3-րդ քայլ: Վարժություններն ապահովում են թեմայի վերաբերյալ գիտելիքների յուրացումը, ամրապնդումը և բառապաշարի հարստացումը: Ըստ մասնագիտացումների առանձնացնելով՝ կարելի է հանձնարարել հետևյալ *վարժությունը*:

2. 1. Տրված բառաշարքից ընտրե՛ք և գրե՛ք հոմանշային 10 գույգ:

Ա. Պատմություն և հասարակագիտություն. փրկագիր, բանտել, բարետոհմիկ, ազատաթուղթ, ազատագրկել, քաջագգի, միասնականանալ, փաստաբան, փարավոն, արքայադուր, դատապաշտպան, հրամայորեն, գահակալ, թագավորանիստ, կայսերադավ, պարտադրաբար, ոստանիկ, դաշինք, ծիրանի, դրանիկ, համաձայնություն, թագավորագգեստ:

Բ. Կուլտուրա: Գեղարվեստական կրթություն. գրագող, ձիք, բնանկար, սնդուս, բանագող, գրքատուն, քանքար, դիպակ, բնատեսարան, պարագրություն, գրադարան, երգարան, ձայնակցել, զարդագիր, կաքավագրություն, գեղաբանդակ, տաղարան, գրագիր, նվագակցել, ծաղկատառ, գեղագարդ, ջնարակ:

Գ. Կրթության հոգեբանություն և սոցիոլոգիա. առաքինի, ըմբռնել, պակասամիտ, հոգետանջ, անհատ, հայրենաբաղձություն, պարկեշտ, թանձրամիտ, կռահել, չարակսկիծ, բնավորություն, հոգի, ջղայնացում, նրբագգաց, ներաշխարհ, խառնվածք, դատողություն, անձնավորություն, ընկերային, նյարդայնացում, մտածողություն, հասարակական:

Դ. Կենսաբանություն, քիմիա և աշխարհագրություն. ազդր, արջնագռավ, կածուկ, սաղմնապարկ, եղջերուկ, հող, զիստ, քինքինածառ, աղվեսագի, ջրաթաղանթ, քլորասնդիկ, ընդերք, ոսկրախաղ, շեփորուկ, աստղակաթ, բնաշրջություն, աղիք, եղրնանի, տարրաբան, աստղալույս, սուլեմա, շրջափոխույթ:

Ե. Մաթեմատիկա, ֆիզիկա և ինֆորմատիկա. էլեկտրաբոնկիչ, թիվ, էլեկտրադիտակ, քառանիստ, էլեկտրամեքենագիտական, ջրակայություն, էլեկտրաբոցավառիչ, ձայնագրիչ, էլեկտրացույց, չորեքնիստ, էլեկտրամեխանիկական, ջերմակայունություն, ջերմանցիկ, ջրակշռություն,

համբանք, ցուցարկիչ, լսագիտություն, ջերմադիմացկունություն, ծրիչ, ջերմահաղորդ, ձայնաբանություն, պատկերամուտ:

4-րդ քայլ: *Տեքստային աշխատանքի* կատարումն առաջարկում ենք սկսել տրված տեքստային հատվածների *արտահայտիչ ընթերցանությամբ*: Այնուհետև հանձնարարվում է *ընտրել հինգ բառ՝ կազմելով յուրաքանչյուրի հոմանշային և հականշային գույգերը (շարքերը. հականշություն հոմանշային գույգերի կամ շարքերի միջև)*: Տրվում է առաջադրանքի կատարման նմուշը՝ 1. *կայունություն-հաստատունություն* (հոմանիշ բառեր), 2. *կայունություն-փոփոխականություն* (հականիշ բառեր), 3. *կայունություն, հաստատունություն, անշարժություն, աներերություն, անհողորդություն, կանգունություն – փոփոխականություն, փոփոխելիություն, փոփոխունություն, անկայունություն, անհաստատություն, շարժունություն, հեղհեղուկություն, հողորդություն* (հականշություն հոմանշային շարքերի միջև):

Ներկայացնենք նմանօրինակ առաջադրանքը՝ ըստ մի քանի մասնագիտությունների:

Ա. Հասարակագիտություն: Միացյալ Նահանգները գիտի, որ իսլամիստները կարող են արդյունավետ կերպով օգտվել ժողովրդավարական գործիքներից ու հնարավորություններից, որպեսզի հաստատեն կրոնապետություն:

Այսպիսով, երկու տարբերակներն էլ, այսինքն՝ թե՛ ներկայիս խոցելի կայունության պահպանումը, թե՛ ժողովրդավարության հաստատումը կարող են վտանգավոր ու անկանխատեսելի լինել: Այստեղ առաջ է քաշվում երրորդ վարկածը՝ տարածաշրջանի աստիճանական ժողովրդավարացումը նույն երկրների վարչակարգերի օգնությամբ: Երրորդ վարկածը կարող է ապահովել և՛ ամերիկյան շահերը, և՛ տարածաշրջանային վարչակարգերի ակնկալիքները՝ միաժամանակ բավարարելով Եվրոպայի պահանջները (ՌԷ, 175):

Բ. Մշակութաբանություն: Հայ գրերի ստեղծումն անգնահատելի դեր խաղաց հայ ժողովրդի հոգևոր և մտավոր զարգացման գործում. ամուր հիմք ստեղծեց մշակութային կյանքի վերելքի համար: Դրանից հետո լայն թափ առավ թարգմանչությունը: Առաջիններից մեկը հայերեն թարգմանվեց Աստվածաշունչը, որը նպաստեց հայկական ինքնատիպ քրիստոնեական գրականության առաջացմանը: Հայ գրերի գյուտից հետո բացվեցին բազմաթիվ հայկական դպրոցներ (ԳՄ, 208):

Գ. Կրթության հոգեբանություն: Ռ. Ստերնբերգը չափազանց բեղմնավոր և ակտիվ գործունեություն ծավալած հեղինակ է: Գիտնականն ինտելեկտի իր մեկնաբանություններում բացատրում է անհատի ինտելեկտուալ և կոգնիտիվ կառույցների տարբերությունները:

Ստերնբերգն առանձնացնում է ինտելեկտի երեք կարևոր բաղադրիչներ, որոնք պատասխանատու են ինֆորմացիայի մշակման համար:Օլիգոֆրեն երեխաները նորմալ երեխաներից տարբերվում են նրանով, որ նրանց անհրաժեշտ է խնդրի պայմանների լիարժեք և հստակ բացատրություն (ԱԳ, 229-230):

Դ. Քիմիա: «Կարգավորում» տերմինը վերաբերում է ազդեցությունների լայն շրջանակին, օրինակ՝ խթանում, արգելակում, այս կամ այն ախտանիշների զարգացում և այլն: Կենսաբանական ակտիվության ծայրահեղ դրսևորում է բիոցիդ ազդեցությունը: Լատիներենից թարգմանությամբ *բիոցիդ* նշանակում է «կյանք սպանող»: Բիոցիդները քիմիական նյութեր են, որոնք ստեղծված են որպես պայքարի միջոց վնասատու օրգանիզմների դեմ (ՆԴ, 5):

Ե. Ֆիզիկա: Մոնտե-Կառլոյի հաշվարկներում վերցվում է ուղղանկյուն պոնտենցիալային հոր, որի խորությունը վերցվում է հավասար Ֆերմի էներգիային: Եթե մտցվում է դիֆուզ միջուկային պոնտենցիալ, ապա այն ազդում է արդյունքների վրա, քանի որ իմպուլսային բաշխման պարամետրը մակերևույթի վրա և միջուկի ներսում տարբեր է լինում (ԱԲ, 82):

5-րդ քայլ: Հետադարձ կապի ապահովում և ստուգում/ գնահատում Հարցեր

1. Լեզվական ի՞նչ առանձնահատկությունների հիման վրա են տարբերակվում բառերի ձևաիմաստային խմբերը, և որո՞նք են դրանք:

2. Ի՞նչ է հոմանշությունը: Որո՞նք են բառային հոմանիշները:

3. Ի՞նչ տեսակների են բաժանվում հոմանիշ բառերը:

4. Ի՞նչ առանձնահատկություններ ունեն լեզվական և խոսքային հոմանիշները:

5. Ո՞րն է բազմիմաստությունը և հոմանշության հետ ի՞նչ առնչակցություն ունի:

6. Ի՞նչ փոխհարաբերություններ կարող են ունենալ բառային հոմանիշներն ու հականիշները:

Առաջադրանքներ

ա) Ինքնուրույն-հետազոտական աշխատանք: Հոմանիշ բառերի բուհական գործնական ուսուցումը կազմակերպելիս առաջարկում ենք կիրառել *ինքնուրույն աշխատանքը*՝ որպես *ուսումնական աշխատանքի կազմակերպման ձևերից մեկը*:

1. Ուսանողների ինքնուրույն աշխատանքներ կատարելու կարողությունների զարգացման հարցում կարևորում ենք *բառարանային աշխատանքը*: Տվյալ դեպքում տրվում է առաջադրանք՝ ըստ նրանց մասնագիտական բնագավառի (*Մ. Պատմություն և հասարակագիտություն*:

Բ. Կուլտուրա: Գեղարվեստական կրթություն: Գ. Կրթության հոգեբանություն և սոցիոլոգիա: Դ. Կենսաբանություն, քիմիա և աշխարհագրություն: Ե. Մաթեմատիկա, ֆիզիկա և ինֆորմատիկա): Հանձնարարվում է տերմինաբանական բառարաններից դուրս գրել հոմանիշ ունեցող տասը բառ, նշել յուրաքանչյուրի հականիշը (առկայության դեպքում)՝ կազմելով հոմանշային և հականշային զույգեր (կարող են օգտվել www.nayiri.com կայքի՝ խնդրո առարկա էլեկտրոնային բառարաններից):


2. Առաջարկվում է կատարել վեբ-որոնում (հղում. <https://www.youtube.com>)՝ ներկայացնելով Ավ. Իսահակյանի «Լիլիթը» պատմվածքում ի հայտ եկած բառային հոմանիշները (սմուշ՝ 1. գեղեցիկ, գեղանի, չքնաղ, չքնաղակերտ, աննման, 2. սքանչանալ, հիանալ, զմայլվել, հափշտակվել): Աշխատանքը կատարելիս կարող են օգտվել Ա. Մ. Սուքիասյանի «Հայոց լեզվի հոմանիշների բացատրական բառարան» աշխատությունից (Ե., ԵՊՀ հրատ., 2009): Ստեղծագործության հոլովակը (կարդում է Գրիգոր Բաղդասարյանը) և համակարգչային Microsoft Power Point (կամ Google) ներկայացմամբ տրված հոմանշային զույգերը կամ շարքերը, նրանց վերաբերյալ վերլուծությունները (տեսակներ, համանիշների նրբինաստային տարբերություններ, խոսքի ոճավորում և այլն) հանձնարարվում է ներբեռնել առցանց ուսուցման հարթակ:

բ) **Կապակցված խոսք:** Ինքնուրույն շարադրել սկիզբը և շարունակությունը¹⁰ (մեկ էջի սահմաններում)՝ գործածելով հոմանիշներ. Գիտության լեզուն ունի նույն հատկանիշները, ինչ որ գիտական ուսումնասիրությունը՝ անդիմություն, օբյեկտիվություն, դատողականություն (Շ. Բալլի):

Թեմայի գնահատում: Վերջինս իրականացվում է առարկայական նկարագրի՝ գնահատման չափանիշներ/մեխանիզմներ պլանակի պահանջներին համապատասխան:

6-րդ քայլ: Կատարվում է թեմայի ամփոփում՝ ըստ հասկացությունների քարտեզի:

¹⁰ Պահանջվում է պահպանել ուղղագրական, կետադրական, քերականական և ոճական անհրաժեշտ կանոնները, ինչպես նաև խմբագրական աշխատանք կատարելուց հետո աշխատանքն արտահայտիչ ընթերցանությամբ ներկայացնել լսարանում:



Եզրակացություններ

1. Բուհական համակարգի ոչ մասնագիտական ֆակուլտետներում (ըստ մասնագիտացումների և նրանց համապատասխան բառապաշարի) արդի հայերենի հոմանիշ բառերի ուսուցման հարցերը հողվածում քննության են առնվել բառային հոմանշություն և հականշություն ընդհանրությունների և տարբերությունների, ինչպես նաև

բազմիմաստություն և հոմանշություն փոխհարաբերությունների վերհանման միջոցով:

2. Բազմիմաստ բառերի համար բնութագրական են հոմանշային և հականշային հարաբերությունները: Բազմիմաստությունը՝ բառերի և կայուն կապակցությունների համար ընդհանուր այդ երևույթը, մեկից ավելի իմաստների համատեղումն է լեզվական մեկ միավորի շրջանակներում: Բազմիմաստությունն ու հոմանշությունը, այլև բազմիմաստություն ու հականշությունն ակնառու ընդհանրություններ ունեն. միևնույն բառն այլ բառերի հետ հոմանշային կամ հականշային հարաբերությունների մեջ է մտնում ոչ թե ամբողջությամբ, այլ իր առանձին իմաստներով:

3. Իմաստային և գործառական-ոճական տեսանկյուններից հոմանիշների մեջ առանձնացվում են (թե՛ բառային, թե՛ դարձվածային) նույնանիշները և համանիշները: Վերջիններիս նրբիմաստային, ոճական, բառիմաստային կապակցելիության տարբերություններն առավել ցայտուն ի հայտ են գալիս խոսքային միջավայրում:

4. Հոմանշային շարքերը քանակական տեսանկյունից կարող են տարբեր լինել: Հոմանշային շարքը համաժամանակյա լեզվական իրողություն է՝ կազմված երկու կամ ավելի բառերից (այլև դարձվածքներից): Հականշային շարքերն ուսուցանելիս կարելի է դրանք քննարկել հոմանշային շարքերին զուգընթաց (հականշության առկայություն հոմանշային զույգերի կամ շարքերի միջև. հականշահոմանշային շարքերի կազմություն):

5. Առաջարկվում է ուսանողների ձեռք բերած տեսական գիտելիքները կիրառել գործնականում՝ ըստ *պրիզմա, համեմատության եռաթև աղյուսակ և հասկացությունների քարտեզ* մեթոդական հնարների, *տեքստային աշխատանք, վեր-որոնում, հարցում* մեթոդների, բառարանային և ստեղծագործական աշխատանքների, վարժությունների և առաջադրանքների, ինչպես նաև համակարգչային Microsoft Power Point (կամ Google) ներկայացման:

Օգտագործված գրականություն

1. Առաքելյան Վ. Դ., Խաչատրյան Ա. Հ., Էլոյան Ս. Ա., Ժամանակակից հայոց լեզու, հ. 1, Ե., ՀՄՄՀ ԳԱ հրատ., 1979:
2. Ավետիսյան Լ. Ն., Սողոմոնյան Մ. Ռ., Հայոց լեզվի գործնական դասընթաց: Բառագիտություն: Ուսումնական ձեռնարկ բուհերի ոչ մասնագիտական ֆակուլտետների համար Ե., «Էդիթ Պրինտ» հրատ., 2022:

3. Սարուխանյան Ս., Դավաթյան Ա., Դիշաղաջյան Ն., Ուսուցման ժամանակակից մեթոդներ, հնարներ և վարժություններ, ԿԱԻ Լոռու մասնաճյուղ, «Վանատուր» ՍՊԸ տպ., 2008:
4. Սուքիասյան Ա. Ս., Հոմանիշները ժամանակակից հայերենում, Ե., Եր. համալս. հրատ., 1971:
5. Азимов Э. Г., Щукин А. Н., Новый словарь методических терминов и понятий (теория и практика обучения языкам), М., Изд-во ИКАР, 2009.
6. Селевко Г. К., Энциклопедия образовательных технологий, Том 1, М., Народное образование, 2005.

Համառոտագրություններ

ԱԲ – Ա. Բալարբեկյան, Միջուկային փոխազդեցություններ, Դասագիրք բուհերի բնագիտական ուղղություններով մասնագիտացող ուսանողների համար, Ե., ԵՊՀ հրատ., 2019:

ԱԳ – Ա. Գևորգյան, Բնակելի տիկնոջ կոգնիտիվ մոդելները, «Կանթեղ: Գիտական հոդվածների ժողովածու», № 3 (56), Ե., 2013, էջ 228-234:

ԳՄ – Գ. Մելքումյան, Մշակութաբանություն, Ուսումնական ձեռնարկ, Ե., «Վան Արյան» հրատ., 2001:

ՆԴ – Ն. Դուրգարյան, Կենսաակտիվ պոլիմերներ, Դասախոսությունների շարք, Ե., ԵՊՀ հրատ., 2016:

ՌԷ – Ռ. Էյդիփուր, Մեծ Մերձավոր Արևելք նախագծի իրականացման խոչընդոտները և մարտահրավերները, «Կանթեղ: Գիտական հոդվածների ժողովածու», № 3 (56), Ե., 2013, էջ 175-180:

Лилит Аветисян

Изучение лексической синонимии в вузе

с учетом специализации

Заключение

Ключевые слова и выражения: лексическая синонимия, синонимический ряд, антонимо-синонимические ряды, синонимия и полисемия, специальная лексика, вузовский курс, интерактивные методы, методические приемы, работа над текстом, словарная работа.

1. В данной статье рассматриваются вопросы изучения лексической синонимии современного армянского языка на неспециальных факультетах (с учетом специализации и специальной лексики) высших учебных заведений, основанного на выявлении интегральных и дифференциальных

признаков лексической синонимии и антонимии, а также соотношения полисемии и синонимии.

2. Для многозначных слов характерны синонимические и антонимические отношения. Полисемия-общее явление для слов и устойчивых сочетаний представляющая собой объединение многих значений в рамках одной языковой единицы. Синономия и полисемия, а также антонимия и полисемия имеют явную общность: одно и то же слово вступает в синонимические и антонимические отношения не целостно, а со своими частными значениями.

3. В семантическом и функционально-стилистическом аспектах различаются равноценные и неравноценные синонимы. Лексические синонимы реализуют свои синонимические отношения в речевой среде.

4. Синонимические ряды могут быть разные. Синонимический ряд - синхронное языковое явление, которое состоит из двух или больше слов. Во время изучения антонимических рядов необходимо рассматривать эти ряды параллельно со синонимическим рядом: антонимичные слова вступают в синонимические связи с другими словами, образуя антонимо-синонимические своеобразные ряды.

5. Предлагается практическое применение полученных студентами теоретических знаний, базирующееся на таких методических приемах как трёхкомпонентная таблица сопоставления, призма и картографирование понятий, метод текстовой работы и веб-поиска, выполнение словарной и творческой работы, заданий и упражнений, создание презентаций с помощью Microsoft Power Point (или Google), и проведение опроса.

Lilit Avetisyan

**The study of the lexical synonymy at the Institute
according to specializations**

Conclusion

Key words and phrases: lexical synonymy, synonymic line, synonymic-antonymic lines, synonymy and polysemy, special vocabulary, case study at the Institute, text work, dictionary work, interactive teaching methods, methodological approaches.

1. This article examines the questions of teaching modern Armenian synonyms by lexical synonymy and antonymy commonalities and differences, as well as by discovering of the relationship of polysemy and synonymy in the non-

professional faculties of the university system (according to the specializations and their appropriate vocabulary).

2. The synonymous and antonymous relations are typical of the words. Polysemy, the general phenomenon of the words and stable compounds, is the combination of more than one meanings in one language unit. In general synonymy and polysemy, antonymy and polysemy of the words have obvious generalities: the same word gets a synonymic or antonymic correlation with other words not entirely, but by its separate meanings.

3. According to their semantic and usual-stylistic aspects, the synonyms are distinguished by adequate and inadequate ones. The lexical synonyms realize their synonymous relations in the speech environment.

4. The synonymic lines may be different from the side of quantity. Synonymic lines of the words is a synchronic language reality, which consists of two or more words. Recurring to the antonymic lines of the words it is necessary to observe them in parallel with synonymic lines: antonymic words are included into synonymic correlation with other words making certain synonymic - antonymic lines.

5. Recommended to apply students' acquired theoretical knowledge in practice according to the comparative table with three columns, prisma and concepts map methodological approaches, text work and Web-Quest methods, dictionary and creative works, computer Microsoft Power Point (or Google) presentation, question, as well as according to performing of exercises and tasks.

Խմբագրություն է ուղարկվել 03.12.2023թ.

Հանձնարարվել է գրախոսության 25.12.2023թ.

Տպագրության է հանձնարարվել 13.03.2023թ.

GOHAR AMALYAN

Applicant at ASPU Chair of Romance and Germanic

Languages and their Teaching Methods

Email: amalyangohar@gmail.com

INTEGRATION OF WEBQUEST TECHNOLOGY INTO TEACHING AND LEARNING PROCESS

Abstract

Computers and the Internet have opened up many possibilities for language teaching and learning. There are many websites and software programs that enable learners to improve their language knowledge and skills by engaging in various activities that provide more authentic learning experiences. This article describes one of the numerous online tools for language learning and development - WebQuest, which provides a technological resource that brings together the students' needs and enhances motivation by creating dynamic and adaptable learning situations.

Key words and expressions: WebQuest, language learning, multimedia, technology, learning experience

Introduction

Nowadays, computers and the Internet play an increasingly important role to meet the educational needs of language learners around the world. The Internet is a particularly significant tool for language learners making available authentic language input. Although the potential of internet resources for educational use has not been fully explored and the average educational institutions still make limited use of computers and internet resources. It is obvious that we have entered new information age in which the links between technology and teaching English as a foreign language have already been established.

Today working style of every profession has profoundly changed due to computers. Computers became an integral part of the education system and of the school curriculum. The advantages of computers in education primarily include:

- quick data processing
- audio-visual aids in teaching
- better presentation of information
- real and quick interaction between students, teachers, and parents
- feedback

teachers, authorities, and the staff of the school to find diverse and numerous sources and to benefit from them. The use of modern information technologies significantly raises the efficiency of self-education. The reason is that working with digital information is quite easy to automatically search for needed information. Many encyclopedias, well-known journals, dictionaries, and books are already digitized. The interest in distance learning is raising as students get their books and educational materials by the Internet or email¹.

Methodology

The benefits in computer technologies have inspired new efforts to understand the potential of multimedia instruction as a means of promoting independent language learning. Multimedia learning occurs when a learner builds a mental representation from words and pictures that have been presented². For purposes of the research program, multimedia instructional messages are presentations of material using words and pictures that are intended to foster learning. Correspondingly, successful teachers adopt various teaching ways to achieve a well-adjusted instructional program that is also individualized and indicates the demands and interests of individual learners. Multimedia learning is a teaching strategy that a teacher can apply at school that may also comprise non-technical projects, lecture and note-taking, writing, and creative work. Today a method, which is called “WebQuest”, is widely used in the education process of different countries. WebQuest is one of the many online tools available for learners that provide opportunities for authentic learning experiences. It is an excellent way of making interdisciplinary connections on the Internet in order to enrich real-life learning³.

From one side WebQuest is promoting the integration of the Internet in different content areas, and from another side, contributing to the integration of various subject content material with Internet resources.

The mission of WebQuest is to involve students in authentic learning activities. Students themselves create WebQuest pages and install them on the Internet or make a reference on the other pages existing on the Internet, which logically

¹ Blake, R.J. (2008). "Brave New Digital Classroom: Technology and Foreign Language Learning". Georgetown University Press: Washington, D.C., 240p.

² Nareskumar, Rose, R.C. & Disilve, J. L. (2008). "Teachers Readiness to Use Technology in the Classroom". An Empirical Study, European journal of scientific research, 21(04), 603-616pp

³ Mezentseva, M. E. (2017). "Quest as a modern technique among interactive ways of teaching foreign languages. Teaching Methodology in Higher Education", 6(21), 75-83.

connected, or in this or that way dealing with the topic they are investigating. WebQuest is a technology to involve the students in real life learning. It is an inquiry-based format in which most information that learners get is taken from the Internet providing links to requested resources. WebQuest is developed to help learners to use their time more efficiently, to be more concentrated on the usage of the information than searching it. This method is developed in the beginning of 1995 in the University of San-Diego by Bernie Dodge and Tom March. The WebQuest is a model which helps the teacher to conduct lessons applying the opportunities of web pages.

WebQuest Types: There are basically two types of WebQuests: short term and long term.

Short term WebQuest is an acquirement and adaptation of knowledge. Students are dealing with some information and make an idea about it.

Short term WebQuests are for:

- introducing a new concept or focus of study to learners
- familiarizing learners with Internet resources
- producing exploratory activities

A long-term WebQuest usually requires one to four weeks. The educational purpose of the long-term WebQuest is an expansion and clarification of knowledge. Students analyze some information more deeply, transforming it and showing their preparatory “investigation” by presenting newly acquired knowledge.

Long-term WebQuests are for:

- specific topics within a broader context
- final projects
- in-depth examination of a particular concept or focus of study

The Main Structure of the WebQuests

- Introduction
- Task
- Process
- Evaluation
- Teacher Page (comments for teachers)
- Conclusion

The introductory part gives a primary information to students, orientates what will happen in the future. Creates an interest among the students by various ways. It must be interesting and available.

The task is a description of what must be done at the end. It can be a substantial result or presentation of the oral report. Often identifies roles for cooperative team members.

The process is a clear description of the steps which students demonstrate following it in order to complete the activity. This is one of the ways guiding students for understanding how to compile, recognize, and handle the acquired information due to the current instruction.

The resources. Here the teacher identifies the online resources available on the topic and gives them the list of relevant web pages.

The evaluation. It is needed to introduce the evaluation standards which students should do to be successful, before starting the work. The evaluation standards can be in form of rubrics, tests, assessment scales.

The last component is the conclusion which sums up the activity and reminds the students what they have covered as a result of completing the activity.

Learners typically accomplish WebQuests as collaborative groups. Each student inside the group can be assigned a role or a particular area to research. WebQuests may be in the form of role-playing, scenarios, where students can be personas of researchers or historical figures. A WebQuest can be created for one subject or it can be interdisciplinary. The teacher must be aware of the resources, available on the Internet, which is interrelated with the topic. Then the resources must be classified according to some order. When learners are interested in the educational material they work with a great pleasure and work harder, moreover they are ready for perception and communication⁴.

Firstly, the WebQuest applies a primary question which really needs an answer. When learners are assigned to understand or solve an issue, they face the challenge of solving the real issue, not an artificial one, which exists in the classroom, but also in real world.

Secondly, students are interested in WebQuests, because they work with real resources, instead of old textbooks and outdated information students can get up to date information and get the opinions of experts and scientists on the Internet. One of the purposes of WebQuest is to increase critical thinking. Learners are given questions which are not possible to answer simply by gathering information. They need to change the information, by creating something new. For example, they need to edit the information, add some hypothesis, find a solution⁵.

In general, WebQuests as a task-based approach promotes the acquisition of knowledge that can be applied more easily supporting learner-centered

⁴ Carvalho, A. A. A. (2007). Guest Editor's Introduction. "Interactive Educational Multimedia". 15.

⁵ Luzón-Marco, M. (2010). "Webtasks for Learning Professional and Academic English: Adapting the WebQuest Model". 3, 29-44:

approach. All these issues will not be possible to solve for an ordinary teacher without the help of the Internet because it is nearly impossible to gather such broadband information about each topic. There are now special sites on the Internet for creating web-quests, where teachers can find templates for Web-Quest and detailed instructions for creating them (an example of the most popular English-language site for creating web quests is <https://www.createwebquest.com/>.) There are certain steps that can be taken to create your own Web-Quest⁶.

Step 1: Making the Title page. Students can choose from a number of formats (website, Power Point, Google Doc, Word Doc, printed worksheet, etc.) but a teacher should generally always have a title page. This sets the tone for the assignment and makes it look more professional.

Step 2: The teacher selects a site that has a template for creating a web quest.

Step 3: The teacher comes up with tasks. From the beginning, the teacher should select the form in which the students will receive the assignment.

Step 4: Making the Evaluation page. The Evaluation page contains rubrics, so the students know exactly what the teacher is looking for from them and what they need to do to get a good grade.

Step 5: With a rough plan and basic information on the sheet, students can start creating a WebQuest.

Step 6: When all pages are completed, the web quest is ready to be posted on the site, and it can be published.

Thus WebQuest. «is a scaffolded learning structure that uses links to essential resources on the World Wide Web and an authentic task to motivate students' investigation of a central, open-ended question, development of individual expertise and participation in a final group process». Reflecting on this problem a user can admit that it is capable of being done because of real life, authentic approach as well as cooperative learning style.

Conclusion

Summing up we concluded that the WebQuest is a new interactive, problem-solving tool to empower social skills, cooperative learning, individual responsibility of learners. It stimulates role-playing assignment using Internet resources and guiding students to develop critical thinking in their "quest" for

⁶ Kazakova O. P. and Klyoster A. M. (2008) "Educational tasks modelling on the basis of the web-quest technology (from the experience of teaching Foreign Languages)", Astra Salvensis, 6, pp. 699–700.

knowledge. WebQuest is an inquiry-based activity where students provided with access to online resources are specially fitted to carrying out and complete the task.

WebQuests are discovery learning tools and there are a lot of reasons to use them. Due to WebQuest activities the students are really interested in information communication technologies and the implementation of multimedia will be a powerful weapon for second language teachers to make students more motivated and concentrated. Computer process information provides teachers an endless choice of multimedia, software, applications, and devices with which to create more exciting interactive lessons.

Thus, in the process of working on a WebQuest, the center of knowledge and information achievement is the student. The teacher ceases to be the main source of instruction. It formulates tasks, searches for sources and links on the Internet, performs an advisory role, and creates a creative learning environment. The specific WebQuest operation in working with students in English classes stimulates to create a real life learning through experience and encouraging cognitive activity of students.

References

1. Մ.Աստվածատրյան, Գ. Թերզյան և այլք (2004). «Տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառումը հանրակրթական դպրոցում», Երևան, «Աստղիկ» էջ 231.
2. Blake, R.J. (2008). "Brave New Digital Classroom: Technology and Foreign Language Learning". Georgetown University Press: Washington, D.C., 240p.
3. Carvalho, A. A. A. (2007). Guest Editor's Introduction. "Interactive Educational Multimedia". 15.
4. Luzón-Marco, M. (2010). "Webtasks for Learning Professional and Academic English: Adapting the WebQuest Model". 3, 29-44.
5. Mezentseva, M. E. (2017). "Quest as a modern technique among interactive ways of teaching foreign languages. Teaching Methodology in Higher Education", 6(21), 75-83.
6. Nareskumar, Rose, R.C. & Disilve, J. L. (2008). "Teachers Readiness to Use Technology in the Classroom". An Empirical Study, European journal of scientific research, 21(04), 603-616pp.
7. Kazakova O. P. and Klyoster A. M. (2008) "Educational tasks modelling on the basis of the web-quest technology (from the experience of teaching Foreign Languages)", Astra Salvensis, 6, pp. 699-708:

**Վեբ-որոնում տեխնոլոգիայի ներմուծումը դասավանդման
և ուսուցման գործընթացում
Եզրակացություն**

Բանալի բառեր և արտահայտություններ. Վեբ-որոնում, լեզուների ուսուցում, մուլտիմեդիա, տեխնոլոգիա, ուսուցման փորձ:

Համակարգիչները և համացանցը ստեղծել են բազմաթիվ հնարավորություններ և գործիքներ լեզուների դասավանդման և ուսուցման համար: Կան բազմաթիվ կայքեր և ծրագրեր, որոնք բարելավում են սովորողների լեզվական գիտելիքներն ու հմտությունները:

Սույն հոդվածում ներկայացվում է լեզուների ուսուցման բազմաթիվ առցանց գործիքներից մեկը՝ վեբ-որոնումը, որը նպաստում է ուսումնական գործընթացի արդյունավետության բարձրացմանը և սովորողների ստեղծագործական մտածողության զարգացմանը: Վեբ-որոնումը հետազոտության վրա հիմնված ուսումնական գործունեություն է, որի ընթացքում սովորողների ձեռք բերած գիտելիքները, տեղեկատվությունը հիմնականում ստացվում են համացանցային աղբյուրներից՝ կայքեր, հանրագիտարաններ, ուսումնական ռեսուրսներ, գրադարաններ, ֆորումներ: Այս մեթոդով ուսուցումը ենթադրում է ելակետային մի հարցադրում կամ խնդիր, որը գործնական, ոչ թե տեսական պատասխանի կամ լուծման կարիք ունի: Վեբ-որոնումը և մուլտիմեդիա տեխնոլոգիաների ներդրումը հնարավորություն է տալիս սովորողներին դառնալ ավելի մոտիվացված, կենտրոնացած և նպաստում է նրանց քննադատական մտածողության զարգացմանը:

Այս գործիքի օգտագործման դեպքում փոխվում է փոխգործակցությունն ուսուցչի հետ. նրա ակտիվությունն իր տեղն է զիջում սովորողների ակտիվությանը, ուսուցչի խնդիրն է դառնում ստեղծել պայմաններ նրանց նախաձեռնության համար: Այսպիսով, վեբ-որոնումը նոր ինտերակտիվ, խնդիրներ լուծելու գործիք է, որը հզորացնում է սոցիալական հմտությունները, համագործակցային ուսուցումը և սովորողների անհատական պատասխանատվությունը: Վեբ-որոնման վրա աշխատելու ընթացքում գիտելիքների և տեղեկատվության ձեռքբերման կենտրոնը ուսանողն է: Ուսուցիչը դադարում է լինել ուսուցման հիմնական աղբյուրը: Ուսուցման այս գործիքը ձևակերպում է առաջադրանքներ, փնտրում է աղբյուրներ և հղումներ համացանցում, կատարում է խորհրդատվական դեր և ստեղծում է ստեղծագործական ուսումնական միջավայր:

Гоар Амаян

Интеграция технологии веб-квест во время преподавания и обучение

Заключение

Ключевые слова и выражения: веб-квест, изучение языка, мультимедиа, технология, опыт обучения.

В данной статье представлен один из многочисленных онлайн-инструментов для изучения языка, так называемый веб-поиск (WebQuest), который способствует повышению эффективности учебного процесса дучащихся и развитию их творческого мышления.

Веб-поиск – научно-исследовательская образовательная деятельность, в ходе которой знания и информация, приобретаемые учащимися, в основном поступают из интернет-источников: сайтов, энциклопедий, образовательных ресурсов, форумов. Обучение с помощью этого метода предполагает организацию действий учащихся с вопроса или проблемы, которая требует практического решения.

Просмотр веб-страниц и внедрение мультимедийных технологий позволяют учащимся стать более мотивированными, сосредоточенными и способствуют развитию их критического мышления. При использовании этого инструмента меняется взаимодействие учащихся с учителем. активность учащихся возрастает, задачей же учителя становится создание условий для реализации их инициативы.

Таким образом, веб-поиск — это новый интерактивный инструмент для решения проблем, который расширяет возможности социальных навыков, совместного обучения и индивидуальной ответственности учащегося. Именно учащийся является центром получения информации при работе над созданием своих собственных сайтов их внедрением в интернете , в то время как учитель выступает в качестве консультанта и стимулирует создание творческой среды обучения.

Խմբագրություն է ուղարկվել 05.12.2022թ.

Հանձնարարվել է գրախոսության 21.12.2022թ.

Տպագրության է հանձնարարվել 13.03.2023թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՇՈՏ ԳԱԼՍՅԱՆ

«Հայագիտական հանդեսի» երթը 4

ՍՈՒՐԵՆ ԴԱՆԻԵԼՅԱՆ

Հայագիտական բարձունքներին հետամուտ 6

ԱԵԼԻՏԱ ԴՈԼՈՒԽԱՆՅԱՆ

«Հայագիտական հանդեսի» նոր նվաճումները 8

ԼԱԼԻԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Հայագիտական հանդես – 20 9

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՊԱՊԻԿՅԱՆ

Յոթերորդ դաս 12

ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ՄԱՆՈՒԿ ՖԵԼԵՔՅԱՆ, ՍՈՒՍԱՆՆԱ ՏԻՈՅԱՆ

Արևմտահայերենի նորաբանությունների
բառարանագրման առանձնահատկությունները 14

ՎԱԼՏԵՐ ԲԵՐԲԵՐՅԱՆ

Ակնարկներ բառային ոճագիտական մտքի
պատմության(1950 - 2020-ական թթ.) 25

ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

АЭЛИТА ДОЛУХАНИЯ

Американская лира Гевонда Алишана 37

ՄԱՐՏԻՆ ԳԻԼԱՎՅԱՆ

Ստեղծագործական արգասավոր ուղի 46

ՄԵԼԻՆԵ ԳԻԼԱՎՅԱՆ

Նորագույն շրջանի (1960-1980-ական թթ.)
մանկապատանեկան արձակի առաջընթացի
միտումներն ու օրինաչափությունները 56

ԵՎԱ ՄՆԱՅԱԿԱՆՅԱՆ

Հովհաննես Թումանյանի մահվան
արձագանքները արտասահմանյան մամուլում 68

ՆԱՌԱ ՍԱՐԳՍՅԱՆ

Վահագն Դավթյանը 20-րդ դարասկզբի
արևմտահայ պոեզիայի մեկնիչ 85

ԱՆՈՒՇ ԹԱՄԱԼՅԱՆ

Եղիշե Չարենցի 1920-ական թթ. պոեզիայի
ժանրային բազմազանությունը, կառուցվածքային
ու լեզվառճական յուրահատկությունները 100

ԱՆԻ Ժ. ԱՎԵՏԻՍՅԱՆ

Օրհան Փամուքի կյանքն ու ստեղծագործությունը 109

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ԱՆՆԱ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

Մոցիալ-դեմոկրատական հնչակյան կուսակցության
գործունեությունն ամերիկայում 1908-1914թթ. 141

ԼԻԼԻԹ ՄԵԼԻՔՅԱՆ

Վրաստանում Բեհբուդյանների տոհմի պատմությունից 152

ՄՇԱԿՈՒՅԹ

ԳՈՀԱՐ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Էդուարդ Հայրապետյան
Դաշնամուրային կվարտետ (1981-1998) 166

ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ

ՆԱԻՐԱ ՏՈՂԱՆՅԱՆ

Ուսումնական երկխոսության կազմակերպումը
որպես գրական երկի արդյունավետ յուրացման միջոց 180

ԼԻԼԻԹ ԱՎԵՏԻՍՅԱՆ

Բառային հոմանշության ուսուցումը բուհում՝
ըստ մասնագիտացումների 187

GOHAR AMALYAN

Integration of webquest technology into
teaching and learning process 203